

**ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ**

Ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության մոնիտորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ
ԴՐԱՆՑ ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(գիտագործնական հետազոտություն)**

**ԵՐԵՎԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏ
2015**

Սույն հետազոտությունում արտահայտված կարծիքները ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի պաշտոնական դիրքորոշումը չեն:

Հետազոտության հեղինակներ՝

Դանիելյան Գ.Բ. , իրավ. գիտ. դոկ., պրոֆ.	Նախաբան, գլխ. 1, 4, 5, 7, 8, 9
Այվազյան Վ.Ա. , իրավ. գիտ. թեկ., դոց.	գլխ. 2
Մանասյան Ա.Ա. , իրավ. գիտ. թեկ.	գլխ. 3, 6

Ընդհանուր խմբագրությամբ Գ.Դանիելյանի

Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտազործնական հետազոտություն)/ Գ.Բ. Դանիելյան, Վ.Ա. Այվազյան, Ա.Ա. Մանասյան.– Եր.: Հայրապետ հրատ., 2015: – 240 էջ:

Սույն հետազոտությունը նվիրված է Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից հավանության արժանացած ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում ամրագրված հիմնադրույթների՝ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծում արտացոլելու համատեքստում ծագող լուծումներին: Առանձին հատվածների առնչությամբ հեղինակները ներկայացրել են նախագծի համապատասխան մասի առնչությամբ իրենց տարբերակները՝ համապատասխան փաստարկումներով:

Կատարված հետազոտությունը կարող է օգտակար լինել սահմանադրական բարեփոխումների գործընթացում ներգրավված անձանց, պետական մարմինների, ինչպես նաև իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, մագիստրոսների, ասպիրանտների, դասախոսների և սահմանադրական իրավունքի հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

ՀՏԴ

ԳՄԴ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
ԳԼՈՒԽ 1. Սահմանադրական բարեփոխումների շրջանակներում սահմանադրության փոփոխությունների նախագծի մշակմանը ներկայացվող պահանջները.....	7
ԳԼՈՒԽ 2. Սահմանադրական կարգը, որպես պետական կառույցի բարձրագույն կազմակերպահրավական ձև, սահմանադրականության կայացման արդի հիմնախնդիրները..	45
ԳԼՈՒԽ 3. Իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորումը, ապահովումն ու իրացումը սահմանադրական լուծումներում: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների անմիջական գործողության ապահովումը, իրավունքների սահմանափակման սահմանադրական լուծումները ..	111
ԳԼՈՒԽ 4. Սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի իրացման երաշխիքները.....	137
ԳԼՈՒԽ 5. Իշխանությունների բաժանում և հավասարակշռում.	141
ԳԼՈՒԽ 6. Դատական իշխանությանն առնչվող հայեցակարգային մոտեցումներն ու դրանց իրացումը սահմանադրական լուծումներում	159
ԳԼՈՒԽ 7. Անմիջական ժողովրդավարության սահմանադրական երաշխիքները.....	188
ԳԼՈՒԽ 8. Տեղական ինքնակառավարման սահմանադրաիրավական բարեփոխումների հայեցակարգային հիմնադրույթները	217
ԳԼՈՒԽ 9. Սահմանադրության կառուցվածքը, ներսահմանադրական անհստակությունների հաղթահարումը, սահմանադրականության մշտադիտարկման ապահովումը.....	228
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	234

ՆԱԽԱԲԱՆ

Քաղաքակրթության նվաճումների մշտական ուղեկիցն են եղել լրջագույն, սուր տարածայնություններն ու դիմադրությունը. հասարակական հարաբերություններում ցանկացած նոր ժողովրդավարական երևույթ դժվարությամբ է ճանապարհ հարթում, քանզի այն անխուսափելիորեն հանգեցնում է նոր շահերի բախմանը, արդեն իսկ ձևավորված և որոշ սոցիալական խմբերի համար ընդունելի, սակայն ոչ իրավաչափ արժեքների վերանայմանը, կարծրատիպային որակ ունեցող պահպանողական տրամադրությունների խաթարմանը և նմանաբնույթ այլ այնպիսի իրավիճակների, որոնք ոչ միշտ են համարժեք ընկալվում հանրության կողմից:

Հասարակական ինքնագիտակցությունը հաճախ առանձնանում է ակնհայտ հակասականությամբ՝ մի կողմից միանգամայն օբյեկտիվորեն արտահայտվում են արմատական փոփոխությունների անհրաժեշտության օգտին, մյուս կողմից տարբեր դրդապատճառներով, այդ թվում, ոչ բավարար վստահության ու իրազեկվածության հենքով, փորձում են դիմակայել անգամ այն զարգացումներին, որոնք համահունչ են իրենց անհանգստության համար հիմք հանդիսացած երևույթներն արմատախիլ անելու տրամաբանությանը:

Արդի սահմանադրական բարեփոխումների ողջ գործընթացը վկայում է, որ, թերևս առաջին անգամ փորձ է արվում ձերբազատվել զուտ «ստանդարտ» մոտեցումներից և ապահովել հնարավորինս համակարգված ու համալիր գործընթաց, համարժեք հաշվի առնել հայրենական իրավական մշակույթի, քաղաքական զարգացումների ու միտումների ողջ տրամաբանությունը, ժողովրդավարության հենքով ձևավորված միջազգային փորձն ու միջազգային իրավական չափանիշները: Միաժամանակ այդ հիրավի պատասխանատու գործընթացը խիստ հետևողականորեն ուղեկցվել է աննախադեպ ընդգրկուն հանրային քննարկումներով, ներգրավվել

են նեղ մասնագետներ, քաղաքական ուժերի ու հասարակական միավորումների ներկայացուցիչներ, պարզապես շահագրգիռ մարդիկ, ընդ որում, մասնագիտական հանձնաժողովի անդամներն իրենք են նախաձեռնել հանրային քննարկումներ նաև Հանրապետության մարզերում, առանձին բուհերում, գիտահետազոտական հաստատություններում և այլ կառույցներում: Նպատակը, թերևս, մեկն էր՝ հանրության շրջանում ապահովել անհրաժեշտ իրազեկվածություն, ընդ որում, հետագա զարգացումները ցույց տվեցին, որ այդ խնդրի լուծումն արձանագրեց նկատելի հաջողություններ:

Սույն հետազոտությունը, որն իրականացրել են ինչպես մասնագիտական հանձնաժողովի, այնպես էլ վերջինիս գործունեությանն աջակցող փորձագետներ, ևս համահունչ է վերը նշված նպատակի իրագործմանը: Հետազոտողները միաժամանակ իրենց առջև խնդիր են դրել ոչ միայն հնարավորինս հանրամատչելի լեզվաճով բացահայտել սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի հիմնադրույթների բովանդակությունը, այլև պարզաբանումներ տալ Սահմանադրության փոփոխությունների նախագծում դրանց իրացման տեսանկյունից: Ինչ խոսք, այս հետազոտությունում արտացոլված դատողություններն ու եզրահանգումները բացառապես հեղինակային ողղվածություն ունեն, սակայն դրանց հիմքում ընկած են հետազոտությունների փուլում արդեն իսկ հրատարակված նյութերի և դրանց առնչությամբ միջազգային իրավասու փորձագիտական կառույցների եզրակացությունները: Այնուամենայնիվ, առաջադրված եզրահանգումները կրում են սուբյեկտիվ բնույթ, դրանցում հեղինակները փորձել են արտացոլել իրենց սեփական մոտեցումներն ու դիրքորոշումները, ինչը բնորոշ է գիտագործնական այս կարգի վերլուծություններին:

Կարևոր է ընդգծել, որ վերը նշված տարաբնույթ մոտեցումների, ինչպես նաև մասնագիտական հանձնաժողովում ու հանրային քննարկումների արդյունքներով տեսակետների շտկման գործընթացները ևս վկայում են այն մասին, որ տեղի է ունեցել հիրավի

համակողմանի և նախապես չկանխորոշված իրավաստեղծ գործունեություն: Աշխատաքների ընթացքը, թերևս, բերում է այն համոզման, որ քննարկումների արդյունքում մերժվել են բազմաթիվ էական իրավական լուծումներ, իսկ ներկայացված հակափաստարկների հաշվառմամբ շրջանառության մեջ են դրվել միանգամայն նոր տարբերակներ:

Մասնագիտական հանձնաժողովը գործնականում ունակ գտնվեց վեր կանգնելու արհեստավարժության ու պատվախնդրության նեղ ընկալումներից և դրսևորեց անհրաժեշտ պատրաստականություն՝ հանրության տարբեր շերտերի ներկայացուցիչների առաջարկությունները համարժեք հաշվի առնելու և վերջնական փաստաթղթում դրանք արտացոլելու հարցում: Բոլոր այն դեպքերում, երբ ներկայացված առաջարկություններն ու մոտեցումները համարվել են բավարար չափով չհիմնավորված ու անընդունելի, հեղինակներին տրվել է սպառիչ պարզաբանում:

Հուսանք, որ սահմանադրական բարեփոխումների ներկայիս գործընթացներն ու այդ հենքով իրականացվող իրավակիրառ գործունեությունն ի զորու կլինեն նպաստելու հայրենական սահմանադրականության կայացման չափազանց բարդ ճանապարհին ծառայած հիմնախնդիրները ողջամտորեն լուծելու պատասխանատու առաքելությանը:

***Հայաստանի Հանրապետության Նախագահին
առընթեր սահմանադրական բարեփոխումների
մասնագիտական հանձնաժողովի անդամ, ԵՊՀ
սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
«Սահմանադրական իրավունքի կենտրոնի»
նախագահ ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ***

ԳԼՈՒԽ 1.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում (այսուհետև՝ Հայեցակարգ) առանցքային են համարվել այն պահանջները, որոնց հաշվառմամբ պետք է մշակվի է պաշտոնական շրջանառության մեջ դրվի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը: Ստորև շարադրվող պահանջները հնարավորություն են տալիս առավել համարժեք պատկերացում կազմելու այն փաստաթուղթը մշակելու ընդհանուր մեթոդաբանության վերաբերյալ, որը պատրաստվում է ներկայացվել համաժողովրդական հանրաքվեի.

«1. Փոփոխությունները ներկայացվելու են ըստ գլուխների ու կոնկրետ հոդվածների՝ հաշվի առնելով համակարգային փոխառնչությունները:

2. Յուրաքանչյուր փոփոխություն հիմնավորվելու է՝ հաշվի առնելով.

ա) դրա արդիականությունը և հրատապությունը մեր երկրի համար,

բ) Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունները,

գ) միջազգային սահմանադրական զարգացումների ընդհանուր տրամաբանությունը և առկա փորձը,

դ) միջազգային և ներպետական դատական պրակտիկան:

3. Յուրաքանչյուր գլխում առաջարկվող փոփոխությունները քննարկվելու են նաև Վենետիկի հանձնաժողովի փորձագետների հետ և այն անձանց ու կազմակերպությունների մասնակցությամբ, որոնք ներկայացրել են կոնկրետ առաջարկություններ»:

Հարկ է նկատել, որ «արդիականության» և «հրատապության» տեսանկյունից հարցադրումները գնահատելիս, համարժեք հաշվի են առնվում նաև հեռանկարային գործոնները՝ իրենց էվոլյուցիայի մեջ: Սահմանադրությունը, լինելով ելակետային նշանակություն ունեցող իրավական ակտ, միտված է այնպիսի իրավակարգավորման, որը թիրախավորում է ոչ միայն տվյալ պահին ձևավորված հիմնարար, այլև կանխատեսվող հարաբերությունները:

Ինչպես Հայեցակարգի, այնպես էլ Սահմանադրության փոփոխությունների նախագծի մշակման աշխատանքներում առաջարկություններ ու նկատառումներ ներկայացրած անձանց հետ անմիջական շփումների միջոցով քննարկումները նվազագույնը միտված են ինչպես օրինաստեղծ գործընթացի արդյունավետության, այնպես էլ դրա նկատմամբ վստահության բարելավմանը: Այս փուլում արդեն մասնագիտական հանձնաժողովը հանդիպել է առաջարկությունների հեղինակ տասնյակ քաղաքական ուժերի ու անձանց, այդ թվում՝ նեղ մասնագետների հետ, ընդ որում, հանդիպումները ցույց են տվել, որ նշված հանձնաժողովը չի ղեկավարվում կարծրատիպերով և պատրաստ է վերանայելու անգամ ձայների մեծամասնությամբ ընդունված դիրքորոշումները:

Ինչ վերաբերում է միջազգային սահմանադրական զարգացումների ընդհանուր տրամաբանությանը և փորձին, ապա հարկ է նկատել, որ, թերևս, առաջին անգամ է «միջազգային փորձ» եզրույթն ուղեկցվել որոշակի վերապահումով՝ «միջազգային սահմանադրական զարգացումների ընդհանուր տրամաբանությամբ», ին-

չից բխում է, որ իր ինքնուրույն իրավական մշակույթը և ինքնատիպ իրավական համակարգ ձևավորելու հավակնություններ ունեցող երկրի համար չի կարող անվերապահորեն և ամբողջությամբ ընդունելի լինել անգամ կատարյալ որևէ իրավական ինստիտուտ, քանզի այն հենց կատարյալ է տվյալ իրավական համակարգի ու իրավական մշակույթի համատեքստում, իսկ դրա հատվածաբար կիրառումը կարող է խիստ խնդրահարույց լինել և վնասել: Բացի այդ, այս կամ այն իրավական ինստիտուտի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար հարկ է համակողմանի ուսումնասիրել վերջինիս իրավակիրառ արդյունքները, դրա առնչությամբ դրան քաջածանոթ իրավագետների տեսակետները և այլն:

Սահմանադրական բարեփոխումների առանձին հարցադրումների հիմնավորված լուծումներին, հատկապես մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների կտրվածքով, անգնահատելի նպաստ կարող են բերել միջազգային դատական ատյանների նախադեպային դատական ակտերը, որոնք, ըստ էության, կազմում են միջազգային իրավունքի աղբյուրների անքակտելի հատվածը: Դրանք ներպետական օրինաստեղծ և իրավակիրառ գործունեությունում հաշվի առնելու որոշակի փորձ արդեն ձևավորվել է, ուստի դրանց անդրանառնալ երաշխավորված է նաև անհրաժեշտ իրազեկվածության առկայության տեսանկյունից:

Սահմանադրական բարեփոխումների իրավաքաղաքական նախադրյալները: Սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը և դրա իրականացման իրավաքաղաքական նախադրյալները համարժեք ներկայացնելու նկատառումով, նախ, նպատակահարմար է առանձնացնել սահմանադրականության զարգացման փուլերը՝ ըստ Հայեցակարգի:

Առաջին փուլը, որն ընդգրկում է 1995-2005 թթ., սկիզբ է առել 1995թ. ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադ-

րությամբ: Բնականաբար, նորանկախ պետությունում այն բովանդակային, կառուցվածքային ու եզրութաբանական չափանիշներով էապես տարբերվում էր նախկինում ընդունված խորհրդային սահմանադրություններից և արձանագրում էրև առաջընթաց քայլ: Միաժամանակ, սահմանադրականության առնչությամբ իրավական մշակույթը, ըստ էության, դեռևս պատրաստ չէր ոչ միայն երևաշխավորելու ամբողջովին անխոցելի սահմանադրական նորմերի ամրագրման, այլև հիրավի ժողովրդավարական ինստիտուտների անխափան կիրառման հուսալի գործընթաց:

Ինչևէ, Հայեցակարգում ամրագրվել է այն մոտեցումը, ըստ որի. 1995թ. ընդունված Սահմանադրությունը նշանակալից և առանցքային դերակատարում է ունեցել. «Հայաստանում ժողովրդավարության հաստատման, իրավական պետության հիմքերի ամրապնդման, ճգնաժամային իրավիճակներում սահմանադրական ճանապարհով լուծումներ գտնելու, պետական իշխանության ինստիտուտների աստիճանական կայացման, մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների ամրագրման գործում»:

Եթե փորձելու լինենք առանձնացնել սահմանադրականության զարգացման հիշյալ փուլի առավել էական ասպեկտները, դրանց ուղղվածությունը և ակնկալվելիք արդյունքները, ապա հարկ կլինի նկատել, որ այդ Սահմանադրությամբ ակամա կենտրոնական նշանակություն ձեռք բերեցին կառուցակարգային խնդիրների լուծումը, այլ կերպ ասած՝ օրակարգային հարցադրումների կազմում պետական իշխանության կազմավորման ու ամրապնդման խնդիրներն էին: Այս երևույթը, թերևս, բնորոշ է անկախության գործընթաց սկսած յուրաքանչյուր պետության պարագայում, քանզի տևական ժամանակ անկախության բացակայությունը հիմքեր է ստեղծում այնպիսի իրավագիտակցության, որ ե-

րաշխավորված իրավաքաղաքական հիմքեր ձևավորելու տեսանկյունից առաջնային նշանակություն ունեն ոչ այնքան բուն ժողովրդավարական ինստիտուտներն ու մարդու իրավունքներն ու ազատությունները, որքան հուսալի պետական իշխանության համակարգ ունենալը: Պետական իշխանության և դրա իրականացումն ապահովող մարմինների կազմավորման հարցադրումների նշանակությունը թելադրված էր նաև աշխարհաքաղաքական պայմաններով. երկիրը շարունակում էր գտնվել պատերազմական վիճակում, ինչը հուսալի պետական կառույցների գոյությունը դարձնում էր խիստ անհրաժեշտ:

Միաժամանակ, հիշյալ զարգացումները ոչ միայն չէին բացառում, այլև ենթադրում էին, որ իրավական մշակույթն աստիճանաբար հակվելու է նաև մարդու իրավունքների, ազատությունների երաշխավորված պաշտպանության, միջազգային իրավունքի չափանիշների համալիր ապահովման գերխնդրի լուծմանը, ինչին նպաստեց նաև Եվրախորհրդին անդամակցելու գործոնը:

Ինչևէ, սահմանադրական բարեփոխումների 1-ին փուլն անխուսափելիորեն բախվեց հետևյալ հիմնախնդիրների լուծման անհրաժեշտության հետ.

- միջազգային համագործակցության շրջանակների ընդլայնումն ու ժողովրդավարական կայուն ավանդույթներ ունեցող երկրների հետ հարաբերությունների գրավականը դարձել էր միջազգային իրավունքի չափանիշներին լիարժեք համահունչ սահմանադրական հիմքեր ձևավորելու անհրաժեշտությունը: Արդեն այդ փուլում պարզ դարձավ, որ սոսկ անկախ պետականության իրավական հիմքերի վրա բևեռված Հիմնական օրենքը չի կարող բավարար գրավական լինել պետության ոչ միայն արտաքին կայուն ու հուսալի, այլև արդյունավետ ներքին քաղաքականության համար,

- Սահմանադրության նորմերում, բնականաբար, արտացոլված էին մարդու որոշակի հիմնարար իրավունքներ և ազատություններ, ամրագրված էին նաև դրանց պաշտպանության իրավական երաշխիքներ, սակայն համարժեք սահմանված չէր դրանց իրավական արժեքը, մասնավորապես ընդգծված չէր մարդու իրավունքների, ազատությունների և արժանապատվության գերակայությունը, ինչը մասամբ բացատրվում էր այդ իրավական հարցադրումների առնչությամբ դեռևս խորհրդային իրավական պատկերացումներով: Իհարկե, միջազգային պայմանագրերի գերակայության առնչությամբ սահմանադրական նորմերը որոշակի երաշխիք էին, որպեսզի դրանք ոչ միայն փաստացի ներառվեին ազգային իրավական համակարգում, այլև ունենային հստակ իրավակիրառ պրակտիկա, սակայն գործնականում պարզ դարձավ, որ սեղմ ժամկետում ակնկալել, որպեսզի միջազգային պայմանագրերում ամրագրված հիմնադրույթները կարող են ինքնըստինքյան կյանքի կոչվել, իրատեսական չէ:

Հարկի է նկատել, որ տվյալ դեպքում խոսքը ոչ թե միջազգային իրավունքի նորմերը պարզապես սահմանադրական աստիճանի հասցնելու, այլ առավել սկզբունքային, հիմնարար արժեք ունեցող հիմնադրույթներն անմիջապես պետության Հիմնական օրենքում ամրագրելու և դրանց բարձր իրավական արժեքն ընդգծելու միջոցով անհրաժեշտ իրավական մշակույթ ձևավորելու մասին է,

- անհրաժեշտ հետևողականությամբ իրացված չէր իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը: Այսպես, հստակ չէին Հանրապետության Նախագահի ինստիտուտի տեղը պետական իշխանության համակարգում, պատասխանատվության շրջանակները՝ գործադիր իշխանության ոլորտում: Որոշակիացման անհրաժեշտություն ունեին նաև վարչապետի ինստիտուտի տեղն ու դերը գործադիր իշխանության համակարգում: Արդեն այդ

փուլում իրավագետների շրջանում տարաձայնություններ կային հիշյալ հարցադրումների առնչությամբ: Ընդ որում, ձևավորված պատկերացումների համաձայն, Հանրապետության Նախագահի լիազորությունների շրջանակը հարկ է նեղացնել՝ հնարավորություն տալով խորհրդարանին ձեռք բերելու առավել նկատելի վերահսկողական լիազորություններ, իսկ գործադիր իշխանության մարմիններին գործելու առավել ինքնուրույն ու արդյունավետ: Սակայն այս փուլում դեռ բավարար չափով նկատելի չէին իշխանությունների բաժանման սկզբունքի լիարժեք իրացման ուղենիշները. ենթադրվում էր, որ սույլ լիազորությունների վերաբաշխման միջոցով հիմքեր կստեղծվեն վերը նշված սահմանադրական սկզբունքի երաշխավորման համար,

- արդեն այդ փուլում նկատելի էր դարձել Ազգային ժողովի, որպես օրինաստեղծ ու ներկայացուցչական մարմնի, գործունեության ոչ բավարար արդյունավետությունը: Ըստ էության, խորհրդարանն ընկալվում էր, որպես քաղաքականություն կանխորոշող կառույց, սակայն օրինաստեղծ գործունեությունում սահմանափակ նախաձեռնություն դրսևորելու արդյունքում, երկրում քաղաքականություն թելադրող հիմնական մարմինը հանդես էր գալիս Հանրապետության Նախագահը և կառավարությունը: Հայեցակարգում իրավամբ ընդգծվում է նաև. «Անհրաժեշտ չափով գործուն չէին Ազգային ժողովի արդյունավետ օրինաստեղծ աշխատանքն ու վերահսկիչ դերն ապահովող սահմանադրական նախադրյալները: Այս խնդրի լուծումը հնարավոր էր սահմանադրական բարեփոխումների արդյունքում, մասնավորապես, Ազգային ժողովին վերապահելով ստանձնած քաղաքական պատասխանատվությունն իրականացնելու գործում առավել մեծ ինքնուրույնություն, հաղթահարելով Ազգային ժողովը լուծարելու՝ Հանրապետության Նախագահի գրեթե բացարձակ հայեցողական իրավունքը, ուժեղացնելով

իշխանության այլ թևերի գործառության լիազորությունների նկատմամբ Ազգային ժողովի հակակշռող ներազդեցությունը»:

Կարող ենք արձանագրել, որ Հանրապետության Նախագահի լիազորությունների սահմանափակման առնչությամբ մոտեցումները մասամբ թելադրված էին նաև արտաքին, աշխարհաքաղաքական գործոններով: Երկիրը դուրս էր եկել պատերազման վիճակից, կնքվել էր հրադադար, որը ժամանակ առ ժամանակ խախտվում էր, սակայն մի շարք գործոնների, այդ թվում՝ միջազգային կառույցների նկատելի միջամտությունը հանգեցրել էր այնպիսի տրամադրությունների, որ տարածքային խնդիրը, ի վերջո, կունենա տրամաբանական հանգրվան, և կդադարեցվեն ռազմական գործողությունները: Իսկ այդպիսի մտայնությունը զուգահեռ հնարավորություն էր տալիս ելակետ ընդունելու այն դիրքորոշումը, ըստ որի՝ խիստ կենտրոնացված իշխանության անհրաժեշտության կարիք այլևս չկար,

- ըստ էության, դատական իշխանության անկախության անհրաժեշտությունը գիտակցվում էր նաև մինչև Սահմանադրության ընդունումը, սակայն դեռ վաղ էր խոսել այդ կարևորագույն խնդրի համարժեք ընկալման մասին: Սահմանադրության նորմերի կիրառումը բերեց այն ակնհայտ արդյունքին, որ դատական իշխանության անկախությունն անհարկի վտանգված է ինչպես արտաքին հանրային իշխանության մարմինների, այնպե՛լ էր ներքին կառուցակարգերում: Դրա վառ վկայությունն էր այն, որ դատական իշխանության անկախության երաշխավորի դերը վերապահվել էր Հանրապետության Նախագահին, որը միաժամանակ արդարադատության խորհրդի նախագահն էր: Ընդ որում, արդարադատության խորհրդի կազմն էլ առանձնակի չէր կարող նպաստել դատական իշխանության անկախությանը: Բնորոշ է այն, որ վերջինիս կազմում անգամ ընդգրկվել էին դատախազներ, որոնք փոր-

ծում էին սահմանադրական կառույցն օգտագործել հենց դատավորների ինքնուրույնությունը խափանելու, այն խոցելի դարձնելու նկատառումով: Ինչ խոսք, այս մտայնությունն արտաքուստ բացատրվում էր դատական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի խնդիրներով, սակայն ինքնին հասկանալի էր, որ նշված լծակներն ու դրանց կիրառման մեթոդաբանությունն ընդհանուր աղերսներ չունեն կոռուպցիայի դեմ պայքարի խնդիրների հետ:

Հավելենք, որ ինչպես այդ փուլում, այնպես էլ ներկայումս դեռևս չի ձևավորվել դատական իշխանության համակարգում կոռուպցիայի և այլ իրավախախտումների դեմ պայքարի առանձնահատկությունները համարժեք գիտակցելու իրավակլան մշակույթ: Հաճախ, փորձ է արվում զինանոցում կիրառել այնպիսի եղանակներ ու միջոցներ, որոնք կարող են արդյունավետ ու ընդունելի լինել գործադիր իշխանության ոլորտում ընդգրկված հանրային ծառայողների նկատմամբ, սակայն ոչ երբեք՝ դատավորների պարագայում:

Բարեփոխումների անհրաժեշտությունն այդ ոլորտում թելադրված էր նաև միջազգային իրավական չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ, մասնավորապես առկա սահմանադրական կարգավորումները մի շարք հարցադրումներով բացարձակապես չէին համապատասխանում այդ չափանիշներին, իսկ դրանք սոսկ իրավակիրառ պրակտիկայի կամ ընթացիկ օրենսդրության շտկումների միջոցով հնարավոր չէր լուծել,

- հաջորդ սկզբունքային խնդիրը սահմանադրական արդարադատության ինստիտուտի բարելավման անհրաժեշտությունն էր, հարկ էր վերանայել դատավարության ինչպես սուբյեկտների, այնպես էլ օբյեկտների շրջանակը: Ընդ որում, վարչական արդարադատության բացակայության պայմաններում հայրենական իրավական մշակույթում դեռևս հստակեցված չէր սահմանադրական

արդարադատության ինստիտուտի բովանդակությունը,

- բարեփոխումների հաջորդ թիրախը տեղական ինքնակառավարման ինստիտուտն էր, որը, չունենալով իր նախատիպը հայրենական իրավաքաղաքական համակարգում, չէր համապատասխանում միջազգային իրավական չափանիշներին ոչ միայն կառուցակարգային, այլև իրավական հիմքերի կտրվածքով: Հարկ էր հնարավորինս նկատելի ընդլայնել տեղական ինքնակառավարման ինստիտուտի ինքնուրույնությունը, միաժամանակ այդ համակարգն արդյունավետ կերպով ընդգրկելով հանրային իշխանության մեջ՝ վերապահելով բավարար չափով իշխանության այդ տեսակին բնորոշ կարգավիճակ,

- վերջապես նշված փուլում արդիական նշանակություն էին ձեռք բերել անհրաժեշտ հստակություն ապահովող խմբագրական շտկումներին առնչվող խնդիրները:

Երկրորդ փուլն ընդգրկում է 2005 թվականից հետո ընկած ժամանակահատվածը: 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեի միջոցով իրականացված սահմանադրական բարեփոխումները որոշակի չափով արձանագրեցին վերը նշված խնդիրների լուծում, ընդ որում, կարելի է արձանագրել, որ հիշյալ բարեփոխումների միջոցով հնարավոր եղավ այդ փուլի համար ընդունելի հարթությամբ ապահովել համակարգային լուծումներ:

Այս փուլում, թերևս, ակնհայտ դարձավ, որ սույն միջազգային չափանիշներին համահունչ իրավական լուծումներ առաջադրելու, ինչպես նաև արտասահմանյան երկրների փորձին ներդաշնակ լուծումներ առաջադրելու միջոցով հնարավոր չէ ամբողջությամբ լուծել հուսալի ժողովրդավարական սահմանադրականության կայացման խնդիրը: Մյուս կողմից հարկ էր ելակետ ընդունել այն, որ կանխատեսելի զարգացումներ, մասնավորապես Սահմանադրության նորմերի անխափան կատարումն ապահովելու նկատառումով

հարկ է հաշվի նստել նաև սուբյեկտիվ գործոնների հետ: Մյուս կողմից, կարծում ենք, սուբյեկտիվ գործոնները մեկուսի չեն ձևավորվում, դրանց ձևավորման վրա յուրօրինակ ազդեցություն են ունենում նաև իրավական նորմերը, այդ թվում՝ սահմանադրական հիմնադրույթները: Սահմանադրության, որպես պետության հիմնական օրենքի դրույթները, որպես կանոն, առավել մեծ չափով են ազդում մարդկանց, այդ թվում՝ պաշտոնյաների իրավագիտակցության վրա: Գործնական վերլուծությունները, թերևս, բերում են այն համոզման, որ մարդիկ, հատկապես ներկայումս շատ ավելի են ծանոթ Սահմանադրության դրույթներին, քան որևէ այլ օրենսդրական ակտին: Սահմանադրության նկատմամբ քամահրական վերաբերմունքը բնորոշ էր խորհրդային իրավաքաղաքական համակարգին, մինչդեռ մեր օրերում Սահմանադրության առնչությամբ մարդկանց գիտելիքներն ու իրազեկվածությունն անհամեմատ աճել է. բազմիցս կարելի է ականատես լինել իրավիճակների, երբ հրապարակախոսության հարթությամբ բանավեճերի կողմերը, լրագրողները և պարզապես այլ մասնագետներն իրենց խոսքում ցուցաբերում են Սահմանադրության անհամեմատ լավ իմացություն:

Այսպիսով, սահմանադրական բարեփոխումների արդի փուլի առանձնահատկությունն այն է, որ համարժեք գիտակցելով սահմանադրականության կայացման գործընթացում իրավական մշակույթի առանցքային նշանակությունը, այնուամենայնիվ, ելակետ է ընդունվում նաև այն մոտեցումը, որ խորիմաստ ու թիրախավորված իրավական նորմերը կարող են նպաստել նաև ակնկալվող իրավական մշակույթի ձևավորմանը:

2005 թվականի սահմանադրական բարեփոխումները, բավարար նախադրյալներ չստեղծեցին իրավունքի գերակայության համար, քանզի բավարար համարվեց սոսկ «իրավական պետության»

գաղափարը և մի շարք այլ սահմանադրական նորմեր: Բնորոշ է այն, որ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք», այդպես էլ իր արտացոլումը չստացավ ոչ միայն իրավակիրառ, այլև իրավաստեղծ գործունեությունում: Ըստ էության, այդ խիստ կարևոր սկզբունքը համարժեք արտացոլված չէ նաև պաշտոնական փաստաթղթերում, ինչի արդյունքում անհարկի հավասարության նշան է դրվում այդ սկզբունքի և օրենքի գերակայության միջև:

Հայեցակարգում հիշյալ զարգացումները իրենց արտացոլումը գտան հետևյալ ձևակերպմամբ. «Հայաստանի Հանրապետության համար առանցքային խնդիր շարունակեց մնալ պետախշխանական լիազորություններով օժտված մարմինների սահմանադրական գործառույթների ու իրավասության ներդաշնակումը, դրանց հայեցողության սահմանների հստակեցումը, իրավունքով իշխանության սահմանափակման իրական նախադրյալների ստեղծումը: Դա հիմնական ճանապարհն է հաղթահարելու համար սուբյեկտիվիզմի ու կամայականության դրսևորումները, սուվերային երևույթները՝ պետախշխանական լիազորություններն իրականացնելիս: Միաժամանակ, մարդու իրավունքների սահմանափակումների և իշխանության հայեցողության սահմանների հստակեցմանը վերաբերող հարցերի սահմանադրաիրավական ներկա լուծումները բավարար ներդաշնակ չեն եվրոպական արդի սահմանադրական զարգացումների միտումների հետ, լիարժեք չէ անմիջականորեն գործող սահմանադրական իրավունքների պաշտպանության համակարգը, գործնականում սահմանադրական մակարդակում չի երաշխավորվում իրավական պետության չափորոշիչներին համարժեք իրավունքի պաշտպանություն»:

Սահմանադրական բարեփոխումների ներկա փուլում քննարկման նյութ դարձավ այն խնդիրը, թե ինչու են իշխանությունները հաճախ դիմում սահմանադրական փոփոխությունների: Այս առնչությամբ հարկ է նկատել, որ գործնականում առկա է իրավիճակը համարժեք գնահատելու որոշակի շփոթ: Նախ, համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ սահմանադրական փոփոխությունների պարբերականությամբ հայրենական իրավական համակարգը բնավ չի տարանջատվում մյուս երկրների իրավական համակարգերից: Ընդ որում, խոսքը նաև այնպիսի երկրների իրավական համակարգերի մասին է, որոնք տևական էվոլյուցիայի արդյունքում ձեռք են բերել հնարավորինս կայուն իրավակարգավորումներ:

Հայրենական իրավական համակարգը գնահատելիս, անտեսվում է, որ դեռևս չի ձևավորվել սահմանադրականության զարգացման այնպիսի ճկուն լծակներ, որոնք լայն տարածում ունեն միջազգային փորձի տեսանկյունից և մեղմում են հաճախակի սահմանադրական փոփոխությունների դիմելու անհրաժեշտությունը: Այս նկատառումով Հայեցակարգում համակարգված առանձնացվում են սահմանադրականության զարգացման արդի «խողովակները»՝

- ա) նոր սահմանադրությունների ընդունում,
- բ) գործող Սահմանադրության մեջ լրացումների և/կամ փոփոխությունների կա-տարում,
- գ) իրավական ակտերի և իրավակիրառ պրակտիկայի հետևողական ու հա-մակարգված սահմանադրականացում,
- դ) օրգանական կամ սահմանադրական օրենքների ընդունում,
- ե) սահմանադրության նորմերի պաշտոնական մեկնաբանում,
- զ) սահմանադրական լիազորությունների հարցով իշխանության մարմինների միջև առաջացած վեճերի լուծում:

Նշված առնվազն վեց միջոցներից Հայաստանի Հանրապետության պարագայում վերջին երեքն առկա չեն, իսկ «գ» կետի գործողության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքները լիարժեք չեն:

Բնականաբար, իրավական միջոցների սահմանափակ բնույթն ակամա ստեղծում է լուրջ բարդություններ՝ սահմանադրական էվոյուցիայի, դինամիկ զարգացումների տեսանկյունից: Մասնավորապես, օբյեկտիվորեն գործնական նշանակություն են ձեռք բերում «ա» և «բ» կետերով նախատեսված միջոցները, ինչի արդյունքում էլ անխուսափելիորեն այն թյուր տպավորությունն է ստեղծվում, որ մեր երկրում առավել հաճախ են իրականացվում սահմանադրական փոփոխություններ: Մինչդեռ, բազմաթիվ երկրներում լայն տարածում ունեն սահմանադրական զարգացումների խնդրի լուծումը վերը նշված «դ» և «զ» կետերով նախատեսված միջոցներով:

Այսպես, հաճախ ոչ բավարար իրազեկվածության պայմաններում այն «արտառոց» պնդումն է արվում, որ իբր ԱՄՆ-ում տևական ժամանակ գործող Սահմանադրությունում խիստ հազվադեպ են լրացումներ կատարվում: Իրավիճակին հնարավորինս համարժեք գնահատական տալու նկատառումով հարկ է հաշվի առնել, որ ԱՄՆ-ում գործում է նախադեպային իրավունքը, որպիսի պարագայում ԱՄՆ-ի Գերագույն դատարանի՝ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության վերաբերյալ դատական ակտերը ոչ միայն պարզապես հանդիսանում են իրավունքի ինքնուրույն աղբյուրներ, այլև հանդիսանում են սահմանադրականության բաղադրիչ:

Ասվածը վկայում է այն մասին, որ սահմանադրական բարեփոխումների արդի փուլում հընթացս ծագել է սահմանադրորեն այնպիսի լրացուցիչ միջոցների ամրագրումը, որոնք հնարավոր

րություն կտան հնարավորինս ձեռնպահ մնալ հանրաքվեի միջոցով սահմանադրական փոփոխությունների գործընթացից բոլոր այն դեպքերում, երբ «նժարի» վրա են դրված սահմանադրականության հետ անմիջականորեն առնչվող այնպիսի հարցադրումներ, որոնք կարող են լուծվել նաև այլ ընդունելի եղանակներով՝ առանց վնասելու անմիջական ժողովրդավարության ինստիտուտի ձեռքբերումները: Այս նկատառումով Հայեցակարգն առանձնացրել է հետևյալ հիմնախնդիրները՝

1. Զուտ մեթոդաբանական չափանիշներով անհրաժեշտ է հետևողական անցում կատարել «իշխանակենտրոն սահմանադրական լուծումների համակարգից մարդակենտրոն համակարգի»: Ընդ որում, փաստվում է, որ 2005թ. սահմանադրական բարեփոխումների միջոցով հիշյալ խնդիրը հնարավոր չի եղել հավուր պատշաճի լուծել:

Հայեցակարգում իրավունքի գերակայության սկզբունքի իրացման նախադրյալների ստեղծման նպատակով անհրաժեշտ է համարվել հետևյալը՝

«- համակարգային ամբողջականության մեջ հիմնական իրավունքների անմիջական գործողության երաշխավորում, դրանց ապահովման ու պաշտպանության սահմանադրական հիմքերի ամրապնդում, այս հարցում հանրային իշխանության պոզիտիվ պարտականության և հանրային-իրավական պատասխանատվության հստակեցում,

- իշխանության հայեցողության սահմանափակում իրավունքով»:

Հայեցակարգում իրավամբ հիմք է ընդունվել այն մոտեցումը, ըստ որի՝ իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական ու համակարգված ամրագրման ու կիրառման արդյունքում իրատեսական է դառնում սահմանադրական իրավունքների անմիջական

գործողությունը, երաշխավորվում է իշխանության սահմանափակումը՝ մարդու արժանապատվության, իրավունքների ու ազատությունների հենքով, ինչի արդյունքում ակնհայտորեն նեղանում են իշխանության կողմից կամայական, սուբյեկտիվ դրսևորումների հնարավորությունները:

Ընդ որում, տվյալ դեպքում «իշխանություն» եզրույթը ներառում է ոչ միայն Սահմանադրությամբ նախատեսված պետական իշխանության մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնյաների կողմից իրականացվող իշխանությունը, այլև ժողովրդի կողմից անմիջականորեն իրականացվող իշխանությունը: Այլ կերպ ասած իշխանության հիմնական կրողը է ժողովուրդը, ևս պետք է սահմանափակված լինի իրավունքի գերակայության սկզբունքով. օրինակ ժողովուրդը չի կարող հանրաքվեի կամ անմիջական ժողովրդավարության այլ եղանակներով սահմանափակել կամ որևէ այլ միջոցով խաթարել մարդու բնական իրավունքները:

2. Հարկ է համարժեք դրույթներ ամրագրել, որոնք կերաշխավորեն սոցիալական պետության լիարժեք դրսևորմանը: Այս տեսանկյունից լուրջ ու բազմակողմանի քննարկման նյութ է այն հարցադրումը, թե կոնկրետ ինչ չափանիշներով կարող է պետությունը միաժամանակ լինել և «իրավական» և «սոցիալական»: Իհարկե, բնական է, որ պետությունը պետք է լինի իրավական, սակայն, որպեսզի իրավական պետությունը միաժամանակ լինի սոցիալական, ապա անհրաժեշտ են լուրջ վերապահումներ: Եթե մենք համարժեք ընկալենք պետության իրավական և սոցիալական բնույթը, ապա կարող են ելակետ ընդունել այն, որ պետությունը պարզապես չի կարող միաժամանակ լիարժեք լինել իրավական և սոցիալական: Այս հարցում շփոթը, թերևս, պայմանավորված է այն ավանդական մոտեցմամբ, որ «սոցիալական պետություն» եզրույթն ըն-

կալվում է, որպես սոցիալական քաղաքականությունն առաջնային համարող պետությունը, մինչդեռ ցանկացած ժողովրդավարական պետություն, անկախ նրանից, այն իրեն կիռչակի սոցիալական, թե՛ ոչ, միևնույն է, անխուսափելիորեն իրականացնում է սոցիալական քաղաքականություն, այսինքն՝ այս կամ այն չափով կիրառում է սոցիալական ապահովության, սոցիալապես թույլ պաշտպանված խավերին աջակցելու և այլ համակարգեր, սակայն դրանք բնավ բավարար պայման չեն, որպեսզի պետությունը որակվի, որպես՝ «սոցիալական պետություն»:

«Սոցիալական պետության» պարագայում հարկ է որոշակիորեն վերանայել իրավական մի շարք այնպիսի չափանիշներ, որոնք առնչվում են իրավահավասարության հետ: Մասնավորապես, իրավահավասարությունը բնորոշ է «իրավական պետությանը», այն չի ենթադրում այդ սկզբունքից որևէ շեղում, մինչդեռ «սոցիալական պետության» պարագայում հարկ է լինում դիմելու հիշյալ սկզբունքից այնպիսի շեղումների, որոնք, ըստ էության, չեն խաթարում իրավահավասարության սկզբունքը, սակայն ենթադրում են այնպիսի վերապահումներ, որոնք լիարժեք են դարձնում սոցիալական թույլ պաշտպանված խավերի կարգավիճակը:

Այսպես, իրավական պետության տեսանկյունից տնտեսական մրցակցության սկզբունքը ենթադրում է, որ անկախ սոցիալական ծագումից ու կարգավիճակից, բոլորին պետք է վերապահվեն հավասար իրավական հնարավորություններ, մինչդեռ սոցիալական պետության պարագայում ենթադրվում է, որ տնտեսական մրցակցության սկզբունքից կարող են լինել շեղումներ՝ ի հոգուտ սոցիալական լրացուցիչ պաշտպանության կարիք ունեցող որոշ խավերի: Թերևս, սոցիալական ուղղվածություն ունեցող պետություններում ձեռնարկատիրության շահութաբեր որոշ տեսակներ (օրինակ՝ վիճակախաղերի կազմակերպում, սպիրտային խմիչքների ու ծխա-

խոտի վաճառք և այլն), առանց որևէ նախնական ընթացակարգերի ու վարչարարության (լիցենզավորում և այլն) վերապահվում են հաշմանդամներին և նմանաբնույթ այլ սոցիալական խմբերին:

3. Հարկ է առավել հստակ կանոնակարգել իշխանություններ բաժանման և հակակշռման սկզբունքը, բացառելով գործնականում իշխանության անհարկի կենտրոնացումը որևէ մարմնի կամ պաշտոնյայի մոտ: Այդ իսկ նկատառումով առաջնային է համարվել «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» շղթայի ներդաշնակությունն ապահովելը: Իշխանությունների բաժանման և հակակշռման սկզբունքի ոչ լիարժեք իրացման պայմաններում հող է ստեղծվում այնպիսի բացասական երևույթների, ինչպիսիք են սովետային քաղաքական հարաբերություններն ու դրանցով թելադրված պայմանավորվածությունները, սուբյեկտիվիզմի դրսևորումները, առանց համարժեք պատասխանատվությամբ ուղեկցվող իշխանության կենտրոնացումը և այլն:

Այս տեսանկյունից առանցքային է համարվում նաև սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի կիրառման համար անհրաժեշտ կառուցակարգային ու իրավական նախադրյալներ ստեղծելը:

4. Ըստ էության, ներկայումս կա անհարկի շփոթ Սահմանադրության 2-րդ հոդվածի մեկնաբանության ու կիրառման առնչությամբ: Ինչպես հայտնի է, Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն, ժողովրդին իրեն պատկանող իշխանությունը կարող է իրականացնել ինչպես անմիջական ժողովրդաիշխանության միջոցներով (հանրաքվե և ընտրություններ), այնպես էլ «Սահմանադրությամբ նախատեսված» պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով ու պաշտոնատար անձանց միջոցով: Մյուս կողմից ներկայումս կազմավորվել են բազմաթիվ պետական մարմիններ, որոնք անմիջականորեն ու բավարար հստակությամբ նախատեսված չեն Սահմանադրությամբ:

Այս պետական մարմինների իրավաչափության հարցը քննարկելիս հաճախ հղում է արվում Սահմանադրության 85-րդ հոդվածի վրա, ըստ որի. «Կառավարության իրավասությանն են ենթակա պետական կառավարման բոլոր այն հարցերը, որոնք օրենքով վերապահված չեն այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների»: Այս սահմանադրական նորմից բխեցվում է, որ Սահմանադրությունը գործադիր իշխանության իրականացման ոլորտում, ի տարբերություն օրենսդիր և դատական իշխանության իրականացման ոլորտների, նախատեսում է օրենքով առանձին մարմինների ստեղծում, որոնց դարձյալ օրենքով կարող են վերապահվել կառավարման գործառույթներ: Գործնականում այս նորմը մեկնաբանվում է նաև այլ իմաստով, որ օրենքով կարող են առանձին պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների վերապահվել կառավարման գործառույթներ, սակայն այդ մարմինները, այնուամենայնիվ, պետք է սահմանված լինեն Սահմանադրությամբ, քանի որ Սահմանադրության 85-րդ հոդվածում խոսք է գնում բացառապես այն դեպքերի մասին, որ արդեն իսկ գոյություն ունեցող մարմիններին են օրենքով վերապահվում լիազորություններ, ոչ թե այդպիսիք կարող են ստեղծվել օրենքի հիման վրա:

Ինչևէ, չտրվելով բանավեճի նրբություններին, նկատենք միայն, որ Սահմանադրությունը բոլոր դեպքերում պետք է բավարարի իրավական որոշակիության պահանջներին, ուստի մասնագետների շրջանում ծագած բանավեճը հարկ է լուծել հետագա հստակեցումների միջոցով: Իսկ այդ նկատառումով իրավական որոշակիության պահանջների բավարարման միջոց է համարվում այնպիսի սահմանադրական կարգավորումը, երբ անխտիր բոլոր պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք հստակ ու միանշանակ սահմանվում են Սահմանադրությամբ:

5. Իրավունքի գերկայության սկզբունքի ամրագրմանը խոչընդոտող հաջորդ գործոնն այն է, որ Հայեցակարգի համաձայն, դեռևս Սահմանադրությամբ հաղթահարված չեն «Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի գերանձնավորվածությունն ու գերկենտրոնացվածությունը: Ակնհայտ անհամամասնություն կա սահմանադրական տարբեր մարմինների լիազորությունների իրական ծավալի և նրանց քաղաքական պատասխանատվության միջև»:

6. Հաջորդ հարցադրումն առնչվում է նախորդ խնդրի հետ, սակայն առավելապես վերաբերում է գործադիր իշխանությանը: Մասնավորապես, ելակետ է ընդունվում այն, որ գործադիր իշխանության համակարգի սահմանադրական հիմքերն անկատար են, մասնավորապես դրանք զուրկ են ներքին կուռ տրամաբանությունից, բացակայում է գործառույթների ու լիազորությունների հստակ սահմանազատում և այլն: Խնդիրն ընդհանուր է, սակայն, հատկապես գործադիր իշխանության պարագայում ցայտուն է այն, որ բացակայում է նվազագույն ներդաշնակություն՝ վերջինիս գործառույթային դերի, իրավասության և պատասխանատվության միջև: Ըստ էության, նկատի է ունեցվում այն, որ գործադիր իշխանությունը համարվում է կառավարման ոլորտի անվերապահ պատասխանատուն, սակայն լիազորությունների ծավալով արդեն այն էապես զիջում է սահմանադրական այլ մարմինների՝ իր ունեցած կարգավիճակով: Այսպես, բազմաթիվ հարցերում էական է Հանրապետության Նախագահի քաղաքական դիրքորոշումը, որն օժտված է նաև ծանրակշիռ իրավասությամբ և կարող է կանխորոշել ողջ կառավարության և գործադիր իշխանության այլ մարմինների գործունեությունը, սակայն պատասխանատվության հիմնական թիրախ է համարվում կառավարությունը:

Այս տեսանկյունից խնդրահարույց է նաև գործադիր իշխանության անկախ մարմինների գործունեությունը, որոնք ոչ միայն անկախ են կառավարությունից, այլև խորհրդարանից, քանզի խորհրդարանական վերահսկողությունը, որն այքնան էլ այս փուլում զգալի չէ, սահմանափակվում է բացառապես կառավարության նկատմամբ իրականացվող որոշակի լիազորություններով:

7. Առանցքային նշանակություն ունեն նաև պառլամենտարիզմի կայացման ու հետագա կայուն զարգացման խնդիրները: Խորհրդարանի ողջամիտ կարգավիճակը ենթադրում է, որպեսզի այն հիրավի դիտարկվի օրինաստեղծ գործունեության քաղաքականությունը որոշող և իրականացնող կառույց: Ասվածից բնավ չի բխում, որ խորհրդարանում պետք է կենտրոնացվեն օրինագծերի մշակման աշխատանքները, որ պատգամավորներն անձամբ պետք է առավել մեծ ծավալով ներգրավված լինեն օրինագծեր մշակելու և խորհրդարան ներկայացնելու գործում: Խնդիրն այլ հարթության վրա. խորհրդարանի սահմանադրական կարգավիճակը ենթադրում է, որ վերջինս պետք է կանխորոշի օրինաստեղծ քաղաքականությունը հստակ կազմված ծրագրերի միջոցով: Մասնավորապես, օրենսդրական նախաձեռնության իրավունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր պատգամավոր պետք է ունենա իրական հնարավորություն՝ պատվիրելու կոնկրետ օրինագծեր: Նպատակահարմար է, որպեսզի այդ աշխատանքներն իրականացնեն բացառապես մասնագիտացված անկախ կառույցները: Ձևավորված պրակտիկայի համաձայն, պատգամավորները խիստ հազվադեպ են օրինագծեր մշակելու աշխատանքները պատվիրում մասնագիտացված կառույցների, մինչդեռ կառավարությունը ոչ միայն այդ աշխատանքներն իրականացնում է հանրային ծառայողների մեծաթիվ կազմի, այնպես էլ օտարերկրյա փորձագետների միջոցով, ինչը գործնականում հանգեցնում է այնպիսի իրավիճակի,

երբ այդ օրինագծերում անհարկի գերակշռում են յուրովի ընկալված գերատեսչական շահերը:

Պատգամավորները օրինագծերի մշակման աշխատանքներում իրենց ակնհայտ պասիվությունը հաճախ բացատրում են մասնագետների ու այլ միջոցների սղությանը, ինչն իրավիճակի անհամարժեք ընկալման արդյունք է: Վերջին հաշվով միայն Ազգային ժողովի աշխատակազմում ընգրկված են շուրջ 800 հանրային ծառայողներ, այդ թվում՝ կոնկրետ ոլորտների ներ մասնագետներ: Բացի այդ, օրինագծերի մշակման աշխատանքները, ինչպես արդեն նկատեցինք, իրավաչափ կլինի վերապահել ոչ թե հանրային ծառայողների, որոնք կոչված են այլ գործառույթներ իրականացնելու համար և չեն էլ կարող լիարժեք անկաշկանդ լինել, այլ մասնագիտացված կառույցների: Ուստի տվյալ դեպքում ներուժի բացակայության մասին խոսելն առնվազն տեղին չէ:

Խոցելի է նաև խորհրդարանի վերահսկողական առաքելությունը, այն դեռևս չի համապատասխանում պետության խորհրդարանի սահմանադրական կարգավիճակին ու միջազգային չափանիշներին, չի բխում իշխանությունների հակակշռման սահմանադրական սկզբունքից և այլն: Բոլոր այն սահմանադրական լծակները, որոնք վերաբերում են վերահսկողության գործառույթի իրականացմանը, ի գորու են երաշխավորելու սոսկ մասնակի, հատվածաբար վերահսկողություն: Իսկ, եթե հավելենք, որ վերահսկողության այդ խոցելի լծակները որևէ կերպ չեն տարածվում նաև մի շարք անկախ գործադիր իշխանության մարմինների գործունեության վրա, ապա պատկերն ամբողջական կլինի: Հարկ է սահմանել գործադիր իշխանության մարմինների նկատմամբ համալիր վերահսկողության անխափան երաշխիքներ, ընդլայնել այն հիմքերը, որոնք կանխորոշում են վերահսկողության սահմաններն ու բովանդակությունը և այլն:

Խորհրդարանի գործունեությունում իրավունքի գերակայության ապահովման երաշխիքներից է նաև պետական իշխանության և կառավարման մարմինների ձևավորման գործում շոշափելի լիազորություններ վերապահելը: Մասնավորապես, այդպիսի լիազորություններ կարող են վերապահվել ոչ միայն գործադիր իշխանության մարմինների, այլև դատական իշխանության մարմինների պաշտոնյաների պարագայում: Ընդ որում, այս խնդրի բարեհաջող լուծումն անխուսափելիորեն կնպաստի նաև վերահսկողության առաքելության առավել իրատեսական լինելուն, ինչպես նաև կբարձրացնի կամայականությունների հնարավորությունը նշված ոլորտում: Միաժամանակ, հարկ չէ ունենալ մտավախություն՝ կապված դատական իշխանության հետ, քանզի այս դեպքում իրականացվող նշանակումների ընթացակարգերը բնավ չեն ենթադրում պարտադիր հաշվետվություն կամ վերահսկողության որևէ բաղադրիչներ:

Վերջապես, հարկ է սահմանադրական անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ ստեղծել՝ խորհրդարանական փոքրամասնության արդյունավետ գործունեության և հակակշռող դերի ամրապնդման համար: Խորհրդարանում փոքրամասնությունը դեռևս որևէ հարցում չի կարող հանդես գալ որոշակի ինքնուրույնությամբ, ազդել քաղաքական գործընթացների իրավական հիքմերի վրա և այլն: Այդպիսի իրավիճակը ոչ միայն չի բխում ժողովրդաիշխանության սկզբունքի էությունից, այլև անհարկի լարվածություն է հաղորդում խորհրդարանական քաղաքական ուժերի փոխհարաբերություններին, նվազեցնում է կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը, քաղաքական փոքրաթիվ ուժերին մղում է քաղաքական կամքի ձևավորման վրա ազդեցության այնպիսի ձևաչափերի, որոնք ընդհանուր քիչ աղերս ունեն պառլամենտարիզմի հետ: Ինչ վերաբերում է կոռուպցիայի դեմ պայքարի խնդիրներին,

ապա ելակետ է ընդունվում այն մոտեցումը, ըստ որի՝ վերահսկող մարմիններում քաղաքական փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավումը երաշխավորում է գործադիր իշխանության նկատմամբ առավել անկաշկանդ ու հետևողական գործունեություն և այլն:

8. Բարեփոխման առանձին բաղադրիչներից են ընտրական համակարգն ու հանրաքվեի ինստիտուտը, որոնք, հանդիսանալով անմիջական ժողովրդաիշխանության լծակներ, ի զորու են ապահովելու ոչ միայն ներդաշնակություն ողջ քաղաքական համակարգում, այլև բարձրացնելու վստահությունը հանրային իշխանության նկատմամբ: Ներկայումս հաճախ է խոսվում այն մասին, որ ընտրական համակարգի ընթացիկ օրենսդրությամբ ամրագրված իրավական հիմքերի պարբերական բարեփոխումը, թերևս, ի զորու չի լինում առավել արդյունավետ դարձնելու ընտրական գործընթացները, բարելավելու դրանց նկատմամբ վստահությունը: Այս առնչությամբ արդիական են դիտարկվում ընտրական համակարգի իրավական հիմքերի արմատական վերանայումը:

9. Վստահության պակասի խնդիրն արդիական է նաև արդարադատության համակարգի առնչությամբ: Դատական իշխանությունը ներկայումս չի ընկալվում, որպես իշխանության մյուս ճյուղերին հակակշռող ու անկախ իշխանության ճյուղ: Այս գերխնդրի լուծմանն էապես խոչընտոմ են մի շարք էական գործոններ: Նախ, դատական իշխանության անկախության և բնականոն գործունեության համար ամրագրված չեն բավարար իրավական հիմքեր, մասնավորապես հիմնական շեշտադրումն արված է դատական ատյանների կառուցակարգային հարցադրումների վրա, մինչդեռ՝ գրեթե անտեսված է լիազորությունների ու դրանց երաշխավորման համար անհրաժեշտ իրավական հստակ հիմքեր սահմանելու անհրաժեշտությունը:

Ինչպես արդեն ասվեց, բարեփոխումների առաջին փուլում էապես բարելավվել էին արդարադատության խորհրդի կազմին ու կարգավիճակին առնչվող կարգավորումները, սակայն դրանք դեռևս համարժեք չեն արտացոլում դատական իշխանության սահմանադրական կարգավիճակին, քանզի դեռևս խոցելի են արդարադատության խորհրդի կազմին, լիազորությունների ծավալին, նյութատեխնիկական ապահովվածությանը և նմանաբնույթ այլ խնդիրներին վերաբերող կարգավորումները: Այս հարցադրումներին հնարավորինս հանգամանորեն անդրադարձ կարվի դատական իշխանությանը վերաբերող հատվածում:

10. Հայեցակարգի համաձայն, սահմանադրականության բնականոն զարգացման խնդիրները ենթադրում են, որ. «Պետք է սկզբունքորեն հաղթահարվի Սահմանադրության և իրական կյանքի միջև առկա անջրպետը, սահմանադրականության ու հասարակական հարաբերությունների սահմանադրականացման ճանապարհով պետք է գտնվեն քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ բնույթի հիմնախնդիրների լուծման իրավական երաշխիքները, հիմք պետք է ընդունվի այն ճշմարտությունը, որ սահմանադրականության դեֆիցիտի հաղթահարումն է կայուն զարգացման երաշխիքը: Իրավական պետությունում պետք է բացառվի քաղաքական, տնտեսական և վարչական ներուժի սերտաճումը, երաշխավորված ու ապահովված պետք է լինի քաղաքական ուժերի նպատակների ու գործունեության սահմանադրականությունը: Սահմանադրական մակարդակով պետք է կարևորվի անձի սոցիալական վարքագծի, ինչպես նաև իշխանության քաղաքական ու հանրային վարքագծի սահմանադրականացումը, և երկուսի հիմքում պետք է ընկած լինի իրավունքի գերակայության սկզբունքը»:

Այս գերխնդրի լուծմանը կծառայեն ոչ միայն արդեն իսկ ձևավորված սահմանադրական ինստիտուտների բարելավմանն ուղղ-

ված միջոցները, այլև միանգամայն նոր գաղափարախոսությամբ ներծծված ինստիտուտները: Մասնավորապես, նախատեսվում է ներդնել սահմանադրական պատասխանատվության նոր համակարգ: Ինքնին «սահմանադրական պատասխանատվություն» եզրույթը ոչ միայն դեռևս արտացոլված չէ իրավունքի աղբյուրներում, այլև աղոտ չափով բացահայտված չէ իրավագիտության շրջանակներում: Տվյալ դեպքում նախապատվությունը կարող է տրվել այնպիսի կառուցակարգերի ձևավորմանը, որոնք ի զորու կլինեն համալիր ու ակնկալվելիք հարթությամբ լուծելու սահմանադրական կարգավիճակ ունեցող պաշտոնյաների սահմանադրական պատասխանատվության խնդիրը:

11. Բարեփոխումների ներքին բովանդակությունն ու միտվածությունը պայմանավորված են նաև այն երկրների փորձով, որոնք անխուսափելիորեն էական նշանակություն ունեն տարածաշրջանային զարգացումների տեսանկյունից, անցել են իրավաքաղաքական այն էվոլյուցիոն փուլերը, որոնք բնորոշ են հայրենական իրավական համակարգին: Ըստ Հայեցակարգի. «Հայաստանի Հանրապետությունն անհրաժեշտ հետևություններ պետք է անի նաև հաշվի առնելով նախկին ԽՍՀՄ երկրների սահմանադրական զարգացումների փորձը: Բացի բայթյան երկրներից (Էստոնիա և Լատվիա) և Մոլդովայից, մնացած պետությունները, այդ թվում՝ Հայաստանը, որդեգրեցին և հետագայում պահպանեցին կիսանախագահական կամ նախագահական կառավարման համակարգը: Դրանցից չորսում նույն անձինք նախագահում են ավելի քան 20 տարի, երկուսում, ինչպես նշում են վերլուծաբանները, ձևավորվել է, այսպես կոչված, ժառանգական միապետություն: Երեք երկրներ (Ուկրաինա, Վրաստան, Ղրղզստան) առավել հետևողական գտնվեցին կիսանախագահական կառավարման համակարգի սահմանադրական լուծումների իրացման, դրանց բարեփոխումներ-

րի հարցում: Սակայն դրանցում, այդուհանդերձ, տեղի ունեցան, այսպես կոչված, «գունավոր հեղափոխություններ», իսկ սահմանադրական զարգացումներն ուղղորդվեցին կառավարման խորհրդարանական համակարգի արմատավորմանը»:

Ամփոփելով տարածաշրջանային փորձը, այն հետևությունը կարելի է անել, որ մեր երկիրը կանգնած է լուրջ ընտրության առջև. «... քաղաքական փոխհամաձայնությամբ ու բարեփոխումների միջոցով երաշխավորել երկրի կայուն զարգացումը կամ գնալ նշված երկրների ճանապարհով՝ լրջորեն վտանգված հեռանկարով: Առաջին տարբերակն ընտրելու ու երկրի հիմնական քաղաքական ուժերի միջև անհրաժեշտ փոխհամաձայնության առկայության դեպքում նշված հիմնախնդիրների լուծման շնորհիվ սահմանադրական բարեփոխումները կծառայեն երկրում կայուն ժողովրդավարության և իրավական պետության կայացմանը, որոնք Հայաստանի Հանրապետության առաջընթացի ու անվտանգ կենսագոյի երկու հիմնական հե-նասյուններն են: Վերոնշյալ բոլոր հիմնախնդիրների վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները, կոնկրետ իրավիճակի գնահատումից ելնելով, հստակեցվում են սույն Հայեցակարգի (ստորև՝ Հայեցակարգ) համապատասխան բաժիններում՝ հիմք ունենալով սահմանադրական զարգացումների արդի հիմնարար սկզբունքները»:

Բնականաբար, դժվար է միանշանակ պնդել, որ տարածաշրջանի պետություններին բնորոշ զարգացումները ճշգրտորեն ու անխուսափելիորեն կիրառելի են նաև Հայաստանի պարագայում, սակայն ելակետ պետք է ընդունել այն, որ այն առավել արժեքավոր է իրավաքաղաքական նույնաբնույթ որակներ ունեցող երկրների համար:

Սահմանադրական բարեփոխումների հիմքում դրվող հիմնական սկզբունքները: Բարեփոխումների հստակ ուղենիշներ ե-

րաշխավորելու նկատառումով Հայեցակարգում էական է համարվել այն սկզբունքների ամրագրումը, որոնք ոչ միայն անհրաժեշտ հստակություն են ապահովում սահմանադրական բարեփոխումների գաղափարը համարժեք արտացոլելու տեսանկյունից, այլև պետք է անհրաժեշտ խորությամբ բացահայտեն բարեփոխումների կոնկրետ նպատակները: Այսպիսի մեթոդաբանությունը «չափելի» է դարձնում բարեփոխումների արդյունավետությունը, ողջ այդ գործընթացը դարձնում է առավել կանխատեսելի և որոշակի չափով ապահովում հանրային վստահություն: Ինչևէ, սահմանադրական բարեփոխումների հիմքում դրված են հետևյալ հիմնարար սկզբունքները՝

1. Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները պետության կողմից ճանաչվելով որպես բարձրագույն արժեք՝ պետք է պայմանավորեն իրավունքի գերակայության սկզբունքի անշեղ իրացումը և երաշխավորեն իրավունքով իշխանության սահմանափակումը: Իշխանության սահմանափակումը գերխնդիր չէ և այն հարկ է ընկալել դրա ճշգրիտ բովանդակությանը համապատասխան: Վերջին հաշվով, եթե հանրային իշխանության այս կամ այն մարմնին վերապահվում են որոշակի լիազորություններ, ապա վերջինս պետք է գործադրի ջանքեր՝ դրանք հավուր պատշաճի և ողջ ծավալով իրականացնելու համար: Այս դեպքում «սահմանափակում» եզրույթը բնավ չի նշանակում, որ սահմանված լիազորությունները հարկ է լինում վերանայել ու գործել լիազորությունների առավել նեղ շրջանակներով: Խնդիրն այս հարթությունում հարկ է ընկալել այլ ասպեկտներով:

Լիազորությունների մի սովոր հատվածի շրջանակները Սահմանադրությամբ կամ ընթացիկ օրենսդրությամբ չեն կարող սահմանվել այնչափ հանգամանալից, որպեսզի դրանց իրացման գործընթացում չձագեն հարցադրումներ՝ կապված լիազորությունների

սահմանների հետ: Այսպես, Սահմանադրությամբ կարող են սահմանվել նվազագույնն այն կոնկրետ հարաբերությունները, որոնք կարող են կարգավորվել բացառապես օրենքով, սակայն հնարավոր չէ և դրա անհրաժեշտությունն էլ չկա, որպեսզի սահմանվեն այն հարաբերությունները, որոնք կարող են կարգավորվել միայն օրենքով: Բացի այդ, հանրային իշխանության մարմիններն օժտված են հայեցողական լիազորություններով, ինչից բխում է, որ բազմաթիվ դեպքերում առկա է մի քանի տարբերակներից որևէ մեկն ընտրություն կատարելու հնարավորություն: Սակայն այս դեպքում իշխանության մարմինը չի կարող ազատ ընտրել որևէ տարբերակ, քանզի սահմանափակված է հենց մարդու արժանապատվության, իրավունքների և ազատությունների գերակայությամբ, այսինքն՝ բացառապես այնպիսի տարբերակ կարող է ընտրվել, որն առավել համահունչ կլինի հիշյալ արժեքներին:

Այս սկզբունքը կանխորոշում է նաև մարդու իրավունքների և ազատությունների անմիջական գործողության երաշխավորվածությունը, քանի որ հանրային իշխանության սահմանափակման անմիջական հիմքը համարվում են հենց նշված արժեքները:

2. Հաջորդ սկզբունքը վերաբերում է մարդու սահմանադրական իրավունքների ամրագրմանը: Ըստ էության, ելակետ է ընդունվում, այն գաղափարը, որ սոսկ լայնածավալ իրավունքներ և ազատություններ սահմանելը չի լուծում մարդու սահմանադրական կարգավիճակի երաշխավորվածության խնդիրը: Պետք է ոչ միայն հռչակվի մարդու սահմանադրական իրավունքը, այլև առավելագույնս հստակ սահմանվեն դրանց «իրացման երաշխիքները, պետության պարտավորությունները, առանձին իրավունքների սահմանափակման թույլատրելի շրջանակները»:

Բնականաբար, առանձին իրավունքների պարագայում դրանց սահմանափակումը համարվում է խիստ անհրաժեշտ, քանի որ

դա, թերևս, միակ ողջամիտ եղանակն է երաշխավորելու այլոց իրավունքներն ու ազատությունները: Սակայն Սահմանադրությամբ հարկ է ամրագրել սահմանափակման այնպիսի հիմքեր ու սահմաններ, որոնք որևէ կերպ չեն խաթարի այս կամ այն իրավունքի կամ ազատության էությունը: Բացի այդ, ցանկացած իրավիճակում իրավունքի կամ ազատության սահմանափակումը կարող է համապատասխանել իր բուն նշանակությանը, եթե այն ուղեկցվի պետության համարժեք պարտականություններով:

3. Սկզբունքային նշանակություն է տրվում նաև ներկայացուցչական և անմիջական ժողովրդավարության հնարավորինս ճշգրիտ ու ներդաշնակ փոխհարաբերությանը: Այս հարցում որևէ շեղում թույլ տալը կարող է վնասել ժողովրդավարությանն ու ողջ սահմանադրական կարգին: Բնականաբար, ներկա փուլում մեր երկրում արդափականություն է ձեռք բերել անմիջական ժողովրդավարության ինստիտուտների բարելավման հիմնախնդիրը, սակայն այս տեսանկյունից բնավ չի կարելի է ենթադրել, որ այդ ինստիտուտներն ինքնըստինքյան կարող են պիտանի լինել օրինաստեղծ գործունեության կամ հանրության համար էական նշանակություն ունեցող բոլոր հարցերի վերաբերյալ համաչափ լուծումներ առաջադրելու գործընթացում: Առավել արդյունավետ ու խելամիտ է համարվում այն, երբ հնարավոր է լինում ներկայացուցչական հիշյալ երկու ձևերի փոխհարաբերությունում հասնել կատարյալ ներդաշնակության, առանց վնասելու սահմանադրական մյուս արժեքներին:

4. Ցանկացած պետությունում արդափական ու վճռորոշ խնդիր է համարվում իշխանությունների բաժանման և հավասարակաշունտ սկզբունքի հետևողական ամրագրումն ու երաշխավորումը: Ինչ խոսք, հայրենական սահմանադրականության էվոլյուցիան չի անտեսել այս խիստ կարևոր սկզբունքի ամրագրման

անհրաժեշտությունը, սակայն չենք կարող նաև չնկատել, որ գործնականում այն ակնկալվող արդյունավետությունը չունի: Այս տեսանկյունից առնվազն այժմեական են համարվում հիշյալ սկզբունքի ամրագրման և երաշխավորման կտրվածքով հետևյալ պայմանները՝

ա) հարկ է հիշյալ սկզբունքի ամրագրման հիմքում դնել բացառապես «գործառույթ – ինստիտուտ – լիազորություն» շղթայի ներդաշնակությունն ապահովող իրավական լուծումները, անթույլատրելի են այն, երբ իշխանության տարբեր ճյուղերը ներկայադնող մարմինների սահմանադրական կարգավիճակն ամրագրելիս, մի դեպքում նախապատվությունը տրվում է գործառույթների ամրագրմանը, մեկ այլ դեպքում՝ լիազորություններ սահմանելուն, իսկ առանձին դեպքերում էլ՝ կառուցակարգային հարցադրումներին,

բ) հակակշռող և զսպող լիազորությունների հաշվեկշռվածությունը կարող է իրատեսական լինել, եթե հնարավոր լինի ներդնել համարժեք հանրային-իրավական պատասխանատվության ինստիտուտ: Ընդ որում, այն չի կարող նույնացվել պատասխանատվության դասական տեսակների հետ, այլ պետք է ներառել միանգամայն նոր սահմանադրական հիմքեր և կառուցակարգեր, մասնավորապես սահմանադրական կարգավիճակ ունեցող ցանկացած պաշտոնյա պետք է հստակ ամրագրված հիմքերով ու ընթացակարգերով ենթակա լինի հանրային-իրավական պատասխանատվության,

գ) պետք է երաշխավորվի իշխանության բոլոր թևերի գործառույթային անկախությունը, ինչի համար խիստ անհրաժեշտ է, որպեսզի իշխանության տարբեր ճյուղերի միջև ծագած վեճերը քննվեն այնպիսի կառուցակարգերի ու ընթացակարգերի ներդրմամբ, որոնք կկանխեն Սահմանադրության ոգուն հակասող որևէ ներգործություն:

5. Նկատի ունենալով, որ առաջին հերթին առանցքային է համարվում դատական իշխանության անկախության երաշխավորումը, սկզբուքնային է համարվում նաև Սահմանադրությամբ դատական իշխանության գործառութային, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության անհրաժեշտ և բավարար նախադրյալների ամրագրումը:

6. Տեղական ինքնակառավարման համակարգի սահմանադրական հիմքերի ամրագրման հիմքում պետք է դրվեն «Տեղական ինքնակառավարման մասին» եվրոպական խարտիայի հիմնական սկզբունքները, ինչը միտված է լինելու տեղական ինքնակառավարման ժողովրդավարական հստակ համակարգի ձևավորումը Հայաստանի Հանրապետությունում: Տեղական ինքնակառավարումն անվերապահորեն ամրագրվելու է, որպես հանրային իշխանության համակարգի լիարժեք բաղադրիչ:

7. Զբացառելով ողջամիտ ճկունություն՝ սահմանադրականության զարգացման գործընթացում, կարևոր է համարվել համարժեք այնպիսի նախադրյալների ստեղծումը, որոնք հնարավորինս կապահովեն սահմանադրական կայունության ամրապնդումը, Սահմանադրության գերակայությունը և սահմանադրականության անշեղ հաստատումը:

Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգային մոտեցումները: Հայեցակարգն անդրադարձել է ոչ միայն բարեփոխումների սկզբուքններին, այլև մոտեցումներին, որոնք հնարավորություն են տալիս առավել հստակ ու առարկայական տեսք հարողել ակնկալվող իրավական լուծումներին:

Նախ, առանցքային է համարվում «իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորումը, ապահովումն ու իրացումը սահմանադրական լուծումներում, իրավական պետության սահմանադրահրավական նախադրյալների ամրապնդումը»: Հայեցակարգում

այն մոտեցումն է ամրագրված, որ իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական իրացման արդյունքում հարկ է առավել երաշխավորված դարձնել մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների կառուցակարգերը, հնարավորիս կատարելագործել դրանք՝ հաշվի առնելով արդի միջազգային իրավական չափանիշները:

Արդի զարգացումները, թերևս, վկայում են այն մասին, որ համընդհանուր խնդիր է դարձել հիմնական իրավունքների և ազատությունների անմիջական գործողության երաշխավորվածությունը և դրանց միջոցով հանրային իշխանության սահմանափակումը: Ընդ որում, խոսքը ոչ միայն պետական իշխանության, այլև հանրային իշխանությամբ օժտված յուրաքանչյուր սահմանադրական կարգավիճակ ունեցող սուբյեկտի, այդ թվում՝ ժողովրդի մասին է: «Ժողովրդահիշխանություն» եզրույթը ևս վկայում է այն մասին, որ ժողովուրդը նաև անմիջական ժողովրդավարության եղանակներով իշխանություն իրականացնելիս սահմանափակված է մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով:

Հիշյալ հիմնախնդիր համաչափ լուծումը չի վերաբերում սոսկ Սահմանադրության այն հատվածին, որը կանոնակարգում է մարդկանց իրավունքներն ու ազատությունները, այն հավասարապես վերաբերում է Սահմանադրության յուրաքանչյուր հատվածի, ինչից բխում է, որ սահմանադրաիրավական յուրաքանչյուր ինստիտուտ պետք է «հեզացած» լինի իրավունքի գերակայության սկզբունքի բաղադրիչներով, ընդ որում, յուրաքանչյուր հատվածում այդ դրսևորումները տարբեր են և պայմանավորված են տվյալ հատվածի առջև դրված իրավակարգավորման խնդիրներով: Սակայն Հայեցակարգը ելակետ է ընդունում այն, որ սոսկ իրավակարգավորման միջոցով բավարար չէ սպառիչ լուծել իրավունքի գերակայության երաշխավորման խնդիրը, որ դրա համար անհ-

րաժեշտ է անհրաժեշտ սահմանադրաիրավական մշակույթ, որին հասնելու նկատառումով հարկ կլինի լրջորեն աշխատել հասարակական ինքնագիտակցության, իրազեկվածության բարելավման և նմանաբնույթ այլ ուղղություններով:

Ինչևէ, այս նկատառումով հայեցակարգային է համարվում հետևյալ մոտեցումը. «.... իշխանությունն իրականացնելիս ժողովուրդը և պետությունը պետք է սահմանափակված լինեն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով: Էական է, թե որոնք են այդ սահմանափակման իրավաչափ սահմանները, ինչպես են դրանք իրավական օրենքներով որոշակիություն ստանում՝ իրավական համակարգի ու իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականացման ճանապարհով երաշխավորելով սահմանադրականությունը»:

Միաժամանակ, ընդգծվում է այն դիրքորոշումը, ըստ որի՝ հենց Սահմանադրությունը պետք է ամրագրի իմպերատիվ դրույթներ՝ իրավունքի գերակայությամբ պայմանավորված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների անմիջական գործողությունն ապահովելու համար: Այլ կերպ ասած, իրավունքների և ազատությունների անմիջական գործողության ապահովումը չի կարող ընկալվել սոսկ հռչակագրային հիմնադրույթ, Սահմանադրության մեջ պետք է բացահայտվեն դրա իրացման կոնկրետ ընթացակարգերն ու կառուցակարգային ներուժը: Հայեցակարգում միանշանակ ամրագրված է այդ գաղափարն կոչված հետևյալ մոտեցումը. «Կոնկրետ սահմանադրական լուծումները կոչված են ստեղծելու այն միջավայրը, որն անհրաժեշտ է նախ՝ իրավունքի գերակայությունը մարդու և քաղաքացու սոցիալական արժեվորման միջուկը, նրա ինքնադրսևորման ու ինքնաիրացման արժեքանական հենքը դարձնելու համար, երկրորդ՝ իշխանության քաղաքական ու հանրային-իրավական վարքագիծն իրավունքի գերա-

կայության սկզբունքին ներդաշնակելու համար»:

Գիտագործնական չափանիշներով խիստ շահավետ ենք համարում այն, որ Հայեցակարգում սպառիչ բացահայտված են իրավունքի գերակայության, որպես իրավական պետության էությունը հանդիսացող արժեքի բաղադրիչները.

«- մարդու իրավունքները սահմանադրորեն ամրագրված, օրենսդրորեն երաշխավորված, համարժեք կառուցակարգային լուծումներով ապահովված ու պաշտպանված պետք է լինեն,

- պետք է հարգվի ու երաշխավորվի իրավական օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը,

- օրենքները և այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին, լինեն կանխատեսելի, հստակ, զերծ՝ բացերից ու երկիմաստություններից,

- իշխանության իրականացումը պետք է խարսխված լինի գործառույթների և լիազորությունների ներդաշնակումը երաշխավորելու վրա,

- հանրային իշխանության իրականացման հիմքում պետք է ընկած լինի օրինականության սկզբունքը,

- պետք է երաշխավորվի կամայականության արգելքի սկզբունքը և հստակեցված լինեն հանրային իշխանության մարմինների հայեցողության սահմանները,

- պետությունը պետք է պոզիտիվ պարտականություն կրի իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հարցում և ստանձնի համարժեք հանրային-իրավական պատասխանատվություն,

- հիմնական իրավունքներին ցանկացած միջամտություն և իշխանության ցանկացած գործողություն պետք է բխեն համաչափության սկզբունքից,

- իրավական վեճերը պետք է ունենան բացառապես իրավա-

կան ճանապարհով արդյունավետ լուծման անհրաժեշտ կառուցակարգեր,

- արդարադատությունը պետք է լինի անկախ ու անկողմնակալ»:

Գուցե իրավական արժեք ունեցող եզրույթ բնորոշելու տեսանկյունից բաղադրիչների լայն ցանկ սահմանելը չի տեղավորվում ավանդական պատկերացումների մեջ, սակայն տվյալ դեպքում գործ ունենք հիրավի ընդգրկուն իրավական հասկացության հետ, որը համարժեք ներկայացնելու համար իրավաչափ չէ սահմանափակվել համառոտ ու անհարկի ընդհանրացված ձևակերպումներով: Ընդ որում, թվարկված յուրաքանչյուր բաղադրիչ ինքնուրույն իրավական արժեք ունենալով հանդերձ, կազմում է իրավունքի գերակայության հասկացության համակարգի մի մասը, փոխլրացնում է մյուս բաղադրիչներին, երաշխավորում է նաև դրանց անշեղ իրացումը և կարող է երաշխավորված իրացվել միայն այն դեպքում, երբ բոլոր մյուս բաղադրիչները ևս անխափան գործում են:

Ընդգծենք, որ նշված բաղադրիչներն արտացոլված են նաև իրավունքի գերակայության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1594(2007) բանաձևի, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2008թ. նոյեմբերի 21-ի ՑՄ(2008)170 հանձնարարականի, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի 2011թ. ապրիլի 4-ի CDL-AD(2011)003rev. զեկույցում ներկայացված դիրքորոշումների և ՄԱԿ-ի՝ 2012թ. սեպտեմբերի 24-ին ընդունած «Իրավունքի գերակայության մասին» բանաձևի դրույթներից: Դրանք շարադրելիս, նկատի են ունեցվել նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում Միացյալ Թագավորության նախագահության շրջանակներում անցկացված «Իրավունքի գերակայությունը որպես գործնական հայեցակարգ»

(Լոնդոն, 2012թ. մարտի 2) և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում Հայաստանի Հանրապետության նախագահության շրջանակներում անցկացված «Իրավունքի գերակայության եվրոպական չափորոշիչները և ազգային իշխանությունների հայեցողության սահմանները» (Երևան, 2013թ. հուլիսի 3-4) խորհրդաժողովներում քննարկումների արդյունքները: Բոլոր այս աղբյուրների ամփոփումը բերում է այն միանշանակ եզրահանգմանը, որ ընդհանուր առմամբ միջազգային իրավական չափանիշներով իրավունքի գերակայությունը որակվում է ոչ միայն որպես բազմանիստ իրավական հասկացություն, այլև միանշանակ այն մոտեցումն է ամրագրված, որ դրանք համապարտադիր են ժողովրդավարության ուղին ընտրած յուրաքանչյուր պետության համար: Ըստ էության, պետության ժողովրդավար որակվելու հիմքում դրված են հենց իրավունքի գերակայության բաղադրիչների տեսանկյունից վերջինիս գործադրած ջանքերն ու դրանց փաստացի արդյունքները:

Զուտ գործնական տեսանկյունից իրավունքի գերակայության առկայության մասին հիմքեր կարող են լինել խոսել միայն այն դեպքում, երբ առկա է իրավունքի վրա հիմնված լեգիտիմ իշխանություն, օրենքներն իրավական են և բխում են օրյեկտիվ նախադրյալներից, և դատական իշխանությունն անկախ է ու անաչառ: Որպեսզի օրենքները լինեն հիրավի իավական, ապա վերջիններս պետք բավարարեն բավականին խիստ պահանջների, դրանք առնվազն պետք է լինեն Սահմանադրության ու միջազգային իրավունքի չափանիշներին խիստ համապատասխան, օժտված լինեն անհրաժեշտ որոշակիությամբ, ապահովեն ժողովրդավարության անխափան ամրապնդումն ու զարգացումը, բացառեն համամարդկային արժեքների անտեսման որևէ հնարավորություն և այլն:

Հայեցակարգում հիմք է ընդունվել նաև այն, որ դեռևս Եվրո-

պայի խորհրդի՝ 1949թ. մայիսի 5-ին Լոնդոնում ստորագրված կանոնադրության 3-րդ հոդվածում միանշանակ սահմանված է, որ Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի իրավունքի գերակայության սկզբունքը: Ընդ որում, եվրոպական իրավական համակարգում վերջինիս իրացման հիմնական չափորոշիչները հանգամանորեն շարադրված են Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի 2011թ. ապրիլի 4-ի վերոնշյալ CDL-AD(2011)003rev. «Իրավունքի գերակայության մասին» զեկույցում: Նշված զեկույցը գործնականում գիտագործնական հիմք է հանդիսանալու իրավունքի գերակայությանն առնչվող Սահմանադրության հիմնադրույթները համարժեք ամրագրելու տեսանկյունից:

ԳԼՈՒԽ 2.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ, ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՅԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունն ու բովանդակությունը, ըստ էության, միանշանակ չի ընկալվում մեր հասարակության ամենատարբեր շերտերի ու քաղաքական ուժերի կողմից: Հատկապես, դրանց դեմ են հանդես գալիս մի շարք ընդդիմադիր քաղաքական կուսակցություններ՝ ներկայացնելով ամենատարբեր պատճառաբանություններ, ընդհուպ՝ կապելով այն իշխանությունների վերարտադրման հետ: Վերջիններս պնդում են, որ գործող Սահմանադրությունը համապատասխանում է պահանջվող չափանիշներին և փոփոխության կարիք չունի: Ցավոք, այդ ամենը հաճախ կատարվում է ոչ թե գիտական և տրամաբանական, այլ կենցաղային դատողությունների մակարդակում:

Այդպիսի իրավիճակի առկայությունը պայմանավորված է իրավագիտության, որպես գիտության, թերևս, մեթոդաբանական համալիրի բացակայությամբ: Հիմնախնդրի լուծված չլինելը դրսևորվում է երկու ձևով.

ա) երբ խնդիրը դրվում է, սակայն գիտական իմացության և հետազոտության մեթոդաբանական գործիքների անբավարարության պատճառով այն լուծում չի ստանում,

բ) խնդիրն ընդհանրապես չի դրվում, ինչն էլ ավելի վատթար է, իսկ արդյունքում իրավագիտությունը ակադեմիական գիտական ճանաչողության հարթությունից՝ խարսխված հիմնարար տեսական բազայի վրա, տեղափոխվում է ընդամենը դոկտրինալ տրամաբանական համակարգի հարթություն, որում դրույթները որոշ-

վում ու սահմանվում են առավելապես քաղաքական կառույցների կողմից կամ լրագրողական վերլուծության հիման վրա, որոնք, որպես կանոն, հիմնականում ունեն ընթացիկ իրադարձությունների և էքսցեսների (սահմանազանցումների) մեկնաբանության բնույթ:

Այսպիսով, ներքին մտածողության մեջ (անգամ ակադեմիական գիտական շրջանակներում) արմատավորվում է այն թեզը, ըստ որի՝ իրավագիտությունը կախված է քաղաքականությունից և համարվում է վերջինիս հետևանքը, մինչդեռ, պետք է լիներ հակառակը: Այս ուղերձն ընկալվում է որպես ի վերուստ տրված իրողություն և ոչ միայն խաթարում է քաղաքացիական ձեռնահասունության (որը գտնվում է կայացման գործընթացում, ինչպես ակադեմիական գիտական շրջանակների, որոշումներ ընդունող քաղաքական հատվածի, այնպես էլ հասարակության մյուս շերտերի մոտ) հյուսվածքները, այլ իրավագիտության կարգավիճակը վերափոխում է ընթացիկ քաղաքականության գործիքի կամ լավագույն դեպքում մոտավորապես նախագիտական երևույթի: Մեր կարծիքով, հենց այս ասպեկտն էլ համարվում է արդիականության հիմնական մարտահրավերը, որն առաջ է քաշում հետևյալ հարցադրումները.

1. Ինչպիսի՞ն պետք է լինի աշխարհի իրավական կառուցվածքը (գլոբալ կառավարման համակարգը):

2. Ինչպե՞ս պետք է ընթանա գլոբալացման իրավագոյացումը:

3. Ինչպե՞ս պետք է տեղի ունենա նոր անկախ ինքնիշխան պետությունների պետականագոյացումը:

4. Ինչպե՞ս ձևավորել միջազգային իրավունքի հիմնարար տեսական բազիսը, որպես իրավունքի լիարժեք ինստիտուտ՝ իր բազմամակարդակ իրավական կարգավորման միանշանակ լուծումներով՝ ներդաշնակեցնելով վերազգային և ազգային պետականագոյացումը:

5. Ինչպե՞ս միջազգային իրավունքը դուրս հանել դոկտրինալ վիճակից և ձևավորել միջազգային իրավունքի առարկան և իրավական տարածությունը, որում իրենց իրավական ամրագրումն ու լեգիտիմությունը կստանան ինչպես ՄԱԿ-ն իր Կանոնադրությամբ, այնպես էլ ՄԱԿ-ի բոլոր անդամ-պետություններն իրենց սահմանադրաիրավական համակարգերով:

Ահա ինչպիսի խնդիրներ են անմիջականորեն ծառայել իրավագիտության առջև, որը պետք է միանշանակ պատասխաններ տա այս բոլոր հարցադրումներին և առաջարկի դրանց լուծման ուղիները: Ակնհայտ է, որ այս ամենը հնարավոր չի լինի, եթե իրավագիտությունը հանդես գա այնպիսի որակով, որում, որպես կանոն, համարժեք գիտական մեթոդաբանական գործիքները կարող են ընդհանրապես բացակայել կամ իրավական տարածությունը կարող է վերափոխվել «կոալիցիոն իրավունքի» կամ «համաձայնեցման իրավունքի», որտեղ թույլատրվում է կոալիցիայի ընտրյալ անդամներին իրենց «բացառիկության» իրավական ինքնասանձանակոչմամբ սուբյեկտիվ կերպով սահմանել իրավունքի էությունը: Մինչդեռ, սահմանադրական կարգավորման համակարգը չի կարող վերը նշված հիմնարար հարցադրումների տիրույթից դուրս գտնվել և պետք է այն ներդաշնակեցվի վերջիններիս հետ:

Այս տեսակետից, սահմանադրականությունը բնորոշվում է որպես պետականության իրավագոյացման համակարգ, որն իր առջև խնդիր է դնում տալ պետականության՝ որպես համակարգի իրավական ամրագրում՝ լեգիտիմ իրավագոյացման համապատասխան կառուցակարգով: Դրա ամբողջականությունը միայն հնարավոր է ապահովել համակարգային մոտեցման պարագայում՝ իրավագիտությունը դիտարկելով որպես համակարգ: Սակայն, ինչպես հաճախ է դա տեղի ունենում, ելնելով իրավունքի համակարգի առկայության անհրաժեշտության պրակտիկ նպատակա-

հարմարությունից (ինչպես օրինակ, վերստին անկախությունը հոշակած պետությունը չի կարող իրավական համակարգ չունենալ), հիմնականում ուշադրությունը բևեռվում է իրավունքի «օպերացիոն» կիրառման վրա, անտեսելով վերջինիս ծագումն ու դրսևորումը, եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ «օպերացիոն» կիրառումը ընդամենը իրավունքի ծագումնաբանության և դրսևորման հետևանքն է:

Եթե իրավունքի գիտության համալիրի ամբողջականությունը չի ապահովվում, այսինքն՝ անտեսվում է իրավունքի ծագումնաբանությունն ու դրսևորումը, (սահմանադրականությանը) և ուսումնասիրվում է միայն «օպերացիոն» կիրառումը, բնականաբար, այն չի կարողանում հանդես գալ որպես գիտական համակարգ, որի արդյունքում ինչպես գիտության, այնպես էլ իրավունքի պրակտիկ կիրառման ասպարեզում առաջանում է հայեցակարգային-եզրութային «սանձարձակություն» ու ամենաթողություն՝ առանց որևէ պատասխանատվության, որի արդյունքում առաջանում է վերլուծական քառու: Հետևանքը լինում է այն, որ հնարավոր չի լինում ապահովել կառավարման համակարգի իրացումը, քանի որ դրա հեղինակները շեղվում են գիտական համակարգային մոտեցումից, բնականաբար և՛ տրամաբանությունից: *Իրավագիտության, որպես գիտության, առջև խնդիր է դրված ապահովել իրավունքի կառուցվածքի համալիր ամբողջականությունն իր ուսումնասիրության բոլոր փուլերում՝ ծագումնաբանությունից, ձևականացումից մինչև գիտելիքների գործնական կիրառումը, ինչը հնարավորություն կընձեռնի ապահովել համալիր հասարակական գործընթացի իրավական կարգավորման համակարգի մշակումը, ներդրումը և «օպերացիոն» գործադրումը իրավակիրառման մակարդակում:*

Ցանկացած սահմանադրաիրավական կարգավորման համակարգ հայեցակարգային-եզրութային ամենաթողության և վերլու-

ծական քառսի պայմաններում, որպես կանոն, իրավունքի և կառավարման էության, ինչպես նաև համարժեք գործառույթային առաքելության տեսակետից պետք է համարվի է ոչ լեգիտիմ: Մինչդեռ, իրավունքի էությունը՝ գործառույթային առաքելությունը, կառավարման օրինականության ապահովումն է՝ լեգիտիմության հստակ ու միանշանակ չափանիշները սահմանելու միջոցով: Բնականաբար, եթե գոյություն չունի գիտական մոտեցում, ապա առաջանում է մի իրավիճակ, որտեղ թույլատրելի է դառնում սահմանումները, հասկացությունները և կատեգորիաները իրենց խիստ գիտական ձևաչափից սուբյեկտիվ բնույթի ենթագիտակցական ընկալումներով փոխարինելը: Դրանք, որպես կանոն, ունեն ոչ արհեստավարժ բնույթ՝ պայմանավորված իրավունքի և նորմաստեղծագործության ոլորտի սուբյեկտների (հատկապես, օրենսդիր իշխանության թևի) գիտելիքների, կրթվածության և փորձի սահմանափակ մակարդակով: Արդյունքում՝ բխած եզրահանգումների համակցությունը, որոնց որակականությունը դարձյալ որոշվում է ոչ գիտական մտածողության շրջանակներում, դրսևորվում է կենցաղային մտածողության սուբյեկտիվ չափանիշներով, որոնք հանգեցնում են վերլուծական քառսի: Օրինակ, այնպիսի հասկացությունների ընկալումն ու բազմաբովանդակ մեկնաբանությունը, ինչպիսիք են ժողովրդավարությունը կամ սահմանադրականությունը, հանգեցնում է ինքնիշխան ժողովրդավարության սկզբունքի ձևավորմանը (եվրոպական, ամերիկյան, արաբական, ասիական, անգամ հայկական ժողովրդավարություն, որոնք արդյունք են «միջազգային իրավունքի ժողովրդավարության» չափանիշներին համապատասխան սահմանման բացակայության, ինչպես նաև անթույլատրելի է սահմանադրականության սուբյեկտիվ նորմականացումը ոչ գիտական դիսցիպլինի շրջանակներում):

Այս պարագայում ցանկացած ընթացիկ իշխանություն և ամե-

նատարբեր քաղաքական ուժեր կիրառում են իրենց սեփական «լեզհիտիմության» ինքնահռչակման սկզբունքն այնպիսի եզրութաբանական մեկնաբանությամբ, ինչպիսիք են իրավական կառավարչական համարժեքությունը և իրավական կարգավորումը՝ դրանց գործառութային առաքելութային սուբյեկտիվ ընկալման արտապատկերմամբ: Մինչդեռ, կառավարումը պետք է ապահովի համալիր հասարակական գործընթացն իր գործառութային համարժեքությամբ, որը պետք է ընթանա *համալիր հասարակական արդյունքի* ստեղծման շրջանակներում (այն ոչ միայն ներքին համախառն արդյունքն է, կամ համախառն ազգային արդյունքը, այլև առաջին հերթին, ոչ նյութական աղբյուրները, որոնք ուղղված են արժեքների համակարգի ամրապնդմանն ու հասարակութային ինքնանույնականացման ապահովմանը): Հակառակ պարագայում ձևավորվում է հեղափոխական անախրոնիզմի սինդրոմ, երբ յուրաքանչյուր ընթացիկ իշխանություն կարող է ցանկացած պահի հեշտությամբ վերացնել, տապալել հին սահմանադրաիրավական կարգավորման համակարգը և հռչակել բոլորովին նոր սահմանադրաիրավական կարգավորման համակարգ՝ որպես միակ լեզհիտիմ և օրինական, նախաձեռնելով, ըստ էության, «հրաբխային» մի գործընթաց, որում անկանոն կերպով ժայթքում են հասարակական ցնցումներն ու թռուցիկ թոպեական լեզհիտիմությունը:

Հավանաբար, աննհրաժեշտություն է հասունացել, որպեսզի նոր ձևավորված գիտությունների կողքին, ինչպիսին է հակամարտաբանությունը, ձևավորվի առանձին գիտական ուսմունք՝ հեղափոխության տեսություն: Որպես ասվածի օրինակ, կարելի է բերել ԽՍՀՄ սահմանադրության վերացումը, Եգիպտոսում ընթացող իրադարձությունները, սահմանադրականության սկզբունքների և նոր պետականության իրավագոյացման գիտական գիտակցման և պատասխանատու ընկալման բացակայության պայմաններում ըն-

թացող սահմանադրությունների «շքերթները», «արաբական գարունը», ուկրաինական ճգնաժամը և այլն:

Այս տեսակետից սահմանադրական իրավունքի գիտության առջև խնդիր է դրված չթույլատրել և կանխարգելել հայեցակարգային-եզրուֆային ոչ միանշանակությունը, գիտական-իրավական ամենաթողությունը, որոնք հանգեցնում են վերլուծական քառսի՝ նպատակ հետապնդելով ապահովելու իրավական կարգավորման համակարգի հաջորդական զարգացումը լեգիտիմ իրավագոյացման հիմնարար գիտելիքների հիման վրա: Հենց այս հանգամանքով էլ բացատրվում է հիմնախնդրի հրատապության ծայրահեղ կարևորությունը:

Բացի այդ, խնդրի նմանատիպ դրվածքը արդյունք է Սահմանադրության համակարգի մշակման մեթոդաբանական հեշտացված մոտեցման, որի նպատակն է, այսպես կոչված, կառուցողական մոտեցմամբ բացառել անարդյունավետ հիմնարար հետազոտություններն ու դատողությունները, որոնք իրենց տեսական ձգձգումներով խոչընդոտում են սահմանադրական նորմաստեղծագործության գործընթացը: Այն իր հերթին առաջացնում է «Տեքստային սահմանադրությունների» ստեղծման միտում և ֆենոմեն, որի արդյունքում շատ երկրներ հայտարարում են. «Մեր Սահմանադրության տեքստը լավագույնն է աշխարհում կամ եվրոպայում» և այլն: Հիմնարար տեսական հենքի բացակայության պայմաններում Սահմանադրության իրավաձևավորման տրամաբանական հարթությունը նեղացվում է մինչև հոչակագրային կազմվածքների մակարդակ, որոնք, որպես կանոն, բաղկացած են լինում մի քանի ձևակերպումներից, որոնք փոխարինում են Սահմանադրության ամբողջ հայեցակարգային հիմնավորմանը (հատկապես սահմանադրական օբյեկտների ձևականացման ժամանակ):

Արդյունքում ձևավորվում է մի իրավիճակ, որում ինչպես իրավագիտության գիտական ձեռնահասունությունը (ի դեմս փորձագիտական հանրության), այնպես էլ քաղաքացիական ձեռնահասունությունը (ի դեմս յուրաքանչյուր քաղաքացու և ամբողջությամբ վերցրած՝ հասարակության) ընկալում են այս «հոչակագրային ոչ ձեռնահասունություն», որպես ձևական սահմանադրական նորմաստեղծագործություն, և ժամանակի հետ միասին աճող ինտեգրայով այն դառնում է որպես ի վերուստ տրված իրողություն: Իրերի նման դրվածքի պարագայում նույնիսկ հնարավոր է մեկ տողանոց Սահմանադրության ընկալում. «յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և երջանկության իրավունք, և պետությունը պետք է ապահովի իր բոլոր քաղաքացիների երջանկությունը...»: Ավելին, Սահմանադրության գործառնական անունակությունը՝ դրանում ամրագրված նպատակների լուծման սկզբունքների ու մեթոդների բացակայության պատճառով, դարձյալ կարող է արդարացվել տրամաբանական ձևականության հիման վրա, որը նույնպես ունի հոչակագրային բնույթ. «Այդ ո՞վ ասաց, որ Սահմանադրությունը ձեռնտու չէ հասարակությանը, այն ձեռնտու չէ քաղաքականությամբ զբաղվողներին..., օրենքները լավն են, սակայն դրանք չեն իրականացվում, ուստի եթե հստակորեն հենվենք Սահմանադրության դրույթների վրա և դրանք իրագործենք, ապա հասարակությունը կլինի երջանիկ և լավ կզարգանա, մարդու իրավունքներն ու ազատությունները պաշտպանված կլինեն, իշխանության մարմինները կգործառնավորեն արդյունավետ..., բարդ Սահմանադրությունն ու օրենքները բնորոշ են նորմալ երկրներին, մեզ պետք են պարզ, հասկանալի ու գործող Սահմանադրություն և համապատասխան օրենքներ, որոնք համահունչ են մեր առանձնահատկություններին...» և այլն: Միանշանակ նման մոտեցման պարագայում միակ արժեքավոր դառնում է ընթացիկ իշխանության լե-

գիտիմացումը՝ Սահմանադրության տեքստի մեջ հասցեագրված նորմեր ներմուծելու միջոցով (ընդհուպ մինչև ցմահ Նախագահի ինստիտուտի ամրագրումը):

Նման մոտեցումը ենթադրում է, որ յուրաքանչյուր նոր քաղաքական ուժի իշխանության գալով, Սահմանադրությունը պետք է հարմարեցվի «նոր քաղաքական իրողություններին», բնականաբար, ենթարկվի համապատասխան փոփոխությունների: Արդյունքում հասարակության «ալեկոծված բնականության» վրա թևածում է հետևյալ հարցադրումը. «Այդ ի՞նչ կար մեր Սահմանադրության մեջ, որը ստիպեց Սահմանադրության ընդունման հաջորդ օրը կատարել փոփոխություններ, և, ընդ որում, հնարավոր չէր արդյոք այն նախապես կանխատեսել Սահմանադրության մշակման և ընդունման ժամանակ...»: «Մենք ցանկանում էինք, որ լավ լինի, բայց ստացվեց՝ ինչպես միշտ...». - մոտեցումը դուրս է Սահմանադրության ստեղծման համակարգային սիստեմատեսիսիկական ստանդարտներից: Չի կարելի ցանկանալ գրել Սահմանադրություն, այլ պետք է իմանալ գրել և՛ ոչ սահմանափակ կարծիքի, այլ հիմնարար գիտական տրամաբանության հիման վրա: Հինականում այս հանգամանքների հաշվառմամբ էլ Սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովը պատմության մեջ առաջին անգամ սահմանադրական փոփոխությունները ներկայացրեց հայեցակարգային մակարդակով, և նոր միայն ձեռնամուխ եղավ տեքստային փոփոխությունների աշխատանքին:

Վերը նշված դատողությունների համատեքստում սահմանադրական բարեփոխումների նախադրյալները, կարծում ենք, կազմում են հետևյալ համակարգը: Նախ, սահմանադրափրավական կարգավորման դերի բարձրացումը՝ ինչպես ընդհանուր համաշխարհային իրավական տարածության և միջազգային իրավունքի, պետությունների միութենական կոնգլոմերացիաների և առանձին

վերցրած՝ պետությունների ձևավորման ոլորտում, որը պահանջում է փորձարկված և մշակված իրավական կարգավորման այնպիսի գործիքակազմի առկայություն, որը կաբացադի իրավական համակարգի հակամարտությունները և առաջին հերթին՝ համակարգային բնույթ ունեցողները և կապահովի իրավունքի գերակայությունը:

Երկրորդ, քաղաքացիական հասարակության կայացման և զարգացման գործընթացը դեռևս գտնվում է դինամիկ փոփոխությունների ինտենսիվ ռեժիմում, հատկապես նորագույն պատմության վերջին փուլում ու դեռևս չի ավարտվել ոչ համաշխարհային մաշտաբով, ոչ էլ մեր երկրում: Նորագույն պատմության այս փուլի առանձնահատկությունը կայանում է ինչպես նորանկախ պետությունների, այնպե էլ վերազգային մակարդակի կոնգլոմերացիաների ձևավորման գործընթացի աննախադեպ ակտիվության փաստում: Այս հանգամանքների առկայության պարագայում անհնար է դառնում պետության կառույցի նախագծման և գործադրման հավասարակշռված էվոլյուցիոն մոտեցման կիրառումը, ինչը պայմանավորված է այդ խնդրի լուծման համար տրամադրված ժամանակային ռեսուրսի խիստ սահամանափակ լինելով, որն էլ իր հերթին պետականաշինության և գործընթացի թերի և ոչ լիարժեք մշակվածության արդյունքում անխուսափելիորեն հանգեցնում է համակարգային հակամարտությունների այս կամ այն մակարդակում:

Երրորդ, հատուկ հիմնախնդրային ոլորտ է հանդիսանում նախկին սոցիալիստական ճամբարի երկրների բլոկը (ներառյալ ՀՀ), որոնց առջև խնդիր էր դրված ոչ միայն ձևավորել ու կայացնել լիարժեք պետականություն և զարգացած քաղաքացիական հասարակություն՝ պատմականորեն ձևավորված առանցքային ինստիտուտների հիմքի վրա, այլև պետական կառույցի հին բազիսի ա-

պամոնտաժման խնդիրը, անցնելով նորին՝ ծայրահեղ սահմանափակ և կարժ ժամանակահատվածում:

Չորրորդ, հիմնարար, ակադեմիական մակարդակում բազմադիսցիպլին համալիր մեթոդաբանության բացակայությունը, որը հնարավորություն կտար վերոհիշյալ խնդիրների համակողմանի ուսումնասիրություն անցկացնել և դրանք կիրառել գործնական մակարդակում, հաշվի առնելով պետության կայացման և գործառնավորման արտաքին և ներքին պայմանների դինամիկ փոփոխությունների պարամետրերը գլոբալ հարաբերությունների շրջանականերում:

Հինգերորդ, Գլոբալացման գործընթացը պարբերաբար ճգնաժամ է ապրում ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական առումով, ստեղծելով մշտական խրոնիկ ցնցումների իրավիճակի նախադեպ, արտապատկերվելով յուրաքանչյուր առանձին պետության վրա (գլաբալ համակարգ-ինքնիշխան պետություն, որպես գլաբալ համակարգի տարր), ստեղծելով ծայրահեղ անհրաժեշտություն մշակելու հակաճգնաժամային ծրագրեր, դրանց մեթոդաբանություն, մեթոդիկա և իրավական կարգավիճակ, որոնք դժվարանում են արտաքին և ներքին գործոնների փոխկապակցվածության հետևանքով:

Այս ամենը ծայրահեղ անհրաժեշտություն է առաջացնում ինտենսիվությամբ ուսումնասիրել քաղաքացիական հասարակության, պետության, իրավական համակարգի՝ հատկապես սահմանադրաիրավական կարգավորման ծագումնաբանությունը, համակարգային հակամարտություններից զերծ մնալու նպատակով:

Բնականաբար, վերը նշված օրինաչափություններից դուրս չէր կարող լինել նաև մեր պետությունը: Խորհրդային Միության փլուզումից հետո Երկիր մոլորակի քաղաքական քարտեզը աննախադեպ փոփոխությունների ենթարկեց, որի արդյունքում միանգամից

ձևավորվեցին երկու տասնյակից ավել նոր պետություններ: Մեթոդաբանական առումով բարդությունն այն էր, որ այդ պետությունները տեղափոխվեցին որակապես միանգամայն այլ հարթություն՝ սոցիալիստական համակարգից անցնելով լիբերալ ժողովրդավարական համակարգի: Բնականաբար, նորանկախ պետությունը չի կարող գործել առանց իրավական համակարգի: Իսկ դրա համար հատկացված ծայրահեղ սահմանափակ ժամանակահատվածում իրավական համակարգի ճարտարապետները մեթոդաբանական առումով չէին կարող զերծ լինել թերություններից և ձևավորել ամբողջական և ավարտուն իրավական համամակարգ:

Պետականության կերտման հիմնական պայմաններից մեկը դառնում է սահմանադրաիրավական կարգավորման համակարգի ունակությունը՝ ապահովելու միանշանակ լեգիտիմության ընթացակարգ ամբողջ հասարակական համալիր գործընթացների և պետական իշխանության ինստիտուտների համար: Այսինքն՝ Սահմանադրությունը կոչված է ամրագրելու հասարակության և պետականության կառույցի լեգիտիմության հիմնարար սկզբունքները, որոնց հիման վրա հնարավոր է դառնում սահմանել, ձևակերպել և ապահովել պետության գործունեության օրինականությունը բոլոր ոլորտներում: Այս կապակցությամբ պետք է նշել, որ սահմանադրաիրավական կարգավորման համակարգի տարգատումը օրենսդրական կարգավորման համակարգից՝ առանց Սահմանադրության առկայության, լուրջ հիմնախնդիր է առաջացնում համակարգային կարգավորման ոլորտում:

Հիշյալ հիմնախնդրի լուծման համար պահանջվում է, մի կողմից, սահմանադրաիրավական համակարգի՝ որպես քաղաքացիական հասարակության իրավական ամրագրման և կառուցման բարձրագույն և արդյունավետ ձևի, ըմբռնումն ու ընկալումը, մյուս կողմից, դրա իրականացման փաստացի ունակությունը: Դրա հա-

մար որպես կանոն սահմանադրության (որպես պետության և հասարակության ճարտարապետական նախագծի) մշակմանը ներգրավում են այնպիսի իրավասու մասնագետների, որոնք պետք է ունենան բարձրագույն ակադեմիական ունակություններ և պատասխանատվության զգացմամբ ունակ կլինեն իշխանությանը առաջարկելու առկա ժամանակահատվածում փաստացի վիճակում գտնվող հասարակության և պետության իրական մոդել, որը սահմանադրության միջոցով կստանա իրավական ամրագրում և կապահովի վերջիններիս ներդաշնակությունը: Այս կապակցությամբ ուսանելի է ԱՄՆ-ի և ԳԴՀ-ի փորձը, որոնց սահմանադրությունները մշակվեցին և ընդունվեցին ազգի մտավոր ընտրանու կողմից:

Դրա հետ մեկտեղ, քննարկվող հիմնախնդիրը բոլորովին այլ լուծում ստացավ Հայաստանի անկախացման առաջին տարիներին:

Հայտնի է, որ փաստացի գործող օրենսդրական համակարգի առկայության պայմաններում Սահմանադրությունը չի կարող հանդիսանալ որպես իրավական համակարգ ներմուծվող համալրում, եթե անգամ այն որակավորվում է որպես Հիմնական օրենք: Ավելի շուտ պետք է լինի հակառակը՝ օրենսդրական համակարգը պետք է մշակվի առկա գործող Սահմանադրության հիման վրա՝ ձևավորելով սահմանադրա-իրավական կարգավորման համակարգ: Հակառակ դեպքում, սահմանադրական կարգավորման առարկա հանդիսացող գործընթացների և ընդհանուր օրենսդրության շրջանակներում կարգավորվող իրավահարաբերությունների միաձուլման հետևանքով կարող է ծագել համակարգային հակամարտություն: Այս պարագայում երկրի հիմնական օրենքի առկայությունը կամ բացակայությունը դառնում է ոչ էական, իսկ սահմանադրական նորմերը ձեռք են բերում հռչակագրային և պայմանական բնույթ: Նման իրավիճակ ստեղծվեց Հայասանի Հանրապետությու-

նում անկախացումից հետո, երբ նոր պետականության և հասարակության մոդելին համապատասխան՝ Սահմանադրության կերտմանը ձեռնամուխ լինելու փոխարեն ՀՀ Գերագույն խորհուրդը 1991 թ. սեպտեմբերի 25-ին ընդունեց սահմանադրական օրենք՝ «Անկախ պետականության հիմնադրույթների մասին», որի 16-րդ հոդվածի համաձայն՝ մինչև ՀՀ նոր Սահմանադրության ընդունումը գործող Սահմանադրությունն ու օրենքները գործում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին և «Հայաստանի անկախության մասին» Հռչակագրի հիման վրա ընդունված օրենսդրական ակտերին: Այսինքն՝ երկրում փաստացի ձևավորվեց իրավիճակ, երբ խորհրդարանի մակարդակով ընդունվեց «միջանկյալ սահմանադրություն», որը չվերացրեց նախկին Խորհրդային Հայաստանի գործող Սահմանադրության գործողությունը (որն ամրագրում էր սոցիալիստական տիպի պետություն և հասարակություն), սակայն դրա բարձրագույն իրավաբանական ուժը ստորադասեց հետագայում ընդունվելիք օրենսդրական ակտերին՝ Սահմանադրությունը վերածելով ամորֆ ենթաօրենսդրական ակտի:

Տվյալ դեպքում անտեսվեց, որ երկրի գործող Սահմանադրությունը չի կարող նախատեսել իր վերացումը կամ իրավական ակտերի համակարգում իր կարգավիճակի (բարձրագույն իրավաբանական ուժի) փոփոխությունը: Արդյունքում երկրում ստեղծվեց մի իրավիճակ, երբ մինչև 1995 թ. հուլիս ամիսը Հայաստանի Հանրապետությունում սոցիալիստական մոդելի գործող սահմանադրության առկայության պայմաններում ընդունվեցին ազատ շուկայական տնտեսական համակարգին հատուկ օրենքներ, հետո, որպես գործող օրենսդրական համակարգի համալրում՝ հանրաքվեով ընդունվեց նոր Սահմանադրությունը: Խնդիրն այն է, որ սոցիալիստական հասարակարգից և սոցիալիստական տիպի պետու-

յունից լիովին հրաժարվելու պարագայում հրատապ անհրաժեշտություն էր մշակելու ազգի մտավոր էլիտայի կողմից որակապես նոր պետության և հասարակության մոդել և այն լեգիտիմացնել նոր Սահմանադրությամբ:

Այդպիսով, արդեն հնարավոր կլինե՞ր գիտական և տրամաբանական հիմնավորման որակական չափանիշներով ձևավորել հասարակական համալիր բոլոր գործընթացների կարգավորումն ու ներդաշնակությունն ապահովող իրավական համակարգ: Հակառակ դեպքում սահմանադրական կարգավորման և օրենսդրական կարգավորման համակարգերի միաձուլման արդյունքում երկրի Սահմանադրությունը ունակ չի լինում կանխելու և լուծելու հատկապես համապետական ընտրությունների արդյունքում հասարակության և իշխանության միջև ծագող հակամարտությունները:

Վերը նշվածը հիմք ընդունելով, կարելի կատարել հետևյալ հիմնարար հարցադրումները: Եթե մեր պետական կառույցն ու հասարակության գործող մոդելն անթերի են և ապահովում են համալիր հասարակական գործընթացներում ներդաշնակություն, որի հիման վրա էլ՝ զարգացում, ապա սահմանադրական փոփոխությունների խնդիրը խիստ ժամանակավրեպ է: Եթե ընդունում ենք, որ պետության կառույցն ու հասարակության գործող մոդելն ունեն բազում թերություններ, ապա ճիշտ ժամանակն է կատարելու սահմանադրական փոփոխությունները: Նկատենք, որ մենք երկրորդ տեսակետի կողմնակիցն ենք և, կարծում ենք, որ պետության կառույցն ու հասարակության մոդելն ունեն արմատական փոփոխությունների անհրաժեշտություն: Վերջինիս հրատապությունն առաջին հերթին պայմանավորված է Սահմանադրության լեգիտիմության ապահովմամբ, այսինքն, այնպիսի համակարգային որակական հատկանիշներով, որոնք Սահմանադրությանը կօժտեն այդպիսի որակով հանդես գալու «ունակությամբ»:

Բոլոր պետությունների (հատկապես, նոր պետականության կազմակերպման գործընթացում գտնվող) առջև, առանց այլընտրանքի ծառայել է պետականության իրավական ամրագրման հիմնախնդիրը, որի նպատակը վերջինիս լեգիտիմության ապահովումն է իր բոլոր դրսևորումներում և հասարակության կենսագործունեության բոլոր մակարդակներում ու ոլորտներում:

Լեգիտիմության հիմնախնդիրն ունի հիմնարար բնույթ և ընդգրկում է հասարակության (որպես իրավունքի սուբյեկտի) կայացման բոլոր փուլերը՝ սկսած կենսագործունեության մինչպետականից մինչև սահմանադրաիրավական կարգավորման ժամանակահատվածը: Այս գործընթացում լեգիտիմությունը բյուրեղացվում է որպես իրավունքի բազային որակական հատկանիշ և հանդես է գալիս որպես փոխհարաբերությունների համակարգի կազմակերպման համապատասխան գործիք (որպես վարքագծի նորմ) և փոխգործակցության կարգավորման (նորմից շեղումները չթույլատրելու) որակի որոշակի չափանիշ, որոնց համակցությունը «իրավունք է տալիս» իրավունքին լինել որպես այդպիսին:

Հատկապես, կարևոր է նշված հիմնախնդրի բնույթի դիտարկումը սահմանադրաիրավական կարգավորման, որպես իրավական կարգավորման համակարգի, դիրքերից: Այստեղ լեգիտիմությունը հանդես է գալիս որպես իրավական պետականության հիմնարար պայման, որի ապահովման համար ձևավորվում է հատուկ իրավական աստիճանակարգ (հիերարխիա), որտեղ առանձնակի կարևորվում է Հիմնական օրենքի դերը: Վերջինիս է վերապահված ամբողջ իրավական համակարգի և պետական կառույցի լեգիտիմության ամրագրման առաքելությունը: Արդյունքում ինչպես պետական իրավունքի տեսական սահմանումների, այնպես էլ պետական կառույցի ձևավորման և կառուցման գործնական մակարդակում *սահմանադրական կարգը հանդես է գալիս որպես պետական*

կառույցի բարձրագույն կազմակերպահրավական ձև:

Այս եզրահանգման իրավաչափության հիմնական չափանիշը համարվում է սահմանադրաիրավական կարգավորման, որպես իրավական կարգավորման հատուկ համակարգի, ունակությունը՝ ապահովելու համալիր հասարակական գործընթացների առավելագույն հավասարակշռվածություն ու ներդաշնակություն օրենսդրական համակարգի իրավական կարգավորման ամբողջականության միջոցով՝ սահմանադրաիրավականից մինչև վարչաիրավական կարգավորման մակարդակները:

Սահմանադրաիրավական կարգավորման, որպես պետության կառույցի իրավական կազմակերպական ձևի, ընտրությունը համարվում է ոչ միայն և ոչ այնքան հասարակության և պետական իշխանության հարց (հատկապես քաղաքացիական իրավազեկ կոնտրինգենտի բացակայության պարագայում), որքան կախված է հիմնարար մակարդակում սահմանադրաիրավական կարգավորման բովանդակության և նշանակության ըմբռնումից և գործնական մակարդակում դրա կառուցման և իրականացման փաստացի ունակությունից:

Պետության կառույցի հիմնարար հիմքերի մշակվածության ոչ բավարար մակարդակը կամ անտեսումը ծնում են համակարգային հակամարտություն, որն էլ իր հերթին հանգեցնում է պատճառահետևանքային շղթայի հաճախակիությանը, որոնք իրավական կարգավորման համակարգը տեղափոխում են վարչական կարգավորման մակարդակ: Այստեղ սահմանադրաիրավական կարգավորման օրինաստեղծագործության և օրենսդրական համակարգի իրավասությունը միախառնվում են «օպերացիոն» մտածողության և դատական-կատարողական որոշումների հետ: Ասվածը վերաբերում է իրավական կարգավորման համակարգի կառավարման հիմնախնդրին, որից ուղղակիորեն կախված է ամբողջ համալիր

հասարակական գործընթացների կառավարման և պետական կառույցի կիրառական վարչարարության համակարգի լեգիտիմությունն ու որակը:

Դրա բացակայության պարագայում պետական իշխանության համար կառավարման և իրավական կարգավորման օբյեկտը պետական կառույցի սահմանադրաիրավական կարգավորման փոխարեն դառնում է «օպերացիոն» գործընթացը: Արդյունքում հասարակական ինքնագիտակցության մեջ նման իրավիճակը դիտարկվում է որպես իրավաչափ երևույթ և նույնիսկ որպես քննարկման ոչ ենթակա իրողություն: Խնդիրն այն է, որ «օպերացիոն» մտածելակերպն ընդհանրապես չի կարող ապահովել պետության կառույցի հիմնարար բազային հիմքերի կառուցվածքային-վերլուծական ընկալումը: Հետևաբար, գործի է դրվում իրավական նորմի ապահովման պատճառահետևանքային շղթան պետական կառավարման մարմիններին վերապահված լիազորությունների շրջանակներում՝ իրավական կարգավորման բոլոր մակարդակների հստակ կանոնակարգով:

Սահմանադրաիրավական կարգավորման հիմնական գործոնը համարվում է այն նախապայմանը, որ իրավական կարգավորման համակարգի և պետության կառույցի լեգիտիմությունը հաստատող բարձրագույն սուբյեկտը պետք է հանդիսանա ժողովուրդը, որը ամբողջապես մարմնավորում է հասարակությունը: Այս պարագայում կենտրոնական հիմնախնդիրը համարվում է այն, թե արդյո՞ք ժողովուրդը քաղաքացիական ինքնագիտակցության մակարդակի (քաղաքական գրագիտություն) իր փաստացի կարողությամբ կարող է հանդես գալ այդպիսի դերում: «Պետք է-կարող է» կամ «կարող է- պետք է» հարցերի փոխհարաբերությունն էլ համարվում է իրավական կարգավորման համակարգի լեգիտիմության որակական բնութագրիչներին համապատասխանելու առանց-

քային գործոնը: Հատկապես, սկզբունքային է համարվում պետական կառույցի հիմնական նորմերի հաստատումը լեգիտիմացնող սկզբնական ակտի ընդունման ձևն ու ընթացակարգը սահմանող կառուցակարգը՝ հանրաքվեն: Այս պարագայում ժողովուրդը հանդես է գալիս որպես լեգիտիմացման սկզբնական սուբյեկտ: Այսինքն, հաստատում է նորմերի իրավական կարգավիճակը, որպես պետականության տրամաբանությանը և դրանից բխող պետական կառույցին համապատասխան մոդել, որը նկարագրում է հասարակության, որպես կառուցվածքային-կազմակերպական օբյեկտի, գործառնության ամբողջ մեխանիկան:

Լեգիտիմացման սկզբնական ակտից՝ հանրաքվեից հետո ժողովուրդը դառնում է պետականության կարգավիճակ ունեցող սուբյեկտ (քաղաքացիական հասարության և իշխանության ինստիտուտ): Մինչ այդ, ժողովուրդը հանդես է գալիս որպես *օբյեկտ*, որն օժտված է լեգիտիմության իրավական ինքնահիմունիտետով: Հանրաքվեից հետո նա վերափոխվում է լեգիտիմությունը հաստատելու իրավունքով օժտված սուբյեկտի:

Սահմանադրաիրավական կարգավորման համակարգի մշակման, ընդունման և գործադրման ընթացքում առաջացող համակարգային հակամարտության նկարագրման և կառավարման համար մեր կողմից գործարկվում է լեգիտիմացման հետևյալ աստիճանակարգային համակարգը, որը հնարավորություն է տալիս բացահայտել հակամարտության ծագումն ու բնույթը, զարգացման և դրսևորման գործընթացը, ինչպես նաև դրա լուծման մոտեցումները և տրամաբանությունը.

1. Սահմանադրական համակարգի մշակման գործընթացի լեգիտիմությունը:

2. Իշխանության համակարգի իրավական ամրագրման լեգիտիմությունը, որը բխում է Սահմանադրությունից:

3. Իրավական կարգավորման համակարգի ամրագրումը և դրա դատական ու վարչական մոնիտորինգի համակարգը:

Սահմանադրական համակարգի մշակման գործընթացի լեգիտիմությունն ապահովվում է սահմանադրական կարգավորման ենթակա համալիր օբյեկտների նախագծմամբ: Այստեղ առանձնացվում է իրավական տարածության ձևավորման սկզբնական նորմատիվ մակարդակը, որից պետք է բխի պետության օրենսդրական համակարգը, հստակ տարազատելով նորմաստեղծագործության աստիճանակարգը: Այն ենթադրում է նորմաստեղծագործության տարբեր մակարդակների առկայություն ինչպես մեթոդաբանական, այնպես էլ մեթոդական մակարդակներում:

Այս պարագայում անհարաժեշտ է իրավական կարգավորման օրենսդրական մակարդակի նորմաստեղծագործության կիրառման եղանակը բացառել սահմանադրական կարգավորման առարկա հանդիսացող օբյեկտների նկատմամբ և հակառակը: Մասնավորապես, սահմանադրական օբյեկտներ են համարվում իրավունքը, ազատությունը, կամքը, պետականությունը, ժողովուրդը, հասարակությունը, մարդը, քաղաքացին, կրոնը, հանրաքվեն, պետությունը և այլն: *Վերջիններիս հիման վրա է սահմանվում, հաստատվում և գործի դրվում պետության կոնկրետ մոդելը՝ կոնկրետ պետական կառույցով, կոնկրետ ժողովրդի և հասարակության համար՝ հաշվի առնելով համամարդկային արժեքների և ազգային համակարգի արտացոլումը, պարմամշակութային ժառանգության հիման վրա արժեհամակարգի սեփական ընկալումը, ինչպես նաև իրավական մտածելակերպի ձևավորվածության կոնկրետ մակարդակը:*

Նշված պայմանների բավարարման պարագայում արդեն գործընթացները ղեկավարվում են լեգիտիմ սուբյեկտի՝ պետության (լիազորված լեգիտիմացման սկզբնական ակտով) կողմից, որն

օժտված է պետական կառավարման աստիճանակարգի հաջորդող սուբյեկտների լեգիտիմացման իրավունքով:

Քննարկվող հիմնախնդիրը, որպես սահմանադրաիրավական կարգավորման համակարգ, իրավաբանական գրականության մեջ միշտ էլ ուսումնասիրվել և դիտարկվել է որպես իրողություն, որի ծագումնաբանությունը հիմնականում չի քննարկվել ակադեմիական մակարդակով: Այստեղ նկատի ունենք, թե մինչսահմանադրական կացութաձևում ինչ ընթացակարգով մշակվել և գրվել Սահմանադրության նախագիծը, որպես նոր պետության և հասարակության մոդել: Այս առումով պետականության լեգիտիմացման աստիճանակարգի առաջին մակարդակը (սահմանադրաիրավական համակարգի մշակման գործընթաց) պահանջում է ժողովրդի, որպես իրավական ինքնախմունիտետով օժտված սուբյեկտի, փաստացի ունակությունը հետևյալ դրսևորումներով.

1) միջազգային իրավունքի շրջանակներում համամարդկային և համաշխարհային արժեքները, նպատակներն ընկալելու և դավանելու գիտակցական մակարդակ,

2) սահմանադրականության իրավական փարածությունում գործող նոր պետության կառույցի ձևավորման անհրաժեշտության ընկալման և հիմնավորման գիտակցական մակարդակ՝ նպատակաուղղված ազգի՝ ժողովրդի բարգավաճմանը,

3) Հիմնական օրենքի և ամբողջությամբ վերցրած օրենսդրական համակարգի որակի չափանիշների ընկալման և հիմնավորման գիտակցական մակարդակ:

Պետք է նկատել, որ այս չափանիշներին օբյեկտիվորեն չի կարող ժողովուրդն ամբողջությամբ համապատասխանել: Վերջինս առնվազն պետք է ունենա իրավագիտակցության բավարար մակարդակ, որպեսզի *իր անունից սոցիալական պատվեր իջեցնի հասարակության մրավոր ընտրանու այն հատվածին, որն առանձ-*

նանում է Սահմանադրության և սահմանադրաիրավական կարգավորման օբյեկտների ընկալման և ձևավորման հիմնարար ակադեմիական մակարդակով, ինչպես նաև ժողովրդի և սերունդների առջև պատմական պատասխանատվության ազնիվ զգացումով: Այս տեսակետից որակի չափանիշներին համապատասխան պետականություն ստեղծելու առումով դասական օրինակ է աշխարհում առաջինը համարվող ԱՄՆ 1787 թ. Սահմանադրության, ինչպես նաև ԳԴՀ 1949 թ Հիմնական օրենքի ծնունդը: Դրանք ստեղծվեցին և ընդունվեցին ազգի «Հայրերի» կողմից, որոնք լիովին համապատասխանում էին վերը նշված որակի չափանիշներին:

Համակարգային հակամարտությունը ծագում է «ժողովուրդ» օբյեկտի ոչ միանշանակ դասակարգման ու որակավորման արդյունքում, երբ չի բացահայտվում ժողովրդի, որպես պետականության և պետության հարցերը հաստատելու լեգիտիմության ինքնամունիտետի կրողի իրավական բնույթը, հստակ և միանշանակ չեն սահմանվում ժողովրդի պարտականությունները և դրանց ամրագրման կառուցակարգը: Մասնավորապես, «ժողովուրդ» օբյեկտն իր մեջ ներառում է ոչ միայն պետության քաղաքացիներին, այլև կացության այլ կարգավիճակներ (օտարերկրացիներ, ապաքաղաքացիներ, փախստականներ և այլն) ունեցող անձանց, ինչպես նաև դեռևս ընտրական տարիքի չհասած քաղաքացիներին: Որպես հետևանք, անհնար է դառնում որոշելու ժողովրդի՝ որպես հանրաքվեի իրավահարաբերությունների սուբյեկտի, դրսևորման համապատասխան որակները: Արդյունքում, հնարավոր է հանրաքվեի՝ որպես սահմանադրական գործընթացի, և ժողովրդի ընտրության իրավունքի էության և բովանդակության ձևախեղում՝ վերջինիս՝ (որպես իրավունքի սուբյեկտի) իր պարտականությունները լիակատար կատարելու ոչ իրավասու լինելու հետևանքով: Մինչդեռ, հայտնի է, որ *սուբյեկտին իրավասությամբ կարող է օժ-*

տել միայն նրա օբյեկտիվ ունակությունը: Հետևաբար, եթե ժողովուրդը աչքի չի ընկնում քաղաքացիական ձեռնահասության պատշաճ մակարդակով, ապա Սահմանադրության ընդունման հանրաքվեն կարող է ունենանալ ձևական և տեխնիկական բնույթ և հանգեցնել համակարգային հակամարտության: Որպես առաջնային սահմանադրական օբյեկտ՝ ժողովուրդն ի վերուստ ունի իրավական ինքնաիմունիտետ, որի կամահայտնությունից կախված է ողջ իրավակարգավորումը, սակայն փաստացի ունակության տեսակետից, եթե չունի տարրական քաղաքական գիտելիքներ, նա չի կարող ունենալ լսարանի, առավել ևս հանրաքվեի սուբյեկտի կարգավիճակ:

Բացի այդ, հանրաքվեն, որպես ժողովրդի կամահայտնության միջոցով պետականության լեգիտիմացման սկզբնական կառուցակարգ, պետք է հանդես գա որպես սահմանադրական կարգավորման հիմնարար օբյեկտ և այն չի կարող կարգավորվել ընդամենը սովորական օրենքի մակարդակով: Մինչդեռ, օրինակ Հայաստանի Հանրապետությունում գործող Սահմանադրությունը ամրագրում է միայն հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտների շրջանակը և հանրաքվեի անցկացման ընթացակարգը, օրենքի կարգավորմանը թողնելով այնպիսի բացառիկ սահմանադրական կարգավորման խնդիրներ, ինչպիսիք են հանրաքվեի դրվող և չդրվող հարցերի շրջանակը, հանրաքվեն բացառող հանգամանքները և այլն:

Քաղաքացիական հասարակության կողմից պետական կառույցի, որպես ամբողջական համակարգի, և իրավական լեգիտիմության անհրաժեշտության գիտակցական պահանջի բացակայության արդյունքում խնդիր է առաջանում մոդելավորելու իրավական տարածություն, որն իր մեջ կներառի ինչպես պետությունը, այնպես էլ իրավական կարգավորման համակարգը, որն ուղեկց-

վում է պետականության, որպես համակարգի, լեգիտիմության իրավական ամրագրմամբ: Նշված սոցիալական պահանջն ունի համակարգային բնույթ, ինչպես հասարակության (բոլոր շերտերի) քաղաքացիական կոմպետենտության, պետական մտածողության մակարդակի և իրավական պետականության և իրավական հասարակության առարկայի ընկալման տեսակետից, այնպես էլ ժողովրդի կամահայտնության ձևական ընթացակարգի որոշակի ձևի պատկերացման տեսանկյունից: Այս մակարդակում էլ հենց ծագում է *ամենասկզբնական համակարգային հակամարտությունը, որի հակամարտածինության դասը դիտարկվում է որպես լեգիտիմության շեղում՝ իրավական փարածության կորոդինատների համակարգի մակարդակում: Անկասկած հակամարտությունների այս դասն ունի համակարգային բնույթ, որի արդյունքում հակամարտության կողմեր կարող են դառնալ հեղափոխական սուբյեկտները.*

ա) ժողովուրդ-պետականություն,

բ) պետականություն-իշխանություն (որը ներկայացնում է պետությունը),

գ) քաղաքացի-պետություն:

Սահմանադրաիրավական կարգավորման համակարգի առանցքային որակական հատկությունը պայմանավորված է հասարակության մեջ դրսևորվող ցանկացած վարքագծի իրավական արդացումն հստակ կառուցակարգի առկայությամբ՝ սահմանադրաիրավականից մինչև վարչաիրավական մակարդակով: Այն ներառում է նաև հասարակության իրավական վարքագծի ինքնակարգավորվող խթանները, որոնք ձևավորում են բարոյամշակութային ավանդույթները՝ հասարակական փոխհարաբերությունների բոլոր ոլորտներում, վերջին հաշվով, սահմանելով «չգրված սահմանադրությունը»:

Սահմանադրաիրավական կարգավորման համակարգի վերը նշված հատկությունների բացակայության պարագայում ծագում են համակարգային հակամարտություններ, որոնք դրսևորվում են իրավական կարգավորման համակարգի տարբեր մակարդակներում: Այսպես, հակամարտությունը ծագում է այն ժամանակ, երբ *պետականությունը, որպես ինքնուրույն կարեգորիս*՝ իր որակական հատկանիշներով պահանջում է ժողովրդից համապատասխան ունակություն՝ հանդես գալու որպես պետության և պետական կառույցի համապատասխան մոդելի միջոցով իր հասարակական կեցության կազմակերպման ձևի անհրաժեշտությունը որոշող բարձրագույն իրավական ատյան, և այդ պայմանը չի ապահովվում: Արդյունքում, պետականության և դրա կազմակերպաիրավական ձևերի էության և բովանդակության ընկալման անկարողությունը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ ժողովուրդը հաջորդաբար կքվեարկի տարբեր և նույնիսկ միմյանց հակասող պետականության մոդելների օգտին, որոնք հռչակագրային մակարդակում ունեն միևնույն նպատակը՝ ժողովրդի բարեկեցությունն ու բարգավաճումը: Ասվածը կարելի է հիմնավորել Եգիպտոսի օրինակով: Մասնավորապես, 2011 թ. Եգիպտոսում ժողովրդավարական կարգեր հաստատաելու պատրվակով գերտերությունների աջակցությամբ տեղի ունեցավ հեղափոխություն, որի արդյունքում երկրի իշխանության ղեկին եկավ «Մահմեդական եղբայրներ» քաղաքական կուսակցությունը, որն աչքի է ընկնում ծայրահեղ իսլամիստական հայացքներով և ոչ մի չափանիշով չի համապատասխանում ժողովրդավարության պահանջներին: 2012 թ. դեկտեմբերի 15-ին անցկացվեց հանրաքվե, որի արդյունքում ընդունվեց Եգիպտոսի նոր Սահմանադրությունը: Արդյունքում այդ երկրում ավելի լայն թափ առավ մի նոր հակամարտություն. խնդիրն այն էր, որ նոր Սահմանադրությամբ երկրի իրավական

համակարգի հիմքում դրվում են շարիաթի սկզբունքները և էապես ընդարձակվում են պետության գլխի լիազորությունները:

Այդ առումով, սահմանադրական հանրաքվեի դիտորդներն արդարացիորեն նշել են, որ նոր Սահմանադրությունը կսատարվի հանրաքվեին մասնակցող անգրագետ գյուղացիական բնակչության հաշվին, իսկ դրա ընդունումից հետո երկրում կսկսվի նոր պառակտում, քանի որ լիբերալներն ու քրիստոնյաները դժվար թե համաձայնվեն ապրել այնպիսի Սահմանադրության պայմաններում, որը հիմնված է շարիաթի սկզբունքների վրա¹:

Վերոնշյալ նկատառումներով էլ եգիպտոսի Լիբերալ «Ադ-Դուստուր» կուսակցության հիմնադիր Մուհամեդ Էլ-Բարադեյը (ՄԱԳԱՏԷ-ի նախկին ղեկավար) նկատում է. «Հանրաքվեից հետո երկրի նոր հիմնական օրենքով Եգիպտոսի պառակտումը իսլամիստական և աշխարհիկ ճամբարների ավելի է խորացել, իսկ պետության հիմքերը սկսում են քանդվել: Շատ եգիպտացիների աղքատությունն ու անգրագիտությունը ամենապարարտ հողն են ստեղծում կրոնի առուծախի համար»²:

Ժողովրդի փաստացի անկարողությունը, որպես կանոն, ծնում է երկրորդ մակարդակի հակամարտությունը, որում *ժողովրդի փաստացի իրավասությունը փոխանցվում է ընթացիկ իշխանությանը*, իսկ սահմանադրական օբյեկտները տեղափոխվում են սովորական օրենսդրության իրավական կարգավորման մակարդակ, գործող իշխանության իրավական հարմարավետությունը ապահովելու առաջնությամբ, ստեղծելով համակարգային հակամարտություն: Այս մակարդակում սահմանադրական հիմնարար սկզբունքները հաճախ ծխածածկույթի դեր են խաղում օրենքի անունից քա-

¹ Տե՛ս http://www.topnews.ru/news_id_55041.html.

² Տե՛ս <http://mir-politika.ru/2649-egipet-konstitucionnyy-referendum-raskolol-stranu.html>.

ղաքական և անձնական նպատակահարմարության իրականացման համար¹:

Այս իրավիճակի տրամաբանությամբ փաստացի գոյություն ունեցող պետությունը համարվում է «սահմանադրական», իսկ պետականությունը պետք է լինի այնպիսին, որ համապատասխանի այդ պետությանը: Այն ամենը, ինչը չի համապատասխանում պետությանը, համարվում է ոչ սահմանադրական: Արդյունքում համապատասխան պետականության օբյեկտիվ բնույթը հակամարտության մեջ է մտնում սուբյեկտիվորեն սահմանված իշխանության իրավունքի հետ, որը որպես այդպիսին, չունի ինքնախմուխ-տետի իրավունք, որի բացառիկ կրողը ժողովուրդն է: Նույնիսկ եթե իշխանությունը հանդես է գալիս ժողովրդի անունից, *դա ներկայացուցչական իրավական կարգավիճակ է, այլ ոչ՝ լեգիտիմության իմունիտետ*: Այս հակամարտության առկայությունն ուղեկցվում է հայեցակարգային «դեֆոլտով»:

Եթե ժողովուրդը չի հասկանում ինչ է պետականությունը, հետևաբար, չի կարող ներկայացված լինել լեգիտիմ ընտրանիով, որը կարող է արտացոլել պետության՝ իր ամբողջ յուրահատկությամբ ընկալվելու ունակությունը: Արդյունքում, ժողովուրդը չի կարող հանդես գալ որպես պետականության մոդելն ընտրող, գնահատող, հաստատող, գործի դնող սուբյեկտ: Նա կարող է կուրորեն ընդունել պետականության տարբեր ընկալումները, որոնք կարող են հիմնված լինել ոչ պետական մոտեցումների վրա: Այս պարագայում թույլ է տրվում, որպեսզի պետականության կերտման գործընթացները ընթանան *ինքնաձևավորման, ինքնակազմավորման*

¹ St' u Deformatsii konstitutsionalizma v Evraziyskom prostreanstve, Interv'yu s Predsedatelem Konstitutsionnogo Suda Respubliki Armeniya, doktorom yuridicheskikh nauk, professora Arutyunyanom Gagikom Garushevichem. Evraziyskiy yuridicheskiy zhurnal, nomer 7(26)2010, <http://www.eurasialaw.ru/>.

և ինքնահոսի զարգացման ուղղությամբ: Արդյունքում բնակչության մոտ իշխանությունների հանդեպ ձևավորվում է անվստահություն և դժգոհություն:

Ե՞րբ է դժգոհող հասարակությունը վերածվում բողոքավոր զանգվածի: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ սահմանադրաիրավական կարգավորման անհավասարակշռված համակարգի արդյունքում բացակայում է իրավական համակարգի աստիճանակարգի ամբողջական և փոխադարձ կապվածությունը, իշխանությունների բաժանման անհավասարակշռված համակարգում ձևավորված չեն լինում և լիարժեք չեն գործում պետական իշխանության ինստիտուտները, առկա է լինում քաղաքացիական իրազեկվածության և քաղաքացիական ինքնագիտակցության անբավարար կամ ցածր մակարդակ, քաղաքացիական հասարակության չձևավորված մտածելակերպ: Արդյունքում հասարակության *դժգոհություն-բողոքի* առաջացումը հիմնվում է առավելապես *անվստահության* վրա, որը ինքնին ունի հոգեկան-հուզական բնույթ, քան *անհամաձայնության*, որը տրամաբանական հիմնավորմամբ պետք է հենվի պահանջի գիտակցական ձևակերպման վրա: Մինչդեռ, պետություն-հասարակություն փոխհարաբերություններում սահմանադրաիրավական կարգավորման համակարգը կոչված է *կարգավորելու անհամաձայնության դրսևորումը*, ճնշելու *պրովոկացիոն դժգոհությունն* ընդհանրապես և կանխելու սահմանադրաիրավական կարգավորման համակարգի նկատմամբ ձևավորված *անվստահությունը*, որը, որպես կանոն, զուրկ է լինում տրամաբանական հիմնավորումից և փաստարկումից: Առաջացած իրավիճակում ինչպես իշխանության (որը պարտավոր է ապահովել սահմանադրական կարգը), այնպես էլ բնակչության գործողությունները բովանդակային առումով դառնում են ոչ լեգիտիմ: Արդյունքում հակամարտության կողմերից յուրաքանչյուրը ձգտում է

«սեփականաշնորհել» երկրի Սահմանադրությունը, որպես իր ոչ լեգիտիմ գործողությունների իրավական ամրագրում: Ստեղծվում է իրավիճակ, երբ հասարակության բողոքավոր հատվածի վարքագծային դրսևորումները ձեռք են բերում զանգվածային անկարգությունների բնույթ և «հիմնավորվում», որպես Սահմանադրությամբ ամրագրված ժողովրդի կամահայտնության իրավունքի իրացում: Իսկ բողոքավոր հատվածի ագրեսիվ վարքագծի կանխումն ու վերջիններիս նկատմամբ քրեական հետապնդումները իշխանական ինստիտուտները «հիմնավորում» են, որպես Սահմանադրությամբ իրենց վրա դրված սահմանադրական կարգի պահպանման պարտականության կատարում: Ակնհայտ է, որ այս պարագայում իշխանության մոտ դա հաջողվում է, քանի որ վերջինս տիրապետում է վարչական ռեսուրսներին և հարկադրանքի միջոցներին: Արդյունքում բախվում են երկու «լեգիտիմները», ինչը հանգեցնում է անկառավարելի համակարգային հակամարտության: Ուստի, բողոքի ինքնաբերաբար դրսևորումը կարող է առաջացնել հակամարտություն՝

ա) բնակչության տարբեր սոցիալական խմբերի միջև,

բ) իշխանության կառույցների միջև,

գ) բնակչության և իշխանության միջև:

Բողոքի ծագումնաբանությունը, որպես իրավաբանական եզրույթ, և դրա դրսևորման իրավական բնույթը մեր կողմից դիտարկվում է որպես հասարակության մեջ *խրոնիկ դժգոհության առկայության արդյունք՝ դրա վերացման սահմանադրաիրավական կարգավորման համակարգի մշտական անկարողությամբ:* Արդյունքում ձևավորվում է հասարակության մեջ *բողոքավոր զանգվածը:* Դժգոհությունը *բողոքի* վերածվելու դեպքում վերջինիս (բողոքի) պահանջի իրավական հիմքն արդեն էապես տարբերվում է նախորդից նրանով, որ՝

ա) փաստարկվում է դժգոհության առարկայի հետ կապված առկա անլուծելիությունը,

բ) գործող սահմանադրաիրավական կարգավորման համակարգը վստահություն չի ներշնչում, որի արդյունքում ծայր են առնում անհամաձայնությունը և առարկությունները կարգավորման վերաբերյալ:

Տվյալ պարագայում ո՞րն է խնդրի լուծումը: Ակնհայտ է, որ բնակչության անվստահության դրսևորումը, որն ունի հոգեկան-հուզական բնույթ, հնարավոր չէ նկարագրել սահմանադրաիրավական նորմերով և կարգավորել իրավական ընթացակարգերով, թեև այն երբեմն ունենում է նաև օբյեկտիվ հիմքեր: *Բնականաբար, իշխանությունը չպետք է անտեսի քաղաքացիական հասարակության ինստիտուտների ձևավորված չլինելու հանգամանքը և ապավինի դրանց ինքնաձևավորմանը: Ընդհակառակը, նա պետք է ձեռնամուկ լինի հասարակության ինքնագիտակցության բարձրացմանը և քաղաքացիական հասարակության մտածելակերպի ձևավորմանը, ինչը կբացառի հասարակության դժգոհության պրովոկացիոն հոգեհուզական դրսևորումների հավանականությունը և կփոխարինի այն տրամաբանական ձևաչափով անհամաձայնություն դրսևորելու տարբերակով: Նշված անհամաձայնության դրսևորման յուրաքանչյուր կոնկրետ դեպքն ու չափանիշները պետք է նկարագրվեն սահմանադրաիրավական նորմերով, ինչը իշխանությանը հնարավորություն կտա հակամարտությանը տալ իրավական որակում և գտնելու խնդրի լեգիտիմ լուծումներ: Հակառակ պարագայում, եթե իշխանությունն ի վիճակի չի լինում գնահատելու քաղաքացիական հատվածի ընթացիկ կարգավիճակը, ապա ազատ հավաքների մասին ընդունված ցանկացած օրենք զուրկ է լինում հայեցակարգային հիմքերից, վերածվում է տեխնիկական բնույթի փաստաթղթի և ի զորու չի լինում կանխել զանգվածային*

անկարգությունները:

Ժողովուրդը, որպես իրավական համակարգի լեգիտիմությունը որոշող առաջին ատյան, պետք է ունենա քաղաքացիական իրազեկվածության բավարար մակարդակ, որպեսզի գիտակցական մակարդակով կարողանա *իրեն ինքնանույնականացնել որպես լեգիտիմության բարձրագույն սուբյեկտի* և որպես այդպիսին՝ ապահովել իր ապաքաղաքականացված լինելու կարգավիճակը:

Բողոքի դրսևորման իրավական համարժեքության կտրվածքով վերջինիս նորմատիվ նկարագրման և սահմանադրաիրավական կարգավորման չափանիշների բացակայության արդյունքում հասարակության և իշխանության ինստիտուտների միջև ձևավորվում է *առաջին ատյանի կարգավիճակի հակամարտություն*, որը որոշում է բողոքով ուղեկցվող ամբողջ իրավական համալիրի լեգիտիմությունը ընթացիկ ժամանակահատվածում: Այստեղ կողմերից յուրաքանչյուրը ձգտում է ամեն գնով ցույց տալ իր առաջին ատյան լինելու կարգավիճակը՝ հասարակությունը, որպես իշխանության բացառիկ աղբյուր, կրող և պետության իրավունքի համակարգի (հանրաքվեով ընդունված Սահմանադրության) հեղինակ, իսկ իշխանությունը՝ որպես երկրի սահմանադրական կարգի պաշտպան և պատասխանատու: Արդյունքում երկու կողմերի վարքագիծը սկսում է ունենալ ագրեսիվ դրսևորումներ, որի անկառավարելիության հետևանքով առաջանում է *քաղաքացիական անհնազանդություն* և տեղի է ունենում *սոցիալական պայթյուն*:

Այս առումով կյանքը ցույց տվեց, որ (մասնավորապես 2008 թ. մարտի դեպքերը) մեր գործող Սահմանադրությունն ունի բարեփոխման անհրաժեշտություն՝ հասարակական համալիր գործընթացներում կայունության ապահովման համար: Ուստի և պետականության սահմանադրաիրավական ամրագրման հիմնախնդիրների հետազոտությունը ակադեմիական մակարդակում միտ-

ված է ապահովելու սահմանադրաիրավական կարգավորման գործող կառուցակարգ, որը կարող է կանխել սոցիալական պայթյունն՝ իր ծագման բոլոր մակարդակներում:

Ըստ էության, եթե պետականությունը, իրավական կարգավորման համակարգի տեսակետից պայմանականորեն պատկերացնենք գնացքի տեսքով, ապա առաջնորդողի դերում միանշանակ հանդես է գալիս *իրավունքի էությունը*, այնուհետև, որպես առաջին վագոն հանդես է գալիս *համալիր հասարակական գործընթացի իրավական ամրագրման ձևականացված հայեցակարգը (Սահմանադրություն)*, որպես երկրորդ վագոն՝ *իրավական կարգավորման համակարգը*, որպես երրորդ՝ *օրենսդրական, չորրորդ՝ այլ գերատեսչական ակտերը* և այլն: Սահմանադրականության համակարգային ամբողջականության խաթարումը բերում է նրան, որ վագոնների յուրաքանչյուր նոր շղթա սկսվում է երրորդից, և ամեն անգամ անհրաժեշտություն է առաջանում կառուցել ոչ միայն նոր քարշակ, առաջին և երկրորդ վագոն, այլև կազմակերպել գնացքի շարժումը ետևից առաջ: Ստացվում է, որ քարշակը ոչ թե քաշում է, այլ հրում է կազմը ետևից առաջ՝ առանց տեսադաշտի: Ակնհայտ է, որ այս պարագայում գործ ունենք ոչ թե սովորական, այլ համակարգային բնույթի հակամարտության հետ, որը խաթարում է իրավական համակարգի ամբողջականությունը, այն փոխարինելով ձևախեղված մոդելով: Իրավական համակարգի ձևախեղման ռեցիդիվներն ունեն ծագման համակարգային բնույթ, և համապատասխանաբար՝ համարվում են համակարգային հակամարտության հետևանք և չեն կարող շտկվել կամ չեզոքացվել նույնիսկ պոզիտիվ իրավունքի մեթոդաբանական զինանոցի միջոցով:

Սահմանադրությունը կոչված է չթույլատրելու բազային համակարգային հակամարտությունը, այսինքն՝ «գնացքի շարժումը ետևից առաջ»: Բնականաբար, եթե գնացքի վագոններից որևէ մե-

կում արձանագրվում է անսարքություն, կամ երթուղին ունենում է խոչընդոտներ կամ արգելքներ, ապա այդ ամենը քարշակի վարորդը չի կարող տեսնել, քանզի այն ոչ թե ընթանում է առջևից, այլ կուրորեն հրում է այն: Այս պարագայում ձևավորվում է սինդրոմ, որ բարձրագույն իշխանությունը չի տեսնում, թե իրականում ինչ է տեղի ունենում գնացքի երթուղում: Իսկ այդ խնդիրը հնարավոր է լուծել միայն համակարգային մոտցմամբ, մասնավորապես վերականգնելով գնացքի բնականոն ընթացքը (շարժման այն համակարգը, որում քարշակը ոչ թե քաշում է, այլ հրում է կազմը, համարվում է ոչ ճիշտ և ձևախեղված գնացք): Այս առումով, կարծում ենք, երևի կարելի է ծայրահեղ ռեժիմով համապատասխան *ձևախեղման սանդղակով* անցկացնել իրավական համակարգերի և իրավական կարգավորման համակարգերի դասակարգում, որոնք որոշվում են համակարգային հակամարտությունների առկայության փաստով և իրավունքի լեգիտիմ տրամաբանությունից շեղվելու աստիճանով: Այդ կերպ հնարավոր կլինի կանխարգելել «հակաիրավական իրավական համակարգերի ծնունդը», որը, որպես կանոն, շահարկվում է «ինքնիշխանության իրավունքի» սկզբունքով, որն էլ իր հերթին ծնում է մեծամասնության և փոքրամասնության չկարգավորվող իրավական հակադրությունների ռեցիդիվներ (ինքնիշխանության իրավունքը չի նշանակում գիտական դիսցիպլինից դուրս իրավունքի էության սահմանման իրավունք):

Այսպիսով, սահմանադրաիրավական կարգավորման համակարգի համար ծայրահեղ և պարտադիր է համարվում իրավունքի դրսևորման, իրավագոյացման և օպերացիոն իրավակիրառման համալիր ամբողջականության ապահովումը, այլ կերպ ասած՝ գնացքի առջևից լրկոմոտիվի նպատակաուղղված շարժումը՝ կոնկրետ նշված ուղղությամբ և կոնկրետ սահմանված երթուղով՝ վազոնների հերթականության հստակ կարգավորվածությամբ: Այս

պարագայում սահմանադրաիրավական կարգավորման նորմաստեղծագործությունը և առանց սահմանադրականության սկզբունքների սովորական իրավական կարգավորման համակարգերի նորմաստեղծագործությունը հիմնովին տարբերվում են միմյանցից, ընդ որում պետք է նշել, որ սահմանադրականության գիտական և պրակտիկ ընկալման ոչ ձեռնահասության առկայության դեպքում սահմանադրաիրավական կարգավորման նկատմամբ կիրառվում է սովորական նորմաստեղծագործություն, որը սահմանադրությունը վերածում է *սովորական տեխնիկական իրավական փաստաթղթի*: Այս իմաստով սահմանադրաիրավական կարգավորման առջև խնդիր է դրված վերացնել համակարգային հակամարտություններն ինչպես իրավունքի էության ծագումնաբանության մակարդակում՝ իրավագոյացման հաջորդական համակարգով և դրա արդյունքում իրավական կարգավորման համակարգի ձևավորմամբ, այնպես էլ ֆունկցիոնալ-օպերացիոն մակարդակում՝ պրակտիկ իրավակիրառմամբ: Այստեղ կենտրոնական խնդիրը համարվում է սահմանադրականության ներդրումը միջազգային իրավունքում, որի իրավական հիմքը ցավոք սրտի խարսխվում է դոկտրինալ համակարգի վրա, որն իրավագոյացման ասպարեզում թույլ է տալիս, որպեսզի իրավակիրառ համակարգը (ՄԱԿ, ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդ, ԵԱՀԿ և այլն) գտնվի «կոալիցիոն իրավունքի» հարթությունում:

Այն իր հերթին նենգափոխում է *իրավունքի գերակայության սկզբունքը*: *Հետևաբար, միջազգային իրավունքի հիմնարար բովանդակային համալրումը պետք է լինի իրավունքի գերակայության սահմանադրական գործառույթի ապահովումը համաշխարհային հանրության դրսևորման բոլոր կտրվածքներով (արտաքին և ներքին), որը պետք է բացառի այն բազային իրավական կոլիզիան, որ «իրավունքի գերակայությունը կարող է սահմանվել բռնի*

ուժով»։ Մինչդեռ, իրավունքի գերակայությունը տրամաբանական առումով կարող է կենսունակ լինել միայն այն դեպքում, երբ իրավունքը հանդես է գալիս որպես լիարժեք գոյ (այսինքն իրավունք է ունենում լինել որպես այդպիսին), որը համապատասխանաբար պետք է սահմանի իրավունքի ուժի սկզբունքի առավելությունը ուժի իրավունքի նկատմամբ, այդպիսով ձևավորելով իրավունքի գերակայության, որպես իրավական օբյեկտի, սահմանադրական կարգավիճակը։

Ասվածի հիմնավորման համար բերենք ակնհայտ մի օրինակ։ Ազգերի ինքնորոշման իրավունքի բովանդակային հիմքը համարվում է մարդու ամենատառաջնային և հիմնական համարվող կյանքի իրավունքը, որի ապահովման պատասխանատուն համարվում է պետությունը։ Եթե պետությունը չի ապահովում իր քաղաքացիների կյանքի իրավունքը, դեռ ավելին, ոտնահարում է այն՝ ելնելով ազգային և էթնիկ պատկանելությունից, ապա ժողովուրդը, ի դեմս հասարակության, իրավունք ունի ինքնորոշվել և ձևավորել այն պետությունը, որը նեցուկ կլինի նրա ոչ միայն կյանքի, այլև մյուս հիմնարար կենսական իրավունքների ապահովմանն ու իրականացմանը։ Այս տեսակետից միանգամայն տրամաբանական է Լեոնային Ղարաբաղի, Հարավային Օսեթիայի, Աբխազիայի ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրականացումը։ Սակայն միջազգային հանրությունը չի ցանկանում ճանաչել այս ժողովուրդների կյանքի իրավունքը։ Մյուս կողմից ճանաչում և քաջալերում է, օրինակ, Ուկրաինայում լեզգիտիմ իշխանության տապալումը բռնություն կիրառելով կամ ինքնահոշակ «Մայդանյան իրավունքը», որի արդյունքում տեսականորեն անհնար է դառնում ուկրաինական ճգնաժամի հաղթահարումը։ Արդյունքում հարց է առաջանում. ո՞ր իրավունքն ունի գերակայություն. մայդանյան իրավունքը, թե՞ ինքնորոշման իրավունքը։ Մեթոդաբանական այս խնդիրների հաշվա-

ռումը պետք է ընկած լինի մեր երկրում սահմանադրական բարեփոխումների հիմքում:

Պետք է նկատել, որ պետությունների կողմից սահմանադրաիրավական կարգավորման համակարգի գիտակցմամբ ու ընկալմամբ է պայմանավորված եղել քաղաքակրթությունների պատմական սինթեզի ընթացքում պետությունների փուլային վերելքների ու անկումների հաջորդականությունը: Մասնավորապես, վերելքները եղել են բնական իրավունքի բնույթի ընկալման հետևանք: Իսկ պետություն-քաղաքակրթությունների անկումն ու կործանումը տեղի է ունեցել բնական իրավունքի մշտական պատասխանատվությունը անտեսելու (մասնավորապես՝ անհամարժեք ինքնավստահության հետևանքով, որը, որպես կանոն, հիմնվում էր գերիշխանության կարգավիճակի վրա, որն էլ իր հերթին հիմնվում էր ուժի վրա) հետևանքով կամ ինքնախաբեության հետևանքով, որ ձեռք բերված հավասարակշռությունը հասարակության զարգացման շարժուն փոփոխությունների պայմաններում ունի ինքնաձևավորման բնույթ՝ «շուկայական օրենքներով»: Յուրաքանչյուր անկում ուղեկցվել է ինքնանույնականացման կորստով: Խոսքը վերաբերում է հասարակության ինքնանույնականացման գիտակցական ընկալման ունակության կորստին, որն ուղեկցվում է հասարակության գոյի իմաստի և արժեքների համակարգի ինքնանույնականացման աճող կորստով: Սահմանադրաիրավական կարգավորման տեսակետից դա նշանակել է, որ պետություն-քաղաքակրթությունը կարող էր կայանալ և զարգանալ շնորհիվ հասարակության ինքնանույնականացման ունակության, որը դրսևորվում էր պետական կառուցվածքի ձևականացված մոդելի տեսքով, որը ապահովում էր արժեքների համակարգը, որոնք բխում էին հասարակության գոյի իմաստի հիմնական սկզբունքներից: Սա ցանկացած պատասխանատվության գիտակցում ունեցող պետության

հիմնական խնդիրն է, հատկապես եթե վերջինս հավակնում է լինել ձևավորվող կամ արդեն գոյություն ունեցող քաղաքակրթության հիմքը՝ պահպանելով գոյի իմաստ - արժեքների համակարգ - հասարակության բարեկեցություն շղթայի ամբողջականությունը: Սահմանադրության խնդիրը այս ամբողջական շղթայի ու պետականագոյացման իրավական ամրագրումն է: Քանի դեռ սահմանադրականությունը նման որակով, ընկալումով ու իրավագոյացման կիրառմամբ գոյություն է ունեցել, քաղաքակրթությունները ծնվել, ձևավորվել, զարգացել ու ձեռք են բերել հզոր պոտենցիալ գործառույթային ուղղորդված արարման հիման վրա: Հենց որ այդ ընկալմամբ խախտվել է սահմանադրականության սկզբունքը և վերացել է պետության ինքնբերաբար ձևավորված սահմանադրավական տարածականությունը (գրված կամ չգրված սահմանադրություն), տեղի է ունեցել արժեքների համակարգի քայքայում, գոյի իմաստի սկզբունքների խաթարում, որի արդյունքում տեղի է ունեցել պետության վերակազմավորում, վերջին հաշվով՝ ձևախեղում՝ իր սկզբնական բովանդակության կորստով:

Այս տեսակետից, պետք է ասել, որ քաղաքակրթությունը չի կարող գոյատևել առանց սահմանադրականության, որն ինքնաբերաբար առկա էր այն պետություններում, որոնցում իրավունքի էությունն ու իրավական համակարգը բխում էին «Յունատուրալիզմի» բազային այն սկզբունքից, որ պետք է ամենապատասխանատու կերպով վերաբերվել աշխարհի կառուցվածքի ներդաշնակության սահմանադրության հարցերին (Շումերներ, Հունաստան, Հռոմ, Պարսկաստան և այլն):

Առանց այս սկզբունքի քաղաքակրթության շարքերը մուտք գործելը կլինի արհեստական, իսկ ներգրավվելը՝ բռնի: Քաղաքակրթությունն առաջին հերթին արժեքների այնպիսի համակարգ է, որն արտացոլում է մարդու ներդաշնակության սահմանադրու-

յունը, որին պետք է գիտակցաբար ձգտեն պետությունները, ժողովուրդները, ազգերը այն վստահությամբ, որ իրենց նույնականացումը չի վերացվի, այլ ընդհակառակը՝ կընդլայնվի և կհարստանա: Այս պարագայում, իրավունքի էության տեսակետից, չի կարելի քաղաքակրթությունը նույնականացնել «կայսրություն» հասկացության հետ, որը հանդես է գալիս ընդամենը որպես իրավական կազմակերպական ձև:

Կառավարման ձևի հիմնավորումը: Անկախ պետականության հետևողական կայացման գործընթացում օրենսդրական փոփոխությունները, հատկապես սահմանադրաիրավական կարգավորման մասով, համարվում են ամենապատասխանատուն և առանցքայինը, որոնք կոչված են ապահովելու համարժեք իրավագոյացումը, իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքը և քաղաքացիական իրավական հասարակության համապատասխան կարգավիճակը: Նորագույն պատմության շրջանակներում այն ամբողջությամբ վերաբերվում է նաև հայկական պետականության ձևավորմանը:

Իրավագոյացման գործընթացը չի կարող լինել ոչ սահմանադրական, ապրիորի այն չի կարող ունենալ պատահական դրվագային բնույթ, և կարճաժամկետ իրավիճակային բնույթի շահերի արդյունքում նախաձեռնվել ինքնաբուխ կերպով:

Պետականության կայացման հաջորդական գործընթացի և իրավական կարգավորման համակարգի ամբողջականության խաթարումը կարող է հանգեցնել տարբեր մակարդակների ռեցիդիվների՝ իրավունքի գերակայության սկզբունքից հեռանալուն, «տեխնիկական» օրենսդրության և գործադիր իշխանության թևի (կառավարման ձևի փոփոխություն) ձևավորմանը՝ առանց իրավունքի բովանդակային և իմաստային համալրման, պետական կառույցի հյուսվածքների ձևախեղմանը՝ տեղափոխելով այն էվոյուցիոն *ինք-*

նաձևավորման սկզբունքի ոլորտ (ասվածի անալոգիան այն է, որ «դզող-փչող» սպասարկման կետը ժամանակի ընթացքում երբևէ ինքն իրեն կվերածվի «Մերսեդես Բենց» ավտոգործարանի):

Պետականաշինարարության նման մոտեցումը խորապես համարվում է վտանգավոր, ոչ կառուցողական-կործանարար, պատմական պատասխանատվության տեսանկյունից՝ հանցավոր, քանի որ ընթացիկ իշխանությունն «ինդուլգենցիա» ունի ձևավորելու իրավիճակային «հարմարավետ օրենսդրություն», որը ոչ միայն արդարացնում է, այլև խրախուսում է պետականության ձևախեղումն ու կորոզիան:

Ցավոք, այս երևույթը բնորոշ է նոր պետականության «անարխիստական-հեղափոխական» ձևավորման սկզբնական ժամանակահատվածին, որի հիմնական նպատակը ցանկացած գնով գործող իշխանության տապալումն է «մայդանյան իրավունքի» ինքնահոշակման շրջանակներում, որը գործող իշխանությանը հռչակում է որպես ոչ լեգիտիմ, ոչ ժողովրդական, և ամենաթողության դրամաշնորհներ է շռայլում հեղափոխության հայրերին, որպեսզի իշխանության գալուց անմիջապես հետո ընդունեն պետության նոր օրենսդրությունը արդեն պետական նախեծեռնության կարգավիճակով (այլ ոչ թե մայդանի), և ի դեմս նոր իշխանության՝ լեգիտիմացնեն պետության բռնության օրինական մենաշնորհը: Տարօրինակն այն է, որ նման իրավիճակները ամենայն հոգատարությամբ խրախուսվում են քաղաքակիրթ համարվող Եվրոպայի կողմից: Որպես ասվածի օրինակ բերենք Եվրամիության անվտանգության քաղաքականության և արտաքին գործորի գերագույն ներկայացուցիչ Քետրին Էշտոնի հայտարարությունը. «Ուկրաինայիում պետք է պահպանվի բռնություն կիրառելու պետության մենաշնորհը»¹: Կարծում ենք, նմանատիպ հայտարարությունները բովանդակային

¹ Տե՛ս <http://itar-tass.com/mezhdunarodnaya-panorama/1162420>.

առումով հուղարկավորում են իրավունքի էությունը, հիմք ստեղծելով ամենաթողության ու քառսի համար:

Ասվածն ուղղակիորեն վերաբերվում է նաև ՀՀԾ-ի կառավարման ժամանակահատվածին, սակայն ներկա ժամանակահատվածում ընթացիկ պետությունը թույլատրում է, նույնիսկ կիրառում է (որպես իներցիա կամ գիտակցաբար) իրավիճակային մակարդակում հիմնախնդիրների լուծման էվոլյուցիոն ինքնաձևավորման և ինքնալուծելիության ժառանգություն ստացած սկզբունքը: Այս պարագայում ստեղծվում է իրավական, քաղաքական, իսկ Սահմանադրության ընդունումից հետո նաև՝ սահմանադրական անախրոնիզմ:

Այս տեսակետից մեր հասարակության, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների շրջանակներում սահմանադրական փոփոխությունների համատեքստում ամենաակտիվ քննարկվող խնդիրներից մեկը դարձել է պետական կառավարման՝ նախագահականից խորհրդարանականին անցնելու հիմնահարցը: Մի կողմից կառավարման խորհրդարանական հանրապետության կողմնակիցները փորձում են դրվագային կերպով հիմնավորել վերջինիս անհրաժեշտությունը, մյուս կողմից, դրա հակառակորդները դարձյալ դրվագային և առանց տրամաբանական հիմնավորումների այն որակում են որպես իշխանության վերարտադրության փորձ: Մինչդեռ խնդիրն ունի բացառապես համակարգային բնույթ և պետք է իր տրամաբանական հիմնավորումն ստանա բացառապես համակարգային մոտեցման մեթոդաբանությամբ:

Փորձենք խնդրի տրամաբանական հիմնավորումը տալ՝ ելնելով իրավագոյացման հիմնախնդրից, այսինքն փուլերով ներկայացնել իրավագոյացման գործընթացը և հիմնավորել, թե կառավարման ձևը իրավագոյացման փուլերից յուրաքանչյուրում ինչ դրսևորում պետք է ունենա:

իրավագոյացման և պետականության կազմավորման փուլերը կարելի է պայմանականորեն ներկայացնել հետևյալ կերպ.

1. Հեղափոխություն:

2. Պետական կառույցի ուրվագծերի սկզբնական ամրագրում (օրինակ, Անկախության հռչակագիրը կամ «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքը):

3. Պետության կառույցի հաջորդական և հետևողական կայացման պլան-ծրագիր-Սահմանադրության՝ իրավական կարգավորման համակարգի մոդելի ընտրություն՝ իրավական տարածականության հաջորդական կայացման շրջանակներում:

4. Քաղաքացիական հասարակության և իրավական պետության սահմանադրական զարգացման գործընթաց:

Իմաստի, բովանդակության, ֆունկցիոնալ առաքելության, և իրավական կանոնակարգի առումով յուրաքանչյուր մակարդակ ունի միանգանայն այլ դրսևորում: Անթույլատրելի է, օրինակ սկզբնական ժամանակահատվածի (1-ին կամ 2-րդ մակարդակ) կառավարման ձևի փոփոխման սխտեմատեխնիկական համալիրը կիրառել մեր օրերում, երբ մենք պետք է գտնվենք 3-րդ կամ 4-րդ մակարդակներում:

Ուստի կառավարման ձևի փոփոխումը առանձին վերցրած ինքն իրենով առանց իրավագոյացման համապատասխան մակարդակի ֆորմատավորման, կարող է հանդես գալ որպես ամորֆ հայեցակարգային կատեգորիա, իսկ գործառույթային տեսանկյունից՝ դառնալ իրավական անախրոնիզմի խթանիչ մինչև կառավարման ձևի փոփոխման հաջորդ պահանջը, քանի որ կառավարման ձևի փոփոխման իմաստային մեխանիկական հիմնարար փաստարկմամբ նկարագրված չէ, որը պետք է բխի պետության կառույցի մոդելից: Այն պետք է ապահովի ինչպես սահմանադրականությունը, այնպես էլ պետության կառույցի համակարգում սահմանադ-

րական օբյեկտների փոխգործակցության պրակտիկ ամբողջականությունը:

Ասվածում էլ հենց արտահայտվում է սահմանադրաիրավական կարգավորման տրամաբանությունը: Սահմանադրականությունը սկսվում է ոչ թե գործող նորմերի մեկնաբանությունից, այլ այդ նորմերի տրամաբանական կառուցվածքի մշակումից և սահմանումից:

Այս առումով մեր պետության և գիտական հանրության առջև դրված են հետևյալ խնդիրները՝

ա) կանգնեցնել անախրոնիզմը,

բ) սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը տեղափոխել 4-րդ մակարդակ, չթույլատրել, որպեսզի սահմանադրական փոփոխությունների կամայական չհիմնավորված առաջարկությունները ընդունվեն Հանձնաժողովի կողմից,

գ) ձևավորել և ներկայացնել ՀՀ պետական կառույցի հետևողական կայացման ծրագիրը,

դ) կառավարման ձևի փոփոխությունը ներկայացնել որպես համակարգային երևույթ, որը ենթադրում է պետության կառույցի շրջանակներում սահմանադրական օբյեկտների (իշխանության թևեր, ժողովրդի կամահայտնություն-հանրաքվե և այլն) փոխգործակցության ձևերի փոփոխություն: Հիմնավորել կառավարման ձևի փոփոխման նպատակահարմարությունը՝ հենվելով այն հիմնարար չափանիշների վրա, որոնք անառարկելիորեն կանխորոշում են պետության կառույցի համալիր կայունությունը (քաղաքական, տնտեսական, սոցիալական), որը կապահովի պետական կառույցի գործառնավորման որակապես նոր մակարդակ,

ե) հանդես գալ որպես խթանիչ կառավարման ձևի փոփոխման սահմանադրական գործավարության ամբողջ շղթայում:

Պետական կառույցի գործառնավորման արդյունավետության ապահովման կենտրոնական խնդիրը կառավարման ձևի ընտրության չափանիշներն են, որոնք հենվում են ներքոհիշյալ գործոնների վրա՝

ա) պետական կառույցի կարկասի առկայություն, պետական կառույցի կայացման աստիճան, պետական կառավարման մարմինների ձևավորվածություն և գործառնական ունակություն,

բ) բնակչության բարեկեցություն,

գ) համալիր կայունություն (քաղաքական, սոցիալական, տնտեսական),

դ) բարեփոխումների իրականացման հնարավորության գործոն,

ե) սահմանադրական օբյեկտների լիազորությունների և փոխգործակցության օպտիմալ համակարգ:

Կառավարման ձևի փոփոխման հրատապությունը ծագում է այն ժամանակ, երբ նշմարվում են պետության կառույցի ոչ արդյունավետության հատկանիշներ, որը հետևանք է այն բանի, որ հիմնական սահմանադրական օբյեկտների՝ ի դեմս իշխանության թևերի, համակարգային փոխգործակցության ընթացիկ համակարգը դառնում է ոչ արդյունավետ: Արդյունքում անհրաժեշտություն է առաջանում փոփոխել համակարգային փոխգործակցության դասավորվածությունը:

Պետության կառույցի գործառնավորման անարդյունավետության գնահատականի չափանիշները դուրս են բերվում 1-4 կետերից:

Պրակտիկ մակարդակում հատկապես ծայրահեղ է համարվում 3-րդ կետը, քանի որ անկայունության պայմաններում ցանկացած կառավարման ձև կարող է առաջացնել ինչպես պետության կառույցի առանձին դրվագների, այնպես էլ ամբողջությամբ վերցրած՝ դեֆոլտ:

Այս պարագայում անկասկած հիմնարար գործոն է համարվում 1-ին կետը, որը կանխորոշում է պետության կառույցի գործառնավորման ունակությունն ընդհանրապես:

Բարեփոխման գործոնը ծայրահեղորեն հանդես է գալիս նաև այն դեպքում, երբ պետության կառույցը գտնվում է հաջորդական կայացման փուլում, ուստի և պահանջվում է պետական կառավարման մարմինների նոր ինֆրակառույցների և ինստիտուտների ստեղծում հին գործող ինստիտուտների գործառնավորմանը զուգահեռ, մասնավորապես տնտեսական, իրավական բարեփոխումները (սահմանադրական):

Արդյունքում այդ բարեփոխումները արտացոլում են բնակչության բարեկեցության գործոնը, պետության կառույցի կայացման կոնկրետ փուլը, և կոնկրետ ընթացիկ իրավիճակը (պատերազմ, բախումներ, միջազգային ճգնաժամ և այլն):

Որպես կանոն, սկզբնական փուլում (1,2 կետ) նախագահական կառավարումը համարվում է առավել նախընտրելի, քանի որ պետության կառույցի ուրվագծերի բացակայության, քաղաքացիական անձեռնհասության ցածր մակարդակի, Կառուցակարգային ինֆրակառույցների (ընտրական համակարգ, ձեռնահաս ընտրագանգված, խորհրդարան և այլն) փաստացի բացակայության, բարեփոխումների անավարտ լինելու պայմաններում որոշումների կայացման կոլեգիալ ձևը օբյեկտիվորեն նվազ արդյունավետ է:

Սակայն 3-րդ կետի ժամանակահատվածի գործընթացում արդեն որոշված է պետականության կայացման գործընթացը (պետության կառույցի հստակ ուրվագծեր, հասարակության քաղաքացիական կոմպետենտության բարձրացում, պառլամենտարիզմի փորձ), որը աստիճանաբար օբյեկտիվ նախադրյալներ է ստեղծում սահուն կերպով անցնելու որոշումների կոլեգիալ ընդունման կառուցակարգին՝ հենվելով ժողովրդաիշխանության, մոտեցումների բազմազանության, փորձագիտական ներուժի համալրման կոնսո-

լիդացված սկզբունքների վրա: Այս պայմաններում խորհրդարանական կառավարման ձևը դառնում է պետության կառույցի գործառնավորման իրական առավել օպտիմալ տարբերակ:

4-րդ փուլում սահմանադրական բարեփոխումների ավարտի, պետության կառույցի կառուցակարգային բոլոր օբյեկտների ձևավորվածության, հասարակության քաղաքացիական ձեռնահասության և իրավական մտածողության պայմաններում կանխորոշվում են սահմանադրականության հիմնական սկզբունքները՝ իրավունքի գերակայություն և ժողովրդի գերագույն իշխանություն, որոնց պայմաններում արդեն առավել նախընտրելի դառնում է խորհրդարանական կառավարման ձևը:

Այս աումով առանցքային է համարվում քաղաքական կուսակցությունների փաստացի ձևավորվածության մակարդակը, ինչը վերջիններիս հնարավորություն է ընձեռում իրագործել պառլամենտարիզմի և խորհրդարանական կառավարման ձևի դրսևորման պետության կառույցի գործառնավորման ռեժիմը: Ավելին, առավել դետալացված ծրագրային մշակումները կարող են ներկայացվել կուսակցության կողմից ավելի լայն շրջանակի քննարկումների համար:

Վերոհիշյալ չափանիշների ամփոփմամբ կարելի է ասել, որ մեր երկիրը գտնվում է իրավագոյացման երրորդ մակարդակում, և 25 ամյա պետականության գործառնավորման արդյունքում հասարակությունը որոշակի առաջընթաց է ունեցել իրավական և քաղաքացիական համարվելու առումով: Այս պայմաններում կարելի է օրինաչափ համարել սահմանադրական փոփոխությունների արդյունքում կառավարման նախագահականից ձևից խորհրդարանական ձևին անցնելու գործընթացը:

Ինչով գործոններով է պայմանավորված այն հանգամանքը, որ սահմանադրությունները չեն կարողանում իրականացնել իրենց առաքելությունը վերածվում են տեխնիկական փաստաթղթի:

1. Սահմանադրությունը ընդունման պահին պետք է արտացոլի հասարակական հարաբերությունների փաստացի վիճակը, հենվելով առաջին հերթին նրա գեներիկական առանձնահատկությունների վրա:

Սահմանադրությունն այնպայման պետք է հաշվի առնի հասարակության էթնիկական կազմի առանձնահատկությունները: Դրա անտեսումը հանգեցնում է լուրջ համակարգային հակամարտությունների: Որպես օրինակ, կարելի է բերել բազմաթիվ եվրոպական երկրներում հասարակության բազմամշակութային մոդելի կործանումը: Այսպես, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Եվրամիության առանցքային տերություններից մեկի Կանցլեր Անգելա Մերկելը Պոտսդամում քրիստոնեադեմոկրատական միության երիտասարդական թևի հետ կազմակրեպված ժողովում արտահայտեց հետևյալ միտքը, «Երկրի տարածքում բազմամշակութային մոդելի հասարակության կառուցումը ամբողջովին ձախողվեց»¹:

Այս համակարգային հակամարտություննր դրսևորվեց, երբ Գերմանիան տնտեսության կայծակնային զարգացումը խթանելու նպատակով աշխատուժի պակասը լրացնելու համար ընտրեց ամենահեշտ ու պրակտիկ տարբերակը, անտեսելով սահմանադրաիրավական համակարգի ամբողջականության խնդիրը: Մասնավորապես պետության դռները հյուրընկալորեն բացվեցին այն բազմամիլիոն (Թուրքիայից, Իտալիայից, Հունաստանից, Իսպանիայից, Հարավսլավիայից և այլ երլրներից) աշխատանքային միգրանտների առջև, որոնց լիովին բավարարում էր գերմանական կենսամակարդակը:

Արդյունքում խախտվեց գերմանական զարգացման բարձր մակարդակ ունեցող քաղաքացիական հասարակության համասե-

¹ Տե՛ս <http://www.newsru.co.il/world/17oct2010/merkel409.html>.

ռությունը, որի արդյունքում արդեն գործող Սահմանադրությունը չունի այն «ունիվերսումը», որը կկարողանար ապահովել բազմամշակութային (բազմազգ) հասարակության ազատության, երջանկության և արդարության իրավունքների իրականացումը, քանզի, մասնավորապես մահմեդական թուրքերի և քրիստոնյա գերմանացիների երջանկության և ազատության զգացումը էապես տարբերվում են միմյանցից: Այս առումով մեր Սահմանադրության կարգավորման խնդիրն էապես հեշտանում է, քանզի մեր երկիրն էթնիկական կազմով միատարր է (ազգային փոքրամասնությունները կազմում են երկրի բնակչության մոտ 3 տոկոսը): Այս պարագայում անհրաժեշտ է հիմնարար մակարդակով հետազոտել «հոմոարմենիկուսի» ֆենոմենը և այն դնել մեր սահմանադրության հիմքում: Նմանատիպ մոտեցումը մեր կարծիքով լուրջ առաջընթաց և զարգացում ապահովեց օրինակ, Մալազիայի, Հարավային Կորեայի և Արաբական Միացյալ Էմիրությունների համար:

2. Սահմանադրությամբ ամրագրված արժեհամակարգը պետք է արմատավորվի հասարակության գիտակցության մեջ: Այս գաղափարը առանցքային նշանակություն ունի սահմանադրական կարգավորման համակարգի մշակման համար:

Կարծում ենք, որ իրավագոյացման գործընթացում իրավունքի էության բնորոշման մեթոդաբանական մոտեցման տեսանկյունից առաջ քաշված հայեցակարգերում մաս են մնացել մի շարք հիմնարար հարցադրումներ՝ իրենց պատասխաններով հանդերձ. մասնավորապես՝ իրավունքը ինքնաբու՞իս է ծագել, թե՞ այն գոյություն է ունեցել, այն ընդհանրապես ծագե՞լ է, թե՞ պարզապես դրսևորվում է որպես ի վերուստ փրված իրողություն, ինչպե՞ս է այն ծագել. ինքուրու՞յն է ծագել, թե՞ ծագել է իրավունքի էության գիտակցական ընկալման և դրա հիման վրա իրավագոյացման կառուցակարգերի մշակման արդյունքում, ինչպե՞ս պետք է «ոչ իրավունքի» փարա-

ծուրթունից տեղափոխվել իրավունքի հարթություն, և հակառակը՝ ինչպե՞ս կանխել իրավունքի տեղաշարժը դեպի «ոչ իրավունքի» հարթություն: Բերված հարցադրումների սինթեզում առաջանում է հիմնախնդիրը համակողմանի ամփոփող հետևյալ հարցադրումը: Արդյո՞ք հնարավոր է ձևավորել վարքագծի կանոններ և դատողություններ անել այնպիսի արժեքների վերաբերյալ, որոնք բոլոր մարդկանց համար լինեն օբյեկտիվորեն ճշմարիտ, և, ընդ որում, դրանք սահմանված լինեն հենց մարդու կողմից, այլ ոչ թե պարտադրված՝ «հեղինակության» կողմից:

Հենց այս հարցադրման պատասխանն էլ (այո կամ ոչ) հանդես է գալիս որպես բազային սկզբունք, որով կանխորոշվում է իրավագոյացման գործընթացում իրավունքի էության բնորոշման մեթոդաբանական մոտեցման տարանջատման կենտրոնական ասպեկտը:

«Ոչ» պատասխանի դեպքում սկզբնավորվում է իրավունքի էության բնորոշման այնպիսի հայեցակարգային մոտեցում, որը բազային թեզիսի ընդունմամբ կանխորոշում է մեթոդաբանական այնպիսի ուղղություն (ճյուղ), որի համաձայն՝ ժխտվում է մարդու՝ վարքագծի օբյեկտիվ ճշմարիտ կանոններ ձևավորելու ունակությունը:

Արդյունքում ձևավորվում է մի սկզբունք, համաձայն որի՝ արժեքների վերաբերյալ դատողությունները չունեն օբյեկտիվ արժանահավատություն և իրենցից ներկայացնում են լոկ անհատի կամայական, չհիմնավորված նախընտրություններ ու հակակրանքներ, որոնք էլ արդյունքում դառնում են օրենքի առարկա և նորմ, հաջորդական ամրագրում ստանում օրենսդրական համակարգում՝ գործի դնելով պոզիտիվ իրավունքի իրավաստեղծագործական մեթոդաբանական ողջ զինանոցը:

Այս պարագայում իրավագոյացման հայեցակարգային ողջ բազան կառուցվում է արժեհամակարգի այնպիսի մոդելով, որին վերագրվում է յուրաքանչյուր ցանկալի բարիքի սահմանումը, և այստեղ ցանկությունը հանդես է գալիս որպես արժեքի չափանիշ, այլ ոչ թե՛ ընդհակառակը: Բնականաբար, նման պարագայում արժեքի իրավական էությունը (էականություն) որոշվում և սկզբնավորվում է սուբյեկտիվ մակարդակում՝ անհատի ցանկությունների և նախընտրությունների շրջանակներում:

Նման սուբյեկտիվ իրավագոյացումը (արժեքի հիման վրա նորմագոյոցումը) հենվում է այն բանի վրա, որ եթե հաճույքը մարդու համար բարիք է, իսկ տառապանքը՝ չարիք, ապա գործում է այն սկզբունքը, համաձայն որի՝ ցանկությունները համարվում են գնահատականի որոշիչ գործոն, այսինքն, միայն այն ցանկություններն են հավակնում լինել արժեք, որոնց իրականացումը հաճույք է պատճառում, իսկ մնացած ամեն ինչը՝ ոչ:

Նման ծայրահեղ սուբյեկտիվիզմն իր բնույթով անհամատեղելի է էթիկական նորմերի համապարփակության և բոլոր մարդկանց համար մատչելի լինելու գաղափարի հետ: Եվ եթե նման սուբյեկտիվիզմը լիներ իրավական էթիկայի միակ ձևը, ապա մենք կհայտնվեինք էթիկական բռնապետության և մարդու օբյեկտիվ իրավունքներն ապահովող համապարփակ էթիկական նորմեր ունենալու հավակնությունից հրաժարվելու ընտրության առջև:

Ինչպիսի՞ փաստարկներ կարելի է ներկայացնել նրանց, ովքեր մերժում են մարդու՝ վարքագծի օբյեկտիվ ճշմարիտ նորմեր ձևավորելու ունակությունը: Այս պարագայում որպես փաստարկ ընտրում ենք «այո» պատասխանը՝ գործի դնելով իրավունքի էության բնորոշման միանգամայն այլ հակադիր մեթոդաբանական ուղղություն, որը հենվում է արժեքների օբյեկտիվ բնույթը ճանաչելու և ընդունելու հայեցակարգի վրա:

Նման գաղափարախոսական մոտեցման արդյունքում ձևավորվում է մի սկզբունք, համաձայն որի՝ արժեքներն ունեն օբյեկտիվ բնույթ, արժեքային դատողություններն ունեն օբյեկտիվ արժանահավատություն և կարող են ներկայացվել նորմի ձևականացված տրամաբանական մոդելների ձևով՝ դրանք ամբողջական օրենսդրական համակարգի շրջանակներում համապատասխան օրենքով ամրագրելու միջոցով: Արդյունքում արդեն գործի է դրվում բնական (օբյեկտիվ) իրավունքի նորմաստեղծագործության ողջ մեթոդաբանական զինանոցը:

Այս պարագայում նորմերի տրամաբանական մոդելների դուրս բերումը պետք է հենվի համակարգային ուսումնասիրության և հաջորդաբար կուտակված ճանաչողության արդյունքում ձեռք բերված գիտելիքների վրա: Այդ գործընթացը պետք է տեղի ունենա իրավունքի մասին գիտության շրջանակներում, որում իրավունքի էությունը կարևորվում է որպես առաջնահերթ և առանցքային հիմնախնդիր:

Այստեղ անհրաժեշտ է գիտակցել այն իրողությունը, որ ոչինչ ինքն իրեն չի լինում: Կարծում ենք, անհրաժեշտ է սահմանադրական փոփոխություններին զուգահեռ հիմնարար մակարդակում մշակել «Քաղաքացիական հասարակության կերտման» համագային ծրագիր, որը պետք է առաջին հերթին խարսխված լինի ազգային գաղափարախոսության վրա: Ծրագիրը պետք է հետևողական կերպով և ամենայն մանրակրկիտությամբ նկարագրի հասարակության բոլոր շերտերի մոտ պետականության վերաբերյալ գիտելիքների բարձրացման գործընթացը:

3. Սահմանադրությամբ ամրագրված արժեհամակարգը արդյոք ի վիճակի է հասարակությունը կրել և կյանքի կոչել: Այս խնդիրը կարծում ենք պետք է լինի ցանկացած պետության ամենաառաջնահերթ խնդիրների ցանկում, հակառակ պարագայում սահմանադրությունը իր արժեհամակարգով հանդերձ չի լինի սահմա-

նադրականության կոորդինատային հարթությունում և կկորցնի իր գործառնական նշանակությունը:

4. *Սահմանադրահրավական կարգավորաման համակարգը պետք է ձևավորվի բնական իրավունքի տրամաբանական հարթությունում և խարսխվի բնական իրավունքի էության վրա:*

Իրավունքի էության և լուսնադրության բնորոշումը պայմանավորված է իրավունքի ծագումնաբանության կամ իրավագոյացման հիմնախնդրով, որը հնարավոր է դարձնում օրենքների որակականության ընկալումը, ինչից էլ կախված է հասարակական համայնի բոլոր գործընթացների հավասարակշռվածության ու ներդաշնակության ապահովումը: Իրավունքի և նրա գործառնական առաքելության գիտակցումը ենթադրում է համապատասխան հայեցակարգի ձևավորում: Սակայն իրավունքի էությունը պահանջում է գիտական մեթոդաբանական խորը ուսումնասիրություն՝ իրավագոյացման մեթոդաբանական լուրջ զինանոցի առկայությամբ: Իրավագոյացման կազմվածքը սկսկվում է իրավաստեղծագործության մակարդակում, որը պետք է ունենա գիտական տրամաբանական ձևականացում, և եթե չուսումնասիրենք բնական իրավունքը, ապա այն կընկալվի որպես ի վերուստ տրված իրողություն: Բնական իրավունքի իմաստն այն է, որ գոյություն ունի ներդաշնակություն, որի բնույթը պետք է գիտականորեն ուսումնասիրել՝ անկախ այն հանգամանքից, որ այն գործում և ապահովում է հասարակական հարաբերությունների գործառնական հավասարակշռությունը: Իրավունքի խնդիրը հենց գործառնական հավասարակշռության ապահովումն է, որն ամբողջությամբ որոշում է բնությունը:

Այստեղ առաջանում է մի իրավիճակ, որ մարդկային հասարակության մեջ, որն ինքնաբուխ չէ, ի տարբերություն ջունգլիի, մարդը ինքն է ստեղծում իրավունքը: Սակայն, եթե մարդն իր առջև խնդիր չի դնում ուսումնասիրել ներդաշնակության բնույթը և բն-

րոշել իրավունքի էությունը, ապա նա իրավունքից օգտվում է մինչև այն պահը, քանի դեռ այն գործում է: Այստեղից հետևում է, որ իրավագոյացումը չի կարող տեղի ունենալ առանց իրավունքի էության և բնույթի (ոչ որպես փաստի) ընկալման, իսկ իրավունքի էությունը պետք է որոշվի իրավունքի պարադիգմայով:

Կարևոր է նշել, որ հենց գաղափարախոսական հենքի ընտրության մակարդակում է ձևավորվում իրավընկալման հայեցակարգային բազիսը, որով էլ կանխորոշվում են իրավագոյացման և իրավակիրառման գործընթացները:

«էության» եզրույթը պետք է ներառի այնպիսի որակական գծեր, առանց որոնց ըզհանրապես գոյություն չի կարող ունենալ այն առարկան, որի էության մասին գնում է խոսքը¹: Մասնավորապես իրավունքի էությունը պետք է բնորոշվի այնպես, որպեսզի բացահայտվի և նկարագրվի իրավունքի՝ որպես օրենքի գոյի, էությունն ու իմաստային բովանդակությունը, որն իր մեջ ընդգրկում է դրա բոլոր որակները, նպատակները, հատկանիշները, գոյի պատճառները և պատմական ճակատագրերը:

Հակառակ պարագայում իրավական կարգավորման համակարգի շրջանակներում ծագում է «հայեցակարգային դեֆոլտ» համակարգային հակամարտությունը, որի առկայության պարագայում բացակայում է սահմանադրաիրավական կարգավորման համակարգի մեթոդաբանական համապատասխանության համաչափությունն իր բոլոր փուլերում (մշակման, ներդրման և օպերացիոն իրավակիրառման):

Ակնհայտ է, որ իրավունքի էության բնորոշումը կարող է համակարգային կերպով իրականացվել միայն հիմնարար մակարդակում գիտական ճանաչողության շրջանակներում: Խնդիրն այն է,

¹ Առավել հանգամանորեն տե՛ս Օ. Յ. Лейст, Сущность права, Проблемы теории и философии права, Москва, Зерцало-М., 2002, էջ 8:

որ իրավագոյացման գործընթացն այսպես, թե այնպես, ուզենք, թե չուզենք, տեղի է ունենում այն կանխավարկածով, որ հասարակական համալիր ցանկացած գործընթաց, պաշտոնական իշխանություն, կամ հասարակություն չեն կարող գտնվել այս կամ այն իրավական կարգավորման համակարգի շրջանակներում՝ համապատասխան օրենսդրությամբ ամրագրված կառավարման համակարգից դուրս, որի նպատակն է չթույլատրել անկառավարելիությունն ու քաոսը: Արդյունքում, իրավակարգի ապահովման պրակտիկ առավելության տեսանկյունից, ելնելով ժամանակի սղությանից և գիտելիքների ակադեմիական ամբարի պարունակության սակավությունից, ամբողջ մեթոդաբանական համալիրը փոխարինվում է հապշտապ մշակված օրենսդրության համակարգի արագացված ներդրման մեթոդական զինանոցով: Որպես կանոն, դա տեղի է ունենում պատրաստի այլ օրենքների (Սահմանադրության դրույթների) փոխառության և ընթացիկ պետական կառույցի հյուսվածքներում դրանք փոխպատվաստելու միջոցով: Ակնհայտ է, որ այս պարագայում իրավունքի էության քննարկման ասպեկտները մեթոդաբանական մակարդակում ուղղակի գահավիժում են: Մինչդեռ, ինչպես նկատում է Ֆրանսիացի լուսավորիչ Շ. Մոնտեսքյոն՝ օրենքները պետք է համապատասխանեն երկրի ֆիզիկական տվյալներին՝ կլիմային (ցուրտ, տաք կամ մեղմ), հողի որակներին, դրա վիճակին, չափերին, բնակվող ժողովուրդների կենսակերպին (հողագործներ, որսորդներ կամ հովիվներ), պետության կառուցվածքով թույլատրվող ազատության աստիճանին, բնակչության կրոնին, հակումներին, հարստությանը, թվաքանակին, առևտրին, բարքերին ու սովորույթներին: Վերջապես դրանք կապված են միմյանց հետ և պայմանավորված են իրենց ծագման հանգամանքներով, օրենսդրի նպատակներով, իրերի դրությամբ,

որոնց հիման վրա հաստատվում են¹: Իրավագոյացման գործընթացում վերոնշյալ հանգամանքների հաշվառումն էլ կանխորոշում է իրավունքի էության ընկալման մեթոդաբանական մոտեցման ասպեկտները:

Իրավունքի էության «հայեցակարգային դեֆոլտ» համակարգային հակամարտությունը թեպետ համակարգային մակարդակում փաստացի գոյություն ունի, սակայն պաշտոնապես դիտարկվում է որպես գոյություն չունեցող երևույթ, քանի որ այն ընդհանրապես չի քննարկվում և անտեսանելի է:

Բնականաբար, եթե չկա իրավունքի էություն, ապա համապատասխանաբար բացակայում է նաև տեխնիկապես հաստատվող սահմանադրական կարգավորման համակարգի համաչափությունը: Այս պարագայում նորմի իրավական բովանդակությունը ներդացվում է մինչև հրամայական պարտականության հատկության շրջանակները, որտեղ բացակայում են դրա իրավական բովանդակության մոդելից բխող մնացած բոլոր հատկությունները: Արդյունքում սահմանադրությունը հանդես է գալիս ոչ թե որպես իրավական, այլ իրավաբանական օբյեկտ, իսկ օրենսդրության համակարգը՝ որպես համապարտադիր կանոնների համակարգ, սակայն երբեք ոչ՝ որպես իրավական կարգավորման համակարգ, որն իր մեջ ընդգրկում է իրավունքի էությունը: Այս պարագայում հասկացությունների համալիրի իմաստային կազմվածքը և հասարակության, պետության, հասարակական համալիր գործընթացների իրավական մոդելի հայեցակարգային աստիճանակարգի կառուցվածքը կամ գահավիժում են, կամ էլ լավագույն դեպքում փոխարինվում տարբեր օրենսդրական համակարգերից փոխառված տեխնիկական փոխապատվաստումներով, որոնք ստեղծում են իրավական խառնաշփոթ և ենթակա չեն որևէ բովանդակային գնահատակա-

¹ St' u Шарль Луи Монтескье, Избранные произведения о духе законов, http://lib.mn/blog/sharl_monteske/171800.html.

նի: Արդյունքում, սահմանադրության *իրավական* բովանդակությունը ձևափոխվում է *իրավաբանականի*՝ իրավագոյացումը տեղափոխելով նորմաստեղծագործության տեխնիկական հարթություն:

Միաժամանակ, նման մոտեցումը, մեր կարծիքով, հնարավորություն է տալիս այս կամ այն իրավաբանական աշխարհայացքի (օրինակ՝ լեգգիզմ, յուսնատուրալիզմ, լիբերտար-ազատական) իրավընկալման իրավական բովանդակության մեթոդաբանական համապատասխանության մակարդակում անցկացնել օպերացիոն գտում, որը հայեցակարգային նկարագրության է ենթարկում օրենքի և օրենսդրության ծագումը, աղբյուրները, նպատակները, բնույթը, դերն ու նշանակությունը: Բացի այդ, պատշաճ հնարավորություն է ընձեռվում իրավական համակարգերի տիպաբանական նկարագրման համար, որը ծագման գործընթացում հիմնվում է իրավագոյացման իրավական բովանդակության համապատասխանության չափանիշների վրա: Օրինակ, պայմանական, իրավիճակային կամ կոնվենցիոնալ իրավական համակարգերի ձևավորումը հնարավոր է դառնում դիտարկել արդեն *բնական կամ պոզիտիվ* իրավունքի իրավական տարածության արտապատկերման (պրոեկցիայի) դիրքերից, ինչպես նաև ապահովել դրանց իրավական տարածականության կողմնորոշումը (նավիգացիա): Պատահական չէ, որ օրինակ Շվեյցարական համադաշնության սահմանադրության պրեամբուլան սկսվում է. «Հանուն ամենազոր սատածո» արտահայտությամբ, կամ Գերմանիայի Դաշնային Հնարապետության սահմանադրության պրեամբուլայում Հիմնադիր ժողովը շեշտում է իր պատասխանատվությունը Աստծո առջև: Դա նշանակում է, որ երկու երկրների սահմանադրություններն էլ հռչակում են, որ իրենք մշակվել և ձևավորվել են բացառապես Բնական իրավունքի տրամաբանական հարթության շրջանակներում:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ գլոբալացման արագընթաց գործընթացների պայմաններում սահմանադրական

կարգավորման համակարգը հնարավոր չէ մշակել և գործի դնել մեկուսի, այն պետք է նաև հստակ սինխրոնիզացվի գլոբալ կառավարման համակարգի հետ:

Այստեղ նույնպես կենտրոնական հարցը ձևավորվում է հետևյալ կերպ. Արդյո՞ք հնարավոր է ձևավորել վարքագծի կանոններ և դատողություններ անել այնպիսի արժեքների վերաբերյալ, որոնք ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունների համար լինեն օբյեկտիվորեն ճշմարիտ, և դրանք միջազգային իրավունքի շրջանակներում ՄԱԿ-ի կողմից մշակված և սահմանված լինեն հենց մասնակից պետությունների կողմից, այլ ոչ թե պարտադրված լինեն «հեղինակության» կողմից՝ ի դեմս գերտերությունների խմբի կամ վերազգային միությունների և կազմավորումների, որոնք կանխորոշում են աշխարհաքաղաքական դիրքավորումը:

Այստեղ «ոչ» պատասխանը չի կարող լինել, քանի որ միջազգային իրավունքի իրավագոյացման ողջ պատմական գործընթացը երկրորդ աշխարհամարտի հետպատերազմական շրջանից մինչև մեր օրերը հիմնված էր ուժի կիրառման նկատմամբ միջազգային օրենքի գերակայության հռչակման վրա: Այսինքն, ընտրվել էր այն բանաձևը, որ չի կարող լինել «ոչ» պատասխանը, այլ պետք է լինի «այո» պատասխանը, որի արդյունքում երկիր մոլորակի մակարդակում գործի է դրվում իրավագոյացման գործընթացը՝ միջազգային իրավունքի մշակման, ներդրման և գործադրման միջոցով: Ըստ էության դա ենթադրում էր համաշխարհային իրավական մտքի լայնածավալ համախմբումն ու խտացումը միջազգային իրավունքի հայեցակարգային բազիսի մշակման համար, որը պետք է բնորոշեր գլոբալացման իրավական բովանդակությունը: Վերջինս էլ իր հերթին պետք է ապահովեր աշխարհի իրավական մոդելը՝ իր բոլոր հիմնախնդիրների համալիրով՝ ուղղված վերազգային և ազգային իրավական փարածությունների ներդաշնակության ապահովմանը:

Դա նշանակում էր, որ այդ խնդրի լուծման համար անհրաժեշտ էր առաջին հերթին մշակել մեթոդաբանական միջոցների համակարգ, որը թույլ կտար միանշանակ բնորոշել իրավունքի էությունը համապարփակ կատեգորիաների շրջանակներում, որոնք ապահովում են բոլոր երկրների իրավական ինտեգրումը միասնական միջազգային իրավունքի շրջանակներում: Մինչդեռ ներկա ժամանակահատվածում այն ձևափոխված է «չի կարող լինել «ոչ» պատասխանը» բանաձևով, սակայն թույլատրվում է՝ կախված աշխարհաքաղաքական հեղինակություն ունեցող պետությունների շահերից:

Ըստ էության դա առաջին ծավալուն փորձն էր իրավագոյացումը դնելու համակարգային հիմքերի վրա՝ նահանջելով լեզգիզմից, նկարի ունենալով, որ մինչպատերազմյան նեոգաղութարարության ժամանակահատվածում միջազգային իրավունքի հիմնական մոդելը կիրառում էր լեզգիզմը որպես աշխարհաքաղաքական հեղինակության լեզգիփմացման և օրինականացման ամենահարմար և օպտիմալ միջոց՝ իր բոլոր դրսևորումներով: Մասնավորապես, հաշվի առնելով երկու գաղափարախոսական համակարգերի հակադրությունը՝ ի դեմս աշխարհաքաղաքական բլոկների և գերտերությունների, ինչպես նաև միջուկային զսպման ծայրահեղ պատասխանատվությունը, սոցիալիզմի և կապիտալիզմի լրջագույն մրցակցությունը՝ իրավական համակարգերի հիմնարար ունակության առումով նախաձեռնվում էր միջազգային իրավունքի զարգացման օբյեկտիվ անհրաժեշտություն, որի մեթոդաբանությունը պետք է սինթեզեր այնպիսի համապարփակ իրավական միջոցներ, որոնք ըստ էության կարողանային միջազգային իրավունքի շրջանակներում համադրել երկու անհամարեղելի իրավական մոդելները (սոցիալիզմ և կապիտալիզմ): Մասնավորապես, այդ մտքեցմամբ կանխորոշվում էր ինչպես ՄԱԿ-ի բացառիկ նշանակու-

յունը, այնպես էլ իրավունքի էության չափանիշների սահմանման և դրանց ուսումնասիրության առանցքային նշանակության անտեսման անհնարինությունը: Անկասկած այդ հանգամանքը խթանում էր իրավագիտության ոլորտի զարգացումը ինչպես գիտական, այնպես էլ կիրառական առումով, որը նվազագույնի էր հասցնում լեզգիզմի վրա հիմնված հեշտացված ու պարզունակ մտերցումը, որի արդյունքում հնարավորություն էր ստեղծվում միջազգային իրավունքի համակարգի իրավագոյացման միասնական գործընթացում ներդաշնակեցնել իրավունքի համակարգի ձևավորումն ու օրենքի նորմաստեղծագործությունը:

Այս ամենը կանխորոշում էր միջազգային իրավունքի աճող դերը, և ՄԱԿ-ը դիտարկվում էր ինչպես միջազգային իրավունքի մշակման գիտական մեթոդաբանական կենտրոն, այնպես էլ կառավարման համակարգ և Անվտանգության խորհրդի կառուցակարգերի միջոցով միջազգային իրավունքի իրացման համակարգ: Արդյունքում ՄԱԿ-ի կազմավորումից և միջազգային համընդգրկուն պայմանագրերի կնքումից ի վեր միջազգային իրավունքի նորմերը հիմնարար դիրք գրավեցին միջպետական և ներպետական հարաբերություններում¹:

Այսպիսով, իրավունքի էության հիմնախնդիրն իր լուրջ բարդությամբ հանդերձ համակարգային մակարդակում ոչ բացահայտ կերպով առաջ էր քաշվում և ստանում համապատասխան լուծումներ՝ բացառելով «հայեցակարգային դեֆոլտ» համակարգային հակամարտությունը: Ավելին, ընդհանրապես բացառվում էր իրավունքի էության բացակայության թեզը, իսկ համաշխարհային հանրության մտածելակերպի ռեֆլեքսները պարզապես չէին ընդունում

¹ Մանրամասն տե՛ս Գ. Գ. Հարությունյան, Դատական իշխանություն, Համակարգային գործակցության եվրոպական զարգացման փորձից, Երևան, «Նժար», 2002, էջ 14:

իրավունքի անպատասխանատվության կանխավարկածը, քառսի թույլատրումը և բռնապետական իշխանության կիրառումը պատերազմների սանձազերծման միջոցով՝ հաշվի առնելով Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքների թարմ հիշողությունը: Արդյունքում համաշխարհային գործընթացի գլոբալ մակարդակում վերջ դրվեց ինչպես նեոգաղութատիրությանը, այնպես էլ բռնազավթման իրավաբանական օրինականացման նպատակով արհեստական նորմատեղծագործության լեգալիզմի իրավական պրակտիկայի կիրառմանը:

Այս առումով ձևավորվել էր իրավագոյացման համապատասխան շղթա, որում մշակվում էր քաղաքական, տնտեսական և մշակութային իրավական բոլոր ասպեկտների, պետական միավորումների, գաղութային լուծը թոթափած պետությունների, վերազգային ինտեգրացիոն միավորումների հայեցակարգային մոդելը՝ բացառելով իրավագոյացման ինքնաձևավորման սկզբունքը: Արդյունքում իրավագոյացման այնպիսի գործընթացներ, ինչպիսիք էին Բրիտանական համագործակցության ձևավորումը, Եվրոպայի և Ճապոնիայի վերականգնումը, իրականացվում էին համակարգային ծրագրերին խիստ համապատասխան (օրինակ՝ Մարշալի պլանը): Իրավագոյացման նմանատիպ գործընթացների շարքը համալրում էին նաև Եվրոպական համագործակցության, տնտեսական փոխօգնության համագործակցության, ինչպես նաև ԵԱՀԿ-ի, ՆԱՏՕ-ի և Վարշավայի պայմանագրի ձևավորումը, որը գոյատևեց մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո այդ գործընթացը ցավոք կտրուկ ընդհատվեց և ձևավորվեց նոր դիրքավորում, որում աշխարհաքաղաքական հեղինակության առավելությունը փոխանցվեց ԱՄՆ-ին՝ ըստ էության գլոբալ կառավարման համակարգը տանելով դեպի անկայուն միաբևեռ ռեժիմ: Այս տեսակետից, մի կողմից, միջազ-

գային համակարգային կայունության հենակետերը դեռևս հստակեցման գործընթացում են, մյուս կողմից՝ գոյություն ունեցող և այդ նպատակին ծառայող միջազգային ինստիտուտները կորցնում են իրենց նախկին տեղն ու դերը¹:

Կարծում ենք, այս հանգամանքն էլ իր հերթին իր գլոբալ արտապատկերումն ունեցավ Երկիր մոլորակի վրա ծավալված գլոբալ կատակլիզմների (օրինակ, Արաբական գարունը կամ ֆինանսական և դրամական համակարգերի ճգնաժամը, ուկրաինական ճգնաժամը) առաջացման ու խորացման վրա:

Միջազգային իրավունքի առանցքային նշանակության բացակայության ուժով վերածնվեց լեզգիզմի պրակտիկան, որի արդյունքում անկախություն ձեռքբերած պետությունների ճանաչման հիմնախնդիրը ՄԱԿ-ի հարթակից և միջազգային իրավունքի իրավասությունից տեղափոխվեց *կոալիցիոն իրավունքի* հարթություն՝ ըստ էության առաջացնելով իրավագոյացումը *կոալիցիոն լեզգիզմի* ռեժիմ տեղափոխելու միտումներ: Արդյունքում իրենց լուծումն առայսօր չգտան Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի, Հարավային օսեթիայի, Կոսովայի շուրջ առաջացած ու խորացած հակամարտությունները: Իսկ միջազգային իրավունքի առանցքային սկզբունքներից մեկը՝ ազգերի ինքնորոշման իրավունքի հանրահայտ սկզբունքն արժեզրկվեց, և դրա իրականացման միակ իրատեսական ձևը դարձավ զինված հակամարտության տարբերակը: Որպես կոալիցիոն լեզգիզմի ձևավորման օրինակ, կարելի է բերել պետությունների Մեծ ութնյակը, Քսանյակը և այլն, որոնք նվազագույնի են հասցնում ՄԱԿ-ի դերն ու նշանակությունը և համապատասխանաբար արգելակում միջազգային իրավունքի համակարգի զարգացումը: Իրավական մեթոդաբանության տեսանկյունից պարարտ հող է ստեղծվում իրավական քառսի հայեցակարգի վե-

¹ Տես նույն տեղը, էջ 12:

րաձնման համար, որը հռչակում է, որ ընդհանրապես իրավունքի էություն գոյություն չունի: Արդյունքում սկսում են ձևավորվել հայեցակարգային անարխիզմի միտումներ, որոնք գլոբալ կառավարման համակարգը տեղափոխում են ինքնաձևավորման հարթություն՝ պաշտոնապես թույլատրելով «հայեցակարգային դեֆոլտը»:

Ուստի խնդրին որոշակի լուծում տալու համար մեր կարծիքով անհրաժեշտ է մշակել համապարփակ մեթոդաբանական միջոցների համակարգ, որը հնարավորություն կընձեռի հասնել իրավունքի էության առավել ամբողջական, միանշանակ և համապարփակ ընկալմանը:

Ասվածն ամփոփելով, կարելի գալ հետևյալ եզրահանգումներին.

- Սահմանադրությունը, սահմանադրական կարգավորումը այսօրվա դրությամբ համարվում է ընդհանրապես իրավական կարգավորման զարգացման վերջին փուլը,

- այն, որպես կարգավորման համակարգ, իր պատմական և փաստացի զարգացման մակարդակով հանդիսանում է որպես գործիք, որից կախված է ոչ միայն այս կամ այն երկրի, այլև երկրների խմբի կամ բլոկի իրավական կարգավորման ճակատագիրը,

- գլոբալացման գործընթացով պայմանավորված՝ մեզանում անհրաժեշտություն է առաջանում ճշգրտել ունիվերսալացման տենդենց ունեցող բոլոր մեթոդաբանական մոտեցումները, որպեսզի իրականացվի ոչ թե տեխնիկական, այլ մեթոդաբանական բնույթի իրավական կարգավորման միասնական միջազգային ստանդարտացում և համապատասխանաբար ապահովվի գլոբալացման ընդհանուր գործընթացների ներդաշնակեցումը,

- այս ամենով հանդերձ այս ոլորտում մեր կարծիքով գոյություն ունեն բաց մնացած մեթոդաբանական հարցեր, որոնք պահանջում են որպես համակարգի, այլ ոչ թե իրավիճակային բնույթի հարցերի լուծման դրվագային տեխնիկական անհրաժեշտության

հիմնարար մակարդակում խորը և մանրակրկիտ ուսումնասիրություններ,

- արդյունքում, մեր կարծիքով, մեր ընդգծված հիմնական մոտեցումն այն է, որպեսզի դուրս բերվեն այն հիմնական սկզբնապատճառները, որոնք առաջացնում են սահմանադրաիրավական կարգավորման, որպես իրավական համակարգի, անունակություն, անգամ դրա ունակության պայմաններում դուրս բերվեն այն հիմնական գործոնները, որոնք այս կամ այն իմաստով համակարգի գործառնավորումը դարձնում են անարդյունավետ,

- այս իմաստով հիմնախնդրի ուսումնասիրման մեջ շեշտադրել ենք հենց համակարգային մոտեցումը՝ մեր ուսումնասիրության մեթոդաբանական գործիքը ուղղելով համակարգային ամբողջականությունից շեղումների վրա, ինչի արդյունքում ձևավորվում է այդ գործոնների խումբը, որոնք վերջին հաշվով ունենալով համակարգային բնույթ, առաջացնում են գործող շեղումների հակամարտածինություն, որն էլ դարձյալ հանգեցնում է սահմանադրական կարգավորման համակարգի ոչ ամբողջական գործառնավորմանը կամ անունակությանը:

Ահա մեր այն հիմնական հիմնարար ասպեկտը, որ այսօրվա դրությամբ ԽՍՀՄ-ի փլուզումանը հաջորդած պատմական փուլում իրավական տարածությունը ձևավորվում է երկու մրցակցող հակադիր իրավական համակարգերի անտագոնիզմի բացակայության պայմաններում, որը բերել է նրան, որ գոյություն չունի գիտամեթոդաբանական, նույնիսկ տարրական եզրույթային մակարդակում կամ երկու հակադիր գաղափարախոսական մոտեցումների առումով բազմասեռություն, որոնք ոչ այնքան մրցակցում էին, որքան ընդհանրապես չէին հատվում: Նկատի ունենք, որ նույնիսկ այն հանգամանքը, որ իրավական համակարգն իր մոտեցմամբ և իր առարկայով կտրուկ տարբերվում էր իր սահմանումով, այսինքն

վարչական իրավունքի կամ սոցիալիզմի իրավական տարածությունը և կապիտալիստական իրավական՝ այդ թվում և սահմանադրական կարգավորման համակարգերը և՛ առաջին և՛ երկրորդ դեպքում ունեին ոչ միայն մեթոդաբանական, այլև հիմնարար եզրույթային մակարդակում տարասեռ մեկնաբանում և ամբողջությամբ վերցրած՝ իրավունքի տարաբնույթ ֆունկցիոնալ առաքելության: Այս գործոնը մեր կողմից դիտարկվում է որպես համակարգային քննարկումներից մեկը, այսինքն մենք չենք կատարում այս կամ այն սահմանադրության (Օրինակ ԽՍՀՄ կամ ԱՄՆ սահմանադրությունները) չափանիշային կամ հատուկ դրսևորման պարամետրերի տեխնիկական համադրում, որոնք չեն կարող ապահովել սպառիչ բովանդակային վերլուծություն, որում պարփակված է սահմանադրական կարգավորման բուն իմաստը, այլ ցուցաբերում ենք այնպիսի համակարգային տարողունակ մոտեցում, որն իր մեջ ներառում է տարածական-եզրույթային և կատեգորիալ համակարգումը, որը նախկինում երբեք չի հատվել: Արդյունքում այդ երկու տարբեր համակարգերի պայմաններում պետության և իրավունքի համակարգաձևավորման դրսևորման բոլոր մակարդակները (գաղափարախոսական, հայեցակարգային, կազմակերպչական առումով) երբեք չեն հատվել՝ ամբողջ իրավիճակը վերածելով ոչ թե առողջ մրցակցության կամ դրանցից որևէ մեկի՝ իր չափանիշներով արդյունավետության գնահատման, այլ հակադրության, դրանք վերջին հաշվով դարձնելով համադրումների գերադասելի համակարգ. «Մեզ համար լավ է, որովհետև այն մեզ դուր է գալիս»: Այս կապակցությամբ մեր կարծիքով ԱՊՀ-ի մակարդակում և ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նորանկախ պետություններում գոյություն ունի լուրջ պրակտիկ հիմնախնդիր, որն իր լուծումը դեռ չի գտել: Հիմնախնդիրը կայանում է պետության և իրավունքի մի համակարգից մյուսին, ինչպես նաև հասարակական կարգի և հասարակական

գոյի մի մոդելից մյուսին անցնելու գործընթացի մեջ: Այդ հրատապ իրավական հարցերը պահանջում են պատասխան, որի պրակտիկ կիրառման արդյունավետությունից է կախված ամբողջ պետական կառույցի բարեհաջող գործառնավորումը իր բոլոր դրսևրումներում՝ (տնտեսությունից մինչև սոցիալ-կենցաղային կամ մշակութային և էթնո-ավանդության ինքնանույնականացումը) ձևավորելով նոր պետության ինքնիշխանության կայացման բոլոր պարագաները: Տվյալ մակարդակից էլ բխում են բոլոր պրակտիկ ծայրահեղ հրատապ հարցադրումները՝ ինչպես ինտեգրվել, և որքանով են նախկին միության ինտեգրացիոն գործընթացները համապատասխանում եվրոպական չափանիշներին, մասնավորապես եվրոպական միությանը, ինչպես պետք է ձևավորել միասնական իրավական տարածությունը: Մենք արդեն գործ ունենք միասնական միութենական պետության նախադեպի հետ, որտեղ կան ոչ միայն իրավական համակարգերի, այլև տնտեսական տարածությունների հատման տարրեր, որոնց խնդիրը միասնական ամբողջական օրգանիզմի ստեղծումն է: Այստեղ ևս ծագում է կենտրոնական հարցը, որը համարվում է մեր կողմից առաջադրված պայմանների առարկան, որտեղ իրական համակարգի կայացումը դիտարկում ենք որպես կազմավորումների համակարգ:

Մեթոդաբանական առումով մեր նպատակը այդ համակարգի ամբողջականության ապահովումն է, որի արդյունավետությունը մեր կարծիքով հնարավոր է բացառապես սահմանադրական կարգավորման գործիքային համակարգի կիրառման միջոցով:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ է սահմանել, թե սահմանադրական կարգավորման համակարգի ծագումնաբանությունը ինչպիսի առանձնահատկություն ունի և որքանով է տարբերվում էվոլյուցիոն կայացումից, և ինչպես են իրականանում մի համակարգից մյուսը (հատկապես ԽՍՀՄ փլուզումից հետո) հեղափոխական

անցումները, որոնք տեղի են ունենում տառացիորեն հաշված ժամերի, օրերի և ամիսների ընթացքում, որպեսզի կարևորեն իրենց պրակտիկ և փաստացի անկախությունը, որի պատճառով անհրաժեշտություն է առաջանում ձևավորել պետականության տեխնիկական ատրիբուտներ: Այս պարտավորությունների շարքը լրացվում է սահմանադրություն գրելով կամ այդ սահմանադրության առկայությունը որպես անկախության և ժողովրդավարական պետության ատրիբուտ, այն դասակարգմամբ, որպեսզի այդ պետությունը մտնի լիարժեք պետությունների ցանկ, ստանա միջազգային ճանաչում, դառնա միջազգային իրավունքի, միջազգային գործընթացի լիիրավ սուբյեկտ և մուտք գործի լիարժեք միջազգային հանագործակցություն օրըստօրե աճող գլոբալացման պայմաններում: ԽՍՀՄ-ի անկումից հետո ձևավորված հրատապության և յուրահատկության շրջանակներում հատկապես կարևորվում է իրավական կարգավորման ձևավորման բնույթի և համարժեքության չափանիշների ընկալման փաստը բոլոր փուլերում և իր բոլոր առանձնահատկություններով ու պայմաններով, մասնավորապես անցումային շրջանը, որի մասին մենք խոսում ենք, անցման տեսանկետից վերաբերում է միանգամայն այլ քաղաքատնտեսական բազիսի իներցիայի հաղթահարմանը, քան ուղղակի զարգացմանը, որն օրինակ բնորոշ էր համագործակցության (Common Law) երկրներին, որտեղ վերջիններս խնդիր չունեին, չնայած նարնց առջև ծառայած էին նորանկախ պետականության կերտման նույնանուն խնդիրներ, սակայն խնդիր դրված չէր քաղաքատնտեսական մի համակարգից անցնել մյուսին: Այդուհանդերձ և՛ այնտեղ, և՛ մեզ մոտ պահանջվել և պահանջվում է հաղթահարել այն բոլոր համակարգային հակամարտությունները, որոնք անխուսափելիորեն տեղի կունենան, եթե իրավական կարգավորումը չդիտարկան սահմանադրական ձևաչափով, որպես համակարգ: Որպեսզի կա-

րողանանք հաղթահարել այս փոփոխությունները, առաջին հերթին անհրաժեշտ է մանրակրկիտ և առավելագույնս ուսումնասիրել իրավական կարգավորման համակարգային բնույթը և դուրս բերել հակամարտությունների ծագման հիմնական գործոնները, այսինքն այն գործոնների համակցությունը, փոխադարձ կապերի այն համադրումները, որոնք կարող են բերել իրավական կարգավորման, որպես համակարգի, ունակության կամ իրավական կարգավորման համակարգի գործառնավորման կամ ամբողջականության խախտմանը: Տվյալ դեպքում մենք արդեն նշացինք, թե որքան արդիական է առաջ քաշված խնդիրը և այն մեր կարծիքով ծառայած է ոչ միայն նորանկախ պետությունների առջև, այլև արդեն ձևավորված և զարգացած այնպիսի կոնգլոմերացիաների, ինչպիսին է Եվրոմիությունը, և անկասկած, անկախ զարգացման մակարդակից: Նույն խնդիրները ծառայած են նաև գլոբալացման իրավական կարգավորման առջև, որոնք որոշում են տարածականության կոորդինացիան վերջին իրադարձությունների հաշվառմամբ, որտեղ տեղի են ունենում տնտեսական ճգնաժամեր, գլոբալ կատակլիզմներ, որոնք փոստացի գլոբալ իրավական կարգավորման համակարգի անունակության արդյունք են:

ԳԼՈՒԽ 3.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ, ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ՈՒ ԻՐԱՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐՈՒՄ: ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում ընթացող սահմանադրական բարեփոխումների գործընթացի կարևորագույն խնդիրներից է՝ իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական իրացումը, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման սահմանադրական կառուցակարգերի կատարելագործումը, ինչին հարկ ենք համարում անդրադառնալ հետազոտության հիշյալ մասի շրջանակներում:

Թեև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ 1995 թ. խմբագրությամբ տեքստում բացակայում էր հստակ արտացոլված հիմնադրույթ մարդու իրավունքների՝ որպես բարձրագույն արժեքի սահմանադրորեն ճանաչման ու ամրագրման առնչությամբ, ինչպես նաև մարդու արժանապատվությունն ամրագրված էր ոչ թե որպես սահմանադրական իրավունքի, այլ որպես քրեաիրավական հարաբերությունների շրջանակներում պաշտպանության առարկա, 2005 թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում հիշյալ հարցի առնչությամբ ձևավորվեց սկզբունքորեն նոր մոտեցում: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածը ամրագրեց, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ա-

զատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Ակնհայտ է, որ նշված սահմանադրական կարգավորումները հանգեցրին մարդու, նրա արժանապատվության, հիմնական իրավունքների և ազատությունների առնչությամբ սկզբունքորեն նոր ընկալման, որի շրջանակներում մարդը որևէ պարագայում չի կարող դիտարկվել որպես միջոց, գործիք պետական իշխանության ձեռքում, այլ հանդես է գալիս որպես իր անկրկնելի բնության մեջ ինքնանպատակ, ինքնարժեքություն¹: Ավելին, նշված տեսանկյունից մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները առանցքային ու հիմնարար նշանակություն ունեն հասարակության և պետության բնականոն կենսագործունեությունն ապահովելու համար և սահմանափակում են վերջիններիս՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Հետևաբար, նշված սահմանադրական դրույթը ելակետային դարձավ սահմանադրական կարգավորումների արժեքանության և մեթոդաբանության տեսանկյունից:

Միևնույն ժամանակ, չնայած վերը շարադրվածին, հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական կարգավորմանն առնչվող ոչ բոլոր հարցերը ստացան ամբողջական ու

¹ Այդ առումով տե՛ս նաև Комментарий к Конституции РФ / Под ред. Зорькина В. Д., Лазарева Л. В. М.: Эксмо, 2009, <http://kommentarii.org/konstitutc/page6.html>:

լիարժեք լուծում, և ակնհայտ է, որ նշված սահմանադրական նորմերի պատշաճ իրացման համար անհրաժեշտ են մի շարք այլ սահմանադրական կառուցակարգեր ու համապատասխան սահմանադրական կարգավորումների կատարելագործում: Մասնավորապես, մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական ու անօտարելի իրավունքները և ազատությունները պետության կողմից որպես բարձրագույն արժեք ճանաչելը պետք է պայմանավորի իրավունքի գերակայության սկզբունքի անշեղ իրացումը և երաշխավորի իրավունքով իշխանության սահմանափակումը: Ավելին, սահմանադրական նորմերը պետք է ոչ թե պարզապես հոչակեն մարդու սահմանադրական իրավունքները, այլև առավելագույնս հստակ սահմանեն դրանց իրացման երաշխիքները, պետության պարտավորությունները, առանձին իրավունքների սահմանափակման թույլատրելի շրջանակները: Մարդու իրավունքները պետք է դիտարկվեն որպես իրագործելի իրավունքներ, իսկ դրանց սահմանափակումները պետք է բխեն միջազգային իրավունքի նորմերից, լինեն համարժեք, չաղավաղեն իրավունքի բովանդակությունն ու իմաստը, հստակ սահմանվեն օրենքով, համակցվեն համարժեք պարտականություններով:

Այդ հանգամանքն էլ նկատի ունենալով՝ Հայաստանի Հանրապետությունում ընթացող սահմանադրական բարեփոխումների համար ելակետային են դիտարկվել նաև նշված սկզբունքները¹, որոնք դրվել են քննարկվող հիմնախնդրի առնչությամբ հիմնական հայեցակարգային մոտեցումների ձևավորման ու սահմանադրա-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը / մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ. հոկտեմբեր, <http://moj.am/storage/uploads/Sahmanadrakan«barepokhumner.14.«10».pdf>:

կան կարգավորումների մշակման հիմքում:

Ինչպես նշվեց, Հայաստանի Հանրապետությունում ընթացող սահմանադրական բարեփոխումների շրջանակներում առանցքային է իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական իրացման սահմանադրական կառուցակարգերի կատարելագործումը¹: Ակնհայտ է, որ հիշյալ սկզբունքը հիմնարար նշանակություն ունի ինչպես հասարակական հարաբերությունների սահմանադրականացման, հասարակության իրավական և քաղաքական մշակույթի զարգացման, այնպես էլ պետականաշինության ավանդույթների զարգացման տեսանկյունից:

Ինչպես իրավացիորեն ընդգծվել է իրավաբանական գրականության մեջ, իրավական, ժողովրդավարական պետության կայացման համար առանցքային խնդիրն իրավունքի գերակայության երաշխավորումն է: Իսկ իրավունքի գերակայության սկզբունքի վրա խարսխված, իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացման երաշխիք հանդիսացող Սահմանադրության և դրան համարժեք սահմանադրական ժողովրդավարության համատեղ ներդաշնակ գոյությունը ենթադրում է որոշակի անհրաժեշտ ու բավարար նախադրյալների առկայություն: Դրանց մեջ ելակետային է ազատական իրավամտաժողովրդական կայացման ու դրա հասարակական ընկալման և ընդգրկման աստիճանը: Ընդգծվում է նաև, որ Սահմանադրության իրավական հիմքը հենց

¹ Հարկ է նկատել, որ հայ սահմանադրական մշակույթը դեռևս 18-րդ դարում հենվում էր իրավունքի գերակայության սկզբունքի, բնական իրավունքների առաջնայնության գիտակցության, իշխանությունների տարանջատման, սահմանադրական գործառույթների, հակակշիռների ու զսույնների ներդաշնակության երաշխավորման վրա (տե՛ս Հարությունյան Գ. Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, Նժար, 2005, էջ 97):

իրավունքի գերակայության ճանաչումն ու ամրագրումն է: Այս առումով է, որ նման Սահմանադրության գերակայության երաշխավորումը երաշխիք է իրավունքի գերակայության երաշխավորման համար¹:

Հարկ է նկատել, որ Սահմանադրությամբ իրավունքի գերակայության սկզբունքի իրացման կոնկրետ լուծումները մեծապես պայմանավորված են հասարակության իրավական ու քաղաքական մշակույթի մակարդակով: Կարծում ենք, որ այդ տեսանկյունից առանցքային պետք է լինի այն, որ իշխանությունն իրականացնելիս ժողովուրդը և պետությունը սահմանափակված լինեն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով: Իրավունքի գերակայության երաշխավորման կարևորագույն չափանիշներից մեկը պետք է լինի և այն, որ Սահմանադրությունը նախատեսի իրավունքների անմիջական գործողության ապահովման համար անհրաժեշտ ու բավարար սահմանադրաիրավական երաշխիքներ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովն ընդգծել է հիշյալ հիմնախնդրի առնչությամբ հետևյալ հայեցակարգային մոտեցումները.

«Իրավունքի գերակայությունը հանդիսանալով իրավական պետության էությունը՝ ենթադրում է, որ.

- մարդու իրավունքները սահմանադրորեն ճանաչված, օրենսդրորեն երաշխավորված, համարժեք կառուցակարգային լուծումներով ապահովված ու պաշտպանված պետք է լինեն,

¹ Տե՛ս Հարությունյան Գ. Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, Նժար, 2005, էջ 109, 180, 187:

- պետք է հարգվի ու երաշխավորվի իրավական օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը,

- օրենքները եւ այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին, լինեն կանխատեսելի, հստակ, զերծ՝ բացերից ու երկիմաստություններից,

- իշխանության իրականացումը պետք է խարսխված լինի գործառույթների և լիազորությունների ներդաշնակումը երաշխավորելու վրա,

- հանրային իշխանության իրականացման հիմքում պետք է ընկած լինի օրինականության սկզբունքը,

- պետք է երաշխավորվի կամայականության արգելքի սկզբունքը և հստակեցված լինեն հանրային իշխանության մարմինների հայեցողության սահմանները,

- պետությունը պետք է պոզիտիվ պարտականություն կրի իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հարցում եւ ստանձնի համարժեք հանրային-իրավական պատասխանատվություն,

- իրավունքներին ցանկացած միջամտություն եւ իշխանության ցանկացած գործողություն պետք է բխեն համաչափության սկզբունքից,

- իրավական վեճերը պետք է բացառապես իրավական ճանապարհով արդյունավետ լուծման անհրաժեշտ կառուցակարգեր ունենան,

- արդարադատությունը պետք է լինի անկախ ու անկողմնակալ:

Իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորումը ենթադրում է փոխպայմանավորված ու փոխլրացնող այս բոլոր իրավապայմանների միաժամանակյա առկայությունը, դրանց համար

անհրաժեշտ սահմանադրական երաշխիքների ապահովումը»¹:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական իրացման հարցի տեսանկյունից առանցքային է ոչ թե զուտ հիշյալ սկզբունքի սահմանադրական ամրագրումը, այլ վերջինիս իրացման համար անհրաժեշտ սահմանադրական կառուցակարգերի ձևավորումն ու կատարելագործումը: Ավելին, ակնհայտ է, որ հիշյալ խնդիրը համակարգային լուծում է պահանջում՝ առնչվելով սահմանադրական բոլոր կարգավորումներին, որոնց առանցքը պետք է կազմեն ներկայացված ելակետային մոտեցումները:

Կարծում ենք, որ այդ առումով հայեցակարգային պետք է լինի հետևյալը՝ բոլոր սահմանադրական լուծումները պետք է նպատակաուղղված լինեն այնպիսի միջավայրի ձևավորմանը, որն անհրա-

¹ Նշենք, որ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի մշակման ու սահմանադրական կարգավորումների մշակման ընթացքում հաշվի են առնվել նաև հիշյալ հիմնախնդրի առնչությամբ միջազգային-իրավական փաստաթղթերում արտահայտված դիրքորոշումները, մասնավորապես, իրավունքի գերակայության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1594(2007) բանաձևի, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2008թ. նոյեմբերի 21-ի ՑՄ(2008)170 հանձնարարականի, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի 2011թ. ապրիլի 4-ի CDL-AD(2011)003rev. գեկույցում ներկայացված դիրքորոշումները, ՄԱԿ-ի 2012թ. սեպտեմբերի 24-ին ընդունած «Իրավունքի գերակայության մասին՝ բանաձևի դրույթները, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում Միացյալ Թագավորության նախագահության շրջանակներում անցկացված «Իրավունքի գերակայությունը որպես գործնական հայեցակարգ /Լոնդոն, 2012թ. մարտի 2/ և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում Հայաստանի Հանրապետության նախագահության շրջանակներում անցկացված «Իրավունքի գերակայության եվրոպական չափորոշիչները և ազգային իշխանությունների հայեցողության սահմանները /Երևան, 2013թ. հուլիսի 3-4/ խորհրդաժողովներում քննարկումների արդյունքները (տե՛ս <http://moj.am/storage/uploads/Sahmanadrakan«barepokhumner.14.10.pdf>):

Ժեշտ է, որպեսզի իրավունքի գերակայությունը դառնա մարդու և քաղաքացու սոցիալական վարքագծի ելակետը, նրա ինքնադրսևորման ու ինքնաիրացման արժեքանական հենքը, ինչպես նաև իշխանության հանրային-իրավական վարքագիծն իրավունքի գերակայության սկզբունքին ներդաշնակելու առանցքը: Ավելին, իրավունքով իշխանության սահմանափակման սկզբունքը չպետք է սոսկ հռչակագրային բնույթ կրի, և սահմանադրական բոլոր լուծումների, այդ թվում՝ պետական իշխանության ինստիտուտների կայացմանն ուղղված զարգացումների հիմքում պետք է ընկած լինի իրավունքի գերակայության սկզբունքը:

Իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորումը, ապահովումն ու իրացումը սահմանադրական լուծումներում մեծապես պայմանավորված է նաև մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման սահմանադրական համապատասխան կառուցակարգերի առկայությամբ, որոնց կատարելագործումը Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների կարևորագույն խնդիրներից է:

Անդրադառնալով նշված խնդրին՝ առաջին հերթին կարևոր ենք համարում վերլուծել հետևյալ հիմնահարցը՝ ու՞մ են ուղղված Սահմանադրության 2-րդ գլխի դրույթները՝ միայն հիմնական իրավունքներով սահմանափակված պետությանը, թե՞ նաև ուղղակիորեն պարտադիր են այլ մարդկանց կամ քաղաքացիների համար:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 47-րդ հոդվածը նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները,

ազատությունները և արժանապատվությունը: Յուրաքանչյուրի վրա դրված նշված պարտականությունը կարող է ընկալվել որպես հիմնական իրավունքների գործողությունը նաև մասնավոր անձանց միջև հարաբերությունների վրա տարածելու հնարավորություն: Մինչդեռ, կարծում ենք, որ դա հակասում է հիմնական իրավունքների առնչությամբ ավանդական մոտեցումներին, որոնք հանգում են հետևյալին՝ հիմնական իրավունքները հասցեագրված են միայն հանրային իշխանությանը, այլ ոչ մասնավոր սուբյեկտներին, այդ թվում՝ այլ բնույթ ունեցող կազմակերպություններին ու անհատներին¹:

Այդ առումով հարկ ենք համարում հիշատակել, օրինակ, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքը, որի 1-ին (3) հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները պարտադիր են օրենսդիր, գործադիր իշխանության և արդարադատության համար՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը արձանագրել է, որ հիմնական իրավունքների գործողությունը մասնավոր անձանց միջև հարաբերությունների վրա տարածելուն ուղղված մոտեցումը հակասում է հիմնական իրավունքների ավանդական պատկերացումներին՝ հիշյալ հարցը դիտարկելով որպես նոր հայեցակարգային մոտեցումներ

¹ Ավելին, մի շարք հեղինակներ ընդգծում են նաև, որ դրանից տարբերվող որևէ այլ մոտեցում որդեգրող իրավական փաստաթուղթ չի կարող դիտարկվել որպես «սահմանադրությունե (տե՛ս, օրինակ, Thomas Schmitz, BASIC ELEMENTS OF FUNDAMENTAL RIGHTS DOCTRINE, <http://www.iuspublicum-thomas-schmitz.uni-goettingen.de/Downloads/Schmitz«FR-DoctrinetJakarta-2014.pdf>):

պահանջող հիմնախնդիր¹:

Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ չնայած հիմնական իրավունքները անմիջականորեն չեն սահմանափակում քաղաքացիներին, այսինքն՝ հորիզոնական գործողության դոկտրինի տեսանկյունից վերջիններս հասցեագրված են միայն հանրային իշխանությանը, սակայն հիշյալ դոկտրինը լրացվում է մեկ այլ տեսությամբ՝ հորիզոնական միջնորդավորված գործողության դոկտրինով², որը ենթադրում է, որ իրավունքի իրացման ընթացքում սահմանադրական արժեքներն ամեն դեպքում պետք է պահպանվեն բոլոր սուբյեկտների կողմից:

Շեղանաբար, հաշվի առնելով վերը շարադրվածը, կարծում ենք, որ հիմնական իրավունքներին առնչվող հայեցակարգային մոտեցումների հիմքում պետք է ընկած լինի այն ընկալումը, համաձայն որի՝ հիմնական իրավունքները անմիջականորեն հասցեագրված են միայն դրանցով սահմանափակված հանրային իշխանությանը: Մինչդեռ դրա հետ մեկտեղ մասնավոր իրավահարաբերությունների շրջանակներում համապատասխան լուծումները պետք է գտնվեն գոյություն ունեցող սահմանադրական արժեքներին համապատասխան:

Այդ առումով Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովն արձանագրել է հայեցակարգում. «Հիմնական իրավունք-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը / մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ. հոկտեմբեր, <http://moj.am/storage/uploads/Sahmanadrakan«barepokhumner».14.«10».pdf>:

² Տե՛ս Thomas Schmitz, BASIC ELEMENTS OF FUNDAMENTAL RIGHTS DOCTRINE, <http://www.iuspublicum-thomas-schmitz.uni-goettingen.de/Downloads/Schmitz«FR-Doctrine»Jakarta-2014.pdf>:

ների ուղղակի ներգործության սահմանափակումը պետություն-քաղաքացի հարաբերությունների վրա, այսինքն՝ Սահմանադրության ուժով դրանց ուղղակի կիրառության բացառումը մասնավոր անձանց միջև իրավահարաբերություններում, կասկածի տակ չի դնում այն հանգամանքը, որ հիմնական իրավունքները, միաժամանակ հանդիսանալով օբյեկտիվ իրավունքի նորմեր, ներգործում են նաև մասնավոր իրավունքի բնագավառում: Դասական հիմնական իրավունքների պարագայում պետությունը ոչ միայն պարտավոր է ձեռնպահ մնալ այդ իրավունքներին միջամտությունից, այլ նաև պարտավոր է օրենսդրական կարգավորումների միջոցով պաշտպանել այդ հիմնական իրավունքները երրորդ անձանց միջամտությունից: Մասնավոր իրավունքի բնագավառում դա նշանակում է, որ օրենսդիրը պետք է հակամարտության դեպքում համաչափության սկզբունքի հիման վրա հավասարակշռի մասնավոր իրավահարաբերությունների տարբեր մասնակիցների հիմնական իրավունքները, եթե չկա առարկայական որևէ պատճառ՝ նախապատվությունը տալու կողմերից որևէ մեկին: Մասնավոր իրավունքի բնագավառում հիմնական իրավունքների ներգործությունը շեշտելու համար հիմք կարող է հանդիսանալ Շվեյցարիայի 1999թ. Սահմանադրության 35-րդ հոդվածի 3-րդ մասի այն ձևակերպումը, ըստ որի՝ «իշխանությունները հոգ են տանում, որպեսզի հիմնական իրավունքները, որքանով որ դրանք կոչված են հենց այդ նպատակին, իրականացվեն նաև մասնավոր անձանց միջև»:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ նպատակահարմար չենք համարում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված այն ձևակերպումը, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է ... հարգել այլոց իրավունքները, ազատությունները եւ արժանապատվությունը¹: Կարծում ենք, որ վերջինս համընդհա-

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդված:

նուր ճանաչում գտած գաղափար է և գործում է՝ անկախ ուղղակիորեն վերջինիս սահմանադրական ամրագրումից: Մինչդեռ Սահմանադրությամբ հիշյալ դրույթի նախատեսումը հանգեցնում է այն ընկալման, որ հիմնական իրավունքների գործողությունը տարածվում է նաև մասնավոր անձանց միջև հարաբերությունների վրա, ինչը, ինչպես նշեցինք, հակասում է հիմնական իրավունքների առնչությամբ ավանդական մոտեցումներին:

Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ սահմանադրական բարեփոխումների նախագծում¹ տեղ չի գտել սահմանադրական քննարկվող դրույթը: Միննույն ժամանակ, այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ընդգրկվել է հիմնական իրավունքների սահմանափակումների հատուկ հիմքերին առնչվող դրույթների շրջանակներում: Օրինակ՝ համաձայն սահմանադրական բարեփոխումների նախագծի՝ միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային անվտանգության, հանրության առողջության և բարոյականության, այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով²:

Նշենք, որ 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում Սահմանադրության 2-րդ գլխում կատարվեցին զգալի բովանդակային և կառուցվածքային փոփոխություններ, որոնք ընդհանուր առմամբ հիմնական իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ սահմանադրաիրավական հիմք են հանդիսա-

¹ Հարկ է նկատել, որ «սահմանադրական բարեփոխումների նախագիծ» ձևակերպումը հետազոտության շրջանակներում օգտագործվում է՝ մատնանշելու գործընթացի կոնկրետ փուլում Սահմանադրության համապատասխան գլուխների առնչությամբ առկա բարեփոխումների նախագծի տեքստը:

² Նախագծի 2-րդ գլխի 23 հոդված, <http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-REF%282015%29014-e>.

նում: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ դրանք իրականացվեցին իրավունքների ու ազատությունների չտարբերակված ամրագրման տրամաբանության շրջանակներում և կառուցվածքային առումով մարդու իրավունքներն ու ազատությունները չամրագրվեցին համակարգված ու տրամաբանական հաջորդականությամբ: Այսպես, այնպիսի անձնական իրավունքների թվարկումից հետո, ինչպիսիք են կյանքի, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքները, նախատեսված են իրավունքների ու ազատությունների երաշխիքները, ինչպիսիք են, օրինակ, անմեղության կանխավարկածը, օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման արգելքը, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների, դատական պաշտպանության, իրավաբանական օգնություն ստանալու և այլ իրավունքները: Իսկ մնացած անձնական իրավունքները, ինչպիսիք են, օրինակ, անձնական ու ընտանեկան կյանքը հարգելու, բնակարանի անձեռնմխելիության իրավունքները ամրագրված են հիշյալ սահմանադրական նորմերից հետո¹:

Վերը շարադրվածը վկայում է հիմնական իրավունքների ամրագրման հարցում որոշակի անհետևողականության մասին, ինչը պահանջում է վերջիններիս՝ առավել համակարգված սահմանման ու հաջորդականության անհրաժեշտություն:

Այդ առումով Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը հայեցակարգում ընդգծել է. «Հիմնական իրավունքների, ազատությունների և պարտականությունների բովանդակային ճշգրտումներից զատ, հիմնական իրավունքների ավելի հստակ մեկնաբանման տեսանկյունից անհրաժեշտ են այնպիսի կառուցվածքային հստակեցումներ, որոնք հիմնական իրավունքների

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլուխ:

դրույթների շարադրանքը և հերթականությունը կդարձնեն առավել համակարգված: Հիմնական իրավունքների գլխի բաժանումը տարբեր ենթագլուխների՝ հնարավոր լուծումներից մեկն է, սակայն նկատի ունենալով, որ ամբողջ նյութի կատարյալ դասակարգում սկզբունքորեն հնարավոր չէ, կարելի է հիմնական իրավունքների գլխի հստակեցմանը հասնել նաև առանձին հոդվածների և դրանց բաղադրամասերի շարադրանքի նոր հերթականության միջոցով:

Նշենք, որ սահմանադրական բարեփոխումների նախագիծը մշակելիս հիմք է ընդունվել հայեցակարգում ներկայացված երկրորդ տարբերակը և հիմնական իրավունքների գլխի հստակեցումն իրականացվել է առանձին հոդվածների և դրանց բաղադրամասերի շարադրանքի նոր հերթականության միջոցով:

Քննարկվող հիմնախնդրի առումով հիշատակման է արժանի և այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլուխը, որը վերնագրված է «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները», ինքնուրույն հոդվածների տեսքով սահմանում է նաև վերջիններիս երեք առանձին պարտականություններ²: Միևնույն ժամանակ, մարդու և քաղաքացու պարտականություններ են նախատեսված սահմանադրական այլ կարգավորումների շրջանակներում: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 33.2.-րդ հոդ-

¹ <http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-REF%282015%29014-e>.

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-47-րդ հոդվածներ, որոնք համապատասխանաբար սահմանում են, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ, յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը, յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը:

վածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, *պարտավոր է անձամբ և այլոց հետք համապետել պահպանել և բարելավել շրջակա միջավայրը* (ընդգծումը մերն է): Կարծում ենք, որ կառուցվածքային տեսանկյունից դա նույնպես վկայում է սահմանադրական նորմերի ամրագրման որոշակի անհետևողականության մասին և այդ առումով համապատասխան սահմանադրական կարգավորումներն ունեն հստակեցման կարիք:

Միջազգային պրակտիկայում առկա են հիշյալ խնդրի լուծման առնչությամբ տարբեր մոտեցումներ: Առաջին հերթին նշենք, որ, օրինակ, Լեհաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլուխը վերնագրված է «Մարդու և քաղաքացու ազատությունները, իրավունքները և *պարտականությունները*» (ընդգծումը մերն է):

Քննարկվող հարցի առնչությամբ հետաքրքիր մոտեցում է որդեգրել նաև սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը փոփոխությունների նախագիծը մշակելիս՝ մարդու և քաղաքացու պարտականությունները նախատեսելով «Սահմանադրական կարգի հիմունքները» և «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլուխների՝ համապատասխան ոլորտին առնչվող հոդվածների շրջանակներում: Օրինակ՝ նախագծի՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխի 11-րդ հոդվածը նախատեսում է.

«Հոդված 11. Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը

1. Հանրային իշխանությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունն ու վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունը ապագա սե-

րունդների նկատմամբ:

2. Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին»:

Նույն գլխի 13-րդ հոդվածը սահմանում է.

«Հոդված 13. Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը

1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը: Զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո:

2. Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը»¹:

Հարկ է նկատել, որ 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրությամբ սկզբունքային լուծումներ չտրվեցին նաև իրավունքների անմիջական գործողության երաշխավորման խնդրին, քանի որ հստակ չտարանջատվեցին ու չամրագրվեցին անմիջականորեն գործող իրավունքները, ինչպես նաև դրանց պաշտպանության առանձնահատկությունները: Դա հատկապես վերաբերում է դասական հիմնական իրավունքների և սոցիալական հիմնական իրավունքների սահմանազատմանը:

Ավելին, միմյանցից հստակորեն չտարանջատվեցին սոցիալական հիմնական իրավունքներն ու պետության նպատակները, և մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին վերաբերող 2-րդ գլխում ամրագրվեցին նաև տնտեսա-

¹ <http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-REF%282015%29014-e>.

կան, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրները (հոդված 48-րդ): Կարծում ենք, որ սոցիալական հիմնական իրավունքները և հիշյալ ոլորտներում պետության հիմնական նպատակները պետք է միմյանցից խստիվ տարանջատվեն, քանի որ դրանք առաջացնում են լիովին տարբեր իրավական հետևանքներ: Այդ առումով հնարավոր լուծում կարող է հանդիսանալ Սահմանադրությամբ սոցիալական, տնտեսական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներին առնչվող առանձին գլխի սահմանումը, որտեղ տարանջատված ձևով կամրագրվեն ներկայացված ոլորտներում պետության հիմնական խնդիրները:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը հայեցակարգում ընդգծել է. «...: Ընդ որում, կարևորագույն խնդիրներից մեկը, մի կողմից, «դասական» հիմնական իրավունքների, իսկ մյուս կողմից՝ սոցիալական հիմնական իրավունքների ու պետության նպատակների սահմանազատումն է: Նման սահմանազատումը հնարավորություն կտա առանձնացնել բոլոր այն հիմնական իրավունքները, որոնց վրա անմիջականորեն հենվելով անձը կկարողանա պաշտպանել իր սահմանադրական իրավունքները՝ ներառյալ սահմանադրական գանգատի միջոցով:

Հիմնական իրավունքներին առնչվող բոլոր այն դրույթները, որոնք չեն առաջացնում անձի սուբյեկտիվ իրավունքներ և պարտավորեցնում են միայն հանրային իշխանություններին (առաջին հերթին՝ օրենսդրին), պետք է պարզորոշ կերպով տա-րանջատվեն անմիջականորեն գործող սուբյեկտիվ հիմնական իրավունքներից: Նման սահմանազատումը, հաշվի առնելով հիմնական իրավունքների և պետության նպատակների վերաբերյալ դրույթների տար-

բեր իրավական հետևանքները, ցանկալի է նաև այն դեպքերում, երբ խոսքը միևնույն առարկայական հիմքի մասին է (օրինակ՝ Սահմանադրության 40-րդ հոդվածում ամրագրված ստեղծագործության ազատությունը, մի կողմից, և գիտության նվաճումներից օգտվելու կամ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը՝ մյուս կողմից)»:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ սահմանադրական բարեփոխումների նախագծում նախատեսվել է «Սոցիալական, տնտեսական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները» վերտառությամբ 3-րդ գլուխը: Վերջինս ամրագրում է աշխատանքային պայմաններին, սոցիալական ապահովությանը, արժանապատիվ գոյությանը, նվազագույն աշխատավարձին, առողջության պահպանությանը առնչվող օրենսդրական երաշխիքները, ինչպես նաև սոցիալական, տնտեսական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակները¹:

2005 թ. սահմանադրական փոփոխությունները համակարգային ամբողջակա-նության մեջ չերաշխավորեցին նաև հիմնական իրավունքների սահմանափակումների առանձնահատկությունների հստակ տարբերակումը և դրանց համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին: Հիմնական իրավունքների ցանկի մի շարք հոդվածներում սահմանված են ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ սահմանափակումներ, ինչն առաջացնում է տարակարծիք մեկնաբանություններ դրանց ծավալի և բովանդակության վերաբերյալ: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի նամա-

¹ <http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-REF%282015%29014-e>.

կագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ: Մինևույն ժամանակ, նշված հատուկ սահմանափակման հետ մեկտեղ Սահմանադրության 43-րդ հոդվածը նախատեսում է նաև հիշյալ սահմանադրական իրավունքի առնչությամբ ընդհանուր սահմանափակումներ: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

Կարծում ենք, որ նման սահմանադրական կարգավորումները հանգեցնում են սահմանափակումների և դրանց հիմքերի սահմանման անհամակարգվածության, ինչն իր հերթին խնդիրներ է առաջացնում դրանց իրացման տեսանկյունից: Հետևաբար, նշված սահմանադրական լուծումները պահանջում են հետագա կատարելագործում՝ հաշվի առնելով այն, որ քննարկվող հիմքերը կարող են լինել կա՛մ ընդհանուր՝ սահմանափակման ենթակա բոլոր իրավունքների համար, կա՛մ հատուկ՝ յուրաքանչյուր հիմնական իրավունքի համար:

Վերը շարադրվածի առումով Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտա-

կան հանձնաժողովը հայեցակարգում արձանագրել է. «Սահմանափակումն օրենքին վերապահելն օրենսդրի իրավասությանն է թողնում հանրության կամ այլ անձանց շահերի հետ բախումը կանխելու և տարբեր շահերն ու իրավունքները միմյանց հետ համաձայնեցնելու խնդրի լուծումը: Գործող Սահմանադրությունը հիմնականում որդեգրել է օրենքի որակյալ վերապահման տեխնիկան, որը սահմանում է համապատասխան հիմնական իրավունքի սահմանափակման որոշակի հիմքեր: Հիմնական խնդիրն այստեղ այն է, թե ինչպես պետք է ամրագրվեն այդ սահմանափակումների հիմքերը: Դրանք կարող են լինել ընդհանուր՝ սահմանափակման ենթակա բոլոր իրավունքների համար (Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի նման), կամ հատուկ՝ յուրաքանչյուր հիմնական իրավունքի համար (ինչպես, օրինակ, Սահմանադրության 26-րդ հոդվածի 2-րդ մասում): Երկրորդ մոտեցման առավելությունն այն է, որ թույլ է տալիս հաշվի առնել յուրաքանչյուր հիմնական իրավունքի սահմանափակման առանձնահատկությունները, ինչն ակնհայտորեն ավելի նախընտրելի է հիմնական իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Այդուհանդերձ, խնդրահարույց է, թե որքանով է դա հնարավոր այնպես իրականացնել, որպեսզի ապահովվի անհրաժեշտ հավասարակշռությունը հանրության և այլ անձանց շահերի միջև»¹:

Հաշվի առնելով այն, որ իրավունքների սահմանափակման ինստիտուտն ունի բազմաթիվ առանձնահատկություններ՝ կախ-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը / մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ. հոկտեմբեր, <http://moj.am/storage/uploads/Sahmanadrakan«barepokhumner.«14.10».pdf>:

ված հիմնական իրավունքի կոնկրետ տարատեսակից¹, առավել նպատակահարմար ենք համարում յուրաքանչյուր հիմնական իրավունքի համար հատուկ սահմանափակման ամրագրումը վերջինիս առնչվող սահմանադրական կարգավորման շրջանակներում:

Համանման մոտեցում է որդեգրել նաև սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը փոփոխությունների նախագիծը մշակելիս: Մասնավորապես, յուրաքանչյուր հիմնական իրավունքի համար նախատեսվել են սահմանափակման հատուկ հիմքեր՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներին առնչվող ընդհանուր դրույթի շրջանակներում սահմանելով դրանք լրացուցիչ սահմանափակումների ենթարկելու հնարավորություն այնքանով, որքանով դա պահանջում է իրավի-

¹ Սահմանափակման ինստիտուտի առանձնահատկություններին՝ ըստ հիմնական իրավունքի կոնկրետ տարատեսակի, բազմիցս անդրադարձ է կատարվել միջազգային-իրավական մի շարք փաստաթղթերում: «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով), անդրադառնալով, օրինակ, հավաքների ազատության սահմանափակումներին առնչվող հիմնախնդրին, նշել է, որ տարածքային և սահմանադրական կարգի փոփոխություններին ուղղված ելույթներն ու հավաքները մեխանիկորեն չեն ենթադրում տարածքային ամբողջականությանն ու ազգային անվտանգությանն ուղղված վտանգ, եթե չեն պարունակում ատելություն կամ բռնություն հրահրող տարրեր: Պատերազմի, ռասայական, էթնիկական, կրոնական կամ այլ ատելություն բորբոքելուն ուղղված հրապարակային կոչեր ենթադրող միջոցառումները կարող են անիրավաչափ համարվել և դրանց արգելումը կարող է հիմնավորվել հավաքների ազատությունը մարդու այլ հիմնական իրավունքներին, այդ թվում՝ խտրականության արգելքին, հավասարակշռելու պահանջի համատեքստում (տե՛ս, օրինակ, CDL-AD(2010)031, Joint Opinion on the on the Public Assembly of Serbia by the Venice Commission and OSCE/ODIHR, Ե 45, CDL-AD(2010)049, Interim Joint Opinion on the Draft Law on Assemblies of the Republic of Armenia, by the Venice Commission and OSCE/ODIHR «29-30»):

ճակը՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում¹:

Հիմնական իրավունքների սահմանափակման հիմնախնդրի տեսանկյունից հարկ է նաև նկատել, որ չնայած սահմանադրական այն դրույթի առկայությանը, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները, գործող Սահմանադրությունը բավարար չափով չի հստակեցրել իրավունքների սահմանափակումներին ներկայացվող պահանջները, ինչն էլ խնդրահարույց է հիմնական իրավունքների իրացման ու պաշտպանության տեսանկյունից:

Կարծում ենք, որ այդ պահանջների ցանկը չի կարող սպառիչ լինել, սակայն Սահմանադրությունը պետք է առնվազն ամրագրի այն պահանջները, որոնք համընդհանուր ճանաչում են գտել ժամանակակից սահմանադրական իրավունքում: Այդ առումով կարելի է հիշատակել, օրինակ, Հունգարիայի սահմանադրական կարգավորումը, համաձայն որի՝ հիմնական իրավունքը կարող է սահմանափակվել միայն այլ հիմնական իրավունքի իրականացումը կամ սահմանադրական արժեքի պաշտպանությունն ապահովելու նպատակով այնքանով, որքանով դա բացարձակապես անհրաժեշտ է, համաչափ է հետապնդվող նպատակին և հաշվի առնելով տվյալ հիմնական իրավունքի հիմնական բովանդակությունը²: Նմանատիպ նորմեր են նախատեսված նաև մի շարք այլ պետութ-

¹ <http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-REF%282015%29014-e>.

² Տե՛ս Հունգարիայի Հիմնական օրենքի հոդված I (3):

յունների հիմնական օրենքներում, օրինակ՝ Շվեյցարիայի¹, Գերմանիայի² և այլն:

Վերը շարադրվածի առնչությամբ Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը հայեցակարգում նշել է. «Օրենքի որակյալ վերապահումներից բացի, անհրաժեշտ են օրենսդրի հայեցողությունը սահմանափակող հավելյալ սահմանադրաիրավական պահանջներ: Նկատի ունենալով այն լեզվոտիմ շահերի բազմազանությունը, որոնք կարող են անհրաժեշտ լինել հիմնական իրավունքների սահմանափակումների համար, այդ պահանջների ցանկը չի կարող սպառիչ լինել, սակայն Սահմանադրությունը, առնվազն, պետք է ամրագրի այն պահանջները, որոնք համընդհանուր ճանաչում են գտել ժամանակակից սահմանադրական իրավունքում, ինչպես նաև Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 52-րդ հոդվածի 1-ին մասում: Խոսքը, մասնավորապես, իրավունքի էության անխախտելիության և, հատկապես, համաչափության սկզբունքի հստակ ամրագրման անհրաժեշտության մասին է: Լրացուցիչ կարևոր երաշխիք է գործող Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված պահանջը, ինչը, մասնավորապես, ապահովում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի չափորոշիչների կիրառումը հիմնական իրավունքների սահմանափակումների խնդրում: Ուշադրության է արժանի նաև հիմնական իրավունքները սահմանափակող օրենքների նկատմամբ այնպիսի պահանջների սահմանումը, որոնց նպատակը հիմնական իրավունքների արդյունավետ գործողության և կենսագործելիության ընթացակարգային նախադրյալների ստեղծումն է: Հիմնական իրավունքների սահմանափակումներին ներկայաց-

¹ Տե՛ս Շվեյցարիայի Կոնֆեդերացիայի Սահմանադրության 36 հոդված:

² Տե՛ս Գերմանիայի Հիմնական օրենքի 19-րդ հոդված:

վող պահանջների մեջ կարելի է ընդգրկել նաև որոշակիության սկզբունքը և հետադարձ ուժի արգելքը»¹:

Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը փոփոխությունների նախագծում նախատեսել է հետևյալ բովանդակությամբ դրույթներ.

«Հոդված 55. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ

Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 1-4-րդ, 6-8-րդ, 13-15-րդ, 16-րդ հոդված 1-ին մասում, 19-րդ հոդվածի 1-ին մասում, 25-րդ հոդվածի 1-ին մասում, 33-րդ և 38-52-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Հոդված 57. Համաչափության սկզբունքը

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման նպատակը և սահմանա-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը / մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014 թ. հոկտեմբեր, <http://moj.am/storage/uploads/Sahmanadrakan«barepokhumner».«14.10».pdf>:

փակման համար ընտրված միջոցները պետք է համաչափ լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի դերին ու նշանակությանը:

Հոդված 58. Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների նախադրյալները և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի հիմնական իրավունքի կրողները և հասցեատերերը ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Հոդված 59. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությունը

Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:

Հոդված 60. Հիմնական իրավունքները և ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան

1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթները պետք է մեկնաբանվեն՝ հաշվի առնելով գործող միջազգային չափորոշիչները և դատական պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները»¹:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական իրացումը և մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների երաշխավորման սահմանադրական կառուցակարգերի կատարելագործումը հանդիսանում

¹ <http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-REF%282015%29014-e>.

են պեպոության սահմանադրական կարգի հիմունքների, պեպականաշինության ավանդույթների ամրապնդման, հասարակության սահմանադրական մշակույթի զարգացման, ինչպես նաև անհատի բնականոն ինքնադրսևորման և ինքնաիրացման ապահովման կարևորագույն գրավականները: Այդ տեսանկյունից ակնհայտ է, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական ու անօտարելի իրավունքները և ազատությունները պեպության կողմից որպես բարձրագույն արժեք ճանաչելը պեպք է պայմանավորի իրավունքի գերակայության սկզբունքի անշեղ իրացումը և երաշխավորի իրավունքով իշխանության սահմանափակումը: Ավելին, սահմանադրական նորմերը պեպք է ոչ միայն հոչակեն մարդու սահմանադրական իրավունքները, այլև առավելագույնս հստակ սահմանեն դրանց իրացման երաշխիքները, պեպության պարտավորությունները, առանձին իրավունքների սահմանափակման թույլատրելի շրջանակները: Մարդու իրավունքները պեպք է դիտարկվեն որպես իրագործելի իրավունքներ, իսկ դրանց սահմանափակումները պեպք է բխեն միջազգային իրավունքի նորմերից, լինեն համարժեք, չաղավաղեն իրավունքի բովանդակությունն ու իմաստը, հստակ սահմանվեն օրենքով, զուգակցվեն պեպության համարժեք պարտականություններով:

ԳԼՈՒԽ 4.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Մենք արդեն անդարադարձել ենք սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի իրացման երաշխիքների վերանայման ու կատարելագործման անհրաժեշտությանը, ինչը սահմանադրական բարեփոխումների կարևոր ու անհրաժեշտ ուղղություններից մեկն է:

Սահմանադրության 1-ին անփոփոխելի հոդվածում ամրագրված է. «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»: Հայեցակարգում ելակետ է ընդունվում այն գաղափարը, որ Ժամանակակից սոցիալական պետության բնորոշ հատկանիշը սոցիալական շուկայական տնտեսությունն է, դրա բնականոն գործունեությունը: Սոցիալական շուկայական տնտեսության պայմաններում ելակետային է համարվում «ազատ անհատի հայեցակարգը», ըստ որի՝ վերջինս «ինքնուրույն է և պատասխանատու իր գործողությունների համար»: Տվյալ դեպքում չի անտեսվել այն, որ անհատի ազատ զարգացումն անխուսափելիորեն հանգեցնում է որոշակի անհավասարությունների, որպիսիք մեղմելուն պետք է ուղղված լինեն մի շարք լծակներ՝ սոցիալական ապահովություն, սոցիալական ապահովագրություն և սոցիալական օգնության նպատակային քաղաքականություն:

Հայեցակարգում ընդգծված է հետևյալ հիմնադրույթը. «Ամենաընդհանուր իմաստով սոցիալական պետության սկզբունքն ուղղված է սոցիալական արդարությանը, այն պարտադրում է պետությանն ապահովել արդար սոցիալական կարգ: Սոցիալական պետության սկզբունքը ոչ միայն ընդհանուր ծրագրային դրույթ է

կամ սահմանադրաիրավական ուղենիշ, այլ նաև՝ պարտադիր սահմանադրական նորմ: Այն առաջին հերթին ուղղված է օրենսդրին և պարտավորեցնում է վերջինիս զարգացնել և իրագործել սոցիալական պետության սկզբունքը ոչ միայն սոցիալական իրավունքի ավելի նեղ բնագավառում, այլ նաև իրավունքի բոլոր ոլորտներում»:

Հայեցակարգում սոցիալական պետության էությանն անդրադառնալը կարևորելու տեսանկյունիվ անհրաժեշտ է համարվել, որպեսզի այն իր ամրագրումն ստանա ոչ թե մարդու իրավունքների և ազատությունների հատվածում, այլ Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» հատվածում, քանզի այն սուկ մարդու սահմանադրական կարգավիճակի բաղադրիչ է, այլ հանդիսանում է Սահմանադրությամբ ամրագրվող բոլոր ինստիտուտների համար ելակետային նշանակություն ունեցող իրավական արժեք: Այն պետք է ուղեկցվի այնպիսի կարգավորումներով, որոնց արդյունքում հնարավոր կլինի վերջինիս ընկալել, որպես սոցիալական արդարության սկզբունքի հիմնարար երաշխիք: Սոցիալական իրավունքների և պետության սոցիալական էության գաղափարների նույնականացումը նկատվում է գործող Սահմանադրությունում, ինչն անխուսափելիորեն «սոցիալական պետություն» եզրույթին հաղորդել է սահմանափակ բովանդակություն:

Ինչ խոսք, սոցիական իրավունքները ենթադրում են այդ իրավունքների իրացման ու երաշխավորման տեսանկյունից պետության որոշակի պարտականություններ, սակայն այդ պարտականությունների շրջանակով չի «ավարտվում» պետության սոցիալական էության բովանդակությունը, քանզի դրանցից գատ, պետությունն ունի սոցիալական քաղաքականության առավել ընդգրկուն նպատակներ, որոնք մասամբ առնչվում են մարդու իրավունքների և ազատությունների հետ, սակայն առավելապես միտված են ա-

զատ անհատի ձևավորման համար համալիր նախադրյալների երաշխավորմանը՝ անկախ կոնկրետ անձի փաստական հնարավորություններից: «Ազատ մրցակցությունը» բնավ չի նշանակում, որ փաստացի հավասար պայմանների ստեղծմամբ հնարավոր է լինում ապահովել նաև լիարժեք իրավահավասարություն. վերջին հաշվով, օրինակ հաշմանդամները չեն կարող նմույնատեսակ ու հավասար փաստական հնարավորությունների պայմաններում լիարժեք իրավահավասար լինել այն անձանց հետ, որոնք հարկադրված չեն կատարել հաշմանդամությամբ պայմանավորված լրացուցիչ ծախսեր, կարող են առավել արդյունավետ աշխատել ու ձեռք բերել մրցակցությունից դուրս նախադրյալներ և այլն:

Ըստ Հայեցակարգի. «Սոցիալական պետության սկզբունքն օբյեկտիվ սահմանադրական նորմ է և, որպես այդպիսին, դեռևս չի սահմանում քաղաքացու սուբյեկտիվ իրավունքներ: Այն սերտ կապի մեջ է գտնվում սոցիալական հիմնական իրավունքների և պետության նպատակների մասին դրույթների հետ: Սոցիալական հիմնական իրավունքները և պետության նպատակներն առանց տարբերակման ամրագրված են գործող Սահմանադրության 2-րդ գլխի բազմաթիվ հոդվածներում, ընդ որում, Սահմանադրությունը շատ դեպքերում պետության սոցիալական նպատակները ձևակերպել է որպես սոցիալական հիմնական իրավունքներ»:

Տվյալ դեպքում առաջարկվում է իրավական որոշակիության և հստակության պահանջներից ելնելով, սոցիալական հիմնական իրավունքները և պետության նպատակները միմյանցից տարանջատել, քանի որ դրանք առաջացնում են լիովին տարբեր իրավական հետևանքներ: Ընդ որում, տարանջատման հիմքում նախատեսվում է դնել հետևյալ չափանիշը. «Սոցիալական ոլորտին վերաբերող բոլոր այն դրույթները, որոնք պարտավորեցնում են միայն օրենսդրին և գործադրին, պետք է ձևակերպվեն որպես պետության

նպատակներ, քանի որ դրանք անհատի անմիջական իրավական պահանջներ չեն, այլ պարունակում են միայն նպատակներ, որոնք պետությունը պետք է իրագործի «հնարավորության շրջանակներում»: Ի տարբերություն հիմնական իրավունքների, պետության նպատակները միայն օբյեկտիվ-իրավական դրույթներ են և չեն առաջացնում սուբյեկտիվ իրավունքներ: Գործադիր իշխանության կողմից պետության սոցիալական ծրագրերի արդյունավետ իրագործման կարևոր երաշխիք կարող է լինել Ազգային ժողովին որոշակի պարբերականությամբ կառավարության զեկույցի ներկայացումը»:

ԳԼՈՒԽ 5.
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄ
ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄ

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը իր զուտ իրավական արտացոլումն է ստացել դեռևս անկախության հռչակման առաջին իրավական փաստաթղթերում, սակայն հասարակական ինքնագիտակցության մեջ դրա իրական արժեքն ու նշանակությունը բավարար չափով չի ընկալվել: Ցավոք, այն իր իրական նշանակությամբ չի ընկալվել նաև հանրային հարաբերություններում. մեծ հաշվով, խոցելի չեն համարվում իշխանությունների ճյուղերի բաժանման սկզբունքից որոշ շեղումները, քանի որ ելակետ է ընդունվում այն մոտեցումը, ըստ որի՝ կարևորն արդյունքներն են, իսկ դրանց հասնելու եղանակներն ու միջոցները, այդ թվում կառուցակարգային հարթությամբ, էական նշանակություն չունեն: Հանրային իշխանության ճյուղերի միջև սահմանազատման փորձեր, իհարկե, արվում են, ավելին՝ երբեմն դրանք հասնում են ծայրահեղության, սակայն այդ գործընթացները վկայում են ոչ այնքան հիշյալ սկզբունքի համարժեք ընկալման, որքան անհարկի ծայրահեղացման ու պարզունակության մասին:

Իհարկե, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի անհամարժեք ընկալման ու իրացման արդյունքում առավելապես խոցելի են դառնում դատական իշխանությունն ու օրենսդիր իշխանությունը, սակայն վերը նշված անհամարժեք մոտեցումների պարագայում, երբ առանձին դեպքերում դրսևորվում են անհարկի ծայրահեղություններ, անհիմն սահմանափակվում են նաև գործադիր իշխանության լիազորությունները: Այսպես, գործող Սահմանադրության 83.5. հոդվածով սահմանված են հարաբերությունները, որոնք կարող են կարգավորվել միայն օրենքով: Ընդ

որում, այդ ցանկում ներառված են նաև այնպիսի հարաբերություններ, որոնք ընդհանուր ոչինչ չունեն օրենսդիր իշխանության հետ և ակնհայտ ծախողում են գործադիր իշխանության իրականացման բնականոն ընթացքը: Խնդիրն այն է, որ նշված հոդվածի համաձայն, անգամ իրավունքների իրականացման կարգը պետք է սահմանվի բացառապես օրենքով, ինչի արդյունքում ստացվում է, որ գործադիր իշխանությունը վեր է ածվում սոսկ կատարող մարմնի, զրկված լինելով ենթաօրենսդրական ակտերի միջոցով կարգավորելու այնպիսի ընթացիկ հարաբերություններ, որոնք ծագում են մշտապես և պահանջում հնարավորինս օպերատիվ միջամտություն:

Նկատենք, որ զուտ ծանրաբեռնվածության տեսանկյունից արդեն վերը նշված իրավակարգավորումն իրատեսական չէ, քանզի օրենսստեղծ գործունեության բնականոն փուլերի միանգամայն իրավաչափ տևողությունը պարզապես թույլ չի տալիս և, ըստ էության, պետք էլ չէ ակնկալել, որպեսզի խորհրդարանն այդչափ արագությամբ ու մեծածավալ օրենքներ ընդունի: Եթե անգամ խորհրդարանը փորձի հետևողականորեն կատարել Սահմանադրության հիշյալ պահանջը, ապա, միևնույն է, դրանից կտուժի օրենքների որակը՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով հանդերձ:

Նման իրավիճակում լուծումը հետևյալն է. կառավարությունը կարող է ենթաօրենսդրական ակտերով սահմանել իրավունքների իրականացման կարգ, սակայն ոչ մի դեպքում չպետք է խաթարվի իրավունքի էությունը: Իհարկե, կարող են պնդել, թե ինչպե՞ս կարող է կառավարությունը որոշել, թե արդյո՞ք իր իրավաստեղծ գործունեության արդյունքում չի խաթարվում այս կամ իրավունքի էությունը: Այս հարցադրման առնչությամբ հարկ ենք համարում նկատել, որ այն նույն կերպ կարող է վերաբերել նաև խորհրդարա-

նին, իսկ, ընդհանրապես, սահմանադրականության խնդրի լուծումը պայմանավորված է ոչ այնքան կառուցակարգային լուծումներից, որքան առաջադրված խնդիրներից ու դրանց համապատասխան ամրագրված ընթացակարգերից: Բնորոշ է այն, որ վերևում, անդրադառնալով սահմանադրականության երաշխավորման հիմնախնդրին, մենք նկատեցինք, որ սահմանադրականության մշտադիտարկման լիազորությունը հարկ է հստակ վերապահել Հանրապետության Նախագահին, ինչից բխում է, որ Սահմանադրությանը հակասող ցանկացած իրավական ակտի նկատմամբ վերահսկողությունը, այն հարկ եղած դեպքում սահմանադրական դատարանում քննարկման առարկա դարձնելու նախաձեռնությունը պետք է լինի խիստ իրատեսական:

Ընդ որում, երբ խոսում ենք սահմանադրականության մասին, իհարկե, չենք բացառում, որ Սահմանադրությանը, ինչպես նաև սահմանադրական դատարանի որոշումներին հակասող իրավական ակտեր ընդունելու հավանականությունն առավել մեծ է գործադիր իշխանությունում, քան խորհրդարանում, սակայն դրանից բնավ չի բխում, որ մշտադիտարկումը պետք է միտված լինի բացառապես գործադիր իշխանության դեմ:

Եթե փորձելու լինենք համակարգված տեսքով ներկայացնել այն պատճառներն ու նախապայմանները, որոնցով թելադրված է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ոչ բավարար հետևողական իրացումը, ապա կարող են առանձնացնել հետևյալ գործոնները՝ կառավարման ձևը, հասարակական ինքնագիտակցության ցածր մակարդակը և կուսակցական համակարգի կայացման դեռևս չլուծված հիմնախնդիրները: Տվյալ դեպքում չանդրադառնանք իրավական մշակույթի խնդիրներին, քանզի դրանք մեկ այլ ասպեկտով արդեն արտացոլել ենք սույն վերլուծականում: Նկատենք, որ կառավարման ձևը հաճախ է որոշակի-

րեն կանխորոշում վերը նշված սկզբունքի դրսևորման ուղղությունները: Ընդ որում, խորհրդարանական կառավարման ձևի հակառակորդները փորձում են այն դիրքորոշումը հիմնավորված համարել, ըստ որի՝ իբր խորհրդարանական կառավարման ձևի պարագայում խորհրդարանական վերահսկողությունը գործադիր իշխանության նկատմամբ իսպառ բացակայում է, խորհրդարանը դադարում է գործադիր իշխանությանը հակակշիռ լինել, քանի որ կուսակցական մեծամասնությունը որևէ պարագայում չի փորձի «խոչընդոտել» իրենց կուսակիցներից կազմված գործադիր իշխանության գործունեությանը: Արտաքուստ կարող է թվալ, որ այս տեսակետը, իրոք, անխոցելի է, սակայն մյուս կողմից անտեսվում է, որ դրա հիմքում դրված են քաղաքական հարաբերությունները զուտ հոգեբանական միակողմանի ասպեկտներով պարզաբանելու եղանակներ: Նախ, կուսակիցների միջև ևս անխուսափելիորեն ծագում են տարաձայնություններ, ընդ որում, երբեմն այնչափ, որ հնարավոր չի լինում մի տևական ժամանակ կառավարություն ձևավորել կամ ձևավորված կառավարության նախագծերը ընդունել: Մյուս կողմից, եթե, այնուամենայնիվ, ակնհայտ բացասական ցուցանիշների ու արդյունքների պարագայում խորհրդարանական կուսակիցները զերծ մնան որևէ ազդեցությունից՝ իբր չխոչընդոտելու նպատակով, ապա ինքնին հասկանալի է, որ իրենք իրենց դնելու են այնպիսի անհասկանալի իրավիճակում, երբ արդեն հաջորդընտրական գործընթացներում նրանց նկատմամբ հասարակական վստահությունը մոտենալու է զրոյական աստիճանի: Ուստի տվյալ դեպքում ոչ թե խոչընդոտելու պարզունակ դատողությունն է գործում, այլ այնպիսի փոխհարաբերությունների կառուցումը, որպիսի պարագայում հնարավորություն է լինում հանրությանը կոնկրետ փաստերով հավաստելու, որ իրենց կուսակցական մեծամասնությունն ունակ է կատարելու ստանձնած պարտավորությունները:

Ըստ հայեցակարգի. «Սահմանադրական մակարդակում «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» եռամիասնական շղթայում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ դեռևս երաշխավորված չէ անհրաժեշտ ներդաշնակություն: Մինչդեռ առանց դրա չի կարող ապահովվել նաև գործառույթային, հակակշռող և զսպող լիազորությունների ցանկալի հավասարակշռություն: Վերջինիս բացակայությունը մեծապես վտանգում է երկրի կայուն զարգացումը, պետական իշխանության իրականացման ոլորտում հանգեցնում է ստվերային հարաբերությունների և սուբյեկտիվ հայեցողության շրջանակների վտանգավոր ընդլայնման»:

Միաժամանակ, հիշյալ ոլորտում առկա բազմաթիվ խնդիրներից առանձնացվել են հետևյալ՝ առավել էականները.

1. Գործող Սահմանադրությունը չի բացառում, իսկ գործնականում ավելի հաճախ է արձանագրվում մի իրավիճակ, երբ Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի պարագայում նշանակվում են ոչ միաժամանակյա ընտրություններ, որպիսի պարագայում «առաջնային մանդատ ունեցող երկու ինստիտուտները հայտնվում են հանրային վստահության տարբեր մակարդակներում և խորհրդարանում Հանրապետության Նախագահին հարող մեծամասնության բացակայության պայմաններում ու իրավամտաձողության ներկա դրսևորումների համատեքստում էապես մեծանում է քաղաքական ճգնաժամի ու առճակատման վտանգը»: Ենթադրվում է, որ տվյալ դեպքում հակասությունը բնավ այն իրավիճակը չէ, երբ կարելի է հուսալ, որ որոշակի տարածայնությունների պարագայում քաղաքական ուժերը կփորձեն առավել արդյունավետ գործել: Գործնական վերլուծությունները ցույց են տալիս, որ այդպիսի դեպքերում քաղաքական դիմակայությունն անխուսափելի է, ինչն էլ իր հերթին հանգեցնում է «հանրային առճակատման», որը որևէ կերպ խրախուսելի երևույթ համարվել չի կարող:

Ընդ որում, հիշյալ իրավակարգավորումների դեպքում գործող Սահմանադրությունը պարտադիր է դարձնում նաև երկու տարում երկու կառավարություն ձևավորելու անհրաժեշտությունը, իսկ քաղաքական հարաբերություններում այդպիսի անկայունությունը չի կարող իր բացասական ազդեցությունը չունենալ նաև գործադիր իշխանության համակարգում, տնտեսական ոլորտում և այլն, ինչը, վերջին հաշվով, հանրային անվստահություն է ծնում ողջ քաղաքական համակարգի նկատմամբ:

Խոսքը քննարկվող դեպքում ոչ թե քաղաքական անհրաժեշտ տարածայնությունները բացառելու, այլ այդպիսիք անհարկի չարելու և քաղաքական առողջ մթնոլորտ ձևավորելու մասին է, քանզի քաղաքական տարբեր ուղղությունների միջև հակամարտության դեպքում, մանավանդ, որ երկուսն էլ օժտված են առաջնային մանդատով, քաղաքական ճգնաժամային երևույթներն անխուսափելի են:

2. Վերևում մենք արդեն անդրադարձանք օրենսդիր մարմնի կողմից գործադիր իշխանության նկատմամբ հակակշիռ ստեղծելու հնարավորության մասին, նշելով, որ անգամ խորհրդարանական կառավարման ձևի պարագայում այդ հարցադրումն ունի որոշակի արդիականություն: Սակայն այդ խնդիրն էլ ավելի ցայտուն է դառնու, երբ առաջնային մանդատ ունեցող Նախագահը, ներկայացնելով գործադիր իշխանության շահերը, փորձում է և, ըստ էության, կարող է, ձգտել մենիշխանության: Եթե խորհրդարանական կառավարման ձևի պարագայում Հանրապետության Նախագահը զրկված է լինում գործուն կերպով միջամտելու իշխանության այդ երկու ճյուղերի փոխհարաբերություններին, ապա կիսանախագահական կառավարման ձևի պարագայում այդպիսի միջամտությունը պարզապես իրատեսական է՝ դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ:

3. Հաջորդ խնդիրը վերաբերում է Հանրապետության Նախագահի գործառույթների անհրաժեշտ հստակությանը, մասնավորապես, գործող Սահմանադրությամբ հստակ ամրագրված չեն Հանրապետության Նախագահի գործառույթներն ու լիազորությունները գործադիր իշխանության ոլորտում և Սահմանադրության պահպանման գործընթացում: Որոշակի դեպքերում Սահմանադրությունը բավարարվել է «համատեղ իրականացնում են» և նմանաբնույթ այլ եզրույթներով, որոնք որոշակիության տեսանկյունից խիստ խնդրահարույց են: Իսկ գործառույթների ու լիազորությունների հստակության բացակայությունը հղի է անպատասխանատվության անընդունելի երևույթի ձևավորմամբ:

4. Խորհրդարանի հիմնական հակաշոռղ գործառույթը, թերևս, գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն է, մինչդեռ՝ գործող Սահմանադրությամբ Ազգային ժողովի վերահսկողության լիազորությունների ակնհայտ սահմանափակ բնույթը հիմք չի տալիս պնդելու, որ դրանք կարող են ապահովել անհրաժեշտ հավասարակշռություն իշխանության հիշյալ ճյուղերի միջև: Բոլոր այն իրավակարգավորումները, որոնք այս կամ այն չափով առնչություն ունեն գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության գործառույթի հետ, կամ ընդգրկում են ակնհայտ նեղ շրջանակներ ու իրացման լծակներ, կամ տարածվում են գործադիր իշխանության ոչ բոլոր ողակների վրա. թերևս, վերահսկողությունից դուրս են մնում կառավարության կազմի մեջ չմտնող գործադիր իշխանության մարմինները:

Ակնհայտ սահմանափակ են խորհրդարանում քաղաքական ընդդիմադիր ուժերի լիազորությունները՝ ինչպես իրավաստեղծ գործունեության, այնպես էլ վերահսկողական ու կադրային քաղաքականության իրացման շրջանակներում, ինչը ոչ միայն չի ապահովում բուն խորհրդարանի լիազորությունների բնականոն իրա-

ցումը, այլև խոչընդոտում է իշխանությունների բաժանման սկզբունքի արդյունավետ երաշխավորմանը:

5. Հանրային իշխանության իրականացման ոլորտում անխուսափելի են Հանրապետության Նախագահ-Ազգային ժողով, Հանրապետության Նախագահ-կառավարություն, Ազգային ժողով-կառավարություն փոխհարաբերություններում, ինչպես նաև պետական իշխանության տարբեր ինստիտուտների հարաբերություններում սահմանադրական լիազորությունների հարցով առաջացած վեճերը, սակայն դրանց լուծման իրավաչափ եղանակը իրավականն է: Ընդհանրապես սահմանադրական վեճերի լուծման գործուն միջոցը սահմանադրական արդարադատությունն է, իսկ քաղաքական եղանակներով ու կառուցակարգերով այդպիսի վեճերի լուծումը ոչ միայն իրավաչափ չէ, այլև գործնականում, անհրաժեշտ խորքայնությամբ չլուծելով վեճերը, տեղիք է տալիս նորանոր վեճերի:

6. Հայեցակարգում ևս ելակետ է ընդունվում այն մոտեցումը, որ. «Հստակեցված չէ գործադիր իշխանության համակարգը», ինչի արդյունքում անհրաժեշտ հետևողականորեն չի իրականացվում Սահմանադրության՝ փոփոխման ոչ ենթակա 2-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի՝ «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»:

Միաժամանակ, առկա է որոշակի անհստակություն՝ գործադիր իշխանության գործառույթային դերի, իրավասության և պատասխանատվության միջև. «Գործադիր իշխանության ներքին երկվությունը՝ պայմանավորված Հանրապետության Նախագահի և կառավարության գործառույթային լիազորություններով, բավա-

րար չափով հստակեցված չէ, ինչի արդյունքում կառավարությունն ամբողջական ու համալիր պատասխանատվությամբ չի իրականացնում գործադիր իշխանությանը բնորոշ գործառույթները»:

7. Սահմանադրության առանձին հոդվածներ, մասնավորապես՝ 3-րդ հոդվածի 3-րդ մաս, 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր, 8-րդ հոդվածի 2-րդ մաս, 14-րդ հոդված, 27.1-րդ հոդված, 65-րդ հոդված և այլն, առավելապես կարգախոսային բնույթ են ստացել, ինչի իրական պատճենների կազմում էական են այնպիսիք, ինչպիսիք են՝ «քաղաքական համակարգի անկատարությունը, իրավական ու քաղաքական մշակույթի պակասը, սահմանադրական հակակշիռների ու զսպումների համակարգի ոչ արդյունավետ գործողությունը»:

8. Իրավական պետության կայացման գործընթացը դեռևս լուրջ խոչընդոտների է հանդիպում՝ հենց այն հիմքով, որ դեռևս համարժեք չի երաշխավորված դատական իշխանության հակակշռող դերն իշխանության այլ ճյուղերի առնչությամբ: Ըստ էության, դատական իշխանությունը դեռևս չի ընկալվում որպես իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ հակակշռող ազդեցություն ունեցող ինքնուրույն իշխանության ճյուղ, առավելագույնը քննարկվում է իշխանության մյուս ճյուղերի կողմից դատական իշխանության նկատմամբ միջամտությունները բացառելու հարցադրումները:

Նշված հիմնախնդիրները Հայեցակարգով բացատրվում են ինչպես ժողովրդավարական ինստիտուտների դեռևս ոչ բավարար կայացվածությամբ, քաղաքական ու սահմանադրական մշակույթի ցածր մակարդակով, այնպես էլ օրենսդրական քաղաքականության մեջ ու իրավակիրառական պրակտիկայում տեղ գտած թերացումների պայմաններում: Այլ կերպ ասած, իրավամբ բարեփոխման թիրախ են ընտրված ոչ միայն զուտ իրավական կարգավորումները, այլև իրավական մշակույթը, քանզի ելակետ է ընդունվել

այն դիրքորոշումը, ըստ որի՝ առանց համարժեք իրավական մշակույթի անգամ կատարյալ իրավական ինստիտուտների միջոցով հնարավոր չէ արձանագրել համալիր սահմանադրական բարեփոխումներ:

Հայեցակարգում վերլուծվել ու առաջադրվել են նաև հիշյալ խնդիրների լուծման համար անհրաժեշտ մոտեցումները՝

1. Նախ, առանցքային է համարվում այն, որ սահմանադրական բարեփոխումները պետք է իշխանության բոլոր թևերի համար երաշխավորեն «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» եռամիասնական շղթայում անհրաժեշտ համամասնականություն, ինչպես նաև գործառույթային, հակակշռող և զսպող լիազորությունների հաշվեկշռվածություն: Գերխնդիր է համարվել. «... ստեղծել սահմանադրական երաշխիքներ ունենալու պետության գլխի լիարժեք ինստիտուտ, ուժեղ և հավասարակշռված օրենսդիր ու գործադիր իշխանության մարմիններ, անկախ ու անկողմնակալ դատարան»:

2. Առաջադրված խնդիրների լուծման գրավական է համարվում քաղաքական համակարգի բնականոն կայացումը, որին հնարավոր կլինի հասնել քաղաքական կուսակցությունների ժողովրդավարացման, դրանց ֆինանսական գործունեության հրապարակայնության սահմանադրական պահանջի ապահովման իրավական անհրաժեշտ երաշխիքների ստեղծումը: Այլ կերպ ասած, մի կողմից դրվում է կուսակցությունների կազմավորման ու գործունեության ոլորտում ժողովրդավարական սկզբունքների հետևողական կիրառումը, մյուս կողմից էական է համարվում կուսակցությունների գործունեությունը հնարավորինս թափանցի դարձնելու հարցադրումը:

3. Ինչ վերաբերում է Ազգային ժողովի օրենսդրական գործունեության և վերահսկողական դերի հետագա ամրապնդման

խնդրին, ապա Հայեցակարգով անհրաժեշտ են համարվել հետևյալ նորամուծությունները.

«- ամրապնդել Ազգային ժողովի մարմինների դերն օրենսդրական գործունեության բնագավառում,

- մեծացնել Ազգային ժողովի դերը պետական իշխանության ու կառավարման մարմինների ձևավորման գործում,

- ընդլայնել Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունների շրջանակները,

- ամրապնդել խորհրդարանական փոքրամասնության իրավունքների սահմանադրական երաշխիքները»:

4. Անհրաժեշտ է համարվել անմիջապես Սահմանադրությամբ ամրագրել նորմեր, որոնք կհստակեցնեն «գործադիր իշխանության կառուցակարգային համակարգը, դրա համակարգային փոխհարաբերությունների շրջանակը Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի հետ»: Վերջին հաշվով, նախատեսվում է բացառել այն իրավիճակը, երբ գործադիր իշխանության մեջ մտնող մի շարք մարմիններ, ըստ էության, դուրս են մնում օրենսդիր մարմնի վերահսկողությունից. «Պետք է հնարավորինս հաղթահարվի գործադիր իշխանության գործառության երկատվածությունը: Գործադիր իշխանության գործառության լիազորություններով պետք է օժտված լինի կառավարությունը՝ Հանրապետության Նախագահին վերապահելով պետության գլխին բնորոշ ու ամբողջական՝ գերազանցապես հակակշռող և զսպող լիազորություններ»:

5. Սահմանադրական մարմինների միջև ծագած սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճերը լուծելու միակ հիմքը համարվելու է իրավական եղանակը, որում առանցքային դերակատարում կվերապահվի սահմանադրական արդարադատությանը:

6. Անհրաժեշտ է ներդնել սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը, որի պարագայում կերաշխավորվի պետական իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց հանրային-իրավական պատասխանատվությունն իրենց ծրագրանպատակային գործունեության ու լիազորությունների իրականացման հարցում: Տվյալ դեպքում կարող են կիրառելի լինել ինչպես գործող արդարադատության ատյանները, այնպես էլ կարող է նախապատվությունը տրվել սահմանադրական մարմինների ներկայացուցիչներից կազմված ատյանի ձևավորմանը: Կարևորը տվյալ դեպքում այնպիսի իրավական լուծումներ առաջադրելն է, որի արդյունքում բացառվի անպատժելիության հենքով սահմանադրական խախտումների երևույթը:

7. Սահմանադրականության պահպանման ու ամրապնդման երաշխք է համարվում սահմանադրական մշտադիտարկումների ինստիտուտի ներդրումը, ինչը ենթադրում է համապատասխան կառուցակարգերի ու ընթացակարգերի ամրագրում՝ պատասխանատու դերը վերապահելով Հանրապետության Նախագահին:

Կառավարման խորհրդարանական համակարգի ընձեռած հնարավորությունները: Կիսանախագահական կառավարման համակարգի պայմաններում առաջադրվող հայեցակարգային մոտեցումների շրջանակներում կատարվելիք հնարավոր փոփոխությունները լիարժեք չեն երաշխավորում հետևյալ խնդիրների լուծումը.

«1. գործադիր իշխանության համակարգային ամբողջականության երաշխավորումը. կիսանախագահական կառավարման համակարգում Հանրապետության Նախագահը գործադիր իշխանության ոլորտում ունենում է չհակակշռված լիազորություններ՝ չունենալով համարժեք քաղաքական պատասխանատվություն:

2. Քաղաքական մենիշխանության հաղթահարումը. Նախա-

գահի, խորհրդարանի և կառավարության քաղաքական միատեղումը գործնականում անիրագործելի է դարձնում սահմանադրական հակակշիռների ու զսպումների համակարգի բնականոն ու արդյունավետ գործողությունը: Նման պարագայում խաթարվում է նաև երկու առաջնային մանդատ ունեցող ինստիտուտների կողմից դատական իշխանության և այլ մարմինների ձևավորման գործում փոխադարձ հավասարակշռման սկզբունքը:

3. Չի հաղթահարվում պետական իշխանության գերանձնավորման հնարավորությունը՝ սուբյեկտիվիզմի տարաբնույթ դրսևորումներով հանդերձ: Դա իր հերթին արգելակ է դառնում իշխանությունների իրական բաժանման ու հավասարակշռման համար, ձևավորվում են չհիմնավորված սոցիալական սպասելիքներ:

4. Այն մոտեցումները, որոնք առաջարկվում են կիսանախագահական կառավարման համակարգի պայմաններում Նախագահի՝ խորհրդարանական մեծամասնություն չունենալու դեպքում հնարավոր հակամարտությունների հաղթահարման և անիրաժեշտ կայունության ապահովման վերաբերյալ, խնդրի լիարժեք լուծում չեն երաշխավորում»:

Մյուս կողմից նշված խնդիրների բարեհաջող լուծման իրական հիմքեր է նախատեսում կառավարման խորհրդարանական ձևը՝ պայմանով, որ այն ուղեկցվի երկրի քաղաքական ուժերի միջև անհրաժեշտ քաղաքական փոխհամաձայնությամբ: Սա այն հարցերից է, որի դեպքում ընտրություն կատարելիս հիմնական դերակատար կարող են համարվել քաղաքական ուժերը:

Միաժամանակ, արձանագրվել է այն իրողությունը, որ «խորհրդարանական կառավարման ձևին անցման դեպքում հատկապես արդիական են կառավարության կայունության, խորհրդարանի վերահսկողական լիազորությունների, խորհրդարանական փոքրամասնությունների, ինչպես նաև Հանրապետության Նախա-

գահի գործառույթների և ընտրության կարգի հիմնախնդիրները: Կառավարության կայունությունն ապահովելու համար պետք է հաշվի առնել ժամանակակից պառլամենտարիզմի զարգացման փորձը, կայունությանը նպաստող այն միջոցները, որոնք իրենց արդարացրել են միջազգային պրակտիկայում (մասնավորապես՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում): Կայունությանը նպաստող միջոցներ կարող են լինել կոնստրուկտիվ անվստահության քվեն և վարչապետի ուժեղ դերը պետական կառավարման համակարգում: Խորհրդարանի լուծարումը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ ճգնաժամային իրավիճակներում Ազգային ժողովն ի վիճակի չէ ընտրել նոր վարչապետ»:

Առաջարկվող տարբերակի պարագայում սկզբունքորեն նոր դեր պետք է իրականացնի Հանրապետության Նախագահը: Ընդ որում, վերջինս պետք է ընտրվի Ազգային ժողովի կամ ավելի լայն ընտրական կոլեգիայի կողմից՝ խորհրդարանի լիազորությունների ժամկետը գերազանցող ժամկետով (մասնավորապես՝ քննության առնելով նաև սփյուռքի ներկայացուցիչների ընդգրկումը): Ենթադրվում է, որ Հանրապետության Նախագահը չպետք է ունենա վերընտրման իրավունք, որպեսզի նրա պաշտոնավարման ընթացքում ավելի լիակատար կերպով ապահովվի նրա անկախությունը քաղաքական ուժերից: Ինչպես արդեն վերևում նշվեց, նրա հիմնական առաքելությունը պետք է լինի Սահմանադրության պահպանմանը հետևելը, հակակշռող և զսպող լիազորությունների արդյունավետ գործադրումը:

Օրենսդրության գործունեության բնագավառում ընդդիմության դերի բարձրացման համար կարևոր գործոն կարող է հանդիսանալ օրգանական (սահմանադրական) օրենքների ներմուծումը, քանի որ դրանց ընդունման համար անհրաժեշտ է որակյալ մեծամասնություն: Այդ օրենքների ցանկը պետք է սպառիչ կերպով ամ-

րագրվի Սահմանադրությունում:

Խորհրդարանի լիարժեք վերահսկողական գործառույթներ իրականացնելու համար կարելի է ամրագրել քննիչ հանձնաժողովներ ստեղծելու փոքրամասնության իրավունքը, որի ստեղծման հարցում իրենց ակտիվ նախաձեռնությունը կարող են դրսևորել ընդդիմադիր ուժերը (օրինակ՝ Գերմանիայի Հիմնական օրենքի 44-րդ հոդվածի համաձայն այդ իրավունքից օգտվում է պատգամավորների մեկ քառորդը): Վերջիններիս վերահսկողական գործառույթների ոլորտից են նաև այն, որ քննիչ հանձնաժողովի նախագահը կարող է նշանակվել ընդդիմության պատգամավորների կազմից (նման կանոնակարգում կա, օրինակ, Խորվաթիայի Սահմանադրության 91-րդ հոդվածում): Հնարավոր է համարվում նաև, որ խորհրդարանական փոքրամասնությանը կարևոր դերակատարում վերապահվի, մասնավորապես, Վերահսկիչ պալատի նախագահի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի ընտրության հարցում՝ նախատեսելով այդ պաշտոնատար անձանց ընտրություն պատգամավորների ընդհանուր թվի ձայների 3/5-ով (ինչպես դա այժմ արվում է Մարդու իրավունքների պաշտպանի ընտրության ժամանակ): Չի բացառվում նաև Ազգային ժողովի մարմիններում ընդդիմության ներկայացուցչություն՝ առանց համամասնականության սկզբունքի պահպանման (օրինակ՝ Ազգային ժողովի փոխնախագահ, որոշ մշտական հանձնաժողովների նախագահում և այլն): Խորհրդարանական փոքրամասնությունների այլ իրավունքների ամրագրումը կարելի է վերապահել հատուկ օրենքի կամ Ազգային ժողովի կանոնակարգին»:

Ըստ Հայեցակարգի՝ այդպիսի բնորոշ գծեր ունեցող խորհրդարանական համակարգում.

«ա) կլինի միասնական գործադիր իշխանություն՝ վարչապետի գլխավորությամբ, առանց դուալիստական գործադիր իշխա-

նության վտանգի, հատկապես երկրի համար կենսական կարևորություն ունեցող այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են արտաքին քաղաքականությունը, ազգային անվտանգությունը և պաշտպանությունը,

բ) չի կարող լինել խորհրդարանի և պետության գլխի միջև առճակատում, քանի որ Հանրապետության Նախագահը նոր լիազորություններով կլինի վերկուսակցական անաչառ արբիտր,

գ) իշխանության գերանձնավորումը խիստ կնվազի, քանի որ վարչապետ կարող է դառնալ միայն ամենաուժեղ և հանրորեն ընդունելի քաղաքական ուժի (ուժերի) ներկայացուցիչը,

դ) չի լինի իշխանության գերկենտրոնացում գործադիր իշխանության ղեկավարի ձեռքում՝ չունենալով համարժեք քաղաքական պատասխանատվություն խորհրդարանի առջև,

ե) կառավարության քաղաքական պատասխանատվությունը խորհրդարանի առջև կնպաստի կոլեգիալ կառավարմանը,

զ) կբարձրանա խորհրդարանի քաղաքական դերը՝ ինչպես օրենսդիր, այնպես էլ վերահսկողություն ունեցող մարմնի, որտեղ պետք է էականորեն ուժեղացվի ընդդիմության դերը,

է) խորհրդարանի քաղաքական դերի բարձրացումը կնպաստի կուսակցությունների կողմից իրենց բուն գործառույթների իրականացմանը և երկրում աստիճանաբար երկբևեռ դասական քաղաքական համակարգի ձևավորմանը,

ը) երկիրը կկարողանա ավելի ճկուն դիմագրավել արտաքին քաղաքական մարտահրավերներին, քանի որ քաղաքական որոշումների ընդունման ամբողջ գործընթացը կլինի ավելի կոլեգիալ և ավելի նվազ չափով անձնավորված»:

Ընտրական իրավունքը և ընտրական համակարգը: Հայեցակարգում արձանագրված է, որ ընտրական իրավունքի սկզբունքային դրույթները, ինչպես նաև դրանց իրացման կառուցակարգե-

րը հիմնական գծերով ամրագրված են Սահմանադրությունում, սակայն դրանց որոշակի հստակեցման և վերանայման անհրաժեշտություն կա՝ հաշվի առնելով այն, որ ընթացիկ օրենսդրություն մշակելիս և իրավակիրառ պրակտիկայում անհարկի շատ են էական տարածայնությունները: Հաշվի է առնվում նաև այն, որ կառավարման ձևի փոփոխության պարագայում հարկ կլինի վերանայել ընտրական համակարգի որոշ տարրեր:

Հայեցակազում ընտրական իրավունքին վերաբերող սահմանադրական դրույթներից վերանայման կարիք ունեցող են համարվում հետևյալ խնդիրները.

«- ընտրական իրավունքի հնարավոր սահմանափակման շրջանակները,

- Ազգային ժողովի ընտրական համակարգի հիմնական գծերը,

- կենտրոնական ընտրական հանձնաժողովի կարգավիճակի սահմանումը»:

Վենետիկի հանձնաժողովի «Ընտրությունների վերաբերյալ ուղեցույցի» (CDL-AD(2002)23 rev.) համաձայն, դատապարտյալները կարող են զրկվել ընտրելու իրավունքից միայն ծանր հանցագործությունների դեպքում, ինչից բխում է, որ Սահմանադրությունում այդպիսի սահմանափակում սահմանելն իրավաչափ է:

Հայեցակարգում նշված է. «Գործող խառը ընտրական համակարգը չունի հստակ ուղղվածություն և քաղաքական փոխզիջումների արդյունք է, մի կողմից, մեծամասնական, մյուս կողմից՝ համամասնական ընտրակարգերի կողմնակից քաղաքական ուժերի միջև: Կուսակցական կարծի ցուցակները կուսակցությունների դեկավարներին փաստացի վերապահում են իրենց ցուցակի պատգամավորների ընտրության հարցը, իսկ ընտրողները որոշակի առումով օտարվում են նախընտրած թեկնածուների ընտրության

հարցում վճռորոշ ազդեցություն ունենալուց: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ կայուն ընտրական համակարգ ապահովելու համար դրա հիմնական գծերը պետք է ամրագրվեն հենց Սահմանադրությամբ, իսկ կոնկրետ կանոնակարգումները՝ օրգանական (սահմանադրական) օրենքով: Դա, մասնավորապես, հնարավորություն կտա, որպեսզի ժամանակի ընթացքում ընտրական համակարգը լիովին դրսևորի երկբևեռ քաղաքական համակարգը խթանելու իր ներուժը: Խորհրդարանի ընտրական համակարգի սահմանադրական ամրագրումը լայնորեն կիրառվում է Եվրոպական միության ինչպես հին (Բելգիա, Նիդեռլանդներ, Լյուքսեմբուրգ, Դանիա, Շվեդիա, Նորվեգիա, Իսլանդիա, Իռլանդիա, Ավստրիա, Իսպանիա, Պորտուգալիա), այնպես էլ նոր անդամ երկրներում (Էստոնիա, Լատվիա, Չեխիա)»:

Ինչ վերաբերում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանադրական կարգավիճակին, ապա հստակ ամրագրելը բխում է Սահմանադրության անփոփոխելի 2-րդ հոդվածի պահանջներից:

ԳԼՈՒԽ 6.

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԻՐԱՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում ընթացող սահմանադրական բարեփոխումների առանցքն են կազմում նաև դատական իշխանությանն առնչվող սահմանադրական կարգավորումների բարեփոխումները:

Դատական իշխանությունը պետական իշխանության ինքնուրույն և անկախ ճյուղ է, որը պատկանում է բացառապես պետական հատուկ մարմիններին՝ դատարաններին, կոչված է հատուկ դատավարական կարգով լուծելու իրավական բնույթ ունեցող սոցիալական կոնֆլիկտները, այսինքն՝ իրականացնելու արդարադատություն¹:

Ակնհայտ է, որ դատական իշխանությունը բացառիկ կարևորություն ունի ինչպես մարդու իրավունքների երաշխավորման ու պաշտպանության, այնպես էլ ընդհանուր առմամբ հասարակական հարաբերությունների սահմանադրականացման, հասարակության իրավական և քաղաքական մշակույթի զարգացման և իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սահմանադրական համակարգի կայացման տեսանկյունից: Դա պատահական չէ, քանզի վերջինիս էությունը կայանում է պետության հատուկ գործառույթի՝ արդարադատության իրականացման մեջ:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական համակարգում դատական իշխանությունը գլխավորա-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, էջ 897:

պես ունի հավասարակշռող կամ կայունացնող դեր: Նման առաքելության իրացման առաջնային նախադրյալը ոչ իրավաչափ ցանկացած ներգործությունից կամ միջամտությունից դատական իշխանության պաշտպանվածությունն է՝ դրա անկախության տեսքով: Միայն գործառության, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անհրաժեշտ ու բավարար անկախությամբ օժտված դատական իշխանությունը կարող է երկրում իրավունքի գերակայության, արդյունավետ արդարադատության և արդար դատաքննության երաշխավոր հանդիսանալ: Հետևաբար, քննարկվող ոլորտին առնչվող սահմանադրական բարեփոխումների հիմնական նպատակը պետք է լինի բավարար անկախությամբ օժտված դատական իշխանության կայացումը:

Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունը 1995 թ. Սահմանադրության ընդունումով նախաձեռնել և 2005 թ. կատարված բարեփոխմամբ շարունակել է անկախ դատական իշխանության և արդարադատության արդյունավետ համակարգի ձևավորմանն ու զարգացմանն ուղղված քայլերի իրականացումը: Մինևույն ժամանակ, հիշյալ բնագավառում առկա են դատական իշխանության գործառության անհստակություններով, կառուցակարգային անկայունությամբ, ոչ լիարժեք անկախությամբ, դատավարական ընթացակարգերի թերություններով, ինչպես նաև սուբյեկտիվ գործոններով պայմանավորված մի շարք խնդիրներ, որոնք հանգեցնում են նաև դատարանների հանդեպ հանրային վստահության, հետևաբար նաև՝ դատական իշխանության գործունակության ցածր մակարդակի, և արդյունավետ լուծումներ են պահանջում հենց Սահմանադրության մակարդակում:

Այդ առումով առաջին հերթին նշենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ դատական իշխանությանն առնչվող 6-րդ գլխի ուսումնասիրությունը վկայում է, որ վերջինիս ա-

ռանցքն են կազմում հիշյալ բնագավառի առավելապես կառուցվածքային կողմին առնչվող սահմանադրական կարգավորումները: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ, կամ 93-րդ հոդվածի համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը:

Մինչդեռ, կարծում ենք, որ սահմանադրական մակարդակում վերը նշված խնդիրների արդյունավետ լուծումը ենթադրում է առնվազն դատական իշխանության առաքելության, այն մարմնավորող կառույցների կազմակերպման, գործունեության հիմքերի և հիմնական գործառույթների սահմանադրական ամրագրում:

Այդ առումով Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովն արձանագրել է հայեցակարգում. «Վերոնշյալի սահմանադրական պատճառներից մեկն այն է, որ ՀՀ Սահմանադրության վեցերորդ գլուխն առավելապես բացահայտում է դատական իշխանության ոչ թե գործառույթային հատկանիշներն ու հնարավորությունները, այլ դրա կառուցվածքային (դատարանակազմական) կողմը:

Հետևաբար, դատական իշխանության գործառույթային ամբողջականությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի դատական իշխանության հասկացությունը, առաքելությունը, հիմնական գործառույթները, այն մարմնավորող կառույցի կազմակերպման և գործունեության հիմքերն ունենան սահմանադրական ամրագրում: Այդպիսի իրավակարգավորումը (դատարանակազմական և դատավարական ընդհանուր սկզբունքների հաշվառ-

մամբ) հիմք կծառայի նաև դատական իշխանության մարմինների համակարգի ձևավորման համար: Միաժամանակ, դրանով կբացառվեն ընթացիկ օրենքների օգնությամբ քաղաքական, տակտիկական, իրավիճակային կամ այլ նկատառումներից ելնելով դատական համակարգի կառուցվածքը փոխելու և դատական իշխանության համակարգային ամբողջականությունն ու կայունությունը խաթարելու հնարավոր փորձերը»¹:

Հարկ է նկատել, որ սահմանադրական բարեփոխումների առաջնահերթ հայեցակարգային խնդիրներից մեկն անկախ, ինքնուրույն և հաշվետու դատական իշխանության կայացումն է: Այս առումով բարեփոխումների արդյունավետությունը կապվում է ոչ թե նոր ինստիտուտների ստեղծման, այլ արդեն կայացած կառույցների կատարելագործման հետ: Այս համատեքստում կարևորվում է արդարադատության խորհրդի դերի և գործունեության արդյունավետության բարձրացումը: Այդ առումով Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը հայեցակարգում նշել է, որ սահմանադրական այս մարմինն առաջին հերթին պետք է ունենա կառուցակարգային անկախության այնպիսի մակարդակ, որով ապահովագրված կլինի ոչ իրավաչափ կամ հայեցողական ազդեցություններից:

Կարծում ենք, որ դա առաջին հերթին պայմանավորված է հիշյալ մարմնի կազմավորման կարգով ու դրան առնչվող համապատասխան սահմանադրական կարգավորումների առկայությամբ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 94.1-րդ հոդվածի համաձայն՝ արդարադատության խորհրդի կազմի

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, մշակվել է ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ. հոկտեմբեր, <http://moj.am/storage/uploads/Sahmanadrakan«barepokhumner.14.10ե.pdf>:

մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ: Արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի:

Առաջին հերթին նշենք, որ դատական իշխանության գործառույթային հատկանիշներն ու հնարավորությունները բացահայտելու հայեցակարգային տրամաբանությունը հաշվի առնելով՝ կարծում ենք, որ արդարադատության խորհրդի պարագայում նույնպես կարևոր է, որպեսզի հիշյալ մարմնի հիմնական գործառույթը, այն է՝ դատարանների և դատավորների անկախությունն ապահովելու հանգամանքը¹, ստանա սահմանադրական ամրագրում:

Ինչ վերաբերում է արդարադատության խորհրդի դերի և գործունեության արդյունավետության բարձրացման այլ կառուցակարգերին, նշենք, որ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի վերաբերյալ եզրակացությունում արձանագրել է, որ արդարադատության խորհրդում պետք է ապահովվի դատավորների հավասարակշռված ներկայացուցչություն տարբեր մակարդակներից և դատարաններից, և որ այդ սկզբունքը պետք է

¹ Այդ առումով հարկ ենք համարում հիշատակել Վենետիկի հանձնաժողովի այն դիրքորոշումը, որ Դատական բարձրագույն խորհրդի գոյության հիմնական նպատակն է դատավորների անկախության պաշտպանությունը իշխանության այլ ճյուղերի անհարկի ճնշումներից՝ դատավորների ընտրության և նշանակումների, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության հարցերում (տե՛ս Venice Commission, Opinion on the Reform of the Judiciary in Bulgaria, CDL-INF(1999)005, para. 28):

հստակորեն ամրագրվի Սահմանադրությունում¹: Հետևաբար, նպատակահարմար ենք համարում Սահմանադրության տեքստում արդարադատության խորհրդի դատավոր անդամների՝ բոլոր ատյանների դատարանները ներկայացնելու առնչությամբ իրավակարգավորման ամրագրումը:

Կարծում ենք, որ անհրաժեշտ է ապահովել նաև հիշյալ մարմնի դատավոր և այլ անդամների, մասնավորապես, իրավաբան-գիտնականների ներկայացուցչության հավասարակշռությունը: Այդ հանգամանքն արձանագրել է նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով՝ եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով)՝ նշելով, որ արդարացի հավասարակշռություն պետք է ապահովվի դատական իշխանությունը ներկայացնող անդամների և ի պաշտոնե պաշտոնավարող կամ ընտրվող այլ անդամների միջև: Արդարադատության խորհրդի ժողովրդավարական, իրավական բնույթն ապահովելու համար այլ անդամները պետք է ընտրվեն *խորհրդարանի* (ընդգծումը մերն է) կողմից համապատասխան իրավաբանական որակավորում ունեցող անձանց թվից՝ հաշվի առնելով շահերի հնարավոր բախումները: Ավելին, ընդգծվել է, որ դատական իշխանությունը ներկայացնող անդամների ճնշող գերակայությունը հիշյալ մարմնում կարող է առաջացնել մտահոգություններ «կորպորատիվ կառավարման» վտանգի առաջացման տեսանկյունից²:

¹ Տե՛ս CDL-AD(2014)027, 2014թ. հոկտեմբերի 13, Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի վերաբերյալ եզրակացություն, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով), <http://moj.am/storage/uploads/CDL-AD2014027-et.pdf>:

² CDL-AD(2007)028, JUDICIAL APPOINTMENTS // Report adopted by the Venice Commission at its 70th Plenary Session (Venice, 16-17 March 2007), 29-30:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ արդարադատության խորհրդում անհրաժեշտ է ապահովել անհրաժեշտ հավասարակշռություն հիշյալ մարմնի դատավոր անդամների և իրավաբան-գիտնական անդամների միջև: Ընդ որում, մեր կարծիքով, վերջիններս պետք է նշանակվեն Ազգային ժողովի կողմից: Ավելին, ներկայումս տարածված է այն պրակտիկան, երբ բացի դատական իշխանության ներկայացուցիչներից, քննարկվող մարմնի անդամ են դառնում ոչ միայն իրավաբան-գիտնականներ, այլ նաև պրակտիկ գործունեություն իրականացնող հեղինակավոր իրավաբաններ: Օրինակ՝ Բուլղարիայի Սահմանադրության 130-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բացի ի պաշտոնե պաշտոնավարող անդամներից, Բարձրագույն դատական խորհրդի անդամ կարող են լինել բարձր բարոյական և մասնագիտական հատկանիշներ, ինչպես նաև առնվազն 15 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող պրակտիկ իրավաբաններ¹: Սլովենիայի Սահմանադրության 131-րդ հոդվածին համապատասխան՝ Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ ընտրում է դատական խորհրդի 5 անդամներին՝ իրավունքի բնագավառի պրոֆեսորների, փաստաբանների և այլ իրավաբանների թվից²:

Կարծում ենք, որ արդարադատության խորհրդում անդամների հավասարակշռությունը *համապատասխան որակավորում ունեցող անձանց* թվից ապահովելու տեսանկյունից առավել նպատակահարմար կարող է լինել այնպիսի կարգավորումը, որը հնարավորություն կտա հիշյալ անդամներին ընտրել ոչ միայն իրավաբան-գիտնականների, այլ նաև բարձր հեղինակություն ունեցող այլ իրավաբանների թվից:

¹ <http://constcourt.bg/en/legislation>.

² <http://www.us-rs.si/en/about-the-court/legal-basis/>.

Ինչպես նշեցինք, սահմանադրական բարեփոխումների կարևորագույն հայեցակարգային հիմնադրույթներից է այն հանգամանքը, որ արդարադատության խորհուրդը պետք է ունենա կառուցակարգային անկախության այնպիսի մակարդակ, որով ապահովագրված կլինի ոչ իրավաչափ կամ հայեցողական ազդեցություններից: Կարծում ենք, որ այդ առումով չափազանց կարևոր նշանակություն ունի սահմանադրական հիշյալ մարմնի անդամների անկախության երաշխավորումը: Այդ տեսանկյունից կարևոր ենք համարում արդարադատության խորհրդի անդամների կողմից պաշտոնավարման ժամանակահատվածում այլ պաշտոն զբաղեցնելու կամ այլ վճարովի աշխատանք կատարելու հնարավորության բացառումը, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Հիշյալ տեսակետին համահունչ՝ կարծում ենք, որ արդարադատության խորհրդում պաշտոնավարման ժամանակահատվածում հիշյալ մարմնի դատավոր անդամների լիազորությունները պետք է կասեցվեն՝ վերջիններիս անկախությունն ապահովելու նպատակով:

Արդարադատության խորհրդի անկախությունը պայմանավորված է նաև խորհուրդը նախագահողի անկողմնակալության ու անկախության հանգամանքներով և այդ առնչությամբ համապատասխան իրավակարգավորումների ամրագրմամբ: Այդ առումով «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) նշել է, որ անհրաժեշտ է ապահովել, որպեսզի արդարադատության խորհրդի նախագահումն իրականացվի անկողմնակալ անձի կողմից, ով կաշկանդված չէ կուսակցական քաղաքականությամբ: Հետևաբար, խորհրդարանական պետություններում, որտեղ նախագահի (պետության գլխի) լիազորություններն առավել ձևական բնույթ են կրում, արդարադատության խորհուրդը կարող է նախագահել պետության գլուխը,

մինչդեռ (կիսա) նախագահական հանրապետություններում խորհրդի նախագահը կարող է ընտրվել խորհրդի կողմից խորհրդի ոչ դատավոր անդամների թվից: Նման լուծումը կարող է հավասարակշռություն մտցնել նախագահողի անհրաժեշտ անկախության և խորհրդում հնարավոր կորպորատիվ միտումներից խուսափելու անհրաժեշտության միջև¹:

Այդ առումով խորհրդում անհրաժեշտ հավասարակշռությունն ապահովելու տեսանկյունից առավել նպատակահարմար ենք համարում արդարադատության խորհրդի նախագահի ընտրության ռոտացիոն կարգի նախատեսումը՝ խորհրդի դատավոր և այլ անդամների թվից՝ սահմանելով պաշտոնավարման որոշակի ժամանակահատված: Նշենք, որ մի շարք երկրներում նույնպես հիշյալ մարմնի նախագահն ընտրվում է անդամների կողմից՝ խորհրդի կազմից: Օրինակ՝ Սլովենիայի Սահմանադրության 131-րդ հոդվածի համաձայն՝ խորհրդի անդամները նախագահ են ընտրում իրենց թվից: Կարծում ենք, որ Բարձրագույն դատական խորհուրդների անկախությունն ապահովելու տեսանկյունից հիշյալ մոդելն առավել նպատակահարմար է:

Ինչ վերաբերում է արդարադատության խորհրդի լիազորությունների շրջանակին, նշենք, որ կարևորագույն հանգամանքը տվյալ պարագայում այն է, որպեսզի վերջինս որոշիչ ազդեցություն ունենա դատավորների նշանակման և առաջխաղացման, ինչպես նաև նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերում: Նմանատիպ դիրքորոշում է արտահայտել նաև Վենետիկի հանձնաժողովը՝ կարևորելով հատկապես կարգապահական պատասխանատվության առնչությամբ որոշումներն անկախ

¹ Տե՛ս CDL-AD(2007)028, JUDICIAL APPOINTMENTS // Report adopted by the Venice Commission at its 70th Plenary Session (Venice, 16-17 March 2007), 35.

դատարանում բողոքարկելու հնարավորության առկայությունը¹:

Դատական համակարգի կառուցվածքին առնչվող սահմանադրական բարեփոխումների առնչությամբ նշենք, որ թեև Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից որպես հայեցակարգային հիմնադրույթ է ներկայացվել այն հանգամանքը, որ ուշադրության է արժանի նաև դատական ատյանների քանակի կրճատումը (եռաստիճանից՝ երկաստիճան)՝ երկրորդ ատյանում վերաքննության և վճռաբեկության լիազորությունները ներառելու պայմանով, միևնույն ժամանակ արձանագրվել է, որ ժամանակակից աշխարհում դատական համակարգի որևէ մոդել չունի ընդգծված նախապատվություն կամ ակնհայտ առավելություններ: Երկաստիճան, եռաստիճան կամ բարդ կառուցվածք ունեցող դատական համակարգերի ձևավորումը կարող է պայմանավորված լինել կոնկրետ երկրի տարածքային, պատմական, տնտեսական, ազգային կամ այլ յուրահատկություններով: Սակայն բոլոր դեպքերում ժողովրդավարական և իրավական պետությունում դատական համակարգը պետք է կառուցվի որոշակի օրինաչափություններից բխող հստակ սկզբունքների վրա: Ուստի դատական ատյանների տեսակը, քանակը, իրավասությունը կամ դրանց հարաբերակցությունը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել, թե դրանց ամբողջությունը որքանով կարող է երաշխավորել անձի դատական պաշտպանության իրավունքի իրացումը, դատարանի մատչելիությունը, դատավարության խնայողականությունն ու արագությունը, դատական վերանայման արդյունավետությունը, իսկ վերջնարդյունքում՝ նաև երկրում իրականացվող արդարադատության պատ-

¹ CDL-AD(2007)028, JUDICIAL APPOINTMENTS // Report adopted by the Venice Commission at its 70th Plenary Session (Venice, 16-17 March 2007), «25».

շաճ որակը¹:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից առանցքային է դիտարկվել ոչ թե դատական ատյանների քանակի հարցը, այլ այն հանգամանքը, թե կոնկրետ երկրի տարածքային, պատմական, տնտեսական, ազգային կամ այլ յուրահատկությունները հաշվի առնելով՝ որքանով վերջիններս կարող են երաշխավորել անձի դատական պաշտպանության իրավունքի իրացումը, դատարանի մատչելիությունը, դատավարության խնայողականությունն ու արագությունը, դատական վերանայման արդյունավետությունը, իսկ վերջնարդյունքում՝ նաև երկրում իրականացվող արդարադատության պատշաճ որակը: Հետևաբար, ակնհայտ է, որ անկախ այն հանգամանքից, կապահպանվի արդյոք եռաստիճան դատական համակարգը, թե անցում կլինի երկաստիճանի, բոլոր այն իրավակարգավորումները, որոնք նախատեսված կլինեն սահմանադրական բարեփոխումների շրջանակներում, ուղղված կլինեն հենց դատական իշխանության գործունակության բարձրացմանը, հնարավորություն կտան ապահովելու վերջինիս անկախությունը, արդյունքում՝ բարձրացնելու հանրային վստահությունը իշխանության հիշյալ ճյուղի ու վերջինս կրողների նկատմամբ:

Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ հետազոտության շրջանակներում նույնպես առաջին հերթին կանդրադառնանք հիշյալ բնագավառի ոչ թե կառուցվածքային, այլ գործառութային կողմին առնչվող հարցերին:

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, մշակվել է ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ. հոկտեմբեր, [http://moj.am/storage/uploads/Sahmanadrakan«barepokhumner.14.«10»».pdf](http://moj.am/storage/uploads/Sahmanadrakan«barepokhumner.14.«10»>.pdf):

Կարծում ենք, որ այդ առումով ևս ուշադրության է արժանի դատարանների գործառնության հիմքերի սահմանադրական ամրագրման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով դատական ատյաններից յուրաքանչյուրի գործունեության էությունը: Մասնավորապես, մեր կարծիքով, սահմանադրական բարեփոխումների նախագծում անհրաժեշտ է արտացոլել այն հայեցակարգային հիմնադրույթը, համաձայն որի՝ արդարադատության իրականացման հիմնական ծանրությունը կրում է դատական համակարգի առաջին ատյանը՝ որպես ցանկացած իրավական վեճ ըստ էության քննող դատարան: Ավելին, կարևոր է նաև բարձրագույն դատական ատյանի (բացի սահմանադրական արդարադատության հարցերից, քանզի տվյալ պարագայում խոսքը սահմանադրական արդարադատության բնագավառում բարձրագույն դատական ատյանին չի վերաբերում, և վերջինիս անդրադարձ կկատարվի հետազոտության ներքոհիշյալ հատվածում) հիմնական գործառնության, այն է՝ արդարադատություն իրականացնելու միջոցով համապատասխան իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու հանգամանքի սահմանադրական ամրագրումը:

«Ը դատական իշխանության կողմից իրականացվող պետական գործունեության կարևորագույն տեսակներից է սահմանադրական արդարադատությունը: Պատահական չէ, որ «Ը սահմանադրական բարեփոխումների՝ դատական իշխանությանն առնչվող առանցքային հատվածը վերաբերում է նաև սահմանադրական արդարադատության համակարգի կատարելագործմանն ու փոփոխություններին:

Սահմանադրական արդարադատությունը բացառիկ կարևորություն ունի Սահմանադրության գերակայությունը, անմիջական գործողությունը, կայունությունն ու զարգացումն ապահովելու, պետական իշխանության համակարգում լիազորությունների հարցով

առաջացած վեճերը լուծելու, մարդու սահմանադրական իրավունքները՝ որպես անմիջական գործող իրավունք ապահովելու և, որ պակաս կարևոր չէ, հասարակության ներսում առաջացած քաղաքական տարաձայնությունների իրավական կարգավորման երաշխիքներ ստեղծելու առումով: Այլ կերպ, սահմանադրական արդարադատությունն այն միջոցն ու հնարավորությունն է, որ ապահովում է հասարակության կայունությունը, զարգացման հաջողությունն ու հարընթաց բնույթը:

Սահմանադրական արդարադատությունը նաև խթան է պետական իշխանության համակարգն անընդհատ կատարելագործելու և այն հարափոփոխ հասարակական հարաբերությունների բնույթին ներդաշնակեցնելու համար:

Սահմանադրական արդարադատությունը ձևավորում է նաև պետական մտածողության ճաշակ ու անհրաժեշտ հասարակական գիտակցություն: Այն ունի լուրջ կանխարգելիչ դեր, երբ հստակ գործող սահմանադրական վերահսկողությունը ոչ միայն պետական իշխանության մարմիններին՝ այլև հասարակության յուրաքանչյուր անդամի մղում է իրավական, սահմանադրական գործելակերպի¹:

Հարկ է նկատել, որ 2005թ. իրականացված բարեփոխումները էապես ուժեղացրեցին սահմանադրական արդարադատության միջոցով անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության կառուցակարգերը: Սակայն հիշյալ բնագավառում մնացին որոշակի խնդրահարույց հարցեր, *այդ թվում՝ սահմանադրական ձևակերպումների առումով*, որոնք, մեր կարծիքով, ունեն հետագա կատարելագործման անհրաժեշտություն:

¹ Այդ մասին տե՛ս նաև Հարությունյան Գ., Մանասյան Ա., Սահմանադրական վերահսկողություն / Ոսումնական ձեռնարկ բուհերի համար (լրամշակված վերահրատարակություն), Երևան, 2015, էջ 32:

Արդեն նշեցինք, որ դատական իշխանության գործունակության ապահովման համար անհրաժեշտ սահմանադրական կարևորագույն կառուցակարգերից է հիշյալ մարմինների հիմնական գործառույթների սահմանադրական ամրագրումը: Այդ հանգամանքը վերաբերում է նաև սահմանադրական դատարանին առնչվող կարգավորումներին:

Վերը շարադրվածի տեսանկյունից նշենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 93-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը: Ակնհայտ է, որ հիշյալ մոտեցումը որդեգրելով, Սահմանադրությունը սահմանադրական դատարանի կարգավիճակը բացահայտելիս սահմանափակվել է վերջինիս միայն կառուցվածքային և ոչ գործառույթային կողմը ներկայացնելով, ինչը, ինչպես նշեցինք, ունի հետագա կատարելագործման անհրաժեշտություն:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ սահմանադրական մակարդակում պետք է հստակ ամրագրվի նաև սահմանադրական վերահսկողություն իրականացնող դատական մարմնի հիմնական գործառույթը՝ դրա իրականացման համար նախատեսելով անհրաժեշտ ու բավարար սահմանադրաիրավական երաշխիքներ:

Անկասկած, սահմանադրական դատարանի հիմնական գործառույթը Սահմանադրության գերակայության ապահովումն է, ինչը, մեր կարծիքով, պետք է արտացոլվի սահմանադրական կարգավորումների շրջանակներում¹: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ սահմանադրական դատարանի գործունեության էությունն

¹ Նմանատիպ դրույթներ են նախատեսված օրինակ, Ռումինիայի Սահմանադրության 142 (1) հոդվածով, <https://www.ccr.ro/constitutia-romaniei-2003>:

առանցքային առումով ընդգծվում է նաև Սահմանադրության կայունությունն ապահովելու բնագավառում: Սահմանադրագիտության զարգացման ժամանակակից միտումները վկայում են, որ արդի փուլում սահմանադրական դատարանի որոշումներն այլևս չեն ընկալվում որպես սոսկ իրավական ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրող փաստաթուղթ, այլ առավել շեշտադրվում է վերջիններիս՝ միասնական սահմանադրական դոկտրինի ձևավորման ու Սահմանադրության զարգացման կարևորագույն միջոց հանդիսանալու հանգամանքը: Հետևաբար, Սահմանադրության կայունության ապահովումը հանդիսանում է սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմնի կարևորագույն գործառույթներից մեկը, որպիսի հանգամանքը, մեր կարծիքով, քննարկվող մարմնի գործունեության նպատակաուղղվածությունը մատնանշելու նպատակով կարող է նույնպես իր արտահայտությունը գտնել ՀՀ սահմանադրական կարգավորումների շրջանակներում¹:

¹ Միևնույն ժամանակ, առավել կարևոր ենք համարում հիշյալ նպատակի իրականացման համար համապատասխան մշակույթի ձևավորումը, երբ սահմանադրական դատարանի որոշումներն ընկալվեն ոչ թե սոսկ որպես իրավական ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրելու, այլ նաև որպես Սահմանադրության կայունությունն ու զարգացումն ապահովելու կարևորագույն միջոց (այդ առումով տե՛ս նաև Մանասյան Ա. Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում և դրանց դերը Սահմանադրության կայունության ապահովման գործում, Երևան, 2013, էջ 55): Տվյալ համատեքստում հետաքրքիր են, օրինակ, Ալբանիայում գործող սահմանադրաիրավական կարգավորումները, համաձայն որոնց՝ սահմանադրական դատարանը Սահմանադրությանը համապատասխանությունը երաշխավորող բարձրագույն մարմինն է, որը տալիս է դրա վերջնական մեկնաբանություն (Ալբանիայի Սահմանադրության 124-րդ հոդվածի 1-ին մաս, «Ալբանիայի Հանրապետության սահմանադրական դատարանի կազմավորման և գործունեության մասին օրենքի 2-րդ հոդված»):

Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից մշակված հայեցակարգի՝ սահմանադրական արդարադատության ոլորտին առնչվող առանցքային հիմնադրույթներից մեկն այն է, որ սահմանադրական լիազորությունների հարցում առաջացած վեճերն իրավական լուծման հստակ կառուցակարգեր պետք է ունենան, և որ անհրաժեշտ է ընդլայնել սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակը՝ հնարավորություն տալով լուծել նաև սահմանադրական մարմինների միջև նրանց լիազորությունների առնչությամբ առաջացող սահմանադրական վեճերը: Այդ առումով Հանձնաժողովը մասնավորապես ընդգծել է, որ «Առկա չէ Հանրապետության Նախագահ – Ազգային ժողով, Հանրապետության Նախագահ – կառավարություն, Ազգային ժողով – կառավարություն փոխհարաբերություններում, ինչպես նաև պետական իշխանության տարբեր ինստիտուտների հարաբերություններում սահմանադրական լիազորությունների հարցով առաջացած վեճերի լուծման հստակ սահմանադրաիրավական կառուցակարգ: Իրավական պետությունում նման վեճերը պետք է լուծվեն ոչ թե քաղաքական, այլ իրավական դաշտում: ...:

Սահմանադրական բարեփոխման խնդիրներից մեկն էլ սահմանադրական կարգավորումներում առկա որոշակի բացերի վերացումն է: Նման խնդիրներ են բացահայտվել նաև սահմանադրական արդարադատության ոլորտում: Այսպես, ՀՀ Սահմանադրությունը չի նախատեսում սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների վերաբերյալ վեճերի լուծման հնարավորություն: Թեև նման վիճակը դեռևս չի հանգեցրել գործնական դժվարությունների, սակայն, հաշվի առնելով սույն բարեփոխման արդյունքում սահմանադրական մարմինների քանակի ավելացման հնարավորությունը և դրանց լիազորությունների

հարաբերակցության հավանականությունը, ապագայում ճգնաժամային իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է ընդլայնել սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակը՝ հնարավորություն տալով լուծել նաև սահմանադրական մարմինների միջև նրանց լիազորությունների առնչությամբ առաջացող սահմանադրական վեճերը»¹:

Նշենք, որ լիազորությունների հարցով իշխանության տարբեր մարմինների միջև ծագած վեճերի լուծումը դասվում է սահմանադրական դատարանների հիմնական լիազորությունների շարքին: Այդ վեճերը կարող են լինել պետական իշխանության կենտրոնական մարմինների միջև (նմանատիպ լիազորություն են իրականացնում, օրինակ՝ Ադրբեջանի, Բուլղարիայի, Վրաստանի, Գերմանիայի, Իտալիայի, Պերուի, Լեհաստանի, Ռուսաստանի, Սլովենիայի, Իսպանիայի, Տաջիկստանի սահմանադրական դատարանները), ինչպես նաև կենտրոնական ու տեղական իշխանությունների միջև (նմանատիպ լիազորություն են իրականացնում՝ օրինակ՝ Ավստրիայի, Չեխիայի, Գերմանիայի, Հունգարիայի, Իտալիայի, Ռուսաստանի, Իսպանիայի սահմանադրական դատարանները):

Օրինակ՝ Ավստրիայում սահմանադրական դատարանը լուծում է պետության բարձրագույն մարմինների (երկրի Նախագահ, կառավարություն, Հողերի կառավարություններ, նահանգապետեր, Վիեննայի քաղաքապետարանի ղեկավարություն և այլն) ղեկավարների գործունեության սահմանադրականության հարցերով առաջացած վեճերը, տարբեր դատարանների և դատարանների ու վարչական մարմինների միջև ծագած վեճերը, իշխանության տար-

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, մշակվել է ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ. հոկտեմբեր, <http://moj.am/storage/uploads/Sahmanadrakan«barepokhumner.14.«10».pdf>:

բեր մարմինների միջև առաջացած իրավական վեճերը, կենտրոնական իշխանության և Հողերի ու վերջիններիս միջև առաջացած վեճերը և այլն:

Այդ առումով հետաքրքիր է նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրինակը, որտեղ Դաշնային սահմանադրական դատարանը լուծում է գործեր՝ կապված Հիմնական օրենքի մեկնաբանման հետ՝ պայմանավորված վեճերով, որոնք առաջանում են գերագույն դաշնային մարմինների կամ այլ մասնակիցների իրավունքների ու պարտականությունների հարցերով, և որոնք այդ իրավունքներն ստացել են Հիմնական օրենքով կամ բարձրագույն դաշնային մարմնի կանոնակարգով: Դաշնային սահմանադրական դատարանը լուծում է գործեր նաև, երբ տարակարծություն կամ կասկած կա դաշնային իրավունքի կամ Հողերի իրավունքի և Հիմնական օրենքի ձևական կամ փաստական համապատասխանության հարցում, կամ Հողերի իրավունքի և դաշնային իրավունքի համապատասխանության հարցում, երբ կարծիքները չեն համընկնում Դաշնային և Հողերի կառավարությունների իրավունքների ու պարտականությունների հարցում, մասնավորապես, Հողերի կողմից Դաշնային իրավունքը կիրառելիս և Դաշնային վերահսկողությունն իրականացնելիս, Դաշնության ու Հողերի միջև, առանձին Հողերի միջև, դրանց ներսում հանրային իրավական վեճեր առաջանալիս եւ այլն:

Ռուսաստանի Դաշնությունում հիշյալ հարցով սահմանադրական դատարան դիմելու հնարավորություն ունեն վեճի մասնակից պետական իշխանության մարմինները, եթե՝

1) վիճարկվող իրավասությունը սահմանվում է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությամբ,

2) վեճը չի վերաբերում դատարաններին հարցի ենթակայությանը կամ ընդդատությանը,

3) վեճը չի լուծվել և չի կարող լուծվել այլ կարգով,

4) դիմողը ակտի հրապարակումը կամ իրավական գործողության կատարումը կամ ակտի հրապարակումից կամ իրավական գործողության կատարումից խուսափելը համարում է պետական իշխանության մարմինների միջեւ ՌԴ Սահմանադրությամբ ամրագրված իրավասությունների տարանջատման խախտում,

5) դիմողը նախկինում գրավոր դիմել է ՌԴ Սահմանադրությամբ ամրագրված պետական իշխանության մարմիններին՝ նրանց կողմից ՌԴ Սահմանադրությամբ եւ պայմանագրերով ամրագրված՝ դիմողի իրավասության խախտման կամ հիշյալ մարմինների կողմից իրենց իրավասության շրջանակներում որեւէ պարտականության կատարումից խուսափելու առնչությամբ,

6) գրավոր դիմումը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում դրանում ամրագրված խախտումները չեն վերացվել, ...:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանը լիազորությունների հարցերով վեճերը քննում է բացառապես ՌԴ Սահմանադրությամբ սահմանված՝ պետական իշխանության՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների տարանջատման եւ պետական իշխանության դաշնային մարմինների միջեւ իրավասության տարանջատման, ինչպես նաեւ ՌԴ Սահմանադրությամբ, դաշնային եւ այլ պայմանագրերով ամրագրված՝ ՌԴ պետական իշխանության եւ սուբյեկտների պետական իշխանության մարմինների միջեւ, ՌԴ սուբյեկտների բարձրագույն պետական մարմինների միջեւ իրավասությունների տարանջատման տեսանկյունից («ՌԴ Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքի 92-95-րդ հոդվածներ)¹:

¹ Տե՛ս նաև Հարությունյան Գ., Մանասյան Ա., Սահմանադրական վերահսկողություն / Ոսումնական ձեռնարկ բուհերի համար (լրամշակված վերահրատարակություն), Երևան, 2015, էջ 137-139:

Ռումինիայի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի «e» կետը սահմանում է, որ սահմանադրական դատարանը լուծում է պետական մարմինների միջև սահմանադրական բնույթի վեճերը, Հանրապետության Նախագահի, Պառլամենտի երկու պալատների նախագահներից մեկի, Վարչապետի, կամ Մագիստրատուրայի գերագույն խորհրդի նախագահի (նշված մարմինը նման է ՀՀ արդարադատության խորհրդին) դիմումի հիման վրա¹:

Ալբանիայի Հանրապետության Սահմանադրության 131-րդ հոդվածի «ջ» կետի համաձայն՝ սահմանադրական դատարանը լուծում է պետական մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև առաջացած լիազորությունների վերաբերյալ վեճերը²: Իսկ «Սահմանադրական դատարանի կազմավորման և գործունեության մասին» օրենքի 54-րդ հոդվածին համապատասխան՝ հիշյալ հարցով դատարան կարող է դիմել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը որը վեճի կողմ է հանդիսանում, կամ ուղղակիորեն առնչվում է նշված վեճին³:

Սլովենիայի Հանրապետության Սահմանադրության 160-րդ հոդվածը սահմանում է, որ սահմանադրական դատարանը լուծում է՝

- պետական կառավարման մարմնի և տեղական ինքնակառավարման համայնքների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման համայնքների միջև լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերը,

- դատարանների և պետական մարմինների միջև լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերը,

¹ <http://www.cdep.ro/pls/dic/site.page?den=act2,2&par1=5#t5c0s0sba142>.

² <http://www.gjk.gov.al/web/«constitution»83.pdf>.

³ <http://www.gjk.gov.al/web/law.nr.8577.date.10.02.2000.84.pdf>.

- Ազգային ժողովի, Նախագահի և Կառավարության միջև լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերը¹:

Իսկ «Սլովենիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 61-րդ հոդվածը նախատեսում է, որ Դատարանների և պետական մարմինների, ինչպես նաև Ազգային ժողովի, Նախագահի և Կառավարության միջև լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերի դեպքում, այն պետական մարմինը, որը գտնում է, որ առաջացել է լիազորությունների վերաբերյալ վեճ, կարող է դիմել սահմանադրական դատարան: Նշյալ կարգավորումները, ըստ էության, (*mutatis mutandis*) տարածվում են նաև Պետական կառավարման մարմնի և տեղական ինքնակառավարման համայնքների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման համայնքների միջև լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերի դեպքում²:

Ինչպես նշեցինք, Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից ներկայացված բարեփոխումների հայեցակարգում նույնպես կարևորվել է հիշյալ հիմնահարցը: Հանձնաժողովը մասնավորապես ընդգծել է, որ պետք է ներդրվի պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական լիազորությունների հարցով առաջացած վեճերի իրավական լուծման գործուն համակարգ: Ավելին, սահմանադրական մակարդակում պետք է առավելագույնս բացառվեն համակարգային հակամարտությունները, իրավակարգավորման գերագույն խնդիրը պետք է լինի գործառույթային դինամիկ ներդաշնակության երաշ-

¹ <http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/UNTC/UNPAN014895.pdf>.

² <http://www.us-rs.si/en/about-the-court/legal-basis/constitutional-court-act/>.

խավորումը¹:

Կարծում ենք, որ քննարկվող լիազորության ամրագրման արդյունավետ տարբերակ կարող է լինել լիազորությունների հարցով իշխանության տարբեր մարմինների միջեւ ծագած վեճերի լուծումը՝ կապված Հիմնական օրենքի մեկնաբանման հետ:

Սահմանադրական արդարադատությանն առնչվող բարեփոխումների տեսանկյունից բացառիկ կարևորություն ունի նաև անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտի կատարելագործումը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է, այսպես կոչված, «նորմատիվ սահմանադրական գանգատի» ինստիտուտը², երբ վիճարկման է ենթակա ոչ թե հիմնական իրավունքները խախտող անհատական ակտը, այլ կիրառված նորմատիվ ակտը: Ավելին, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված հիշյալ ինստիտուտը կրում է խիստ սահմանափակ բնույթ, և անհատները սահմանադրական

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, մշակվել է ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ. հոկտեմբեր, [http://moj.am/storage/uploads/Sahmanadrakan«barepokhumner.14.«10»».pdf](http://moj.am/storage/uploads/Sahmanadrakan«barepokhumner.14.«10»>.pdf):

² CDL-AD(2010)039rev Study on individual access to constitutional justice, paragraph 77.

դատարան կարող են դիմել միայն՝

- 1) կոնկրետ գործով,
- 2) երբ առկա է դատարանի վերջնական ակտը,
- 3) սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները,

րը,

4) վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

Առաջին հերթին հարկ է նկատել, որ ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված կարգավորումների համաձայն՝ անհատը կարող է վիճարկել համապատասխան ակտով իր նկատմամբ կիրառված միայն *օրենքի* դրույթի սահմանադրականությունը: Կարծում ենք, որ հիշյալ կարգավորումը մեծապես խոչընդոտում է հիմնական իրավունքների արդյունավետ պաշտպանությանը, քանզի մեծ թիվ են կազմում նաև այն իրավիճակները, երբ քննարկվող իրավունքները խախտվում են ոչ թե օրենքի դրույթի, այլ Սահմանադրությանը հակասող այլ նորմատիվ ակտերի, օրինակ՝ կառավարության որոշումների կիրառմամբ: Հետևաբար, առավել նպատակահարմար ենք համարում Սահմանադրությամբ այնպիսի կարգավորման ամրագրումը, որը հնարավորություն կտա անհատական գանգատի միջոցով վիճարկելու ոչ միայն օրենքի, այլ նաև այլ նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականությունը:

Հիշյալ տրամաբանությունն է ընկած մի շարք այլ պետություններում քննարկվող ինստիտուտին առնչվող սահմանադրական կարգավորումների հիմքում: Օրինակ՝ Լեհաստանի Սահմանադրության 79-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքով սահմանված սկզբունքներին համապատասխան՝ յուրաքանչյուր ոք, երբ խախտվել են նրա սահմանադրական իրավունքները և ազատությունները, կարող է դիմել Սահմանադրական տրիբունալ՝ վիճարկե-

լով այն օրենքի կամ այլ նորմատիվ ակտի սահմանադրականությու-
նը, որի հիման վրա դատարանը կամ հանրային կառավարման
մարմինը կայացրել է վերջնական որոշում Սահմանադրությամբ
ամրագրված նրա իրավունքների, ազատությունների կամ պար-
տականությունների առնչությամբ¹:

Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ հիմնական ի-
րավունքների պաշտպանության կառուցակարգերը չեն կարող
հանդիսանալ արդյունավետ բոլոր այն դեպքերում, երբ սույն նոր-
մատիվ ակտի ձևակերպումն է քննության առարկա դառնում սահ-
մանադրական արդարադատության շրջանակներում, իսկ վերջի-
նիս կիրառումն ընդհանրապես չի ընդգրկվում սահմանադրական
գանգատի համապատասխան ինստիտուտի համատեքստում և
քննարկման առարկա չի դառնում սահմանադրական դատավա-
րության ընթացքում²: Պատճառն այն է, որ հաճախ իրավունքի
խախտման հիմքում ընկած է լինում ձևակերպման առումով սահ-
մանադրական հանդիսացող նորմատիվ ակտի՝ Սահմանադրու-
թյանը հակասող մեկնաբանումն ու կիրառումը: Հետևաբար, կար-
ծում ենք, որ հիմնական իրավունքների արդյունավետ պաշտպա-
նությունը ենթադրում է նաև հիշյալ հանգամանքները հաշվի առ-
նելու և դրանք գնահատելու անհրաժեշտություն:

Քննարկվող համատեքստում հիշատակման է արժանի Հա-
յաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ 25
փետրվարի 2011թ. թիվ ՍԴՈ-943 որոշումը, որով արձանագրվեց,
որ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրք-
որոշումները կոչված են իրավակիրառական պրակտիկայում ապա-

¹ <http://trybunal.gov.pl/en/about-the-tribunal/legal-basis/the-constitution-of-the-republic-of-poland/>.

² Այդ մասին տե՛ս նաև CDL-AD(2010)039rev Study on individual access to constitutional justice, paragraph 77.

հովելու Հայաստանի Հանրապետության Սահմանադրության առավել ամբողջական և միակերպ ընկալումն ու սահմանադրական օրինականությունը, իրավակիրառական պրակտիկան նպատակամղելու նորմատիվ ակտերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան ընկալելու և կիրառելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ ընդգծվեց, որ վիճարկվող ակտը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելիս սահմանադրական դատարանը հաճախ մեկնաբանելով վիճարկվող իրավանորմերը՝ տալիս է դրանց սահմանադրաիրավական բովանդակությունը՝ որոշման եզրափակիչ մասում ճանաչելով այդ նորմերի համապատասխանությունը Սահմանադրությանը կամ համապատասխանությունը Սահմանադրությանը՝ իրավական որոշակի դիրքորոշումների շրջանակում, կամ մասամբ՝ որոշակի իրավակարգավորման շրջանակում, դրանցով իսկ մատնանշելով.

- իրավական այն սահմանները, որոնց շրջանակներում պետք է ընկալվի և կիրառվի տվյալ նորմը,

- իրավական այն սահմանները, որոնց շրջանակներից դուրս կիրառվող կամ մեկնաբանվող տվյալ նորմը կհանգեցնի հակասահմանադրական հետևանքների,

- սահմանադրաիրավական այն չափորոշիչները, որոնց հիման վրա հանրային իշխանության իրավասու մարմինը պարտավոր է ապահովել տվյալ նորմի լիարժեք կիրառման լրացուցիչ իրավակարգավորումներ¹:

Շեղանաբար, սահմանադրական դատարանի որոշումն անհնար է լիարժեք կատարել առանց վերը նշված իրավական դիրք-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ 25 փետրվարի 2011թ. ՍԴՈ-թիվ 943 որոշում, www.concourt.am:

րոշումները հաշվի առնելու¹, ինչն իր հերթին ենթադրում է, որ պարտադիր կատարման են ենթակա սահմանադրական դատարանի որոշման ոչ միայն եզրափակիչ, այլ նաև պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Այդ է պատճառը, որ ի կատարումն Հայաստանի Հանրապետ-

¹ Այդ առումով հիշատակենք Լիտվայի Սահմանադրական դատարանի պրակտիկան, որն արձանագրել է, որ իր որոշումները կազմում են ընդհանուր ամբողջություն: Եզրափակիչ մասը հիմնված է պատճառաբանական մասի փաստարկների վրա: Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում ներկայացված Սահմանադրության դրույթների ընկալումը և այլ իրավական փաստարկները պարտադիր են համապատասխան ակտեր ընդունող մարմինների՝ Սեյմի, Հանրապետության Նախագահի, Կառավարության համար նոր օրենքներ ու այլ իրավական ակտեր ընդունելու կամ դրանք փոփոխելու ընթացքում: Այսպիսով, Սահմանադրական դատարանի որոշման ոչ թե եզրափակիչ մասն է լեզիտիմացնում և օրինականացնում պատճառաբանական մասը, այլ հակառակը՝ եզրափակիչ մասում ներկայացված որոշումը հանդիսանում է սահմանադրական փաստարկման տրամաբանական ու, հետևաբար, իրավական առումով անխուսափելի շարունակությունը և ավարտը (տե՛ս Decision of 12 January 2000, <http://www.lrkt.lt/dokumentai/2000/d000112.htm>, Ruling of 30 May 2003, <http://www.lrkt.lt/dokumentai/2003/r030530.htm>, Constitutional justice in Lithuania. Vilnius, 2003, էջ 225-222): ՌԴ Սահմանադրական դատարանը նույնպես բազմիցս անդրադարձել է իրավական դիրքորոշումների պարտադիր լինելու հանգամանքին՝ ամրագրելով, որ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները պարտադիր են և գործում են անմիջականորեն: Դրանք պարտադիր են պետական իշխանության բոլոր ներկայացուցչական, գործադիր ու դատական մարմինների, ինչպես նաև իրավակիրառողների համար: Ավելին, Դատարանն արձանագրել է, որ անթույլատրելի է օրենսդրի կողմից ոչ միայն Սահմանադրական դատարանի որոշումների, այլ նաև վերջինիս իրավական դիրքորոշումների հաղթահարումը: ՌԴ Սահմանադրական դատարանում վիճարկված նորմատիվ ակտերի դրույթները վերարտադրող նորմերը կարող են մեկնաբանվել միայն Դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումների հիման վրա (տե՛ս Кряжков В. А., Кряжкова О. Н. Правовые позиции Конституционного суда РФ в его интерпретации // Государство и право, 2005, N 11, էջ 13):

տության սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-943 որոշման՝ 26 հոկտեմբերի 2011թ. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 8-րդ մասում կատարվեց լրացում, որը նախատեսեց, որ սահմանադրական դատարանը կարող է ընդունել ոչ միայն վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու և վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշումներ, այլ նաև վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը՝ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշում: Ավելին, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասը սահմանեց, որ հիշյալ հոդվածում նշված գործերով՝ դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ *սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտել է, որ այդ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով: 26 հոկտեմբերի 2011թ. կատարված փոփոխությունների արդյունքում նմանատիպ դրույթներ են ամրագրվել նաև ՀՀ դատավարական օրենսգրքերով, համաձայն որոնց՝ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման հիմք են այն դեպքերը, երբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմա-*

նադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ¹:

Կարծում ենք, որ նշված տրամաբանությունը պետք է ընկած լինի նաև ՀՀ սահմանադրական կարգավորումների ու դրանց զարգացման հիմնական ուղղությունների հիմքում՝ անհատական գանգատի ինստիտուտի միջոցով հիմնական իրավունքների ամբողջական պաշտպանություն ապահովելու նպատակով:

Մինևս ժամանակ հարկ ենք համարում նկատել, որ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) բազմիցս արձանագրել է, որ վերջինս կողմնակից է ամբողջական սահմանադրական գանգատի ինստիտուտին՝ ոչ միայն այն պատճառով, որ այդ ինստիտուտն ապահովում է սահմանադրական իրավունքների ամբողջական պաշտպանություն, այլ նաև այն պատճառով, որ վերջինս սուբսիդիար բնույթ է ձեռք բերում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից տրամադրվող պաշտպանության տեսանկյունից, և մարդու իրավունքներին առնչվող խնդիրների լուծումն ապահովվում է ազգային մակարդակում: Ամբողջական սահմանադրական գանգատն անկասկած ապահովում է սահմանադրական արդարադատության ամենամբողջական մատչելիությունը անհատների համար, հետևաբար նաև՝ մարդու իրավունքների ամենամբողջական պաշտպանությունը²:

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33.-րդ հոդվածի 1-ին կետ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ:

² CDL-AD(2010)039rev Study on individual access to constitutional justice, paragraphs 3, 79-80.

Ավելին, մի շարք պետություններում իրականացվող՝ սահմանադրական արդարադատությանն առնչվող բարեփոխումների առնչությամբ ընդգծվել է, որ պետք է ներդրվի անհատական ակտերի միջոցով մարդու իրավունքների բոլոր խախտումների առումով ամբողջական սահմանադրական գանգաղի ինստիտուտ¹: Վենետիկի հանձնաժողովը նշել է նաև, որ կարևոր է հստակ ամրագրել, որ սահմանադրական դատարանն ունի անհատական ակտերը (ինչպես վարչական, այնպես էլ դատական) անվավեր ճանաչելու, վարույթի վերաբացում պահանջելու և անհրաժեշտության դեպքում փոխհատուցում նախատեսելու իրավասություն²:

¹ CDL-AD(2013)034 Opinion on Proposals Amending the Draft Law on the Amendments to the Constitution to strengthen the independence of judges of Ukraine, paragraph 11.

² CDL(2015)024, DRAFT COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS, REPORTS AND STUDIES ON CONSTITUTIONAL JUSTICE, paragraph 5.2.1.

ԳԼՈՒԽ 7.

ԱՆՄԻՋԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հարաքվեն, որպես ժողովրդի կողմից անմիջականորեն իշխանությունն իրականացնելու սաղմեր դիտարկելը, պատմությանը վաղուց են հայտնի: Թեպետ, իրավագետների մեծ մասը հակված են, որպես այդ ինստիտուտի ծագման սկզբնափուլ համարել 15-րդ դարի կեսերը, այնուամենայնիվ, վերջինիս առանձին բաղադրիչների կարելի է հանդիպել շատ ավելի վաղ շրջանում: Պատմաքաղաքական տարբեր դարաշրջաններում հանրաքվեն կոչված է եղել լուծելու արտաքուստ ժողովրդաիշխանության կայացմանը նպաստելու, իսկ գործնականում նաև ավելի սահմանափակ՝ ներքին ու արտաքին տարաբնույթ շահերին ծառայելու, այդ թվում պետության ինքնիշխանությունը երաշխավորելու խնդիր:

Հանրաքվեի անհրաժեշտության և իրավաչափության առնչությամբ խիստ տարբեր, անգամ իրարամերժ տեսությունների պարագայում, հիմքեր կան պնդելու, որ այն, այս կամ այն չափով, ընդունված է աշխարհի պետությունների մեծ մասում, իսկ կիրառման լայն պրակտիկա է արձանագրվել, հատկապես, Շվեյցարիայում, Նորվեգիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Դանիայում, Ճապոնիայում, Գերմանիայում, Շոտլանդիայում, Ուելսում, Իտալիայում, Իռլանդիայում, Բրազիլիայում և այլն: Հանրաքվեի նկատմամբ տեսական դիրքորոշումների միասնականության բացակայությունը բնորոշ է նաև արդի իրավաքաղաքական զարգացումներին: Որպես կանոն, հանրաքվեի հակառակորդները պնդում են, որ առավել արդյունավետ կարող է գործել արհեստավարժության որոշակի չափանիշների բավարարող ներկայացուցչական ժողովրդաիշխանությունը, իսկ ժողովուրդն իր պատրաստվածության աստիճանով

ի գորու չէ հաղթահարելու օրինաստեղծ գործունեության բարդությունները: Հանրաքվեի կողմնակիցները, չնսեմացնելով ներկայացուցչական ժողովրդաիշխանության նշանակությունը և, միաժամանակ, չգերազնահատելով անմիջական ժողովրդաիշխանության արժեքը, հակված են այն դիրքորոշմանը, ըստ որի՝ ներկայացուցչական ժողովրդաիշխանությունը չի կարող բոլոր դեպքերում ու անվերապահորեն գերծ մնալ խմբային շահերին նախապատվություն տալու նկրտումներից, որպիսի պարագայում մի շարք էական հարցադրումներով իրավական քաղաքականության ուղենիշները բացառապես հանրաքվեի միջոցով լուծելը դառնում է անխուսափելի:

Ինչպես նկատում են բազմաթիվ իրավագետներ, արդի դարաշրջանում ներկայացուցչական մարմինների գործունեությունում խմբային շահերն ավելի ու ավելի են դառնում ազդեցիկ, որպիսի պարագայում էլ ավելի է ընդգծվում հանրաքվեի՝ ինստիտուտի արժեքը:

Ներկայումս հանրաքվեն դիտարկվում է նաև խորհրդարանական փոքրամասնության իրական քաղաքական կշիռն առավել զգալի դարձնելու արդյունավետ միջոց, ինչն ուղեկցվում է այդ ուժերին հանրաքվե նախաձեռնելու և քաղաքական հավասարակշռվածություն ապահովելու հիրավի գործնական իրավական երաշխիքներ վերապահելով:

Բոլոր դեպքերում, ամփոփելով հանրաքվեի առնչությամբ

¹ «Հանրաքվե» եզրույթը սույն հոդվածում կիրառվել է լայն իմաստով՝ ընդգրկելով նաև «պլեբիսցիտ» եզրույթը, ինչը պայմանավորված է այն մոտեցմամբ, որ սահմանադրական երաշխիքների տեսանկյունից այդ երկու ինստիտուտները նույնական են իրենց իմաստային ուղղվածությամբ. առավել հանգամանորեն այդ խնդրին անդրադարձ կա հետևյալ աշխատությունում՝ Крюковских А.К., Словарь исторических терминов. М.: «Юрист»-1987г., 356 էջ:

ձևավորված գիտագործնական մոտեցումները, կարելի է փաստել, որ հանրաքվեն առավելապես դիտարկվում է, որպես ներկայացուցչական ժողովրդավարության հակակշիռ, սակայն այն հարցադրումներին, թե կոնկրետ ի՞նչ սահմաններում կարող է այդ հակակշիռը կյանքի կոչվել, թույլատրելի համարվել, ինչպիսի՞ հարցեր կարող են կարգավորվել բացառապես հանրաքվեի միջոցով, հանրաքվեն նախաձեռնելու լիազորությունը կարո՞ղ է, արդյոք, վերապահվել միայն իշխանության մարմիններին և այլն, դեռևս միասնական և սպառիչ պատասխաններ չեն տրվել: Կարծում ենք, որ հիշյալ հարցադրումներին հիրավի համարժեք մոտեցումներ ձևավորելուն մասամբ խոչընդոտել է այն, որ հանրաքվեին նվիրված տեսություններում դեռ վերջերս անհարկի ամբողջ ծավալով նույնացվում էին ընտրական համակարգն ու հանրաքվեն: Ի դեպ, այս մտայնությունն անփոփոխ է մնացել նաև հասարակության ինքնագիտակցության մեջ¹:

Միաժամանակ, հայրենական փորձագետների կողմից իրականացված սոցիոլոգիական հարցումների և դրանց վերլուծության արդյունքների համաձայն, հանրաքվեի՝ զուտ գործնական կտրվածքով հաջողության գրավական է համարվում հասարակության ինքնագիտակցությունը. «... եթե քաղաքացիական հասարակությունը լինի գաղափարների կրող, ունենա բարձր իրավագի-

¹ Բնորոշ է այն, որ «Հայաստանի քաղաքական գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացում» Ծրագրի շրջանակներում հրապարակված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների համաձայն (APR Group, EUROPEAN endowment for democracy / «Հայաստանի քաղաքական գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացում» Ծրագիր – ՀՀ սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ հետազոտության արդյունքները, Երևան, 2014, 140 էջ:), «... հանրաքվեն ընտրություններից չի տարբերվում, քանի որ քվեարկությունը նույն կերպ է ընթանում, ընտրական հանձնաժողովները, վերահսկողական մեխանիզմները նույնն են», էջ 79:

տակցություն, հնարավոր կլինի խուսափել շատ ռիսկերից»¹:

Սույն հոդվածում մենք խնդիր չեն դրել համալիր կերպով բացահայտելու այդ ինստիտուտի ձևավորման ու զարգացման ողջ ընթացքն ու դրա միտումները, այլ առանձնացրել ենք այն հարցադրումները, որոնք գիտագործնական կտրվածքով ձեռք են բերել աննախադեպ արդիականություն՝ հատկապես, կապված ներկայումս երկրում սկիզբ առած սահմանադրաիրավական բարեփոխումների համատեքստում:

Հանրաքվեի ինստիտուտը հայրենական սահմանադրական մշակույթում ձևավորվել է, որպես Սահմանադրության ընդունման և դրանում փոփոխություններ կատարելու բացառիկ իրավական եղանակ: Միաժամանակ, այն ամրագրվել է, որպես օրենքներ ընդունելու այլընտրանքային միջոց (Սահմանադրության 112-րդ հոդված), ընդ որում, ճշգրտված չէ հանրաքվեով ընդունման ենթակա օրենքների շրջանակը: Բացի այդ, օրենքները հանրաքվեի դնելու նախաձեռնության իրավասությունը վերապահվել է միայն Ազգային ժողովին ու կառավարությանը: Այսպիսով, հայրենական իրավական համակարգի ձևավորման համեմատաբար վաղ փուլում հանրաքվեն բացառապես ընկալվել է, որպես իրավաստեղծ գործունեության *սահմանափակ* եղանակ:

Հետագա օրենսդրական զարգացումները հանգեցրին հանրաքվեի ինստիտուտի բաղադրիչների ընդլայնմանը, մասնավորապես, 2008թ. դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքով ամրագրվեց նշված ինստիտուտի առավել ընդգրկուն բնորոշում. «Հանրաքվեն (համաժողովրդական քվեարկությունը, այսուհետ՝ հանրաքվե) ժողովրդի կողմից անմիջականորեն իշխանության իրականացումն է՝ Սահմանադրություն ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու, օրենքներ ընդունելու, ինչպես նաև պետական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքը

¹ Տե՛ս նույն աղբյուրը՝ էջ 81:

բացահայտելու եղանակով»։ Հիշյալ օրենսդրական ակտով, ըստ էության, առաջադրվեց «խորհրդատվական հանրաքվեի» ինստիտուտը։ Ընդ որում, արդեն այդ շրջանում իրավագետների ու քաղաքական գործիչների շրջանում միասնական չընկալվեց նշված ինստիտուտի իրավաչափության հարցը, ինչը ևս անխուսափելի դարձրեց հանրաքվեի առնչությամբ նոր իրողությունների հաշվառմամբ տեսական համակողմանի հետազոտություններ կատարելու և հնարավորինս համարժեք լուծումներ առաջադրելու անհրաժեշտությունը։

Ներկայիս սահմանադրաիրավական զարգացումների համատեքստում հանրաքվեի, որպես անմիջական ժողովրդաիշխանության դերակատարումը դիտարկվում է իշխանությունների ճյուղերի հակակշիռների հարթության վրա, մասնավորապես, այն միտված է թույլ չտալու ներկայացուցչական իշխանությանն իրկանացնելու չհավասարակշռված, ժողովրդավարական գործընթացների վրա հնարավոր բացասական ազդեցությունը։

Հանրաքվեի իրավաքաղաքական էվոյուցիան ցույց է տալիս, որ այն, հատկապես, 20-րդ դարի սկզբներին, հիմնականում, ընկալվել է որպես խորհրդարանի վերին պալատին համարժեք, դրան փոխարինող ինստիտուտ։ Այդ շրջանում իրավագիտության մեջ տարածված էր այն մտացումը, ըստ որի՝ հանրաքվեն գործում է խորհրդարանի վերին պալատի նման, սակայն առավել պահպանողական է։ Բնորոշ է այն, որ դեռևս 1907թ. Անգլիայում առաջնահերթ օրակարգային հարց էր դարձել «իր կենսունակությունը» կորցրած լորդերի պալատը հանրաքվեով փոխարինելու նախաձեռնությունը, իսկ 1953թ. Դանիայում խորհրդարանի վերին պալատի լուծարման անհրաժեշտությունը հիմնավորվել է նույն տարում հանրաքվեի ինստիտուտը ներդնելու նախաձեռնությամբ¹։ Ան-

¹ Առավել հանգամանորեն տե՛ս, օրինակ, Duverger M., Institutions, politiques et droit constitutionnel, Paris, 1970.

կախ հանրաքվեի կիրառման սահմաններից ու այդ ինստիտուտի բովանդակային կազմի վերաբերյալ պատկերացումներից, այն անվիճելիորեն դիտարկվում է, որպես ժողովրդավարական իրավական արժեք:

Ժողովրդավարության կայացման ներկայիս փուլում երկրում, թերևս, անմիջական ժողովրդավարության այս եղանակն ի զորու կլինի նպաստելու իշխանությունների հավասարակշռմանը, քաղաքական ուժերի այնպիսի հարաբերակցությանը, որի դեպքում կնվազի իշխանության գերկենտրոնացումը մեկ քաղաքական ուժի ձեռքում: Մասնավորապես, հանրաքվեն հնարավոր է պետական իշխանության այնպիսի առանցքային ոլորտում, ինչպիսին օրինաստեղծ գործունեությունն է, այն հնարավորություն է տալիս արմատապես ընդլայնելու քաղաքական փոքրամասնությունների դերակատարումը, սոցիալական որոշակի խմբերի իրական ազդեցությունը և այլն:

Միաժամանակ, հանրաքվեին նոր որակներ հաղորդելը կարող է նպաստել պետության անվտանգության կտրուկ բարելավմանը, հատկապես, արտաքին ուժերի ոչ իրավաչափ ներգործությունը կանխարգելելու ու հավակնություններն էապես չափավորելու տեսանկյունից:

Ներկայումս հանրաքվեի ինստիտուտի էության և, ընդհանրապես, անհրաժեշտության առնչությամբ լուրջ տարածայնություններ, անգամ իրարամերժ տեսակետներ են ձևավորվել: Քննարկումները դեռևս հստակ հանգրվանի չեն հասել, սակայն անգամ այդ պարագայում հնարավոր է առանձնացնել որոշակի գիտագործնական ու արքսիոլոգիական նշանակություն ունեցող օրինաչափություններ ու արժեքներ: Նախ, նկատվում է հանրաքվե անցկացնելու աճի նկատելի միտում: Ընդ որում, վերջին տասնամյակում հանրաքվեին են դիմել անգամ այնպիսի երկրներում, որոնցում ավանդաբար այն ընդունված չի եղել (Բելգիա, Ասիական

երկրներ և այլն), ինչի արդյունքում ներկայումս արդեն 50-ից ավել պետություններ հանրաքվեն ամրագրել են անմիջապես Սահմանադրությամբ:

Հանրաքվեի անհրաժեշտությունը հիմնականում բացատրվում է զրտ պրագմատիկ նկատառումով, այն է՝ հնարավորինս կանխել քաղաքացիական ակտիվության անհարկի նվազման միտումները¹: Իսկ հանրաքվեն հնարավորություն է տալիս քաղաքական գործընթացների նկատմամբ ձևավորվող ու զարգացող ապատիայի պայմաններում առաջացնել նույն այդ գործընթացների նկատմամբ անհրաժեշտ հետաքրքրության այնպիսի ձևաչափեր, որոնց պարագայում քաղաքացին առավել առարկայական է ընկալում իր մասնակցության գործոնը: *Ձուտ վիճակագրական տվյալների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ընտրություններին մասնակցության տոկոսը, որպես կանոն, բարձր է այն երկրներում, որտեղ հանրաքվեն առավել գործնական կիրառում ունի:*

Հանրաքվեի նկատմամբ բացասական տրամադրվածություն ունեցող քաղաքական գործիչներն ու սահմանադրագետները, հիմնականում, առանցքային են համարում տեսական այն մեկնակետերը, ըստ որի արհեստավարժ և առաջնային մանդատ ունեցող խորհրդարանի պարագայում իրավաչափ չէ խիստ մասնագիտական հարցադրումների լուծումն առաջադրել մարդկանց այնպիսի խմբերի, որոնք պարզապես պատրաստ չեն համարժեք լուծումներ առաջադրել: Սակայն, կարծում եմ, խնդրին հարկ է մոտենալ մեկ այլ ասպեկտով. հանրաքվեն ինքնին ոչ իրավաչափ կամ հակառակը՝ անվերապահորեն խրախուսելի ինստիտուտ չէ, դրա պրագմատիկ նշանակությունը թելադրված է ներկա իրավաքաղաքական զարգացումներով ուղղորդվող մի շարք պայմաններով, որոնց

¹ St'ս Даймонд Л., Определение и развитие демократии // Теория и практика демократии. Избранные тексты. М.: Ладомир, 2006., էջ 25-33:

ճշգրիտ ընկալումն ու կիրառումը միայն կարող է երաշխավորել ցանկալի արդյունք: Այդ պայմաններին համակարգված անդրադարձ կա սույն փաստաթղթում, նկատենք միայն, որ արհեստավարժության ասպեկտն ընդհանրապես չի ծագի, եթե հստակեցվեն հանրաքվեի դրվող հարցերի, իրավական ակտերի շրջանակը՝ բացառելով նեղ մասնագիտական իրավական, տնտեսագիտական խնդրահարույց հարցերը և այլն: Այդ դեպքում առավել նշանակալից է դառնում իրազեկվածության խնդիրը: Նույն կերպ, հարկ է բացառել քաղաքացիական նախաձեռնությամբ այնպիսի հանրաքվեներ անցկացնելը, որոնք իրավաչափ կարող են դիտվել բացառապես իշխանության մարմինների կողմից նախաձեռնելու դեպքում: Հանրաքվեի ինստիտուտն անխուսափելիորեն կարող է հեղինակագրկվել, եթե այն վերաճվի սոսկ պոպուլիզմի «հարմար» գործիքի, ուստի խիստ կարևոր է սահմանել այնպիսի կարգավորումներ, որոնք կխափանեն առանձին ակնհայտ ոչ իրավաչափ նկրտումները, որոնք միտված կլինեն ոչ թե այդ ինստիտուտի առավելությունների հավուր պատշաճի դրսևորմանը, այլ սոսկ նեղ քաղաքական շահերին ծառայեցնելուն:

Հանրաքվեի նկատմամբ բացասական դիրքորոշումը, թերևս, թելադրված է նաև միջազգային որոշ կառույցների անթաքույց մտավախությամբ, ըստ որի այդ ինստիտուտը կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման կամ այդպիսի պարտավորություններ ստանձնելու ճանապարհին, սակայն, եթե հավուր պատշաճի հնարավոր լինի ապահովել այդ ինստիտուտին ներկայացվող իրավաչափ պահանջները, ապա մտավախության համար հիմքեր չեն մնա:

Վերոհիշյալ տեսանկյունից առանցքային նշանակություն կարող է ունենալ Սահմանադրությամբ Ազգային ժողովի լիազորութ-

յունների վերանայումն այն կտրվածքով, որպեսզի վերջինս պարտադիր կարգով եզրակացություն տա հանրաքվեի դրվող հարցերի վերաբերյալ: Ներկայիս սահմանադրական կարգավորումներն այս տեսանկյունից որոշ չափով հստակեցման կարիք ունեն: Առաջարկվող նորամուծությունը, կարծում ենք, ևս կնպաստի ներկայացուցչական և անմիջական ժողովրդավարության ներդաշնակ հարաբերակցությանը:

Ընդհանրապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված հանրաքվեի ինստիտուտի առնչությամբ առկա է նաև լրացուցիչ երաշխիք այն կտրվածքով, որ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը կարող է հանրաքվեի դրվել միայն որոշակի նախնական ընթակարգեր անցնելուց հետո, ինչը նվազեցնում է ոչ մասնագիտական, բավարար չափով չիրազեկված ու չպատրաստված մարդկանց կողմից կարևոր իրավական փաստաթուղթ ընդունելու հավանականությունը: Պարզապես նպատակահարմար է Սահմանադրությամբ ամրագրված հիշյալ ընթացակարգը տարածել նաև հանրաքվեի միջոցով ընդունվող օրենքների վրա: Ընդ որում, դրա անհրաժեշտությունը չի զգացվի խորհրդատվական հանրաքվեների դեպքում:

Ինչ վերաբերում է այն փաստարկներին, որ հանրաքվեի կիրառման պատմական փորձը վկայում է այն մասին, որ հանրաքվեի միջոցով կյանքի են կոչվում ոչ միայն խիստ ժողովրդավարական, այլև ակնհայտ բռնատիրական ինստիտուտներ ու քաղաքական համակարգեր, ապա անհրաժեշտ է նկատել, որ խոսքը բացառապես վերաբերում է այն դեպքերին, երբ հանրաքվեն ակնհայտ անցկացվել է բռնատիրությանը բնորոշ կանոններով և ոչ համարժեք պայմաններում (ինչպես, օրինակ 1933 թ., 1934 թ. և 1939 թ. Գերմանիայում անցկացված հանրաքվեները, որոնց արդյունքում ձևավորվեցին ֆաշիզմի «օրինական» իրավական հիմքերը):

Հանրաքվեի դրվող հարցերի շրջանակը Սահմանադրությամբ որոշելու հարցի առնչությամբ միասնական չափանիշներ չկան, միաժամանակ իրավահամեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ այս կամ այն չափով տարածված են հետևյալ տարբերակները՝

ա) ամրագրվում է «հանրային կյանքի առավել կարևոր հարցերը» հանրաքվե (այդ թվում՝ խոհրդատվական) դնելու առնչությամբ հիմնադրույթ, իսկ օրենքով սպառիչ սահմանվում է այդ հարցերի շրջանակը (Լիտվայի Սահմանադրության 9-րդ հոդված, Մեծ Բրիտանիայի 1972թ. «Հանրաքվեի մասին» օրենքը, Խորվաթիայի Սահմանադրության 87-րդ հոդված, Նոր Զելանդիա),

բ) պարզապես, առանց դրանց շրջանակը որևէ կերպ ճշգրտելու, ամրագրվում է օրենքները հանրաքվեով ընդունելու վերաբերյալ հիմնադրույթ (Շվեյցարիա, Հայաստանի Հանրապետություն, Տաջիկստան և այլն),

գ) Սահմանադրությամբ ամրագրվում է այն հարցերի շրջանակը, որոնք կարող են դրվել հանրաքվեի (Ֆրանսիայի Սահմանադրության 11-րդ հոդված, Իտալիայի Սահմանադրության 23-րդ հոդված, Ռումինիայի Սահմանադրության 90-րդ հոդված),

դ) թվարկվում է այն առավել կարևոր հարցերի շրջանակը, որոնք պարտադիր պետք է դրվեն հանրաքվեի, միաժամանակ ամրագրվում է, որ մյուս կարևոր հարցերը ևս կարող են դրվել հանրաքվեի (Սլովակիայի Սահմանադրության 93-րդ հոդված, Ավստրիայի Սահմանադրության 128-րդ հոդված, Շվեդիայի Սահմանադրության 38.1. հոդված, Շվեյցարիայի Սահմանադրության 136-142-րդ հոդվածներ, Գերմանիայի Սահմանադրության 29-րդ հոդված): Այս խմբի երկիրներում, որպես կանոն, պարտադիր հանրաքվեի դրվող հարց է ճանաչվում միջազգային այնպիսի միություններին անդամագրվելը, որի արդյունքում սահմանափակվում է գործադիր իշխանության կամ, ընդհանրապես, պետական իշխանության իրավասությունը:

Գերմանիայի Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն, ընթացիկ օրենքով կարող է սահմանվել նաև քաղաքացիական (ժողովրդական) նախաձեռնության կարգով կրկնակի հանրաքվե անցկացնելու նվազագույն 5-ամյա ժամկետ,

ե) Սահմանադրությամբ հանրաքվեի դնելու օրենքների շրջանակը որոշելու իրավասությունը վերապահվում է խորհրդարանին (Դանիայի Սահմանադրության 42-րդ բաժին): Դանիայի դեպքում որոշակի իրավունք է վերապահված նաև խորհրդարանային փոքրամասնությանը՝ մասնավորապես ընդունված օրենքից հետո 3-շաբաթյա ժամկետում խորհրդարանի 1/3-րդը կարող է դիմել խորհրդարանի նախագահին՝ այն հանրաքվեի դնելու պահանջով (կարծում ենք, մեր իրականությունում սա լուրջ չարաշահումների տեղիք կարող է տալ, առավել հավանական է թվում հստակեցնել այն օրենքների շրջանակը, որոնք կարող են 1/3-րդի պահանջով դրվել հանրաքվեի): Կա նաև հակադիր մոտեցում, երբ ընդհանրապես հանրաքվե անցկացնելու համար պահանջվում է, որպեսզի քվեարկի խորհրդարանի անդամների մեծամասնությունը (Օրինակ, Խորվաթիայի Սահմանադրության 135-րդ հոդված),

զ) բացակայում է հանրաքվե անցկացնելու վերաբերյալ որևէ նորմ, իսկ ինստիտուտը կարգավորված է ընթացիկ օրենքներով («Ժողովրդական քվեարկության և օրենսդրական նախաձեռնության մասին» Լատվիայի օրենքը, Նիդերլանդների 2005թ. ժամանակավոր օրենքը կարգավորել է Եվրամիությանն անդամակցելու վերաբերյալ հանրաքվեի կազմակերպման ու անցկացման կարգը, Բելգիան, Բոսնիան, Կանադան)¹:

Հանրաքվեով ընդունված օրենքում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել, կամ ուժը կորցրած կարող է ա-

¹ Վերը նշված ամփոփման հիմքում դրված են տարբեր երկրների սահմանադրությունների և հանրաքվեին նվիրված օրենսդրական ակտերի իրավահամեմատական վերլուծության արդյունքները.

ճանաչվել որոշակի ժամկետ անցնելուց հետո (Սլովակիայի Սահմանադրության 99-րդ հոդվածի համաձայն՝ առնվազն 3 տարի անց): Որպես կանոն, բացառվում է դրանք խորհրդարանի կողմից վերանայելու որևէ տարբերակ:

Այսպիսով, հանրաքվեն ինքնին ու անվերապահորեն արդյունավետ ինստիտուտ չէ, այն այդպիսին կարող է լինել միայն հավասարակշռված հիմքերով ու պայմաններով անցկացնելու դեպքում: Ընդ որում, անհրաժեշտ սահմանադրական մշակույթի ու ավանդույթների բացակայության պայմաններում իրավաչափ չէ անհարկի սեղմ պարբերականությամբ հանրաքվե նախաձեռնելու պրակտիկան:

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածով հանրաքվեն ամրագրվել է, որպես ժողովրդախիշխանության իրականացման միջոց: Այնուհետև, հանրաքվեին անդրադարձ է արվել ՀՀ Սահմանադրության մի շարք այլ հոդվածներում (4-րդ, 30-րդ, 60-րդ, 83.5.-րդ, 100-րդ, 107-րդ և 110-113-րդ):

Հանրաքվեի ինստիտուտի էության, հիմքերի, անցկացման պայմանների ու իրավական հետևանքների առնչությամբ ոչ համարժեք իրավագիտակցության ու իրավական հիմքերի պատճառով, ցավոք, այն թյուր պատկերացումն է ձևավորվել, ըստ որի հանրաքվեն սոսկ ընտրական գործընթացներին բնորոշ նույնական կանոններով իրականացվող ինստիտուտ է: Բնորոշ է այն, որ «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի «Քարոզչությունը հանրաքվեի նախապատրաստվելիս» վերտառությամբ 20-րդ հոդվածը բովանդակում է նույն նորմերը, ինչ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածը: Այսինքն, դարձյալ ամրագրված են սահմանափակումներ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաների համար և այլն:

Մինչդեռ, հանրաքվեի դեպքում այդ սահմանափակումները ոչ

միայն իրավաչափ չեն, այլև խաթարում են նշված ինստիտուտի էությունը, քանզի չի երաշխավորվում մասնակիցների անհրաժեշտ իրազեկվածությունը, օրինակ՝ հավուր պատշաճի չի բացահայտվում պետության քաղաքականության պաշտոնական դիրքորոշումը, ինչն էլ հենց նվազեցնում է ժողովրդի կողմից իշխանության իրականացման լիազորության իրավական լծակի արդյունավետությունը: Ի դեպ, հանրաքվեի ինստիտուտի անհրաժեշտության հակառակորդները հենց ոչ բավարար իրազեկվածությամբ են նաև պատճառաբանում իրենց դիրքորոշումը:

Այս խնդրին հնարավորինս համարժեք անդրադարձել է Վենետիկի հանձնաժողովն իր մի քանի եզրակացություններում (օրինակ՝ CDL-INF/2001/10, 11 հուլիսի 2001թ., CDL-AD/2007/008 rev, 28 հունվարի 2009թ. և այլն): Մասամբ այդ հարցադրումներին անդրադարձ կա նույն հանձնաժողովի 2005թ. դեկտեմբերի 19-ի «Հանրաքվեների կազմակերպումը միջազգային չափանիշների կիրառմամբ» թիվ CDL-AD(2005)041 եզրակացությունում: Վերջապես, այդ խնդիրներին նոր ասպեկտներով անդրադարձ կա 2014թ. մարտի 21-ի «Ղրիմի ինքնավար մարզում հանրաքվեի մասին» թիվ 762/2014-CDL-AD(2014)002 եզրակացության մեջ¹: Դրանցում այն հիմնադրույթն է արտացոլված, ըստ որի հանրաքվեն պետք է իրականացվի մի շարք էական առանձնահատկություններով, ինչպիսիք են, օրինակ՝ պետական պաշտոնյաների մասնակցությունը քարոզչության աշխատանքներին, պետական մարմինների մասնակցությունը ֆինանսավորմանը, պետական մարմինների իրավասությանը վերապահված հարցերը հանրաքվեի դնելու արգելքը, քաղաքացիների նախաձեռնությամբ հանրաքվեի դրված հարցերի առնչությամբ խորհրդարանի կողմից պարտադիր եզրա-

¹ Վենետիկի հանձնաժողովի հիշյալ եզրակացությունները հանվել են «<http://hr-lawyers.org/index>» կայք-էջից:

կացություն հրապարակելու պահանջը, հանրաքվեի դնելու ոչ ենթակա հարցերի շրջանակը և այլն:

Այնուհետև, ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի իրավակարգավորումները, վերը նշված իրավական մշակույթի համատեքստում ընկալվել են՝ որպես հանրաքվեի մասնակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակի անհարկի սահմանափակում: Այսպես, նշված հոդվածում ամրագրված սահմանափակումը՝ կապված օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով ազատագրման դատապարտված անձանց ընտրելու և ընտրվելու իրավունքից զրկելու հետ, օրենքներում մեկնաբանվել և ամրագրվել է, որպես հիմնավորված սահմանափակում նաև հանրաքվեի մասնակցների պարագայում: Նկատենք, որ այսպիսի սահմանափակումը չի բխում հանրաքվեի էությունից և խորթ է միջազգային փորձին:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է հանրաքվե նշանակելու հարցում Ազգային ժողովի գերակա դերը, ինչը պետք է պահպանել նաև հետայսու, քանզի դա երաշխիք է, որպեսզի հանրաքվեն չընկալվի, որպես խորհրդարանին փոխարինելու իրավական լծակ, սակայն խորհրդատվական հանրաքվեների պարագայում, իշխանության մյուս իրավասու մարմինները չպետք է կաշկանդված լինեն խորհրդարանի դիրքորոշմամբ, քանի որ վերջիններս գործում են իրենց վերապահված լիազորությունների սահմաններում և, ըստ այդմ էլ, կարող են հանրաքվի դնել միայն իրենց իրավասությանը վերապահված հարցեր:

Բացի այդ, Սահմանադրությամբ հստակեցված չէ, թե կոնկրետ ինչ օրենքներ կարող են դրվել հանրաքվեի, որպիսի իրավիճակը գործնականում այդ նորմի կիրառումը պարզապես բացառվել է:

Սահմանադրությամբ կարգավորված չեն հանրաքվեի առնչությամբ մի շարք էական նշանակություն ունեցող հարցադրում-

ներ, մասնավորապես անտեսվել է հանրաքվեի միջոցով ընդունվող օրենքներին առավել մեծ իրավաբանական ուժ հաղորդելու անհրաժեշտությունը, այդպիսի օրենքներում փոփոխություններ կատարելու համար նվազագույն ժամկետը (ուժի մեջ մտնելու պահից) և այլն:

Ի դեպ, հանրաքվեի կիրառման շրջանակների առնչությամբ ներկայումս միասնական չափանիշներ չեն ձևավորվել: Այսպես, Կոստովոյի պարագայում անտեսվեց նախապես շահագրգիռ կողմերի միջև բանակցություններ և հանրաքվեի առնչությամբ համաձայնություն ձեռք բերելու անհրաժեշտությունը, մինչդեռ՝ Վենետիկի հանձնաժողովը, անդրադառնալով արդեն Դրիմի ինքնավար հանրապետությունում անցկացված հանրաքվեի արդյունքներով այդ հանրապետության Գերագույն ռադայի 2014թ. մարտի 6-ի որոշմանը, որով հռչակվեց այդ հանրապետության միանալը Ռուսաստանի Դաշնության հետ, այն գնահատել է ոչ իրավաչափ, նկատի ունենալով, որ Ուկրաինայի Սահմանադրությունը (1, 2 73 և 157 հոդվածներ) չի թույլատրում հանրաքվեի միջոցով ինքնավար հանրապետության առանձնացում, բացի այդ, կողմերը նախապես չեն բանակցել այդ հանրաքվեի իրավաչափության հարցի շուրջ¹:

Ամփոփելով հանրաքվեի առնչությամբ սույն հոդվածում արտացոլված նյութը, ստորև ներկայացնում ենք այդ ինստիտուտի բարելավման հայեցակարգային հիմնադրույթները՝

1. Նկատի ունենալով առաջիկա սահմանադրական զարգացումների, մասնավորապես, միջազգային կազմակերպություններին միանալու բարդ ու հակասական գործընթացները, կարծում ենք, հարկ է նախապատվությունը տալ այն տարբերակին, ըստ որի հանրաքվեի են դրվում այն միջազգային կազմակերպություններին միանալու հարցերը, որը հանգեցնում է ինքնիշխանության

¹ Տե՛ս <http://hr-lawyers.org/index>:

սահմանափակումների:

Այս հարցում հարկ է, թերևս, զերծ մնալ ծայրահեղություններից: Ինդիրն այն է, որ այս հարցի առնչությամբ հայտնվում են անհարկի բևեռացված մոտեցումներ, չափազանց տարաբնույթ է նաև հասարակական կարծիքը: Այսպես, «Հանրային քաղաքականության վերլուծության և երկխոսության Ապելլա ինստիտուտ» հասարակական կազմակերպության կողմից իրականացված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքներով արձանագրվել է առնվազն երեք խոշոր տեսակետ՝

ա) սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծում ամրագրված է հիմնավորված եզրահանգում, ըստ որի՝ ինքնիշխանության սահմանափակմանը հանգեցնող միջազգային պայմանագրերը պետք է դրվեն հանրաքվեի,

բ) հանրաքվեի ինստիտուտի այդչափ ընդլայնումն իշխանություններին քաղաքական և իրավական պատասխանատվությունից խուսափելու հնարավորություն կընձեռի կարևորագույն որոշումներ կայացնելիս և

գ) գործող Սահմանադրության ինքնիշխանությունն ամրագրող հոդվածներն ինքնիշխանության որևէ սահմանափակում չեն ենթադրում և փոփոխման ենթակա չեն¹:

Կարծում ենք, հարկ է ելակետ ընդունել հետևյալ դրույթները՝

ա) յուրաքանչյուր միջազգային կազմակերպության միանալն այս կամ այն չափով հանգեցնում է պետության ինքնիշխանության սահմանափակմանը, ընդ որում, տվյալ դեպքում վճռորոշը ինչպես ինքնիշխանության բովանդակային կորստի չափն է, այնպես էլ

¹ «Սահմանադրական բարեփոխումներ. ի՞նչ են կարծում փորձագետները, «Բաց Հասարակության Հիմնադրամների» Հայաստանյան գրասենյակի օժանդակությամբ, «Հանրային քաղաքականության վերլուծության և երկխոսության Ապելլա ինստիտուտի» Ձեկույցը, Երևան, հունիս 2014, էջ 17-18:

դրա ամրագրման եղանակները,

բ) առաջարկվող կարգավորման համատեքստում «ինքնիշխանության սահմանափակում» եզրույթը կարող է ընկալվել բացառապես այն կտրվածքով, որի դեպքում հարկ կլինի վերանայել իշխանությունը կրող սուբյեկտների լիազորությունների շրջանակը՝ սահմանադրական գործառույթների իրացման տեսանկյունից և

գ) իշխանությունները նախապես եզրակացություն են տալիս հանրաքվեի դրված հարցի էության, դրա իրավաչափության և նպատակահարմարության կապակցությամբ:

2. Հանրաքվեով ընդունված օրենքները կարող են վերանայվել Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 2/3-րդով: Նպատակահարմար է սահմանել այն հարցերի շրջանակը, որոնք չեն կարող հանրաքվեի դրվել (օրինակ՝ պետական սահմանի փոփոխության, տարածքային ամբողջականության, պատերազմ հայտարարելու, հարկերի, բյուջեի, համաներման հարցերը և այլն):

Մյուս կողմից այդպիսի օրենքների վերանայման համար բավարար չի լինի միայն խորհրդարանի որակյալ մեծամասնությունը: Առավել հիմնավորված կարող է համարվել այն մոտեցումը, ըստ որի՝ հանրաքվեի արդյունքներով ընդունված օրենքը կարող է խորհրդարանի կողմից վերանայվել առնվազն 3 տարի անցնելուց հետո:

Ի դեպ, լուրջ հարցադրում է պետական սահմանի փոփոխության հարցը: Երբեմն, իսկ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի իրավական հիմքերի տեսանկյունից՝ հատկապես, պետության տարածքային ամբողջականության սկզբունքն անհարկի դիտարկվում է իբրև ազգային ինքնորոշման սկզբունքին հակասող: Ավելին, հաճախ այն թյուր պատկերացումն է իշխում, ըստ որի՝ այդ սկզբունքների միջև հակասությունների առնչությամբ արհեստական դիրքո-

րոշումների միակ սկզբնապատճառը կոնկրետ այս կամ այն դեպքի ոչ համարժեք գնահատականն է: Այսպես, հանրաքվեի ճանապարհով երբեմն կոնկրետ ազգային ինքնորոշման արդյունքում առանձնացված պետական կազմավորումները, շատ կարճ ժամանակ անց գրեթե անարգել ձեռք բերելով միջազգային ճանաչվածություն, չեն դիտարկվում նույն Լեռնային Ղարաբաղի համար նախադեպ, սակայն, մյուս կողմից, նույն միջազգային քաղաքական ուժերի կողմից հնչում են նաև Լեռնային Ղարաբաղում այդպիսի հանրաքվե նախաձեռնելու անհրաժեշտությունը հիմնավորող կոչեր:

Տվյալ դեպքում, կարծում ենք, առնվազն հարկ է ելակետ ընդունել հետևյալ եզրահանգումները՝ ա) գործնականում չկան բացարձակ միատեսակ ու նույնական դեպքեր, սակայն դա բնավ չի նշանակում, որ այս կամ միջազգային փորձի դրսևորումը չի կարող նախադեպ հանդիսանալ նմանաբնույթ այլ իրավիճակների համար. վերջին հաշվով, չափանիշ պետք է համարվեն ոչ թե առանձին դրվագային հանգամանքներ (օրինակ, ժամանակավոր կառավարության ձևավորումը խրախուսվել և իրավաչափ է միջազգային ուժերի կողմից, թե՛ ոչ և այլն), այլ վճռորոշ, առանցքային նշանակություն ունեցող իրավական երևույթներ, բ) ազգային ինքնորոշման իրավունքի իրացման արդյունքում պետական սահմանի վերանայման ինստիտուտը որևէ կերպ չի կարող դիտարկվել իբրև տարածքային ամբողջականության սկզբունքի խախտում և գ) տարածքային ամբողջականության սկզբունքի խախտման հետևանքները չեն կարող վերականգնվել ազգային ինքնորոշման սկզբունքի իրացմամբ, ինչը փորձ է արվում կյանքի կոչել Լեռնային Ղարաբաղի պարագայում:

3. Ամրագրել խորհրդատվական հանրաքվեի ինստիտուտը՝ սահմանելով այն անցկացնելու նախաձեռնությամբ օժտված պե-

տական իրավասու մարմինների շրջանակը: Ընդ որում, իրավաչափ է համարվում նախաձեռնության լիազորությունը վերապահել ոչ միայն կառավարությանը, այլև Նախագահին և Ազգային ժողովին: Այս իրավակարգավորումը կբացառի օրինաստեղծ գործունեությունում նշված ինստիտուտի առնչությամբ հնարավոր անհարկի տարածայնությունները, որոնք արդեն իսկ դրսևորվել են վերը նշված օրենսդրական բարեփոխումների գործընթացում:

Տվյալ դեպքում արդիական կարող է համարվել հետևյալ հարցադրումը. կարո՞ղ է, արդյոք, պետական մարմինը խորհրդատվական հանրաքվե նախաձեռնել ոչ միայն իր իրավասությանն առնչվող հարցերով, թե այդպիսի ինստիտուտը կարող է իրավաչափ համարվել նաև իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի պարագայում: Ընդունենք, կառավարությունը նախաձեռնում է օրենսդիր մարմնի կամ Հանրապետության Նախագահի իրավասությանը վերապահված հարցի առնչությամբ խորհրդատվական հանրաքվե, որպեսզի հետագայում արդյունքների հաշվառմամբ համապատասխան հարցի լուծման կապակցությամբ դիմի այդ իրավասու մարմիններին:

Կարծում եմ, այս հարցում առավել իրավաչափ կարող է համարվել այն մոտեցումը, երբ խորհրդատվական հանրաքվե է նախաձեռնվում բացառապես տվյալ պետական մարմնի լիազորությանն առնչվող հարցի կապակցությամբ, իսկ մյուս դեպքերում տվյալ պետական մարմինը կաշկանդված չէ դիմելու իրավասու այլ պետական մարմիններին, որպեսզի վերջիններս, անհրաժեշտության դեպքում, իրենք դիմեն խորհրդատվական հանրաքվեի անհրաժեշտությանը:

Հստակեցնենք, որ խոսքը բնավ չի վերաբերում այն դեպքերին, երբ կոնկրետ հարցի վերջնական լուծումը վերապահված է այլ պետական մարմնի, սակայն դրա լուծման կապակցությամբ նա-

խաճեռնությամբ հանդես գալու լիազորություն ունեն նաև մյուս մարմինները: Օրինակ, կառավարությունը հանդիսանում է օրենսդրական նախաձեռնությամբ օժտված մարմին, ինչը նշանակում է, որ մինչև օրինագիծ ներկայացնելը, վերջինս կարող է այն ներկայացնել խորհրդատվական հանրաքվեի «դատին»:

Արդիական խնդիր է և վերոհիշյալ ինստիտուտին առնչվում է նաև հանրաքվեի քվորումի հարցադրումը: Ինչպես հայտնի է, հանրաքվեի դրված նախագիծը համարվում է ընդունված, եթե դրան կողմ է քվերակում մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ քառորդը: Ի դեպ, գրանցված քաղաքացիների առնվազն կեսի մասնակցությունը պարտադիր է համարվում բոլոր երկրներում, բացառությամբ Ադրբեջանի, որտեղ այդ շեմն իջեցված է մինչև 25 տոկոս: Միաժամանակ, հիմնավորված է դիտվում այն մոտեցումը, ըստ որի՝ ազգային ինքնորոշման սկզբունքի հենքով պետական կազմավորումների կարգավիճակին առնչվող հարցերի համար պահանջվում է ավելի բարձր քվորում, օրինակ՝ 75 տոկոս: Կարծում ենք, բոլոր այն դեպքերում, երբ չի ապահովվում անհրաժեշտ քվորումը, հանրաքվեն կարող է դիտարկվել իբրև խորհրդատվական, ինչը սակայն չի նշանակում, որ պարտադիր կարգով հանրաքվեով ընդունվող իրավական ակտերը կարող են ընդունվել այլ մարմինների կողմից:

Ի դեպ, Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշման համաձայն, նպատակահարմար չէ սկզբունքային հարցերով հանրաքվեները դարձնել պարտադիր, քանզի դրանք կարող են էապես կաշկանդել պետական քաղաքականությունը¹: Սկզբունքորեն համաձայն լինելով այսպիսի դիրքորոշման հետ, այնուամենայնիվ, այն համոզ-

¹ Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի 2009թ. հունվարի 20-ի «Հանրաքվեի լավագույն փորձի մասին» թիվ CDL-AD(2007)008rev եզրակացությունը, 8-րդ կետ.

մանն ենք, որ որոշ էական հարցադրումների (ազգային ինքնորոշման սկզբունքի հենքով, պետական կազմավորումների կարգավիճակի հարցերով կազմակերպված և այլն) առնչությամբ բացառապես խորհրդատվական հանրաքվեներ անցկացնելը պարզապես կհանգեցնի հանրաքվեի ինստիտուտի արժեզրկմանը:

4. Հանրաքվեն դիտարկել նաև որոշակի հիմքերով, առաջնային մանդատ ունեցող իշխանության մարմինների լիազորությունների դադարման, ինչպես նաև վստահության քվե տալու իրավական լծակ, ինչը կնպաստի քաղաքական ճգնաժամերի մեղմացմանը:

Այս առաջարկությունն իրավաքաղաքական զարգացումների ներկա փուլում համարվում է խիստ վիճահարույց, ուստի այն իր արտացոլումը չի գտել սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում: Միաժամանակ, այն համոզմունքին ենք, որ սահմանադրական լուծումները ոչ միշտ են ունակ սպառիչ ու ամբողջական լուծում տալու քաղաքական ճգնաժամերին, ավելին, շատ երկրներում հենց Սահմանադրություններն են ամրագրում հանրաքվեի միջոցով այդպիսի իրավական լուծումներ: Սա, թերևս, թելադրված է այն իրողության համարժեք գիտակցմամբ, որ քաղաքական սուր ճգնաժամերի դեպքում, երբ նախապատվելի միջոց է համարվում քաղաքական անհնազանդությունն ու անհանդուրժողականությունը, առաջնային մանդատ ունեցող իշխանության մարմինների լիազորությունների դադարման հարցը հանրաքվեի առարկա դարձնելը կարող է էապես նվազեցնել անհարկի լարվածությունը և երկիրը հետ պահել քաղաքական անցանկալի ցնցումներից:

Ավելին, նաև մեր երկրի քաղաքական զարգացումներն են վկայում այն մասին, որ այդպիսի միջոցն իրավաչափ է համարվել Սահմանադրական դատարանի կողմից անգամ այն դեպքում, երբ դրա համար Սահմանադրությամբ բացակայում էին համապա-

տասխան իրավական հիմքեր: Նկատի ունենք նախագահական ընտրությունների արդյունքների վիճարկման վերաբերյալ դիմումի քննարկմամբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումը¹:

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2003թ. ապրիլի 16-ի թիվ ՍԴՈ-412 որոշումը, որով ամրագրվեց հետևյալ դրույթը. «Ելնելով այն իրողությունից, որ 2003թ. մայիսի 25-ին նշանակված են ՀՀ Ազգային ժողովի ընտրություններ եւ Սահմանադրության նոր խմբագրության ընդունման հանրաքվե, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած վճռական դեր ունի ժողովրդավարական ճանապարհով պետական իշխանության շարունակական զարգացումն ապահովելու գործում, նկատի ունենալով, որ սահմանադրական լուծումների մակարդակով ներկայացուցչական ժողովրդավարության ինստիտուտների համար էական նշանակություն ունի ոչ միայն դրանց կազմավորման օրինականությունը, այլև այդ գործընթացի ու պետական իշխանության մարմնի նկատմամբ հասարակության շարունակական լայն վստահությունը, կարևորելով Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգի ամրապնդման եւ Սահմանադրության նախաբանում ամրագրված՝ քաղաքացիական համերաշխության հաստատման անհրաժեշտությունը, փաստելով, որ սահմանադրական ժողովրդավարության դեռևս անկատար համակարգի ներկա պայմաններում պետության ճակատագրի համար վճռորոշ նշանակություն ունեցող ընտրական վեճն ունի նաեւ անվստահության եւ անհանդուրժողականության վրա խարսխված խոր հասարակական-քաղաքական ենթատեքստ, մեծ կարևորություն տալով հանրաքվեների եւ ժողովրդական հարցումների դերին՝ որպես անմիջական ժողովրդավարության ու ժողովրդաիշխանության իրականացման, պետության համար հատուկ կարևորություն ունեցող հարցերի լուծման, հասարակական վստահության եւ ժողովրդական համաձայնության հաստատման առանձնահատուկ նշանակություն ունեցող ձեւ, առաջարկել ՀՀ նորընտիր Ազգային ժողովին եւ ՀՀ Նախագահին՝ մեկ տարվա ընթացքում «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը ժողովրդավարության եւ իրավական պետության սկզբունքներին համահունչ համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրության 2-րդ՝ փոփոխման ոչ ենթակա, հողվածի առաջին մասի պահանջներին եւ որպես նախագահական ընտրությունների ընթացքում խորացած հասարակական դիմակայության հաղթահարման արդյունավետ միջոց ընտրել վստահության հանրաքվեի կազմակերպումը»:

5. Նկատի ունենալով, որ հանրաքվեն հայրենական իրավագիտակցությունում դեռևս ընկալվում է բացառապես նույնական կանոններով ընթացող ընտրական գործընթացի մասնակի դրսևորում, առնվազն նպատակահարմար է ամրագրել, որ այդ ինստիտուտի կազմակերպման ու անցկացման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

Բնականաբար, հարկ կլինի համապատասխան գիտագործնական հենքով ներկայացնել ելակետային հիմնադրույթներ, որոնք կկանխորոշեն հանրաքվեի կազմակերպման ու անցկացման առանձնահատկությունները: Ընդ որում, դրանք ոչ մի պարագայում չեն կարող ծայրահեղության հասնել, քանի որ ընտրությունները ևս անմիջական ժողովրդավարության առանցքային եղանակ են և էապես չեն կարող տարբերվել ժողովրդի կամքի արտահայտման որևէ այլ եղանակից: Հարկ է, մասնավորապես, հստակեցնել, որ հանրաքվեի հիմնական նախադրյալը հանրության բավարար իրազեկվածությունն է, ինչը ենթադրում է պետական պաշտոնյաների ակտիվ ներգրավվածությունը քարոզչական աշխատանքներին: Սակայն վերջիններիս քարոզչությունը չպետք է ուղղորդի հանրաքվեն, այլ բացառապես սահմանափակվի հանրաքվեի դրված հարցի առնչությամբ հնարավորինս մատչելի պարզաբանումներ ներկայացնելուն: Ընդ որում, հիշյալ բնույթի քարոզչությունն իրավաչափ է ոչ միայն իրավասու պետական մարմինների նախաձեռնությամբ կազմակերպված, այլև քաղաքացիական նախաձեռնությամբ իրականացվող հանրաքվեների պարագայում:

Բացի այդ, նպատակահարմար է հնարավորինս ընդլայնել հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, մասնավորապես հարկ է քննարկել նաև անգործունակ ճանաչված, ինչպես նաև դատարանի դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող անձանց այդ իրավունքը վերա-

պահելու նպատակահարմարության հարցը: Վերջին դեպքում առնվազն իրավաչափ կարող է համարվել, եթե այդ իրավունքից զրկվեն այն անձինք, որոնք դատապարտվել են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար:

6. Նպատակահարմար է նախատեսել քաղաքացիական նախաձեռնությամբ հանրաքվեի, ինչպես նաև օրենսդրական նախաձեռնության իրավունքով քաղաքացիական նախաձեռնությանը վերապահելու ինստիտուտներ, իրավակարգավորման հարցերը ներառելով ընթացիկ օրենքում: Ընդ որում, եթե օրենսդրական նախաձեռնության շրջանակներում քաղաքացիական նախաձեռնությունը չի հանգեցնում արդյունքների (մերժվում է օրինագիծը), ապա քաղաքացիական նախաձեռնությանը կարող է վերապահվել նույն նախագծով հանրաքվե նախաձեռնելու իրավասություն:

Այս այլընտրանքային տարբերակը հնարավորություն է տալիս բոլոր այն դեպքերում, երբ քաղաքացիական նախաձեռնության կարգով հանրաքվե անցկացնելն այս կամ այն պատճառով դիտարկվում է ոչ նպատակահարմար, ասենք՝ անհարկի ծախսատար, նույն իրավունքի սուբյեկտն օժտվում է պարզապես օրենսդրական նախաձեռնության իրավունքով, որի դեպքում կարող են սուսկ առաջադրվել օրինագծի հիմնադրույթները, իսկ բուն օրինագիծը կարող է պատրաստվել մասնագիտական կառույցների կողմից: Այս ինստիտուտը, թերևս, բովանդակում է ներքին երաշխավորվածություն. խնդիրն այն է, որ օրենսդրական նախաձեռնության դեպքում էապես բարձրանում է խորհրդարանի պատասխանատվությունը, քանի որ օրինագիծը մերժելու դեպքում նույն հարցն արդեն կարող է քաղաքացիական նախաձեռնության կարգով դրվել հանրաքվեի:

Ընդհանրապես քաղաքացիական նախաձեռնության կարգով հանրաքվե անցկացնելու ինստիտուտն ինքնին առավել պատաս-

խանատու է դարձնում իշխանության օրենսդիր ճյուղի գործունեությունը, քանզի յուրաքանչյուր դեպքում, երբ խորհրդարանը նախաձեռնում է հանրության համընդհանուր կարծիքն անտեսող օրինագծի ընդունում, ապա հարկադրված է ելակետ ընդունել այն իրողությունը, որ դրան կարող է արդեն հաջորդել քաղաքացիական նախաձեռնության կարգով նույն իրավակարգավորման մոտեցումները ժխտող օրինագծի ընդունում՝ հանրաքվեի միջոցով: Ընդ որում, եթե հանրաքվեի միջոցով ընդունված օրինագիծը չի կարող վերանայվել առնվազն երեք տարի, ապա այդպիսի սահմանափակում չի կարող սահմանվել խորհրդարանի կողմից ընդունված օրենքների պարագայում:

7. Հարկ է հստակ ընթացակարգեր սահմանել քաղաքացիական նախաձեռնությամբ հանրաքվե դրված հարցի կամ օրինագծի առնչությամբ Ազգային ժողովի կողմից նախապես եզրակացություն տալու վերաբերյալ, ինչը կնպաստի անմիջական և ներկայացուցչական իշխանության ներդաշնակ հարաբերակցությանը: Նախ, հարկ է հստակ ամրագրել, որ խոսքը բացառապես խորհրդատվական եզրակացության մասին է, ինչը նշանակում է, որ վերջինիս բովանդակությունը ոչ միայն չի կարող արգելք հանդիսանալ հանրահավաքի կայացման համար, այլև չի կարող կանխորոշել դրա արդյունքները: Իհարկե, հանրային վստահություն վայելող խորհրդարանի դեպքում վերոհիշյալ բնույթի եզրակացությունը կարող է և վճռորոշ նշանակություն ունենալ, սակայն այս դեպքում ևս չի իրավաչափ չէ միանշանակ եզրահանգումներ անելը:

Խորհրդարանի կողմից եզրակացություն ներկայացնելը, թերևս, կարող է հետապնդել ներկայացուցչական և անմիջական ժողովրդավարության հիշյալ ձևերի միջև անհրաժեշտ հավասարակշռվածություն ապահովելու հստակ առաքելություն: Կարծում ենք, այս եզրակացությունը քննարկվող դեպքում ունի նույն հա-

կակշռող ազդեցությունը, ինչ խորհրդատվական հանրաքվեն պետական իշխանության մարմինների կողմից որոշումներ կայացնելու դեպքում: Նկատենք նաև, որ Վենետիկի հանձնաժողովն իրավացիորեն հանգել է այն եզրակացության, որ քաղաքացիական նախաձեռնության դեպքում խորհրդարանը, բացի եզրակացությունից, պետք է ներկայացնի նաև իր սեփական օրինագիծը, ինչը դրվում է միաժամանակյա քվեարկության: Կարծում ենք, որ այս դեպքում խոսք կարող է լինել բացառապես լրիվ կամ մասնակի բացասական եզրակացության դեպքում, քանզի դրական եզրակացության դեպքում կրկնակի օրինագծի անհրաժեշտություն չի ծագում:

Վերոհիշյալ եզրահանգումները վերաբերում են հանրաքվեի ինստիտուտի բարելավման բացառապես սահմանադրաիրավական հիմքերին, որոնք ի զորու են կանխորոշելու հիշյալ ինստիտուտի հետագա կատարելագործման նաև օրենսդրական հիմքերի բարելավման շրջանակներն ու բովանդակությունը:

Կարծում ենք, սահմանադրական բարեփոխման առնչությամբ հայեցակարգային հիմնադրույթները նախագծի վերաձելու դեպքում կարող են ունենալ հետևյալ պատկերը¹.

«Հոդված 1. Հանրաքվեի դրվող հարցերը

1. Սահմանադրությունն ընդունվում է, Սահմանադրության 1-3-րդ, 9-րդ և 16-րդ գլուխներում փոփոխության, ինչպես նաև վերպետական կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վերաբերյալ հարցը լուծվում է հանրաքվեի միջոցով: Հանրաքվեի կարող են դրվել Սահմանադրությունում փո-

¹ Տվյալ դեպքում ներկայացված են այն հոդվածները, որոնք կարող են զետեղվել Սահմանադրության «Հանրաքվեն, Սահմանադրության ընդունումն ու փոփոխությունները» վերտառությամբ գլխում: Հոդվածների համարակալումը, բնականաբար, պայմանական է, այն հետագայում պայմանավորված կլինի Սահմանադրության կառուցվածքով:

փոփոխության, օրենքների ընդունման կամ փոփոխության, օրենքների կամ դրանց առանձին դրույթների վերացման վերաբերյալ հարցերը:

2. Հանրաքվեի կարող են դրվել օրենքների ընդունման կամ փոփոխության վերաբերյալ հարցեր:

3. Հանրաքվեի չեն կարող դրվել պետական բյուջեի մասին օրենքը, պետական սահմանների և պատերազմ հայտարարելու մասին հարցերը:

Հոդված 2. Սահմանադրության և Սահմանադրությունում փոփոխությունների ընդունումը

1. Սահմանադրությունն ընդունվում կամ Սահմանադրության 1-3-րդ, 9-րդ և 16-րդ գլուխներում փոփոխություն կատարվում է միայն հանրաքվեի միջոցով: Հանրաքվեն նշանակվում է Ազգային ժողովի՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունած որոշմամբ կամ Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ ընտրական իրավունք ունեցող առնվազն 150 հազար քաղաքացիների նախաձեռնությամբ:

2. Սահմանադրության 4-8-րդ, 10-15-րդ և 17-րդ գլուխներում փոփոխություն կատարվում է Ազգային ժողովի՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն մեկ երրորդի կամ ընտրական իրավունք ունեցող առնվազն 75 հազար քաղաքացիների նախաձեռնությամբ: Ազգային ժողովը Սահմանադրության 4-8-րդ, 10-15-րդ և 17-րդ գլուխներում փոփոխություններն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդի մեծամասնությամբ:

Եթե Ազգային ժողովի նախաձեռնությամբ Սահմանադրությունում փոփոխություններն ընդունելուց հետո հինգ օրվա ընթացքում պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը պահանջում է այդ հարցով հանրաքվեի անցկացում, ապա հանրաք-

վեն անցկացվում է, երբ պահանջը ներկայացնելուց հետո իննսուն օրվա ընթացքում դրա օգտին հավաքվում է ընտրական իրավունք ունեցող առնվազն 150 հազար քաղաքացիների ստորագրություն:

3. Քաղաքացիների նախաձեռնած Սահմանադրության ընդունման կամ Սահմանադրության փոփոխության նախագծի վերաբերյալ, Ազգային ժողովը՝ նախագիծը ներկայացնելու օրվանից քառասունհինգ օրվա ընթացքում կարող է եզրակացության տալ՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդի մեծամասնությամբ: Հանրապետության Նախագահը քառասունհինգօրյա ժամկետը լրանալուց հետո ոչ շուտ, քան երեսուն և ոչ ուշ, քան քառասուն օր հետո նշանակում է հանրաքվե:

Հոդված 3. Սահմանադրության անփոփոխելի հոդվածները

Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ և 114-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն:

Հոդված 4. Օրենքների ընդունման, փոփոխության կամ ուժը կորցնելու հարցերով հանրաքվեն

1. Օրենքների ընդունման, փոփոխության կամ ուժը կորցնելու հարցերով հանրաքվե նախաձեռնելու իրավունք ունի ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների առնվազն 75 հազարը:

2. Քաղաքացիների նախաձեռնած օրենքների ընդունման, փոփոխության կամ ուժը կորցնելու հարցերով հանրաքվե նախաձեռնելու դեպքում Ազգային ժողովը՝ նախագիծը ներկայացնելու օրվանից քառասունհինգ օրվա ընթացքում կարող է եզրակացության տալ՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդի մեծամասնությամբ: Հանրապետության Նախագահը քառասունհինգօրյա ժամկետը լրանալուց հետո ոչ շուտ, քան երեսուն և ոչ ուշ, քան քառասուն օր հետո նշանակում է հանրաքվե:

3. Հանրաքվեի միջոցով ընդունված կամ փոփոխված օրենքները կարող են ուժը կորցնել կամ փոփոխվել հանրաքվեի միջոցով

կամ առնվազն երեք տարի անց՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդի մեծամասնությամբ:

Հանրաքվեով ընդունված օրենքները գերակայում են մյուս օրենքների նկատմամբ, եթե հանրաքվեով ընդունված օրենքներով սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Հոդված 5. Վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վերաբերյալ հարցերով հանրաքվեն

Վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վերաբերյալ հարցով հանրաքվեն նշանակում է Հանրապետության Նախագահը:

Հոդված 6. Հանրաքվեի դրված նախագծերի ընդունումը

Հանրաքվեի դրված նախագիծն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանրաքվեի մասնակիցների առնվազն կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների մեկ քառորդը:

Հոդված 7. Հանրաքվե անցկացնելու արգելքը

Ռեզոլուցիայի կամ արտակարգ դրության ժամանակ հանրաքվե չի անցկացվում»:

ԳԼՈՒԽ 8.

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Տեղական ինքնակառավարման սահմանադրական մոդելի ձևավորման նախադրյալների համակարգում առանցքային նշանակություն են ունեցել միջազգային իրավական փաստաթղթերն ու միջազգային փորձը, ինչը թելադրված է եղել օբյեկտիվ գործոններով, մասնավորապես իսպառ բացակայել է այդ ինստիտուտի հայրենական նախատիպը: Հայրենական պետաիրավական համակարգում այն անհարկի, բայց և խորհրդային իրավագիտակցության տեսանկյունից միանգամայն հասկանալի գործոններով նույնացվել է պետական իշխանության բաղադրիչի հետ: Մինչույն գաղափարախոսական հենքով խորհուրդներ են ձևավորվել ինչպես կենտրոնում, այնպես էլ՝ տեղերում: Գործնականում նաև իրավական մշակույթի կարծրատիպերը չեն նպաստել՝ տեղական ինքնակառավարումը, որպես պետական ապարատին ոչ բնորոշ իրավական լծակներով իրականացնելու հանրային ավանդույթների ձևավորմանը: Մասամբ հիշյալ զարգացումներին նպաստել են սահմանադրական որոշ հիմնադրույթներ, որոնք զուտ խմբագրական կտրվածքով, ըստ էության, համահունչ լինելով ժողովրդավարության ու քաղաքակրթության առավել հարուստ փորձ ունեցող իրավական համակարգերին, բավարար չափով չեն ուղեկցվել հայրենական իրավունքի համակարգի ու մշակույթի կայացման ցուցիչների հաշվառմամբ, ըստ այդմ էլ, համարժեք չեն ընկալվել:

Անհրաժեշտ է ընդգծել, որ հիշյալ իրավական դիրքորոշումների ու չափանիշների արտացոլման հարցում, թերևս, անհրաժեշտ հետևողականություն չի ապահովվել նաև Սահմանադրության

տեքստում, ինչին դեռ կանդրադառնանք ստորև: Բացի այդ, համարժեք իրավական մշակույթի բացակայության պարագայում միանգամայն նոր, հայրենական իրավական համակարգին բացարձակապես անձանոթ ինստիտուտ ներդնելիս անխուսափելի են այնպիսի երևույթները, ինչպիսիք են՝ միևնույն իրավական ինստիտուտի առնչությամբ բավարար չափով տարբեր, անգամ իրարարամերժ տեսությունների ու ուսմունքների անտեսումը, ինչի արդյունքում միաժամանակ ներառվում են միմյանց հետ անհրաժեշտ չափով աղերսներ չունեցող իրավական դիրքորոշումներ:

Ինչևէ, տեղական ինքնակառավարումը քաղաքական կյանքում դեռևս ամբողջությամբ չի ընկալվում, որպես ժողովրդաիշխանության կայացման ու երաշխավորման առավել ժողովրդավարական ինստիտուտ և, միաժամանակ, որպես լիարժեք հանրային իշխանության մարմին: «Տեղական նշանակության հարցեր» եզրույթի ոչ համարժեք ընկալման արդյունքում այն թյուր տեսակետն է գերիշխում, ըստ որի՝ տեղական ինքնակառավարման մարմինները, հիմնականում, զբաղված են ոչ էական, հանրային նշանակություն չունեցող հարցերով, մինչդեռ՝ միջազգային իրավական փաստաթղթերում միանշանակ ընդգծվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հենց «հանրային գործերը» կառավարելու իրավասությունը. «Տեղական ինքնակառավարում հասկացությունը նշանակում է՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունը և կարողությունը՝ սեփական պատասխանատվությամբ ու համայնքի բնակչության շահերից ելնելով կանոնակարգելու և կառավարելու օրենքով սահմանված *հանրային գործերի* զգալի մասը» (3-րդ հոդվածի 1-ին մաս):

Անցնելով որոշակի փորձարկում, տեղական ինքնակառավարման հայրենական համակարգը ոչ միայն առավել կենսունակ է դարձել, այլև հնարավորություն է տվել բացահայտելու, առավել

տեսանելի դարձնելու բարելավման կարիք ունեցող տարրերն ու հիմնախնդիրների լուծման ուղիները:

Ներկայումս տեղական ինքնակառավարման առնչությամբ ձևավորված տեսությունները, առաձևանալով խիստ իրարամերժ դիրքորոշումներով, այնուամենայնիվ, այն, ըստ էության, դիտարկում են, որպես ժողովրդաիշխանության իրականացման առանցքային արժեք ունեցող *առավել մատչելի* ինստիտուտ, որով երաշխավորվում է համայնքների կողմից տեղական նշանակության հարցերն ինքնուրույն լուծելու իրավունակությունը, իսկ տեղական ինքնակառավարման համակարգը պայմանականորեն ճանաչվում է, որպես չորրորդ իշխանություն: Ժողովրդաիշխանության համատեքստում համայնքների կողմից տեղական ինքնակառավարում իրականացնելը մեծամասամբ ընկալվում է, որպես վերջիններիս բնական և անօտարելի լիազորություն:

Բոլոր դեպքերում հայեցակարգային մեկնակետը, կարծում ենք, շահեկան ու հիմնավորված կարող է լինել, եթե զերծ մնա ինչպես տեղական ինքնակառավարումն պետական իշխանությունից անհարկի մեկուսացնելու, այնպես էլ դրանից անհիմն կախվածության մեջ պահելու միտումներից: Տեղական ինքնակառավարումը բացարձակ ինստիտուտ չէ, սակայն ողջամիտ սահմաններում ինքնուրույնությունը բխում է ինչպես մարդու հիմնական իրավունքների իրացման ու պաշտպանության, այնպես էլ ժողովրդաիշխանության շահերից:

Տեղական ինքնակառավարման ինստիտուտի աքսյուլոգիական նշանակալից արժեքի մասին է խոսում այն, որ դրա առնչությամբ օրենքներն ընդունվում են խորհրդարանի առավել բարձր քվեով կամ, ակսպես կոչված, օրգանական օրենքներով: Օրինակ՝ Մակեդոնիայում՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների 2/3-րդով, Ֆրանսիայում այդ ինստիտուտի վերաբերյալ օրենքները կարող են

ընդունվել միայն օրգանական օրենքներով, Խորվաթիայի Սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ և այլն:

Տեղական ինքնակառավարման սահմանադրաիրավական հիմքերի վերլուծությունը բերում է այն համոզման, որ նշված ինստիտուտի առնչությամբ ձևավորված հիմնական տեսություններից (ազատ համայնքների, հասարակական-տնտեսական և պետական կամ քաղաքական), որ նախապատվությունը, թերևս, տրվել է հասարակական-տնտեսական և պետական տեսությունների՝ բավարար չափով չհամաձայնեցված խառը համակարգին, ինչը գործնականում հանգեցրել է իրավակարգավորման ոչ միասնական դրսևորումների ու որոշ շփոթի: Մասնավորապես, մի դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը դիտարկվել է իբրև հանրային իշխանության լիարժեք բաղադրիչ (օրինակ՝ Սահմանադրության 23, 27.1. հոդվածներ), մեկ այլ դեպքում՝ ոչ (օրինակ՝ 18 հոդված):

Տեղական ինքնակառավարումը չի ենթադրում ինքնամեկուսացում, ընդ որում, այնպիսի ընկալմամբ, երբ պետության աջակցությունը կարող է Սահմանադրության հիմնադրույթներով սահմանափակվել միայն պատվիրակված լիազորությունների ֆինանսավորմամբ: Եթե Սահմանադրությամբ ամրագրվել է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականությունն ապահովելու նպատակով իրավական վերահսկողություն, ինչը ողջունելի է, ապա դրան համահունչ է պետության աջակցության առավել լայն շրջանակների ամրագրումը, ինչը ներկայումս լայն տարածում է ստացել արևմտյան Եվրոպայի հիմնական օրենքներում և խրախուսվում է միջազգային իրավական փաստաթղթերում:

Տեղական ինքնակառավարման սահմանադրական հիմքերը, ընդհանուր առմամբ, համապատասխանում են միջազգային իրավական չափանիշներին, այդ թվում՝ Տեղական ինքնակառավարման միջազգային խարտիային և միջազգային փորձին: Միաժամանակ, վերը նշված ասպեկտներով կատարված վերլուծությունը բերում է այն համոզման, որ առանձին հիմնադրույթներ վերանայման կամ վերաիմաստավորման կարիք ունեն:

Սահմանադրությամբ տեղական ինքնակառավարմանն առնչվող որոշ հարաբերությունների իրավական կարգավորողը վերապահված է օրենքներին: Տեղական ինքնակառավարման, ըստ էության, լիարժեք ինքնուրույնն ապահովելու և իրավական հիմքերին առնչվող չափանիշների նկատմամբ պահանջներն առավել ընդգծված դարձնելու և միջազգային փորձին հնարավորինս համահունչ իրավակարգավորման եղանակ ընտրելու նկատառումով, նպատակահարմար է անդրադառնալ առավել բարձր քվորում առաջադրելու հարցին:

Սահմանադրությունն ամրագրում է միջհամայնքային միավորումների ձևավորման իրավական հնարավորությունը, ինչը լիարժեք համահունչ է Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի 10-րդ հոդվածով ամրագրված դրույթներին, սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ նշված իրավակարգավորումներին բնավ չի հակասում, ավելին՝ խիստ այժմեական է այնպիսի հիմնարկներ ու կազմակերպություններ ստեղծելու գաղափարը, որոնք հնարավորություն կտան գործնական ռելսերի վրա դնելու համայնքների համագործակցությունը, մարդկային ու ֆինանսական ներուժն առավել խնայողական ռեժիմով օգտագործելը և այլն:

Նպատակահարմար է հնարավորինս միասնական դարձնել տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրական

կարգավիճակին վերաբերող իրավակարգավորումները և դրա արդյունքում նպաստել այնպիսի իրավագիտակցության ձևավորմանը, ըստ որի՝ տեղական ինքնակառավարման մարմիններն անվերապահորեն հանրային իշխանության մարմիններ են:

Այն, որ տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը կարող են բողոքարկվել բացառապես դատական կարգով, բացարձակապես վիճահարույց չէ, սակայն անմիջապես Սահմանադրությամբ այդ խնդրին անդրադառնալը կնպաստի տեղական ինքնակառավարման սահմանադրական կարգավիճակի տեսությունը նաև իրավական մշակույթի հարթությունում համարժեք ինտեգրվելուն:

Հարկ է անհրաժեշտ հետևողականություն ապահովել լիազորությունների և գործառույթների պատվիրակմանն առնչվող հարաբերությունների իրավակարգավորման հարցում: Նկատի ունենք այն, որ լիազորության պատվիրակման մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, երբ դա տեղի է ունենում նույնաբնույթ իշխանության (օրինակ՝ պետական իշխանության) սահմաններում, մինչդեռ պետական իշխանությանը բնորոշ լիազորությունը պարզապես իրավաչափ չէ պատվիրակել տեղական ինքնակառավարման մարմին, քանզի վերջինս միանգամայն իրավաչափորեն ոչ թե օգտվում է այդ լիազորությունից՝ դրան բնորոշ ողջ իրավաբանական հատկանիշներով հանդերձ, այլ իրեն բնորոշ իրավասությանը իրականացնում է տվյալ լիազորության «տնօրինման առարկան»՝ գործառույթը կամ հարցը:

Միջազգային իրավական չափանիշներով չի բացառվում ինչպես իրավական, այնպես էլ՝ վարչական վերահսկողությունը, սակայն պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ վարչական վերահսկողության կարգը օրենքով սահմանելու վերաբերյալ սահմանադրական նորմն ամբողջությամբ չի ընդգր-

կում նշված իրավակարգավորման բոլոր էական բաղադրիչները: Մասնավորապես, հարկ է ընդգծել, որ վարչական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որ վերահսկող մարմնի միջամտության աստիճանը համաչափ լինի այն շահերի կարևորության աստիճանին, որոնց պաշտպանությանն է կոչված վերահսկողությունը: Այս դրույթը հստակ ամրագրված է նաև Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայում (8-րդ հոդվածի 3-րդ կետ):

Ըստ հայեցակարգի, տեղական ինքնակառավարման ինստիտուտի սահմանադրաիրավական բարեփոխման հայեցակարգային մոտեցումները հիմնականում հանգում են հետևյալներին՝

- վերանայել համայնքի ղեկավարի պաշտոնանկության ինստիտուտը,

- ամրապնդել ավագանու դերը տեղական ինքնակառավարման համակարգում, մասնավորապես՝ ուժեղացնելով վերջինիս վերահսկողական լիազորությունները և համայնքի ղեկավարի պատասխանատվությունն ավագանու առջև,

- կարևորել միջհամայնքային մարմինների ու կազմակերպությունների դերը տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման հարցում,

- հարկ է ամբողջականացնել քաղաքական համակարգում տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրական կարգավիճակը: Մասնավորապես, անհրաժեշտ է նախատեսել նաև այդ մարմինների ակտիվ դերակատարությունն իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի իրացման հարցում (Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մաս),

- համայնքային միավորումներին ևս պետք է վերապահվեն տեղական ինքնակառավարման լիազորություններ, դրանով իրատեսական ու երաշխավորված դարձնելով տեղական ինքնակառա-

վարման մարմինների միավորման իրավունքը և ապահովելով անհրաժեշտ համապատասխանություն «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի» հետ, որի 10-րդ հոդվածի համաձայն, միավորումը ևս իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմնին բնորոշ գործառույթներ:

Տեղական ինքնակառավարման հատվածին վերաբերող հայեցակարգային հիմնադրույթների արտացոլումը Սահմանադրության մշակվող տեքստում, կարծում ենք, կարող է ունենալ հետևյալ պատկերը¹.

«Հոդված 1. Տեղական ինքնակառավարումը

1. Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու համայնքային նշանակության հանրային իշխանության հարցերը:

2. Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում:

Հոդված 2. Համայնքը

1. Համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն և վարչատարածքային միավոր է:

2. Համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է:

Հոդված 3. Համայնքի խնդիրները և լիազորությունները

1. Համայնքի լիազորությունները լինում են պարտադիր և կամավոր:

¹ Տվյալ դեպքում ներկայացված են այն հոդվածները, որոնք կարող են զետեղվել Սահմանադրության «Տեղական ինքնակառավարման մարմինները» վերտառությամբ գլխում: Հոդվածների համարակալումը, բնականաբար, պայմանական է, այն հետագայում պայմանավորված կլինի Սահմանադրության կառուցվածքով

Համայնքի պարտադիր լիազորությունները սահմանվում են օրենքով, իսկ կամավոր լիազորությունները՝ ավագանու որոշումներով:

2. Պետական իշխանության մարմինների գործառույթների առավել արդյունավետ իրականացման նպատակով դրանք օրենքով կարող են պատվիրակվել տեղական ինքնակառավարման մարմիններին:

Հոդված 4. Համայնքի մարմինները

1. Համայնքի մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը՝ քաղաքապետը, գյուղապետը, որոնք ընտրվում են չորս տարի ժամկետով՝ համայնքի ընտրական իրավունք ունեցող բնակիչների կողմից:

2. Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է, օրենքով սահմանված կարգով ընդունում է համայնքի տարածքում պարտադիր կատարման ենթակա իրավական ակտեր:

3. Համայնքի ղեկավարը կատարում է ավագանու որոշումները, իրականացնում է համայնքի աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների կառավարումը:

4. Համայնքի մարմինների ընտրության կարգը և լիազորությունները սահմանվում են օրենքներով:

Հոդված 5. Համայնքի գործերի կառավարմանն անմիջական մասնակցությունը

1. Համայնքի բնակիչները կարող են անմիջականորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հանրային իշխանության հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով:

2. Տեղական հանրաքվեների անցկացման կարգը, ինչպես նաև համայնքի բնակիչների կողմից գործերի կառավարմանը անմիջականորեն մասնակցելու այլ եղանակները սահմանվում են օրենքով:

Հոդված 6. Համայնքի սեփականությունը

1. Համայնքն ունի հողի, ինչպես նաև այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունք:

2. Համայնքի վարչական սահմաններում հողը, որպես սեփականություն պատկանում է համայնքներին, բացառությամբ մասնավոր և պետության սեփականություն հանդիսացող հողամասերի:

Հոդված 7. Համայնքի բյուջեն, տեղական հարկերը, փուլքերը և վճարները

1. Համայնքն ունի իր բյուջեն, որը համայնքի ղեկավարի ներկայացմամբ ընդունում է համայնքի ավագանին:

2. Համայնքի բյուջեի եկամուտների ձևավորման և ծախսերի իրականացման կարգը սահմանվում է օրենքով:

3. Օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում համայնքի ավագանին սահմանում է տեղական տուրքեր:

4. Համայնքները կարող են իրենց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց սահմանել համայնքի բյուջե մուտքագրվող վճարներ:

Հոդված 8. Համայնքի լիազորությունների ֆինանսական ապահովումը

1. Հայամնքի պարտադիր լիազորությունների իրականացման համար օրենքով սահմանվում են այնպիսի աղբյուրներ, որոնք անհրաժեշտ են այդ խնդիրների իրականացումն ապահովելու համար:

2. Համայնքներին պետության կողմից պատվիրակված գործառույթները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման:

3. Պետությունն իր ֆինանսական հնարավորությունների շրջանակներում, ելնելով համայնքների ֆինանսական ներուժից,

համահարթեցման նպատակով նրանց հատկացնում է միջոցներ:

Հոդված 9. Տեղական ինքնակառավարումը Երևան քաղաքում

Երևանը համայնք է: Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

Հոդված 10. Պետական հսկողությունը

1. Պետական հսկողության նպատակը Սահմանադրության և օրենքների պահանջների կատարման ապահովումն է:

2. Համայնքի սեփական գործառույթների իրականացման նկատմամբ կառավարությունը և նրան ենթակա լիազորված մարմինները Սահմանադրությամբ և օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում են իրավական հսկողություն:

3. Պետության կողմից պատվիրակված գործառույթների իրականացման նկատմամբ կառավարությունը, նախարարությունները և դրանց ենթակա լիազորված մարմինները, բացի իրավական հսկողությունից, կարող են իրականացնել նաև մասնագիտական հսկողություն:

Հոդված 11. Միջհամայնքային միավորումները

1. Տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համայնքները կարող են միավորվել միջհամայնքային միավորումում:

2. Միջհամայնքային միավորումը կարող է իրականացնել միայն այնպիսի լիազորություններ, որոնք նրանց վերապահված են օրենքով կամ համայնքների որոշումներով:

3. Միջհամայնքային միավորումը հանրային իրավունքի իրավաբանական անձ է:

Հոդված 12. Համայնքների միացումը

Հանրային շահերից ելնելով՝ Համայնքները կարող են միավորվել օրենքով: Ազգային ժողովը համապատասխան օրենք ընդունելիս պարտավոր է լսել այդ համայնքների կարծիքը»:

ԳԼՈՒԽ 9.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՆԵՐՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՆՀՍՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Սահմանադրության կառուցվածքը ևս համարվում է էական, քանի որ այն հանդիսանում սահմանադրական նորմերի համարժեք մեկնաբանության «բանալի», մասնավորապես նախապատվությունը տրվելու է կառուցակարգային մոտեցման սկզբունքին, որի դեպքում հարկ կլինի հանարավորինս հստակ ու համալիր սահմանել հանրային իշխանության այնպիսի մարմինների սահմանադրական կարգավիճակը, որոնց՝ պետական մարմինների համակարգում ունեցած դերի հարցում կան անհարկի անորշություններ: Ուստի նշված սկզբունքով կամրագրվեն նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակները: Տվյալ դեպքում ելակետ է ընդունվում այն, որ կառուցակարգային մոտեցման պարագայում հնարավոր է լինում լիարժեք արտացոլել տվյալ ինստիտուտի սահմանադրական գործառույթի բնույթը, սահմանել դրա կազմավորման կարգը՝ եթե այն վերապահված է Սահմանադրությանը, հստակեցնել լիազորությունների շրջանակը և այլն: Այս դեպքում որևէ նշանակություն չի տրվում այն հանգամանքին, թե այս կամ մարմնի կազմավորման հիմքերն ինչպիսի իրավական ակտով են կարգավորված, քանզի բոլոր դեպքերում դրանք պետք է. «դիտարկել որպես ինքնուրույն ու բնո-

րոշ սահմանադրաիրավական գործառույթներ ունեցող առանձին սահմանադրական ինստիտուտներ»:

Սահմանադրության ճկունությունը բնավ չի հակասում սահմանադրականության կայունության սկզբունքին, ավելին սահմանադրական նորմերի կայունությունը համարվում է իրավակարգավորման երաշխիք, քանզի ելակետային ու առանցքային նշանակություն ունեցող հարաբերությունների կարգավորման տեսանկյունից ցանկացած ոչ բավարար խորությամբ հետազոտված լուծում կարող է խաթարել Սահմանադրության հիմնադրույթների ներքին տրամաբանությունը, պաշտպանվող արժեքները: Թերևս, նաև այս գործոնը հաշվի առնելով է, որ Սահմանադրության մեջ կան նաև անփոփոխելի հողվածներ: Ուստի սահմանադրականության կայունության երաշխիք է համարվում հնարավորինս հստակ ու ներքին տրամաբանությամբ կառուցված նորմերի առկայությունը: Ներքին հակասություններն ինքնին հիմք են սահմանադրականության կայունության ձախողումն անխուսափելի համարելու համար: Այս առնչությամբ Հայեցակարգում ամրագրված է. «Նկատի ունենալով, որ Սահմանադրությունը կանոնակարգում է դինամիկ հասարակական հարաբերություններ, որոնք գտնվում են տարաբնույթ գործոնների ազդեցության դաշտում, Հիմնական օրենքը պետք է նաև սահմանադրական հավասարակշռության անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ ունենա: Դրա շնորհիվ է միայն հնարավոր սահմանադրական լուծումներում ապահովել Սահմանադրության արժեքանության հետևողական իրացումը: Բնորոշ վիճակ է առաջանում այն երկրներում, որոնք սահմանադրորեն ամրագրել են անփոփոխելի հողվածներ, որոնք ելակետային նշանակություն են ձեռք բերում սահմանադրական կոնկրետ լուծումների ու նաև հետագա հնարավոր փոփոխությունների համար: Ուստի Սահմանադրության կառուցվածքը նաև ներսահմանադրական համակար-

գային ամբողջականության երաշխավորման խնդիր պետք է լուծի: Դա կարող է իրականացվել սահմանադրական կարգի հիմունքների ներքին կառուցվածքի հստակեցման, իրավունքի աղբյուրների որոշակիացման, Սահմանադրության առաջին գլխի ամբողջականության ու միասեռության երաշխավորման ճանապարհով»:

Հայեցակարգում փաստվում է այն, որ գործող Սահմանադրության մեջ զգալի թիվ են կազմում ներքին անհամապատասխանությունները: Նման վիճակի հաղթահարման հայեցակարգային մոտեցման առանցքը պետք է դառնա՝ Սահմանադրության կառուցվածքի հստակեցման հետ մեկտեղ ներսահմանադրական անհամապատասխանությունների հնարավորինս առավելագույն հաղթահարումը:

Հայեցակարգում անդրադարձ է արված նաև այն կարևորագույն խնդրին, թե ինչ իրավական միջոցներով ու լծակներով է հնարավոր երաշխավորել սահմանադրականության կայացումը, որոնք համակարգված տեսքով շարադրված են Հայեցակարգում.

«ա) հաղթահարված են ներսահմանադրական անհստակությունները և երաշխավորված են Սահմանադրության ինքնաբավությունն ու ներդաշնակ զարգացումը,

բ) անհրաժեշտ սահմանադրական երաշխիքներ են ստեղծված, որպեսզի իրավաստեղծ գործունեության մակարդակում սահմանադրական արժեքանության ձևա-խեղումներ տեղի չունենան,

գ) սահմանադրորեն իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականացման անհրաժեշտ ու բավարար նախադրյալներ են ամրագրված,

դ) Սահմանադրության գերակայության երաշխավորումը դարձել է պետական քաղաքականության գերակայություն, և քաղաքական համակարգը կենսունակ է այն կյանքի կոչել»:

Փաստվել է նաև այն, որ հայրենական իրավական համակար-

գում դեռևս ողջամիտ լուծում չի ստացել Սահմանադրության գերակայության շարունակական երաշխավորման խնդիրը, ինչի արդյունքում իրավական բարձր չափանիշների բավարարող Սահմանադրության բազմաթիվ կարևորագույն նորմեր այդպես էլ գործնականում պատշաճ կիրառում չեն ունենում: Բնականաբար, այս հիմնախնդիրը սեղմ ժամկետներում ու միանվագ գործիքակազմով լուծել հնարավոր չէ, ուստի հարկ է զինանոցում ունենալ այնպիսի լծակներ, որոնք ի զորու կլինեն ապահովելու. «Սահմանադրությունը կյանքի կոչելը, հասարակական հարաբերությունների աստիճանական սահմանադրականացումը: Իսկ դրա համար անհրաժեշտ ու բավարար երաշխիքները պետք է ամրագրվեն բուն Սահմանադրությամբ: Ելակետը Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության երաշխավորումն է, հասարակական հարաբերությունների սահմանադրականացումը, Սահմանադրության, իրավական համակարգի ու իրավակիրառ պրակտիկայի միջև անհամապատասխանությունների հաղթահարումը»:

Սահմանադրության նորմերի կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության խնդիրը բնավ նոր չէ, սակայն դեռևս չեն առաջադրվել և կիրառվել համալիր կառուցակարգեր, որոնք հնարավորինս պատշաճ կերաշխավորեն նշված խնդրի լուծումը: Այս տեսանկյունից վճռորոշ է համարվում սահմանադրական օրինականության վիճակի և սահմանադրականության շարունակական ախտորոշումը և մշտադիտարկումը, որոնք անհրաժեշտ են «հասարակական կյանքում օբյեկտիվ իրավիճակը գնահատելու և պետական իշխանության մարմինների գործառնական լիազորությունների արդյունավետ գործադրմամբ առկա անհամապատասխանությունները, բացերն ու տարաբնույթ ձևախեղումները հաղթահարելու համար»: Հայեցակարգում նաև դիրքորոշումն է ամրագրված, ըստ որի՝ նշված համակարգը նոր խնդիրներ է առաջադրում,

հատկապես, պետության գլխի և Ազգային ժողովի դերակատարության ուժեղացման առումով, ինչպես նաև ենթադրում է քաղաքացիական հասարակության դերի ակտիվացում, սահմանադրական դաստիարակության գործուն համակարգի ներդրում՝ անմիջական ժողովրդավարության զսպող ու հակակշռող ներուժի խելամիտ իրացման, սահմանադրական իրավամտաձողության արմատավորման տեսանկյունից:

Սահմանադրականության մշտադիտարկման գործընթացում այս կամ այն չափով ներգրավված են լինելու բոլոր պետական մարմինները, սակայն գործառությանն տեսանկյունից հիմնական պատասխանատուն լինելու է Հանրապետության Նախագահը, որն իր համապատասխան արհեստավարժ աշխատակազմով անմիջականորեն իրականացնելու է սահմանադրական մշտադիտարկում՝ որոշակի իրավական հետևանքներով, այդ թվում՝ սահմանադրական պատասխանատվություն առաջացնող ընթացակարգերով: Գործնական վերլուծությունը ցույց է տալիս, որ այս ոլորտում հարկ է նախապատվությունը տալ ոչ դասական եղանակների, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատական ակտերի կատարումն ապահովելու գործընթացում չեն կարող կիրառվել այն ընթացակարգերն ու կառուցակարգերը, որոնք որոշակի չափով հաջողություն են գրանցել դատական ակտերի հարկադիր կատարման պարագայում: Այս դեպքում խոսքը վերաբերում է այնպիսի սահմանադրական մարմինների (Ազգային ժողով, կառավարություն և այլն), որոնց նկատմամբ ազդեցության վարչարարական մեթոդները միանշանակ կիրառելի չեն:

Սահմանադրականության կայացման հիմնախնդրի համալիր լուծման տեսանկյունից էական արժեք ունեն նաև քաղաքացիական հասարակության ձևավորման հեռանկարները: Հայեցակար-

գում այս նկատառումով որոշակի դեր է վերապահվել Հանրային խորհրդին, սակայն հասկանալի է, որ խնդիրն անհամեմատ ընդգրկուն է և ներառում քաղաքացիական հասարակության բոլոր բաղադրիչների համակողմանի կատարելագործումը: Հարկ է ելակետ ընդունել այն, որ չի կարող իրավաչափ համարվել, երբ հանրային կյանքում յուրաքանչյուր նորամուծության նախաձեռնողը լինում է բացարձակապես պետական իշխանությունը: Հանրային կառավարման գործընթացների նկատմամբ վստահությունը, հետևաբար, և աջակցությունը մեծ է այն պարագայում, երբ քաղաքացիական հասարակությունը ոչ միայն պարզապես ներգրավվում է հանրային իշխանությանը, այլև հենց ինքն է հանդես գալիս նախաձեռնություններով և փորձում դրանք իր ուժերով կյանքի կոչել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. А.К. Крюковских, Словарь исторических терминов. М.: «Юристь»-1987г., с. 701.

2. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2003 թ. ապրիլի 16-ի թիվ ՍԴՈ-412 որոշումը:

3. «Սահմանադրական բարեփոխումներ. ի՞նչ են կարծում փորձագետները, «Բաց Հասարակության Հիմնադրամների» Հայաստանյան գրասենյակի օժանդակությամբ, «Հանրային քաղաքականության վերլուծության և երկխոսության Ապելլա ինստիտուտի» Ձեկույցը, Երևան, հունիս 2014, էջ 17-18:

4. Даймонд Л., Определение и развитие демократии // Теория и практика демократии. Избранные тексты. М.: Ладомир, 2006. с. 330.

5. <http://hr-lawyers.org/index>.

6. Վենետիկի հանձնաժողովի 2009թ. հունվարի 20-ի «Հանրաքվեի լավագույն փորձի մասին» թիվ CDL-AD(2007)008rev եզրակացությունը:

7. Duverger M., Institutions, politiques et droit constitutionnel, Paris, 1970.

8. «Հայաստանի քաղաքական գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացում» Ծրագիր – ՀՀ սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ հետազոտության արդյունքները, Երևան, 2014:

9. ՀՀ 1995թ. հուլիսի 5-ի Սահմանադրություն (2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով), ՀՀՊՏ, Հատուկ թողարկում, 2005.12.05, Հոդ. 1426:

10. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-58-Ն, ՀՀՊՏ 2006.06.21/32(487) Հոդ.645, 01.06.2006:

11. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ՀՕ-247, 17.06.1998, ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ՀՕ-248, 01.07.1998, ՀՀՊՏ 1998.09.21/22(55):

13. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 25 փետրվարի 2011թ. ՍԴՈ-943 որոշում, www.concourt.am:

14. Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով ստեղծելու մասին», 4 սեպտեմբերի 2013թ., <http://moj.am/storage/files/pages/pg.8063410658161.legal.acts.8000708036271.pdf>

15. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ / մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ. հոկտեմբեր, <http://moj.am/storage/uploads/Sahmanadrakan.barepokhumner.14.10.pdf>.

16. Ալբանիայի Հանրապետության Սահմանադրություն, <http://www.gjk.gov.al/web/constitution.83.pdf>:

17. «Ալբանիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի կազմավորման և գործունեության մասին» օրենք, <http://www.gjk.gov.al/web/law.nr.8577.date.10.02.2000.84.pdf>:

18. Բուլղարիայի Հանրապետության Սահմանադրություն, <http://constcourt.bg/en/legislation>:

19. Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենք, http://www.gesetze-im-internet.de/englisch_gg/index.html.

20. Հունգարիայի Հիմնական օրենք, <http://www.mkab.hu/rules/fundamental-law>.

21. Լեհաստանի Հանրապետության Սահմանադրություն, <http://trybunal.gov.pl/en/about-the-tribunal/legal-basis/the-constitution-of-the-republic-of-poland/>:

22. «ՌԴ Դաշնային Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենք, <http://www.ksrf.ru>.

23. Ռումինիայի Հանրապետության Սահմանադրություն, <http://www.cdep.ro/pls/dic/site.page?den=act2.2&par1=5#t5c0s0sba142>.

24. Սլովենիայի Հանրապետության Սահմանադրություն, <http://www.us-rs.si/en/about-the-court/legal-basis/>.

25. «Սլովենիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենք, <http://www.us-rs.si/en/about-the-court/legal-basis/constitutional-court-act/>.

26. Շվեյցարիայի Կոնֆեդերացիայի Սահմանադրություն:

27. Decision of the Constitutional Court of the Republic of Lithuania of 12 January 2000, <http://www.lrkt.lt/dokumentai/2000/d000112.htm>.

28. Ruling of the Constitutional Court of the Republic of Lithuania of 30 May 2003, <http://www.lrkt.lt/dokumentai/2003/r030530.htm>.

29. CDL-AD(2014)027, 2014թ. հոկտեմբերի 13, Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի վերաբերյալ եզրակացություն, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով), <http://moj.am/storage/uploads/CDL-AD2014027-e».pdf>.

30. Venice Commission, Opinion on the Reform of the Judiciary in Bulgaria, CDL-INF(1999)005.

31. CDL-AD(2007)028, JUDICIAL APPOINTMENTS // Report adopted by the Venice Commission at its 70th Plenary Session (Venice, 16-17 March 2007).

32. CDL-AD(2010)031, Joint Opinion on the on the Public Assembly of Serbia by the Venice Commission and OSCE/ODIHR, «45, CDL-AD(2010)049, Interim Joint Opinion on the Draft Law on Assemblies of the Republic of Armenia, by the Venice Commission and OSCE/ODIHR.

33. CDL-AD(2010)039rev Study on individual access to

constitutional justice.

34. CDL-AD(2013)034 Opinion on Proposals Amending the Draft Law on the Amendments to the Constitution to strengthen the independence of judges of Ukraine.

35. CDL(2015)024, DRAFT COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS, REPORTS AND STUDIES ON CONSTITUTIONAL JUSTICE.

36. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010:

37. Հարությունյան Գ. Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, Նժար, 2005:

38. Հարությունյան Գ., Մանասյան Ա., Սահմանադրական վերահսկողություն / Ուսումնական ձեռնարկ բուհերի համար (լրամշակված վերահրատարակություն), Երևան, 2015:

39. Հարությունյան Գ., Դատական իշխանություն, Համակարգային գործակցության եվրոպական զարգացման փորձից, Երևան, «Նժար», 2002:

40. Մանասյան Ա. Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում և դրանց դերը Սահմանադրության կայունության ապահովման գործում, Երևան, 2013:

41. Комментарий к Конституции РФ / Под ред. Зорькина В. Д., Лазарева Л. В. М.: Эксмо, 2009, <http://kommentarii.org/konstitutc/page6.html>.

42. Кряжков В. А., Кряжкова О. Н. Правовые позиции Конституционного суда РФ в его интерпретации // Государство и право, 2005, N 11.

42. Constitutional justice in Lithuania. Vilnius, 2003.

43. Thomas Schmitz, BASIC ELEMENTS OF FUNDAMENTAL

RIGHTS DOCTRINE, <http://www.iuspublicum-thomas-schmitz.uni-goettingen.de/Downloads/Schmitz.FR-Doctrine.Jakarta-2014.pdf>.

44. <http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-REF%282015%29014-e>.

45. http://www.topnews.ru/news_id_55041.html.

46. Ст'я <http://mir-politika.ru/2649-egipet-konstitucionnyy-referendum-raskolol-stranu.html>.

47. Деформации конституционализма в Евразийском пространстве, Интервью с Председателем Конституционного Суда Республики Армения, доктором юридических наук, профессором Арутюняном Гагиком Гарушевичем. Евразийский юридический журнал, номер 7(26)2010, <http://www.eurasialaw.ru/>.

48. <http://itar-tass.com/mezhdunarodnaya-panorama/1162420>.

49. <http://www.newsru.co.il/world/17oct2010/merkel409.html>.

50. Лейст О. Э., Сущность права, Проблемы теории и философии права, Москва, Зерцало-М., 2002,

51. Шарль Луи Монтескье, Избранные произведения о духе законов, http://lib.mn/blog/sharl_monteske/171800.html.

**ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ**
**Ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և
քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության
մոնիտորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղ**

**МЕЖПАРЛАМЕНТСКАЯ АССАМБЛЕЯ
ГОСУДАРСТВ - УЧАСТНИКОВ
СОДРУЖЕСТВА НЕЗАВИСИМЫХ ГОСУДАРСТВ**
*Международный институт мониторинга развития демократии,
парламентаризма и соблюдения избирательных прав
граждан Ереванский филиал*

**Положения концепции конституционных реформ Республики
Армения и основные направления их реализации
(научно-практическое исследование)**

**Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի
դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները
Հայաստանի Հանրապետությունում
(գիտազործնական հետազոտություն)**

Աշխատանքային խմբի ղեկավար՝
իրավ. գիտ. դոկտոր **ՎԱՀՐԱՄ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Աշխատանքային խմբի անդամներ՝
ԻՐԻՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԱՐՄԵՆ ԱԲՈՎՅԱՆ

Տպագրվել է «Հայրապետ հրատարակչություն» ՍՊԸ-ում:
Չափսը $60 \times 84 \frac{1}{16}$: Ծավալը 15 մամուլ:
Քանակը՝ 100 օրինակ: